անընդունելի է նշատանգամ հարկադրված հաշտվում են այս պահանջի հետ:

Այնուամենայնիվ, պետական պարտքը, որպես բյուջեի համալրման աղբյուր, որպես կառավարության առջև ծառայած առաջնահերթություններին, տնտեսական, ազգական, սոցիալական հիմնախնդիրներին լուծման գլխավոր գործիքներից մեկին, անհրաժեշտություն է, մասնավորապես, եթե պահպանվում է սահմանված շեմային տիրույթում, և ամենակարևորը, ճիշտ են որոշվում այն ոլորտները, դեպի ուր ուղղորդվում են միջոցները:

1.2 Պետական պարտքի ընդլայնման միտումները համաշխարհային տնտեսությունում

Վերջին երկու հարյուր տարիների ընթացքում Եվրասիայում և Ամերիկայում տեղի են ունեցել տարբեր ընդգրկումներ և ծավալների ավելի քան քսան տնտեսական ճգնաժամեր, որոնք էապես ազդել են հասարակության զարգացման բոլոր ոլորտներին վրա: XX դարում ճգնաժամերը ոչ միայն ավելի հաճախակի դարձան, այլև մեծացավ դրանց ընդգրկումը, տևողությունը, վտանգավորությունը և ստիճանը հասարակության առաջընթացի առումով: 2008թ.-ին ԱՄՆ հիփոթեքային շուկայից սկսված և հետագայում լուրջ ֆինանսատնտեսական բնույթ ստացած ճգնաժամն սկսվածի վառ ապացույցն է: Այն իր քաղաքական ազդեցությունն ունեցավ աշխարհի գրեթե բոլոր երկրների տնտեսություններին վրա, այդ թվում նաև Հայաստանի Հանրապետության: Այսօր, վեց տարի անց, այդ հետևանքների հետագիծը դեռևս շարունակվում է. մի շարք երկրներում, այդ թվում նաև զարգացած, շարունակվում է տնտեսական ցուցանիշների անկումը, պահպանվում է գործազրկության բարձր մակարդակը, վտանգավորությունը շեմին է հասել պետական պարտքը: Մի շարք մասնագետների գնահատմամբ վերջին տարիների ճգնաժամերը հիմնականում մեծ ծավալների հասած և հետզհետե աճող հասարակական պարտավորությունների արդյունք են: Ներկայումս գրեթե բոլոր զարգացած երկրներում բավականին սուր է դրված պետական պարտքի կարգավորման խնդիրը, չնայած այն հանգամանքին,

որ տնտեսությունն ամեն զարգացումներին բնույթով անհանգստացած շատ մասնագետներ միաժամանակ պնդում են, որ զարգացած երկրներին պետական պարտավորություններին բարձրացման ռիսկը չափից ավելի փքված է երկրայացվում, բացառությամբ, իհարկե, փոխառություններին կարիք զգացող Եվրոգոտու պնդիտի երկրներին, ինչպիսիք են Հունաստանը, Իսպանիան, Պորտուգալիան և այլն:

Տնտեսական ակտիվությունն անկմանը խոչընդոտելու նպատակով կառավարությունները փորձում են ընդլայնողական հարկաբյուջե տային քաղաքականություն կիրառմամբ աջակցել ներքին ֆինանսական շուկաներին, որը պահանջում է լրացուցիչ փոխառումների¹⁶, սակայն վարկային սահմանափակումներին առկայությունն աստիճանաբար ֆինանսատնտեսական ճգնաժամը վերածում է գլոբալ պարտքային ճգնաժամի:

Պարտքային ճգնաժամերը ժամանակակից աշխարհի ամենալուրջ հիմնախնդիրներին թվին են դասվում, քանի որ երկրներին միջև տեղեկատվական, տնտեսական, քաղաքական կապվածությունն արդյունքում, վերջիններս դադարել են այս կամ այն երկրի կամ, նույնիսկ, երկրներին խմբի խնդիրը լինելուց: Այն հանգամանքը, որ պարտքային ճգնաժամերը միայն վերջին երկու տասնամյակում են առավել լայն ու շարունակական առարկա դարձել, պայմանավորված է միջարք հանգամանքներով. նախ այն, որ մինչև XX դարի 80-ական թվականները պետություններին կողմից պարտքային պարտավորություններին ոչ պատշաճ կատարումը կամ չկատարումը, որպես կանոն տեղային նշանակություն ունեցող գնումներ էին առաջ բերում և այլ պետություններին վրա դրանց բացասական ներգործությունը զգալի չէր: Հաջորդող դրանց կանխատեսման ու կանխարգելման գործում գոյություն ունեցող էական դժվարություններին առկայություններ, և նոր պարտքային ճգնաժամերի առանձնահատկությունները: Ամեն հանգամ, պարզ է դառնում, որ նոր ճգնաժամի կանխատեսումը դժվար էր, քանի որ ծագած նոր գործունեությունն հանգամանքները հաշվի չէին առնվել ն՛չ տեսարաններին և ն՛չ էլ պարտքի կառավարմամբ անմիջականորեն զբաղվող մասնագետներին կողմից:

¹⁶ Managing Public debt: Formulating Strategies and Strengthening Institutional Capacity, Prepared by the Staff of the IMF and World Bank, March 3, 2009, p. 6.

Նշենք, որ պարտքային ճգնաժամերի ծանր հետևանքների վերաբերյալ առաջին լուրջ անհանգստությունը ծագեց 1980-ական թվականներին ճգնաժամային ալիքի պայմաններում, երբ տնտեսական անկում ունեցող գրեթե բոլոր երկրներն ունեին առնվազն մեկ ընդհանուր գիծ՝ մեծ պետական պարտք¹⁷: Իր հետևանքներով և խորությունամբ այն նման էր 1930-ական թթ. <<Մեծ ճգնաժամին>>: Դա համընկավ ֆինանսական շուկաների գլոբալ առաջին շրջանի հետ՝ առավել ցայտուն դարձնելով առանձին երկրներում ծագած հիմնախնդիրների արագ անդրադարձը նոր ձևավորվող ենթակառուցվածքների վրա:

Երբեմն առանձին հեղինակներն աշխատություններն արվում են այնպիսի տպավորություն է ստեղծվում, որ պետական պարտքը խիստ բացասական հետևանքներ է ունենում տնտեսության վրա: Մեր կարծիքով, սակայն, խնդրի նմանատիպ միակողմանի վերաբերմունքը սխալ է: Իրականում պետական պարտքը կարող է դրական դերակատարում ունենալ տնտեսության համար, եթե ի հարկե վերջինիս ծավալները չեն գերազանցում թույլատրելի նորմերը, ինչպես նաև օգտագործվում են արդյունավետ և խելամիտ կերպով: Այս սկզբունքների բացակայությունը դեպքում այն կարող է աղետալի լինել, ինչպես տնային տնտեսությունների և կազմակերպությունների համար, այնպես էլ ընդհանուր ֆինանսական ոլորտի համար: Եվ ընդհանրապես պարտքի կուտակումն իր մեջ ռիսկ է պարունակում: Երբ պարտքի մակարդակն աճում է, փոխառուների կողմից մարման հնարավորությունները աճողակ կերպով դառնում են ավելի զգայուն եկամտների և վաճառքի նվազման նկատմամբ, ինչպես նաև տոկոսադրույքների աճի նկատմամբ: Այլ խոսքերով առավել բարձր պարտքը բարձրացնում է տնտեսության անկայունությունը, ֆինանսական դաշտը դարձնում առավել փխրուն՝ բացասաբար անդրադառնալով տնտեսական աճի մակարդակի վրա: Հետևաբար, կարող ենք ասել, որ բարձր և կայուն տնտեսական աճի, ցածր և կայուն սղաճի փոխարեն պարտքը կարող է ունենալ կործանարար հետևանք ֆինանսական ժամանակաշրջանում,

¹⁷ Այս մասին ավելի մանրամասն տե՛ս Сакс Дж., Ларрен Ф. Б., “Макроэкономика: Глобальный подход”, М.: Дело, 1996, с 720-750.

քան ի որ վարկային պարտավորություններին մեծ ծավալներին սկսում են հետևել չվճարումները, ինչն իր հերթին տանում է սննկացման ճգնաժամի:


Պարտքային ճգնաժամն առկա է, երբ հայտնի է դառնում պարտապանի (պարտք թողարկողի) անվճարունակությունը: «Անվճարունակություն» հասկացության (default) մի շարք սահմանումներ կան, որոնք տարբերվում են հիմնականում երևույթի ընդգրկման աստիճանով: Առավել խիստ մոտեցում ցուցաբերելու դեպքում կարող ենք նշել, որ փոխառության պայմանագրի ցանկացած կետի խախտումը փոխառուի անվճարունակության փաստ է: Ավելի մեղմ մոտեցմամբ «անվճարունակությունը» փոխառուի հրաժարումն է վարկային պայմանագրերի կամ պարտքային արժեթղթերի գծով պարտավորություններին կատարումից: Համարվում է, որ փոխառուն հայտարարել է իր անվճարունակության մասին, եթե նա տրուստավճարները կամ մայր գումարի մարումները չի իրականացրել ըստ փոխառության պայմաններին (վարկային պայմանագրերով) նախատեսված ժամանակացույցի: Ընդ որում էական չէ պարտավորություններին ամբողջ ծավալով կամ մասնակի չկատարման հանգամանքը¹⁸:

Պետական պարտքային ճգնաժամերի հետազոտության ժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել մի շարք կարևոր հանգամանքներ՝ անվճարունակության խնդիրները մեծ հնարավորություններ են տալիս տվյալ պետության ներքին գործերին միջամտելու առումով, պարտքը սովորաբար չի գրավադրվում, խնդրահարույց պարտքերը հաճախ վերաձևակերպվում են, պետության սոցիալական պարտավորություններն առավել առաջնային են, քան պարտքի մարման և սպասարկման հետ կապված վճարումներն ու ծախսերը: Ահա այս պատճառներին ներքո մեծածավալ պարտքի կուտակումը բարենպաստ պայմաններ կարող է ստեղծել հեղափոխություններին, պատերազմներին և սոցիալական լարվածություն համար:

Համաշխարհային ֆինանսական համակարգը վերջին տարիներին սկսել է ավելի արագ արագանալ քան համաշխարհային տնտեսություն

¹⁸ Մարգարյան Ա., Քյոնիգսման Ա., «Պարտքային ճգնաժամեր» /Հայաստան, Ֆինանսներ և Էկոնոմիկա/ 3 փետրվար 2006, էջ 57:

Իրական հատվածը: 2012թ.-ի երկրորդ եռամսյակի դրույթի ամֆինանսական ակտիվներն աճել են մինչև 225 տրիլիոն դոլար՝ գերազանցելով 2011թ.-ի ցուցանիշը 7 տրիլիոն դոլարով կամ 3.2%-ով, այնինչ տնտեսական աճը նույն ժամանակահատվածում կազմել է ընդամենը 2.3%¹⁹: «McKinsey Global Institute»-ի փորձագետները գնահատականներով, տնտեսության ֆինանսական խորությունը²⁰ (financial depth) 2012թ.-ի երկրորդ եռամսյակի դրույթի ամֆինանսական ակտիվներով, տնտեսության ֆինանսական խորությունը²⁰ (financial depth) 2012թ.-ի երկրորդ եռամսյակի դրույթի ամֆինանսական ակտիվներով 1990թ.-ի 263%-ից աճել է մինչև 312%: Մինչև նույն ժամանակ ֆինանսական ակտիվներում վերջին տարիներին աճել է պետական պարտքային պարտավորություններին և չարժեթղթավորված վարկերի բաժինը (տե՛ս, Գծ ապատկեր 1.2.1):



Գծ ապատկեր 1.2.1: Ֆինանսական ակտիվներին և տարբեր պարտքային պարտավորություններին աճը, տրլն. դոլ. ²¹

Ֆինանսական գլոբալ տնտեսական համակարգի աննախադեպ զարգացման ռիսկերի առկայությունը մասին է խոսում այն փաստը, որ վերջին 30 տարում տնտեսական ճգնաժամերից մեծամասնությունը

¹⁹ World development indicators 2013, The world bank report, p. 65.
²⁰ «financial depth» տերմինն առաջին անգամ գործածվել է 80-ական թվականներին վերջին ՀԲ-ի հրապարակումներում: Այն արտահայտում է տնտեսության դրամական ռեսուրսներով հագեցվածությունը, իսկ ավելի կոնկրետ փոփոխ M2 ազդեցատի հարաբերակցությունը ՀՆԱ-ին: Այս գործակիցը հաշվարկվում է համաձայն «Միջազգային ֆինանսական վիճակագրության» («International Financial Statistics») և հրապարակվում ԱՄՆ-ի կողմից:
²¹ Գծ ապատկերը կազմվել է http://www.mckinsey.com/insights/global_capital_markets/financial_globalization. տվյալներին հիմանված:

սկսել են ֆինանսական ցնցումներին, ամենից առաջ այս կամ այն պարտքային ճգնաժամերին : Բացառությամբ նաև 2008թ. ֆինանսական զլոբալ ճգնաժամը, որը վերաճեց Լայնամասշտաբ տնտեսական պարտքային ճգնաժամի՝ ընդգրկելով համաշխարհային տնտեսության գրեթե 4/5-ը: Այս ճգնաժամի առաջին ավիքի սկիզբը կապված էր կորպորատիվ պարտավորություններին ճգնաժամի հետ: Վերջինիս հաղթահարման ինչպես նաև իրենց տնտեսական մասնակցներին և ազգային տնտեսություններին աջակցելու համար երկրներին մեծ մասը ավելացրեցին պետական ծախսերը: Շուկայում պահանջարկի և արտադրության ծավալներին անկումը հանգեցրեց պետական բյուջեի եկամուտներին կրճատմանը և բյուջե տային պակասուրդի հիմնախնդրի սրացմանը (տե՛ս, Աղյուսակ 1.2.1) :

Աղյուսակ 1.2.1

Միջաքերկրներում բյուջեի պակասուրդի (-) և հավելուրդի (+)

հարաբերակցությունը ՀՆԱ-ին, %-ով 2007-2014թթ²².

Երկրներ	2007	2008	2009	2010	2011	2012	2013	2014
ԱՄՆ	-3.5	-7.0	-12.7	-12.0	-10.6	-8.9	-5.6	-
Միացյալ թագ.	-3.0	-5.1	-10.8	-9.7	-7.6	-8.3	-5.7	-5.7
Գերմանիա	0.3	-0.1	-3.0	-4.1	-0.9	0.1	0.1	0.7
Ֆրանսիա	-2.5	-3.2	-7.2	-6.8	-5.1	-4.8	-4.1	-4.0
Իտալիա	-1.5	-2.7	-5.3	-4.2	-3.5	-3.0	-2.9	-3.0
Իսպանիա	2.0	-4.4	-11.0	-9.4	-9.4	-10.3	-6.8	-5.8
Հունաստան	-6.7	-9.9	-15.3	-11.1	-10.2	-8.7	-12.3	-3.5
Պորտուգալիա	-3.0	-3.8	-9.8	-11.2	-7.4	-5.6	-4.8	-4.5
Ճապոնիա	-2.1	-1.9	-8.8	-8.3	-8.8	-8.7	-8.5	-
ՌԴ	5.6	7.3	-4.0	-1.2	3.8	2.0	-0.5 ²³	-

²² Աղյուսակը կազմվել է http://www.oecd-ilibrary.org/economics/country-statistical-profiles-key-tables-from-oecd_20752288 կայքի տվյալների հիման վրա:

²³ ՌԴ-ի 2013թ. բյուջեի դեֆիցիտ ՀՆԱ հարաբերակցությունը տե՛ս «Дефицит госбюджета РФ в 2013 году составил 0,5% ВВП», <http://www.odnako.org/blogs/deficit-gosbyudzheta-rf-v-2013-godu-sostavil-05-vvp/>

Եկամտի ցածր մակարդակ ունեցող երկրներում նույնպես ֆինանսական ճգնաժամի և համաշխարհային տնտեսական անկման պայմաններում ավելացան ֆինանսավորման կարիքները, իսկ իրական հատվածի անկումը բերեց արտահանման իրական ծավալներին կտրուկ նվազման, ինչն անմիջականորեն արտահայտվեց պետական եկամուտներին վրա: Արտաքին տրանսֆերտները, որոնք բազմաթիվ եկամտի ցածր մակարդակ ունեցող երկրներին, այդ թվում, Հայաստանի բնակչության արտաքին եկամուտներին հիմնական աղբյուրն են, զգալիորեն սահմանափակվեցին, որն ուղեկցվեց նաև ՕՈՒՆ-երի անկմամբ:

Քանի որ պակասուրդը մեծ մասամբ ծածկվում էր ի հաշիվ դրամական էմիսիայի և նոր փոխառություններին, առաջացան արդեն պետական փոխառության ամենալուրջ հիմնախնդիրները, որոնք առաջ եկան ճգնաժամի երկրորդ ակիքի ժամանակ²⁴: Ջարգացող երկրներին պարագայում ֆինանսական ճգնաժամի երկրորդ ակիքն արտահայտվեց նախկինում տրամադրված վարկերի չվերադարձմամբ: Հարկաբյուջե տային հատվածում հարկային եկամուտներին անկումը և ընդլայնողական ծախսերի կատարման անհրաժեշտությունը ֆինանսական մեծ ճեղք էր առաջացրել բազմաթիվ ցածր եկամտի մակարդակ ունեցող երկրներում: Ամեն դեպքում, բոլոր զարգացող երկրները պայմանավորված ֆինանսական շուկաների ոչ բավարար զարգացվածությամբ, ներքին ռեսուրսներին սահմանափակությամբ, վճարային հաշվեկշռի ու վստահության խնդիրներով, հաճախ պակասուրդի ֆինանսավորման խնդիրը հիմնականում փորձում են լուծել արտաքին աղբյուրներին հաշվին՝ փորձելով ներգրավել արտոնյալ պայմաններով ֆինանսական միջոցներ: Արդյունքում վերջիններին պետական պարտքի կառուցվածքում գերակշռում է արտաքին պարտքը:

Ինչ վերաբերում է զարգացած երկրներին, ապա վերջիններս թեև իրենց պետական բյուջեի պակասուրդի ֆինանսավորման համար միջոցներ են ներգրավում հիմնականում օգտագործելով իրենց պետական պարտատուների շուկան (սուսցվում է, որ ըստ արժույթի

²⁴ Debt and deleveraging: The global credit bubble and its economic consequences. McKinsey Global Institute. 2010 January <http://www.mckinsey.com/mgi>); Reinhart C., Rogoff K. From Financial Crash to Debt Crisis // American Economic Review. 2011 August.

սկզբունքի նրանց պետական պարտքը հիմնականում ներքին է, թեև եթե այն ըստ ռեզիդենտության սկզբունքի դիտարկենք, կստացվի, որ պարտքի մինչև 50-60%-ը ֆինանսավորվել է ոչ ռեզիդենտների կողմից, հետևաբար այդ չափով այն կարող է բնորոշվել որպես արտաքին²⁵):

Առանձին երկրների օրինակով դիտարկենք պետական պարտք ՀՆԱ հարաբերակցության դինամիկան 2007-2014թթ. ընկած ժամանակահատվածում (Տե՛ս, Աղյուսակ 1.2.2):

Աղյուսակ 1.2.2

Պետական պարտք/ՀՆԱ հարաբերակցությունը միջարք երկրներում, %-ով 2007-2014թթ.²⁶

Երկրներ	2007	2008	2009	2010	2011	2012	2013	2014 ²⁷
ԱՄՆ	75.7	91.8	104.9	115.3	120.9	123.7	122.0	104.8
Միացյալ թագ.	50.1	62.0	75.7	87.1	100.9	105.0	100.8	89.5
Գերմանիա	64.0	67.8	75.3	83.8	83.3	86.2	81.5	73.1
Ֆրանսիա	75.6	81.5	93.2	96.8	100.7	110.4	110.5	95.1
Իտալիա	110.6	112.9	125.9	124.8	117.8	136.0	143.0	132.1
Իսպանիա	41.7	47.1	61.7	66.4	77.0	90.8	102.0	97.7
Հունաստան	112.8	117.2	134.6	128.3	110.2	164.2	179.2	177.2
Պորտուգալիա	78.1	82.8	96.1	104.1	107.5	136.3	141.2	130.2
Իռլանդիա	27.5	47.6	68.3	85.2	111.0	131.3	136.7	109.5
Ճապոնիա	180.0	184.2	207.3	210.6	226.5	234.8	239,3	246.4
ՌԻ	8.6	8.0	10.6	11.3	11.6	12.7	14.0	17.9

Աղյուսակից երևում է, որ չնայած պարտքի կայունության եվրագոտու հաստատած Պարտք ՀՆԱ հարաբերակցության 60% սահմանաչափին, միջարք եվրոպական երկրներում այդ ցուցանիշը

²⁵ Հովեյան Ս. Ս. «Արտաքին պետական պարտքի արդյունավետ կառավարման հիմնախնդիրները (ՀՀ օրինակով), տ.գ.թ. գիտական ստիճանի հայցման առևնախոսություն, Երևան 2010, էջ 54-55:

²⁶ 2007-2013թթ. Տվյալները աղբյուրը http://www.oecd-ilibrary.org/economics/country-statistical-profiles-key-tables-from-oecd_20752288 կայքն է:


²⁷ 2014թ.-ի տվյալներին, ինչպես նաև ՌԻ բոլոր տվյալներին համար աղբյուր է հանդիսացել <https://www.imf.org/external/pubs/ft/weo/2015/01/weodata/weoselco.aspx?g=2001&sg=All+countries> կայքը:

գերագնացում է 60%-ի շեմը: Ամենածանր վիճակում հայտնվեցին Հունաստանը, Իտալիան, Իսպանիան Պորտուգալիան և Իռլանդիան: Արևմտյան լրագրողները և ֆինանսական վերլուծաբանները դեռևս 2008թ-ին ներդրեցին այս երկրներին համար PIGS (P-Պորտուգալիա, I-Իտալիա, G-Հունաստան և S- Իսպանիա) կրճատված անվանումը, ինչը արտացոլում էր ԵՄ անդամ երկրների կողմից վերջիններին նկատմամբ առկա բացասական վերաբերմունքը: Հետագայում այս խմբին միացրեցին նաև Իռլանդիան և արդյունքում սկսած 2011թ.-ից առավել հաճախ հանդիպում է PIIGS անվանումը²⁸: Ինչպես գտնում են ICM Brokers-ի վերլուծաբանները, այս երկրներում եվրոյի ներդրմամբ բանկային վարկի տոկոսադրույքների էական անկումը վարկային միջոցների ձեռքբերումն առավել հասանելի դարձրեց ինչպես երկրի տնտեսության սպառողական, այնպես էլ արդյունաբերական հատվածների համար, որը սակայն, ինչպես ցույց տվեցին փաստերը, այնքան էլ դրական անդրադարձ չունեցավ՝ հաշվի առնելով այդ երկրների առանձնահատկությունները: Պատճառը հիմնականում այն էր, որ PIIGS երկրներին երսում իրացվել ինչպես աճը բերեց սպառողական պահանջարկի ավելացմանը, որը բերեց գների աճին և աշխատավարձի բարձրացմանը, ինչն առավել նկատելի դարձավ պետական հատվածում: Աճեցին նաև ներդրումները, բարելավվեց գործարար միջավայրը (առաջարկի ավելացում), որն այնուհանդերձ զարգանում էր միակողմանիորեն:

Պետություն օրինակին հետևելով, որն իր բյուջեի պակասումը լրացնելու նպատակով նորանոր փոխառություններ էր վերցնում, այս երկրներին կազմակերպություններն ու քաղաքացիները նույնպես սկեցին պարտքեր կուտակել, գնելով տրանսպորտային միջոցներ և անշարժ գույք: Չնայած այդ ամենին, այս երկրները չկարողացան ավելացնել արտահանման ծավալները, քանի որ ազգային արժույթի դուրսվաճի արդյունքում նրանց ապրանքները կորցրել էին իրենց մրցունակությունը: Չարգացում ապրեց միայն ներքին ծառայությունների, շինարարության և ենթակառուցվածքների զարգացման ոլորտը: Բարձր պահանջարկի

²⁸ Գնահատականների մեջ առավել օբյեկտիվ լինելու համար անհրաժեշտ է նշել, որ այս հինգ պետություններին է բաժին ընկնում ԵՄ ընդհանուր տարածքի 41.9%-ը, բնակչության՝ 40.1%-ը և ՀՆԱ-ի՝ 36.2%-ը:

շնորհիվ, որը ընդլայնեց իր հերթին ներմուծումը, քայքայեց արտահանումը, առանձնահատուկ դրական տեղաշարժ չառաջացրեց ՀՆԱ-ում, որին զուգընթաց սակայն, պարտքի ծավալները գնալով աճում էին: Արդեն 2008թ-ին, երբ եկավ վճարման ժամանակը, սեփականության բոլոր տեսակի պարտավորություններին ծավալները հասան սահմանային կետին, սակայն վարկավորման կտրուկ նվազման և այլ սոցիալ տնտեսական ցնցումների արդյունքում, ինչպես ամբողջ ԵՄ-ում այնպես էլ PIIGS երկրներում, պարտքի սպասարկման համար այլևս միջոցներ չկային: Ներմուծումը հետընթաց ապրեց սպառողական պահանջարկի նվազմանը զուգահեռ, ներմուծման տեղաբաշխման սպասարկման և արտահանման համար արտադրության բոլոր տեսակի անկման պատճառներով աճեց գործազրկության մակարդակը, ինչից հետևում է, որ նվազեցին նաև ներդրումները: Այսպիսով, ճգնաժամը հայտնաբերեց PIIGS երկրների տնտեսություններին և ֆինանսական քաղաքականության թույլ կողմերը, որը երևում է 1.2.2-ից 1.2.5 գծապատկերներում:




Գծապատկեր 1.2.2: Պետական բյուջեի ընդհանուր պակասորդը և հավելուրդը ՀՆԱ-ում տոկոսներով²⁹

Գծապատկերից երևում է, որ ԵՄ մի շարք երկրներում՝ Հունաստան, Իռլանդիա, Իսպանիա, պետական բյուջեի պակասորդի խնդիրն սկսել է սրվել դեռևս 2007թ.-ից, իսկ Պորտուգալիայում և Իտալիայում՝ 2008թ.-ից սկսած: Ընդ որում Իսպանիան և Իռլանդիան մինչ ճգնաժամն ունեցել են հավելուրդով բյուջե: Գրեթե բոլոր երկրներում՝ բացառությամբ Իռլանդիայի, պետական բյուջեի

²⁹ 1.2-1.5 գծապատկերները տե՛ս Кузнецов В., «Евро: под бремен долгов», http://free-forex-ua.blogspot.com/2011/09/blog-post_5921.html

դեֆիցիտ չՆԱ հարաբերակցության վատագույն ցուցանիշը գրանցվել է 2009թ.-ին, որից հետո դիտվում է ցուցանիշի որոշակի կայունացում:




Գծ ապատկեր 1.2.3: Գործազրկության մակարդակը (սեզոնային սառնամանակային)

Եվրոստատի տվյալներով 2013թ. փետրվարի դրությամբ գործազրկության մակարդակը PIIGS երկրներում համապատասխանաբար կազմել է Պորտուգալիայում՝ 17.5%, Իտալիայում՝ 11.6%, Իռլանդիայում՝ 14.2%, Հունաստանում՝ 26.4% և Իսպանիայում՝ 26.7%³⁰: «Դեմիսիսի արդյունքի» հետևանքով ճգնաժամն սկսեց տարածվել, որի արդյունքում PIIGS երկրների տնտեսություններին գրեթե բոլոր ոլորտները, հատկապես սոցիալական հատվածը մեծ վնասներ կրեցին: Ճգնաժամային երկու թերթի հարցի տակ դրեցին միասնական Եվրոպական արժույթային միության և դրամական քաղաքականության գոյության պատակահարմարությունը, քանի որ PIIGS երկրների պարտքային բեռնի հերթին հսկայական վնաս հասցրեց նաև ԵՄ մնացած անդամներին:

Բնական է, որ ԵՄ-ն չէր կարող մնալ դիտորդի կարգավիճակում, քանի որ այս երկրներին խնդիրն անմիջականորեն առնչվում էր, և դեռ ավելին, սպառնում էր մնացած անդամների ֆինանսական կայունությանը: Առաջին երկիրը, որն օգտվեց ԵՄ ֆինանսական աջակցությունից Հունաստանն էր, որը 2010թ.-ին 110մլրդ. Եվրոյի աջակցությունն ստացավ: Սակայն ֆինանսական միջոցները՝


³⁰ Россия в цифрах. Страны PIIGS. <http://www.vestifinance.ru/videos/9223>

մեծացնելով արտաքին պարտքը, սպասված արդյունքը չտվեցին: Հունաստանի պետական պարտքն արդեն մոտ էր ՀՆԱ-ի 150% ցուցանիշին, ինչը ռեկոնրդային էր ոչ միայն ԵՄ-ի այլև ամբողջ աշխարհի համար (բացառությամբ Ճապոնիայի):



Գծ ապատկեր 1.2.4: Պետական պարտքի տեսակարար կշիռը ՀՆԱ-ում, %

Ինչպես երևում է գծապատկերից 2010թ. դրությամբ պետական պարտքի առավել ծանր բեռ ունեն Հունաստանը, Իտալիան, Պորտուգալիան և Իռլանդիան: 2013թ. դրությամբ Հունաստանի պետական պարտքի տեսակարար կշիռը ՀՆԱ-ում կազմել է 179.2%, Իտալիայինը՝ 143%, Պորտուգալիայինը՝ 141.2% և Իռլանդիայինը՝ 136.7³¹%:



Գծ ապատկեր 1.2.5: Պետական պարտքի բացարձակ ցուցանիշը PIIGS երկրներում (եվրո)

Ինչպես երևում է 1.2.4 և 1.2.5 գծապատկերներին չնայած այն հանգամանքին, որ բացարձակ արտահայտությամբ պարտքի ընդհանուր

³¹ -Տե՛ս, Աղյուսակ 1.2.2

ծավալով առաջին տեղում Իտալիան է, ՀՆԱ-ում պետական պարտքի տեսակարար կշռի ցուցանիշով այն զիջում է Հունաստանին: Պատկերը գրեթե նույնն է մնացել նաև 2013թ. դրությամբ: Այսպես, 2013թ. Իտալիայի պետական պարտքը կազմել է 2,067.5 մլրդ. եվրո, իսկ Հունաստանինը՝ 316.4 մլրդ. եվրո³², այնինչ առյուծակ 1.2.2 -ից երևում է, որ 2013թ.-ի դրությամբ Իտալիայի պարտքը ՀՆԱ-ում կազմել է 143%, իսկ Հունաստանինը՝ 179.2%:

Այսպիսով պարտքի ծավալով Իտալիան զիջում է միայն ԱՄՆ-ին և Ճապոնիային: 2013թ.-ի հոկտեմբերի դրությամբ ԱՄՆ-ի պետական պարտքը գերազանցում էր 17.5 տրիլիոն դոլարը³³: ԱՄՆ-ին սպառնացող տեսլանիկական դեֆոլտի վտանգի պատճառով պետական պարտքի սահմանը սկսած 1993թ.-ից քարձակվել է 18 անգամ՝ ընդհանուր առմամբ 13 տրիլիոն դոլարի չափով: Վերջին անգամ այդ սահմանի քարձակման նրոշում կայացվեց 2014թ. փետրվարին:

Ինչպես արդեն նշեցինք պետական պարտքի ծավալով հաջորդը Ճապոնիան է, որի պարտքը 2013թ. հունիսի դրությամբ կազմում էր 10,46 տրիլիոն դոլար: Այս գումարը գերազանցում է Գերմանիայի, Ֆրանսիայի և Մեծ Բրիտանիայի ՀՆԱ-ներին հանրագումարը: Մակայն, Ճապոնիայի պետական պարտքի ծավալները առանձնապես անհանգստացնող չեն միշտապես պատճառներով, նախ Ճապոնիայի պարտքի 90%-ից ավելին ներքին պետական պարտքն է, այնուհետև Ճապոնիան աշխարհում երկրորդն է ոսկեարժույթի պահուստներին մեծությամբ (գերազանցում է տրիլիոն դոլարը) և հետո, Ճապոնիան արդեն երկրորդ տարիներ հանդիսանում է խոշոր համաշխարհային վարկատու³⁴: 2010 թ-ին վերջինիս միջազգային ներդրումային դիրքի դրական հաշվեկշիռը (արտասահմանում կուտակված ներդրումներին և Ճապոնիայում կատարված օտարերկրյա ներդրումներին տարբերությունը, որը հաշվարկվում է ԱՄՆ վճարային հաշվեկշռի մեթոդիկայով, ներառյալ ոչ միայն անմիջական ներդրումները, այլ նաև տարաբնույթ վարկերը և փոխառությունները) կազմում էր 3.83

³² <http://www.imf.org/external/pubs/ft/weo/2014/01/weodata/weoselco.aspx?g=2001&sg=All+countries>
³³ S է՝ u ԱՄՆ
<http://www.imf.org/external/pubs/ft/weo/2014/01/weodata/weorept.aspx?sy=2011&ey=2013&scsm> կայքը:
³⁴ Госдолг Японии превысил квадриллион иен, <http://lenta.ru/news/2013/08/09/quadrillion>

տրլն. դոլ ³⁵: Ի հակադրություն վերջինիս 2010թ-ին ԱՄՆ-ն ունեւր միջազգային ներդրումային դիրքի բացասական հաշվեկշիռը -2.47 տրլն. դոլար:

Ինչնէ, պարտքային ճգնաժամի վերաճած համաշխարհային ճգնաժամն իր բացասական ազդեցությունն ունեցավ թե՛ զարգացած և թե՛ զարգացող երկրներին տնտեսություններին վրա: Արդյունքում շատ երկրներ գրկվեցին իրենց վարկանիշներին, այդ թվում նաև ԱՄՆ-ն, որը Standard&Poor's գործակալության կողմից գրկվեց իր բարձրագույն ներդրումային վարկանիշից: 2011թ-ի ընթացքում իջան նաև Ճապոնիայի և միջաբնական երկրներին ներդրումային դեկտեմբերին Standard&Poor's-ը քննարկման դրեց ԵՄ եվրոգոտու 15 երկրներին վարկանիշները, իսկ 2012թ. հունվարին իջեցվեցին 9 անդամ պետություններին ներդրումային եվրոպական ինտեգրացիայի հսկաներին մեկի՝ Ֆրանսիայի և 3 այլ պետություններին՝ Պորտուգալիա, Իսպանիա, Իտալիա, որոնց վարկանիշներն արդեն իսկ իջել էին 2011թ-ին: Մնացած 6 երկրներին 5-ին նույնպես տրվել է բացասական կանխատեսում, և միայն Գերմանիան է պահպանել իր ներդրումային ստատուսը: Գերմանիայի բարձր հեղինակությունը՝ AAA, որը հավաստում է երկրի վարկունակության ամենաբարձր մակարդակը 2014թ. հունվարին կրկին անգամ հաստատեցին թե՛ Fitch և թե՛ Standard&Poor's գործակալությունները:

Պետական պարտքի բնագավառը հետազոտող մասնագետների համոզմամբ պարտքային հիմնախնդիրներին կարգավորման ոլորտում միջազգային համագործակցությունը վերջին տասնամյակներում ավելի խորն է եղել մնացած բոլոր ոլորտների համեմատությամբ ³⁶: Խնդիրն այն է, որ պետական պարտքն իր հսկայական ազդեցությունն է ունենում տնտեսություններին վրա, ինչն արտահայտվում է հետևյալ տնտեսական երևույթներում՝ նախ, պետական պարտքը կարող է ազդել դրամավարկային քաղաքականության վրա, ինչը պայմանավորված է այն հանգամանքով, որ մեծ պարտքով երկրները

³⁵ Хейфиц Б. А., “Глобальный долговой кризис и риски долговой политики России”.- М. Институт экономики РАН, 2012, с.11.
³⁶ Хейфиц Б. А., Решение долговых проблем: мировой опыт и российская действительность.- М. Академкнига, 2002, с. 60.

ստիպված լինելով պայքարել Բարձր տոկոսադրույքներին դեմ, հարկադրաբար իրականացնում են ընդլայնողական քաղաքականություն, ինչը չնայած կրճատում է տոկոսադրույքները կարճաժամկետ հատվածում, սակայն երկարաժամկետում, տնտեսության իրական աճի բացակայության դեպքում, իրական տոկոսադրույքները մնում են անփոփոխ, իսկ սղաճը և անվանական տոկոսադրույքները Բարձրանում են: Ծայրահեղ իրավիճակներում, մեծ պարտքով երկրները կանգնում են նաև պակասուրդի ֆինանսավորման խնդրի առջև, իսկ երբ փորձում են խնդիրը լուծել հավելյալ պարտքի կամ սենյորաժի միջոցով, անմիջական հետևանքն է հանդիսանում սղաճը: Պետական պարտքի հաջորդ կարևոր արդյունքը հարկաբյուջե տային քաղաքականությունը որոշող քաղաքական գործընթացների փոփոխումն է: Արտաքին պարտք վերցնելու հնարավորությունը հաճախ կրճատում է բյուջե տային գործընթացի կարգապահությունը, երբ կարիք չի լինում լրացուցիչ ծախսերը հավասարակշռել լրացուցիչ հարկային եկամուտներով: Տնտեսության վրա պետական պարտքի ազդեցության մյուս կարևոր գործոնը տնտեսության խոցելիությունն է ինչպես միջազգային, այնպես էլ ներքին վստահության ճգնաժամից, որի արդյունքում ներդրողները առավել զգուշավոր են դառնում կառավարությանը ֆինանսավորելու հարցում, իսկ պարտքի որոշմակարգակի հասնելուց հետո, վերջիններս ոչ միայն դադարեցնում են պետության վարկավորումը, այլ նաև, վաճառում են տվյալ պետության պետական արժեթղթերը, հեռանալով տվյալ պետության փողի և կապիտալի շուկաներից: Սա հատկապես կարող է խիստ բացասական ազդեցություն ունենալ այնպիսի երկրներին համար, որոնք ունեն փոխառում միջոցների հայթայթման սահմանափակ աղբյուրներ: Պարտքի, հատկապես արտաքին պարտքի հաջորդ կարևոր հետևանքը երկրի քաղաքական անկախության կամ միջազգային առաջատար դիրքերի թուլացումն է, ընդ որում, երկրի քաղաքական անկախության թուլացումը ուղիղ համեմատական է երկրի փոխառում միջոցների նկատմամբ պահանջարկին³⁷:

³⁷ Իսրայելյան Ս.Հ. <<Պետական Պարտքի բեռը և հարկաբյուջե տային կայունության վրա նրա ազդեցության գնահատման խնդիրը>> տ.գ.թ. գիտական ստիճանի հայցման ստեղծագործություն, Երևան 2003, էջ 53-56:

ՄԱԿ-ի մասնագետները գնահատում են վրագոտու խորացող ճգնաժամը, ԱՄՆ-ում առկա բյուջե տային դեֆիցիտի հիմնախնդիրը և Չինաստանի տնտեսական ցուցանիշների կտրուկ նվազումը կարող է հանգեցնել նոր համաշխարհային հետընթացի (рецессия)³⁸, որը կհանգեցնի համաշխարհային ֆինանսական ակտիվների կրճատման, ֆինանսական հովանավորչության (протекционизм) և ժողովրդագրական: Ավելի ակնհայտորեն կարող են դրսևորվել արժույթային պատերազմները: Անխուսափելի կդառնա տնտեսական ակտիվության անկումը, գարգացող տնտեսություններից կապիտալի արտահոսքը:

Խնդիրները հաջորդ խումբը կախված կլինի վճարահաշվարկային համակարգերի և պատնացող ռիսկերից, աշխարհի խոշորագույն բանկերի եկամտային և իրացվելի ակտիվների, ինչպես նաև կապիտալացման մակարդակի նվազումից: Հսկայական վնասներ կարող է կրել նաև Եվրոպական կենտրոնական բանկը: Այսամենք հաղթահարելու համար կպահանջվի պետական միջամտություն, բյուջեի բեռի ավելացում, որը հարվածի տակ կդնի խնդրահարույց երկրների ճգնաժամային վիճակից հանելու համար ստեղծված Եվրոպական ֆինանսական կայունության ֆոնդի գոյությունը: Վտանգի տակ կարող է դրվել նաև միասնական արժույթի գոյությունը ընդհանրապես, որին կհաջորդի այն, որ առանձին երկրներ կսկսեն դուրս գալ Եվրամիությունից:

Այս բոլորից հետևությունը մեկն է, որ գնալով ավելի ու ավելի է սրվում ֆինանսական կայունության, մասնավորապես պարտքի կայունության հիմնախնդիրը: ՀՆԱ-ի առկա տեմպեր նույնակի չեն կարող բավարարել պետական չնվազող ծախսերը և մյուս կողմից էլ պարտքային միջոցներն էլ այլևս հարցի լուծման տարբերակ չեն կարող ծառայել, քանի որ դրանք միայն փակում են նախորդ ծախսերը և ոչ թե ուղղվում են տնտեսության վերականգնմանը:

Թվարկված խնդիրները լուծման նպատակով մի շարք երկրներում ընդունվել են տարբեր իրավական ակտեր («The Budget Control Act» ԱՄՆ բյուջե տային վերահսկողության մասին օրենքը, ՌԴ-

³⁸ Зона евро уже в рецессии, что чревато новым глобальным экономическим кризисом, Центр новостей ООН, <http://www.un.org>

նում, Ուկրաինայում, Իտալիայում, ինչպես նաև միջաբնայլ երկրներում ընդունվեցին հակաճգնաժամային օրենքներ), մեկնարկեցին որոշակի ծրագրեր (ԱՄՆ-ում՝ «Օպերացիա Թվիտ», այնուհետև «Քանակական մեղմացում - QE» ծրագիրը, տարբեր երկրներում շակեցին և ներդրեցին տնտեսության հակաճգնաժամային ծրագրեր) և կառույցներ, որոնք պետք է նպաստեն ստեղծված խնդիրներին լուծմանը: Ընդ որում այս երկրներին յուրաքանչյուրն ընտրեց իր համար նախընտրելի հակաճգնաժամային քաղաքականության տարբերակը: Այսպես, ԱՄՆ-ում այն ուղեկցվեց տնտեսության մեջ դրամային և արկածաբար, ինչպես նաև պարտքի առավելագույն շեմի բարձրացմամբ: Եվրոպական երկրները նախապատվությունը տվեցին ծախսերի կրճատմանը և հարկերի ավելացմանը:

1.3 Արտաքին պետական պարտքի գնահատման արդի համակարգը

Համաշխարհային տնտեսության փոփոխություններին արդյունքում աշխարհի գրեթե բոլոր երկրներն ունեն պարտքային պարտավորություններ: Վերջին տարիներին պարտքի կառավարման խնդիրները բավականին սուր են դրվել նաև զարգացող երկրներում: Խնդիրն այն է, որ այս երկրները բախվում են լուրջ հաշվեկշռային ռիսկի հետ՝ ունենալով ոչ միայն ՀՆԱ-ն մի քանի անգամ գերազանցող պարտքի, հատկապես արտաքին պարտքի շատ մեծ կշիռ³⁹, այլ նաև ձևական բնույթի կապիտալի շուկա, ֆինանսական ապակենտրոնացման ցածր մակարդակ, որը ստիպում է պետությանը բազմաթիվ պարտավորություններ ստանձնել և երաշխիքներ տրամադրել՝ մեծացնելով անվճարունակության ճգնաժամի հավանականությունը: Տեսականորեն ընդունված է, որ կուտակված պետական պարտքի մեծությունը խելամիտ է այն դեպքում, երբ պետության արդյունավետ տնտեսական քաղաքականություն վարելու պայմաններում պարտքի մեծությունն արտահայտող հարաբերական ցուցանիշները կայուն են կամ նվազման միտում ունեն: Հակառակ

³⁹ External debt sustainability in HIPC completion point countries, IMF Working Paper , Yan Sun, September 2004, p. 13.

դեպքում, պարտքի մեծությունն անընդունելի է, ինչն էլ ենթադրում է պարտքի վերակառուցում⁴⁰:

Չնայած աշխարհի տարբեր երկրներում փոխառություններ վերցնելու իրավունքների շրջանակները տարբեր են (օրինակ երկրների մեծ մասում կառավարության անունից փոխառություններ վերցնելու իրավունքը պատկանում է ֆինանսների նախարարությանը, սակայն կան նաև երկրներ, որտեղ այդ իրավունքը փոխանցված է նախարարների խորհրդին կամ, ինչպես, Հնդկաստանի դեպքում՝ ուղղակիորեն կենտրոնական բանկին), այնուամենայնիվ, արտաքին պարտքի հետ կապված ռիսկերն իրենց չափորոշիչներով հիմնականում համընդհանուր բնույթ ունեն։ Վերջինս պայմանավորված է այն հանգամանքով, որ արտաքին վարկավորումը ստացող գրեթե բոլոր երկրների համար առաջնային նշանակություն ունեն այնպիսի հանգամանքներ, ինչպիսիք են վարկային միջոցների ձեռք բերման պայմանները, վերջիններիս արդյունավետ և նպատակային օգտագործումը, ինչպես նաև ժամանակին ստանձնած պարտավորությունները պատշաճ կերպով կատարելու կարողությունը։ Այն հանգամանքը, որ արտաքին պետական պարտքի անկայուն մակարդակը մեծ խոչընդոտ է տնտեսական աճի և զարգացման համար, ապացուցվել է ծանր պարտքի բեռ ունեցող և աղքատ բազմաթիվ երկրների օրինակով⁴¹։ Հենց այս խնդիրների առկայությունն է ստիպում երկրներին սահմանափակել ներգրավվող փոխառությունների ծավալները և վերանայել փոխառությունների նպատակայնությունը։ Աշխարհի բազմաթիվ երկրներում օրենսդրությամբ սահմանափակված է պարտքի ծավալը (ԱՄՆ, Եվրամիության երկրներ)։ Սակայն կան նաև երկրներ, օրինակ Մեծ Բրիտանիան, որոնք այս հարցում համեմատաբար ավելի ազատական դիրքորոշում ունեն և գանձապետարանին թույլատրված է դրամավարկային նպատակներից ելնելով, ավելացնել ֆինանսավորումը, իսկ պարտքի ծավալի չափի կարգավորումը

⁴⁰ Krueger A.O., "Sovereign Debt Restructuring Mechanism-One Year Later". International Monetary Fund, Presented at the European Commission, Brussels, Belgium, December 10, 2002. <http://www.imf.org/external/np/speeches/2002/121002.htm>.

⁴¹ Debt sustainability in Low-Income Countries-Proposal for an Operational Framework and Policy Implications, IMF and IDA, February 3, 2004, p. 9.

ի ր ակ ան աց վ ու մ է ան ու ղ ղ ակ ի կ ե ր պ ո վ` հ աս տ ա տ ե լ ո վ հ ար կ մ ան դ ր ու յ ք ա չ ա փ ե ռ ը ն կ առ ա վ ար ու թ յ ան ծ ա փ ս ե ռ ի պ լ ան ը :

Հ Հ - ու մ ն ու յ ն պ ե ս գ ո ռ ծ ու մ է կ առ ա վ ար ու թ յ ան պ ար տ ք ի օ թ ե ն ս դ ր ակ ան կ ար գ ա վ ո թ մ ան մ ե խ ան ի գ մ ը . այ ս պ ե ս « Պ ե տ ակ ան պ ար տ ք ի մ աս ի ն » Հ Հ օ թ ե ն ք ի 5-ր դ հ ո ղ վ ա ծ ի հ ամ ա ձ այ ն , կ առ ա վ ար ու թ յ ան պ ե տ ակ ան պ ար տ ք ը տ լ յ ալ տ ար վ ա դ ե կ տ ե մ ք ե ռ ի 31-ի դ ր ու թ յ ամ ք չ պ ե տ ք է գ ե ռ ա գ ան ց ի Հ այ ս ս տ ան ի Հ ան ր ա պ ե տ ու թ յ ան ն ա փ ո թ դ տ ար վ ա հ ամ ա փ առ ն ն ե ռ ք ի ն ար դ յ ու ն ք ի 60 տ ո կ ո ս ը , ի ս կ ե թ ե պ ե տ ակ ան պ ար տ ք ը տ լ յ ալ տ ար վ ա դ ե կ տ ե մ ք ե ռ ի 31-ի դ ր ու թ յ ամ ք գ ե ռ ա գ ան ց ու մ է Հ Հ ն ա փ ո թ դ տ ար վ ա Հ Ն Ա 50 տ ո կ ո ս ը , ս պ ա հ ա ջ ո թ դ տ ար վ ա պ ե տ ակ ան ք յ ու ջ ե ի պ ակ ս ս ո թ դ ը չ պ ե տ ք է գ ե ռ ա գ ան ց ի Հ Հ Հ Ն Ա-ի վ ե ռ ջ ի ն ե ռ ե ք տ ար ի ն ե ռ ի ծ ա վ ալ ն ե ռ ի մ ի ջ ի ն ց ու ց ան ի շ ի 3%-ը : Վ ե ռ ը ն շ վ ա ծ պ ա հ ան ջ ն ե ռ ի ն չ հ ամ ս պ ա տ ս ս խ ան ո ղ պ ե տ ակ ան պ ար տ ք առ ա ջ ա ց ն ո ղ գ ո ռ ծ ար ք ն առ ո չ ի ն չ է ⁴² :

Ե կ ամ տ ի տ ար ք ե ռ մ ակ ար դ ակ ն ե ռ ու ն ե ց ո ղ ե ռ կ ը ն ե ռ ու մ պ ե տ ակ ան պ ար տ ք ի կ այ ու ն ու թ յ ան գ աղ ա փ ար ն ե ռ ը ն լ ու ծ ե լ ի խ ն դ ի ը ն ե ռ ն այ լ ե ն , ի ն չ ը կ ապ վ ա ծ է այ ն պ ի ս ի փ ա ս տ ե ռ ի հ ե տ , ո թ , օ թ ի ն ակ ե կ ամ տ ի ք ար ձ ր ն մ ի ջ ի ն մ ակ ար դ ակ ու ն ե ց ո ղ ե ռ կ ը ն ե ռ ը հ ի մ ն ակ ան ու մ հ ի մ ն վ ու մ ե ն ֆ ի ն ան ս ա վ ո թ մ ան մ աս ն ա վ ո թ աղ ք յ ու ը ն ե ռ ի վ ր ա , մ ի ն չ դ ե ո ե կ ամ տ ի ց ա ծ ր մ ակ ար դ ակ ու ն ե ց ո ղ ե ռ կ ը ն ե ռ ու մ գ ե ռ ակ շ ո ու մ ե ն փ ո խ առ ու թ յ ու ն ն ե ռ ի պ ա շ տ ո ն ակ ան աղ ք յ ու ը ն ե ռ ը , թ ե ն ո թ ո շ ակ ի ո թ ե ն առ կ ա ե ն ն ան մ աս ն ա վ ո թ կ ապ ի տ ալ ի ն ե ռ հ ո ս ք ե ռ : Ա թ դ յ ու ն ք ու մ , այ ս ե ռ կ ը ն ե ռ ու մ պ ե տ ակ ան պ ար տ ք ի կ այ ու ն ու թ յ ու ն ն առ ան ձ ն ապ ե ս կ ա փ ա վ ա ծ չ է շ ու կ այ ակ ան ց ն ց ու մ ն ե ռ ի ց , ի ս կ պ ար տ ք ի ան կ այ ու ն ու թ յ ան ամ ե ն ա հ ի մ ն ակ ան պ ա տ ճ առ ն ե ռ ի ց է այ ն հ ան գ ամ ան ք ը , ո թ վ ար կ ա տ ու ն ե ռ ը հ ր ա ժ ար վ ու մ ե ն ար տ ո ն յ ալ պ այ մ ան ն ե ռ ո վ վ ար կ ե ռ ն դ ր ամ ա շ ն ո թ հ ն ե ռ տ ր ամ աղ ը լ ու ց :

Ե ռ կ ը ի ար տ ա ք ի ն պ ե տ ակ ան պ ար տ ք ի մ ե ծ ու թ յ ան վ տ ան գ ը կ ար ե լ ի է դ ի տ ար կ ե լ հ ե տ ն յ ալ տ ե ս ան կ յ ու ն ն ե ռ ո վ .

Ն ա փ ա , կ ար ե լ ի է ն շ ե լ ի ր ա ց վ ե լ ի ու թ յ ան խ ն դ ի ը ը , ո թ ը առ ա ջ է գ ալ ի ս այ ն դ ե պ ք ու մ , ե ռ ք փ ո խ առ ու ն չ ն այ ա ծ ո թ ի վ ի ճ ակ ի է մ ար ե լ ար տ ա ք ի ն պ ար տ ք ը , ս ակ այ ն ն ր ա մ ո տ ժ ամ ան ակ ա վ ո թ ապ ե ս ք ա ց ակ այ ու մ ե ն ի ր ա ց վ ե լ ի այ ն պ ի ս ի մ ի ջ ո ց ն ե ռ (ար տ ար ժ ու յ թ , ի ր ա ց վ ե լ ի

⁴² « Պ ե տ ակ ան պ ար տ ք ի մ աս ի ն » Հ Հ օ թ ե ն ք , ը ն դ ու ն վ ա ծ է 26.05.2008, Հ Օ -78-Ն, հ ո ղ վ ա ծ 5:

ակտիվներ), որոնք հնարավորություն կտան օտարերկրյա վարկատուներին նկատմամբ մարել պարտավորությունները: Սովորաբար, նման խնդիրներին դեպքերում վերանայվում են վճարումներին ժամկետները, կամ տրամադրվում են ֆինանսավորում: Հաջորդը, դա վճարունակության խնդիրն է, որի առաջացումը կապված է պարտքի հիմնական գումարի և պարտքի տոկոսներին վճարման համար անհրաժեշտ գումար ակտիվներին անբավարարության հետ, ինչի հետ կապված պարտապան երկիրն ի վիճակի չէ մարել փոխառությունը: Հաջորդը՝ պարտքը մարելու ցանկության խնդիրն է, երբ պարտապան երկիրը չի մարում իր պարտքը, չնայած ունի իրացվելիություն անհրաժեշտ մակարդակ և վճարունակ է: Նման խնդիրները առաջանում են, երբ փոխառուի համար առավել շահավետ է հրաժարվել վճարումներից, կորցնելով սեփական երկրի վարկանիշը, քան մարել պարտքերը և տոկոսները:

Խոսելով պարտքային վտանգների մասին, անհրաժեշտ է նշել նաև արտաքին վարկավորման պայմաններին (վարկի տրամադրման և վճարման արտարժույթը, գումարը, ժամկետը, վարկային միջոցների օգտագործման և մարման պայմանները, արժեքը, ապահովվածության տեսակը և ռիսկերի ապահովագրման մեթոդները) կարևորության մասին, որոնք, իրենց հերթին, պայմանավորում են արտաքին պարտքի հետ կապված ռիսկերը: Կախված կոնկրետ երկրին բնորոշ պայմաններից, պետական պարտքի կառավարման գործընթացում տարբեր երկրներ կենտրոնանում են ռիսկերի տարբեր տեսակների վրա՝ օրինակ, Կոլումբիայի պարտքի կառավարման նպատակն է սահմանափակել արտարժույթային պարտքի ենթարկումը շուկայական ցնցումներին կամ միջազգային ճգնաժամերին, մինչդեռ Իտալիան կենտրոնացնում է իր ջանքերը տոկոսադրույքներին և վերաֆինանսավորման ռիսկերի նվազեցման վրա: Իսկ 1990-ականներին Լատինամերիկյան և ուսական ճգնաժամերը ցույց տվեցին, որ վերաֆինանսավորման ռիսկի կառավարումն արդիական խնդիր է բազմաթիվ զարգացող և աղքատ երկրներին համար⁴³:

⁴³ Հովեյան Ս. Մ. «Արտաքին պետական պարտքի արդյունավետ կառավարման հիմնախնդիրները (ՀՀ օրինակով)», տ.գ.թ. գիտական աստիճանի հայցման ստեղծագործություն, Երևան 2010, էջ 34

Ար տաք ի ն պե տակ ան պար տք ի հ ի մ ն ակ ան ո ի ս կ ը կ ապվ ած է վ ե ը ջ ի ն ի ս ս պաս ար կ մ ան ծ ախս ե թ ի կ տր ու կ աճ ի հ ե տ, ո թ ը կ ար ո ղ է տե ղ ի ու ն ե ն ալ տո կ ո ս ադ ը ու յ ք ն ե թ ի ն փ ո խ աք ժ ե ք ի աճ ի ն ա յ լ հ ան գ ա մ ան ք ն ե թ ի պ ա տ ճ առ ո վ :

Տ ո կ ո ս ադ ը ու յ ք ի ո ի ս կ ը ք ն ու թ ա գ ը ու մ է տո կ ո ս ադ ը ու յ ք ն ե թ ի տա տ ան ու մ ն ե թ ի պ ա տ ճ առ ո վ պար տք ի ս պաս ար կ մ ան ծ ախս ե թ ի ա վ ե լ ա գ ու մ ը : Տ ո կ ո ս ադ ը ու յ ք ի ո ի ս կ ը կ ախվ ած ու թ յ ան մ ե ջ է ն ան ակ տի վ ի ժ ա մ կ ե տ ա յ ն ու թ յ ու ն ի ց ` կ ար ճ ժ ա մ կ ե տ ա յ ն ու թ յ ան պար տք ն առ ա վ ե լ ո ի ս կ ա յ ի ն է դ ի տ վ ու մ , ք ան ե թ կ ար ա ժ ա մ կ ե տ ը : Տ ո կ ո ս ադ ը ու յ ք ն ե թ ի կ տր ու կ տա տ ան ու մ ն ե թ ը , դ ժ վ ար ե ց ն ու մ է ն պե տակ ան ք յ ու ջ ե ու մ տո կ ո ս ա յ ի ն ծ ախս ե թ ի մ ակ ար դ ակ ի կ ան խ ա տ ե ս ու մ ը , ի ն չ ը կ ապվ ած է ա յ ն հ ան գ ա մ ան ք ի հ ե տ, ո թ ք ար ձ ը տո կ ո ս ադ ը ու յ ք ն ե թ ը հ ան գ ե ց ն ու մ է ն մ ե ծ ծ ախս ե թ ի :

Փ ո խ աք ժ ե ք ի ո ի ս կ ն ար տա հ ա յ տ ու մ է փ ո խ աք ժ ե ք ի փ ո փ ո խ ու թ յ ան ար դ յ ու ն ք ու մ պար տք ի ս պաս ար կ մ ան ծ ախս ե թ ի ա վ ե լ ա գ ու մ ը , ո թ ը հ ատկ ապե ս կ ապվ ած է ար տա ք ժ ու յ թ վ գ ն ան շ վ ած կ ա մ ի ն դ ե ք ս ա վ ո թ վ ած պար տք ի ա գ գ ա յ ի ն ար ժ ու յ թ ո վ ս պաս ար կ մ ան ծ ախս ե թ ի տա տ ան ու մ ն ե թ ի հ ե տ: Ա յ ս տե ղ ի ց կ ար ե լ ի է հ ե տ ն ու թ յ ու ն ան ե լ , ո թ ո թ ք ան մ ե ծ է ա գ գ ա յ ի ն ար ժ ու յ թ ո վ գ ն ան շ վ ած պար տք ի տե ս ակ ար ար կ շ ի ո ը ը ն դ հ ան ու թ պար տք ի կ առ ու ց վ ած ք ու մ , ա յ ն ք ան փ ո ք թ է ա գ գ ա յ ի ն ար ժ ու յ թ ի փ ո խ աք ժ ե ք ի փ ո փ ո խ ու թ յ ան ա գ դ ե ց ու թ յ ու ն ը պար տք ի վ ը ա :

Հ Հ - ու մ գ ն ալ ո վ առ ա վ ե լ ար դ ի ակ ան է դ առ ն ու մ տո կ ո ս ադ ը ու յ ք ի ո ի ս կ ի գ ն ա հ ա տ ու մ ը ` կ ապվ ած ա յ ն հ ան գ ա մ ան ք ի հ ե տ, ո թ տա ք ե ց տա ք ի , հ ատկ ապե ս 2009թ.-ի ց ս կ ս ած , ա վ ե լ ան ու մ է ն լ ո ղ ա գ ո ղ տո կ ո ս ադ ը ու յ ք ո վ ն ե թ գ ը ր ա վ վ ո ղ վ ար կ ե թ ը : Գ աղ տ ն ի ք չ է , ո թ ո թ ք ան մ ե ծ է ը ն դ հ ան ու թ պար տք ու մ լ ո ղ ա գ ո ղ տո կ ո ս ադ ը ու յ ք ո վ վ ար կ ի տե ս ակ ար ար կ շ ո ի ը , ա յ ն ք ան պար տք ը գ գ ա յ ու ն է տո կ ո ս ադ ը ու յ ք ն ե թ ի տա տ ան ու մ ն ե թ ի ն :

Հ Հ պար տք ի կ առ ա վ ար մ ան տե ս ան կ յ ու ն ի ց հ ա ջ ո թ դ կ ար ն ո թ ա գ ու յ ն ի ն դ ի թ ը փ ո խ աք ժ ե ք ի ո ի ս կ ի գ ն ա հ ա տ ու մ ն ու ա յ դ ո ի ս կ ի մ ե ղ մ ա գ ու մ ն է : Գ աղ տ ն ի ք չ է , ո թ Հ Հ պե տակ ան պար տք ի հ ի մ ն ակ ան մ սս ը կ ա գ մ ո ղ ար տա ք ի ն պե տակ ան պար տք ի մ ար ու մ ն ու ս պաս ար կ ու մ ը կ ա տա ք վ ու մ է ար տա ք ժ ու յ թ ո վ : Ե վ հ ե տ ն ա ք ար , 2014թ. դ ե կ տե մ ք ե թ ի ն գ ը ր ան ց վ ած դ ր ա մ ի ար ժ ե գ ը կ ու մ ը (2014թ.-ի դ ե կ տե մ ք ե թ ի 31-ի դ ը ու թ յ ամ ք ԱՄՆ դ ո լ ար ի

փոխարժեքը ՀՀ դրամով կազմեց 474,97 դրամ, որը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի փոխարժեքից ավել էր 69,33 դրամով⁴⁴) իր քաղաքական ազդեցությունը կթողնի արտաքին պետական պարտքի մեծություն վրա: Փոխարժեքի տատանումներից հնարավոր ռիսկերի մեղմման տեսանկյունից անչափ կարևորվում է 2009թ.-ի ապրիլի 3-ին ՀՀ ՖՆ-ի և ՀՀ ԿԲ-ի միջև կնքված «Հաշվի սպասարկման մասին» թիվ 11/301261 պայմանագրում փոփոխություն կատարելու մասին համաձայնագրի ընդունումը: Համաձայնագրով սահմանվում է, որ բյուջետային տարվա ընթացքում պարտքի մարումը և տոկոսագումարները, ինչպես նաև համաձայնագրում նշված այլ վճարները կատարվում են ՀՀ կառավարության տվյալ տարվա բյուջետային ուղերձում ֆիքսված փոխարժեքով:

Հաջորդը՝ պարտքի վերաֆինանսավորման ռիսկն է, երբ նոր թողարկված պարտքային միջոցների նկատմամբ ցածր պահանջարկի հետ կապված, վերջինիս գործիքների տեղաբաշխումից ստացված հասույթը չի բավարարում մարվող պարտքի դիմաց վճարումները կատարելու համար, ինչը առաջացնում է բարձր տոկոսադրույքի վճարման ռիսկ, կամ դրամի մասը պետք է ֆինանսավորվի նոր թողարկվող պարտքի միջոցով: Այն որոշակի նմանություն ունի տոկոսադրույքի ռիսկի հետ, որը սակայն կարող է նյութական անապետական պարտատուերի նկատմամբ պահանջարկի անսպասելի անկման և կանխիկ հոսքերի կառավարման գործիքներն օգտագործելու անկարողություն պատճառով⁴⁵: Այս է պատճառը, որ վերաֆինանսավորման ռիսկերի կառավարման խնդիրը զարգացող տնտեսությունների համար պետական պարտքի հետ կապված ռիսկերի կառավարման կարևորագույն բաղադրիչներն են⁴⁶:

Իրացվելիություն ռիսկը պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ ակտիվների ցածր իրացվելիություն կամ դրանց

⁴⁴ Տվյալները վերցված են ԿԲ-ի փոխարժեքների արխիվից՝ <https://www.cba.am>

⁴⁵ Չարգացած երկրները սովորաբար վերաֆինանսավորման ռիսկի խնդիր չեն ունենում, կապված կայուն, դիվերսիֆիկացված տնտեսության, պետական բյուջեի եկամուտների կայուն բազայի, բյուջեի պակասորդի ցածր մակարդակի, կամ վերջինիս քաղաքականության, ինչպես նաև երկարամյակ տարտաքին թողարկելու ունակության և պարտքի մեծ ծավալներ կլանելու ընդունակ զարգացած ֆինանսական շուկաներ և ենթակառուցվածքներ ունենալու հետ:

⁴⁶ Togo Eriko. Identifying and Managing Cost and Risk on Public Debt Portfolio. Designing Government Debt Management Strategies Workshop. May 28-June 1, 2007. World Bank Paris Conference Center, Paris, France.

Իրացվել ինությունն և վազման պատճառով պարտավորությունները կատարելու անհնար ինությունն ուսկն է, որն առաջացել է նոր պարտք թողարկելու անկարողությունն պատճառով:

Հաջորդը գործառնական ուսկն է, որի հիմնական պատճառը մարդկային վրիպումներն ու սխալներն են, որոնք հատկապես կարող են հանդես գալ ներքին ընթացակարգերի և համակարգերի ձախողման, աշխատակիցների սխալների, արտաքին պատճառների հետևանքով պարտքի կառավարման աշխատանքների խաթարման հետևանքով ած ուսկն տեսքով:

Եվ վերջապես վարկային ուսկնը, որը պարտքային գործարքի պայմանագրային պարտավորությունը կատարելու անկարողությունն հետևանքով գործարքի մյուս կողմի՝ ֆինանսական վնասներ կրելու հետևանքով ած ուսկն է⁴⁷:

Վերը նշված ուսկների ազդեցությունը հաշվի առնելով, Համաշխարհային բանկի մասնագետներն առանձնացնում են երեք հիմնական պարամետրեր, որոնցով կարելի է գնահատել պարտքի կայունությունը: Դրանք են՝ պարտքային բեռը, արտաքին պարտքի կառավարման ինստիտուտների ու քաղաքականության որակը և, այսպես կոչված, ՀՆԱ-ի ցնցումները: Ահա այս երեք փոփոխականները հաշվարկելով՝ հնարավոր է դառնում կանխատեսել սպասվելիք տնտեսական անկումները⁴⁸, իսկ տարբեր կառույցների կողմից մշակված և կիրառվող պետական պարտքի գնահատման գործակիցները հնարավորություն են տալիս գնահատել փոխառու երկրների պետական պարտքի կուտակված բեռի սպասարկման և վճարման հնարավորությունը: Այս նույն սկզբունքով է ԱՄՆ-ն սահմանում պարտքի կայունությունը, ըստ որի, պարտքը կայուն է, եթե այն բավարարում է իրացվել ինությունն⁴⁹ պայմանին՝ առանց խոչոր

⁴⁷ «Պետական պարտքի հետևանքով ած ուսկների և կանխիկ հոսքերի կառավարման բնագավառում կուտակված միջազգային ուսանելի փորձի ներկայացում և ՀՀ պետական պարտքի ուսկների և կանխիկ հոսքերի կառավարման ոլորտում առաջարկվող նոր մոտեցումների վերաբերյալ» պատրաստվել է Արտակ Բյուրումյանի կողմից Միջազգային Զարգացման ընկերակցությունից ստացված TF091617 դրամա նորհով նախատեսված աշխատանքների շրջանակներում, Երևան 2009թ, էջ 44:

⁴⁸ Պետրոսյան Ա. <<Արտաքին պարտքի կայունությունը և դրա գնահատման եղանակները>> Հայաստան, Ֆինանսներ և Էկոնոմիկա, #7-8 /84-85/ հուլիս-օգոստոս, 2007թ. էջ 16:

⁴⁹ Պարտքը համարվում է իրացվելի, եթե ապագա առաջնային հաշվեկշիռները բավարարում են պարտքը (տոկոսավճարները և մարմարը) վերադարձնելուն:

ճշգրտումներ կատարելու՝ պետական ծախսերի մեծ կրճատման և հարկերի կտրուկ աճի տեսքով⁵⁰: Գնահատման ժամանակ հաշվի են առնվում ՀՆԱ-ի, պետական բյուջեի մուտքերը, արտաժնյա թի՝ երկիր ներհոսքը և այլն, իսկ պարտքի կայունություն գնահատման հիմքում ընկած է հետևյալ պարզ հարցի պատասխանի որոնումը. ե՞րբ պարտքը կդառնա այնքան մեծ, որ հնարավոր չի լինի այն ամբողջությամբ սպասարկել⁵¹:

Ներկայումս երկրները կիրառում են արտաքին պարտքի գնահատման Համաշխարհային բանկի առաջարկած մեթոդաբանությունը, որի դեպքում հիմնվում են ոչ թե պարտքի անվանական արժեքի, այլ դրա գուտ ներկա արժեքի վրա: Արտաքին պարտքի գուտ ներկա արժեքը գուցանիչը՝ պարտքի դիսկոնտաված արժեքը, որը հաշվի է առնում հաջորդ տարիներին ընթացքում պարտքի սպասարկման (մարում +տոկոսավճար) ծավալները մինչև դրավերջնական մարումը, հաշվարկվում է հետևյալ բանաձևի օգնությամբ⁵².

$$NPV=DS/(1+r)^n, (1.3.1)$$

Որտեղ՝ NPV-ն պարտքի *գուտ ներկա արժեքն (ՉՆԱ)* է, DS-ն պարտքի սպասարկման գումարներն ամբողջությամբ, r-ը դիսկոնտավուման գործակիցն է⁵³:

Պարտքի գուտ ներկա արժեքը, որը հաջորդ տարիներին պարտքային պարտավորություններին ներկա արժեքներին գումարն է, իր մեջ ներառում է վարկի ոչ միայն բացարձակ, այլ նաև որոշորակական գուցանիչներ՝ տոկոսադրույք, արտոնյալություն պայմաններ և այլն⁵⁴: Համաշխարհային բանկի գնահատմամբ ՉՆԱ հարաբերակցությունը ՀՆԱ-ի և արտահանման նկատմամբ,

⁵⁰ Assessing Sustainability Policy Development and Review Department, SM/02/166, p. 5. Available at www.imf.org/external/np/pdr/sus/2002/eng/052802.htm

⁵¹ Debt sustainability assessment: The IMF approach and alternatives” Chales Wyplosz, Comendium on Debt Sustainability and Development, UN, New York and Geneva 2009, p. 18.

⁵² Իսրայելյան Ս. Հ. «Պետական Պարտքի բեռը և հարկաբյուջե տային կայունության վրա նրա ազդեցություն գնահատման ինդիքը» թեմայով տ.գ.թ. գիտական աստիճանի հայցման առենախոսություն, Երևան 2003, էջ 49-50:

⁵³ Յուրաքանչյուր վեց ամիսը մեկ սահմանվում է ԱՄՀ կողմից տարբեր արժնայինների համար, իսկ «Չարգացման ծրագրերի օժանդակման կոմիտեն» միջազգային վարկերի արտոնյալություն պայմանները համադրելու համար որպես ստանդարտ դիսկոնտային տոկոսադրույք առաջարկում է հիմք ընդունել 10%-ը:

⁵⁴ Մարկոսյան Ա., Հախվեդյան Դ., Նազարյան Գ., «Հայաստանը միջազգային տնտեսական հարաբերություններին համակարգում», Երևան, 2002թ., 255 էջ:

դասակարգում է երկրներն ըստ առավել ծանր, միջին և նվազ պարտքի
բեռ ունեցող երկրների: Երկիրը համարվում է վճարունակ, եթե
եկամ ունեքի (առանց տոկոսավճարների) գուտներկա արժեքը (ՁՆԱ)
առնվազն այնքան է, որ ծածկում է ծախսերի ՁՆԱ-ն և ցանկացած
սկզբնական պարտքի գումարը: Մա կառավարության համար
ենթադրում է, որ հետագա առաջնային հաշվեկշիռների ՁՆԱ-ն պետք է
հավասար կամ մեծ լինի պետական պարտքի մեծության ՁՆԱ-ից կամ
պարզապես հավասար կամ մեծ` պետական պարտքի մեծությունն ից⁵⁵:

Իր վրա կրելով տոկոսադրույքի ռիսկի ազդեցությունը,
պետական պարտքի բեռի գնահատման տեսանկյունից շատ կարևոր է
պարտքի տոկոսադրույքի ցուցանիշը, քանի որ վերջինս բյուջեի
զրոյական պակասուրդի պայմաններում արտահայտում է ոչ միայն
պետական պարտքի աճի տեմպը, այլ, համադրելով տնտեսական աճի
տեմպի հետ, բնորոշում է նաև պետական պարտքի բեռի
փոփոխությունը: Այն հայտ է, որ երկարաժամկետ կտրվածքով
պետական պարտքի տոկոսադրույքը պետք է առավելագույնս
կանխատեսելի լինի, հակառակ դեպքում կարող են խնդիրներ
առաջանալ երկրի վճարունակության ապահովման և
հարկաբյուջեային կայունության պահպանման տեսանկյունից:
Այս է պատճառը, որ փոխառություններ վերցնելիս նախընտրելի է
հաստատագրված, սակայն մի փոքր բարձր տոկոսադրույքով պարտքը,
քան տվյալ պահին մի փոքր ցածր, սակայն ապագայում անորոշ
տոկոսադրույքով պարտքը, որն արդյունքում երկրի համար կարող է
ավելի ծախսատար լինել: Լոդացող տոկոսադրույքներն, իրենց
հերթին, կարող են կախված լինել ինչպես երկրում գնաճի տեմպից,
այնպես էլ այլ, հիմնականում միջազգային տարբեր փոփոխվող
դրույքներից (օրինակ` LIBOR-ից):

Պետական պարտքի գնահատման հաջորդ կարևոր ցուցանիշը
Գրանտ-էլեմենտն է⁵⁶: Վերջինս բնորոշում է վարկի

⁵⁵ «Հայաստանի պարտքի կայունության վերլուծություն», ՀՀ Ֆինանսների
նախարարություն, Երևան 2011, էջ 21, <http://www.minfin.am/up/macroid/DSA12.10..pdf>

⁵⁶ «Գրանտ էլեմենտը» (անգլ. grant element), օգտագործվում է վիճակագրության մեջ
որպես ինտեգրալ ցուցիչ տրամադրված տարբեր վարկերի և փոխառությունների
պայմանների համադրության համար: Առանձին վարկերի պայմանները
համեմատվում են երեք պարամետրերով. վարկի ժամկետ, արտոնությունների
շրջան և տոկոսադրույք: Այն ցույց է տալիս, թե վարկը արտոնյալ պայմաններով
տրամադրելու դեպքում որքան պակաս գումար է ստանում վարկատուն: (Райзберг Б.А.,

արտոնյալ ու թյան աստիճանը, պարզելու համար, թե այն ինչ չափով է մոտենում գրանտին: Այն հաշվարկվում է որպես վարկի անվանական և դիսկոնտավորված արժեքների տարբերություն, արտահայտված անվանական արժեքի նկատմամբ տոկոսներով: Եթե անհատույց տրամադրված միջոցների գրանտ-էլեմենտը 100% է, ապա վարկերի և փոխառությունների դեպքում 100%-ից ցածր է, իսկ բացասական կարող է լինել միայն այն դեպքում, երբ վարկի նկատմամբ հաշվարկվող տոկոսադրույքը բարձր է դիսկոնտավորման տոկոսադրույքից, ինչը վկայում է, որ վարկը վերցված է շուկայականից բարձր տոկոսադրույքով:

Մինչև Գրանտ-էլեմենտի հաշվարկումը, անհրաժեշտ է դիսկոնտավորել վարկի ապագայում կատարվելիք սպասարկման վճարները՝ ապագա վճարների ներկայարժեքը գտնելով: Վարկի ապագա վճարումների ներկայարժեքը որոշելուց հետո հաշվարկում ենք գրանտ-էլեմենտը.

$$GE = (PA - DA) / PA * 100, (1.3.2)$$

Որտեղ՝ GE-ն գրանտ-էլեմենտն է, PA-ն վարկի հիմնական գումարն է, DA-ն ապագա սպասարկման վճարումների ներկայարժեքը:

Որքան փոքր է վարկի սպասարկման վճարը (հիմնական գումարի մարում և տոկոսավճար) և որքան երկար է արտոնյալ ժամանակաշրջանը, այնքան բարձր է տվյալ վարկի արտոնյալ ու թյան աստիճանը՝ գրանտ էլեմենտը: Ըստ «Զարգացման ծրագրերի օժանդակման կոմիտեի», այն փոխառումիջոցները, որոնց գրանտ էլեմենտը բարձր է 25%-ից, համարվում են արտոնյալ վարկեր: Սակայն, ըստ ԱՄՆ-ի արտոնյալ են համարվում 35%-ից բարձր գրանտ-էլեմենտ ունեցող վարկերը⁵⁷:

Պետական պարտքի բեռի գնահատման համընդհանուր ընդունելի ներկայիս համակարգը առաջ է քաշվել միջազգային ֆինանսական կազմակերպությունների կողմից, որը հնարավորություն է տալիս պետական պարտքի բեռի ու երկրի մակրոտնտեսական իրավիճակի միջև փոխադարձ ազդեցություն վերաբերյալ ընդհանուր

Лозовский Л.Ш., Стародубцева Е.Б.. Современный экономический словарь. — 2-е изд., испр. М.: ИНФРА-М. 479 с.. 1999):

⁵⁷ Клейн Томас М. «Управление внешним долгом» (Технический доклад Всемирного банка), Вашингтон 1994г., с.23.

պատկերացումն ու տանալ : Առավել լայն տարածում գտած ցուցանիշերն են

• Պետական պարտքի և ՀՆԱ-ի հարաբերակցությունն արտահայտած տոկոսներով (ՊՊ/ՀՆԱ*100): Վերջինս հնարավորություն է տալիս գնահատել տնտեսության վրա պարտքային ճնշումը, և կիրառվում է ինչպես արտաքին, այնպես էլ ներքին և համախառն պետական պարտք գնահատման համար: Այս ցուցանիշի մեծությունը խոսում է այն մասին, որ պետությունը երկրում արտադրված ապրանքների և ծառայությունների ավելի մեծ մասնաբաժին պետք է ուղղի ոչ թե ներքին զարգացման խթանմանը, այլ պարտավորությունների կատարմանը □ Եթե պետական պարտք / ՀՆԱ հարաբերակցության դեպքում ցուցանիշը չպետք է գերազանցի 60%-ը⁵⁸, ապա արտաքին պետական պարտք ՀՆԱ հարաբերակցության դեպքում այդ սահմանը նվազում է մինչև 30-35%⁵⁹:

• Արտաքին պետական պարտքի ԶՆԱ-ի և ՀՆԱ-ի հարաբերակցությունը արտահայտած տոկոսներով (ԱՊՊ ԶՆԱ/ՀՆԱ*100): Առավել ծանր պարտքի բեռ ունեցող երկրներում այս ցուցանիշը գերազանցում է 80%-ը, միջին պարտքի բեռ ունեցող երկրներում այն կազմում է 48-80%, իսկ նվազ պարտքի բեռ ունեցող երկրներում՝ մինչև 48% (արտաքին պարտքի կայունության ցուցանիշների շեմային մեծությունները տրված են նաև հավելված 2.1.3-ում):

• Պետական պարտքի սպասարկման ու վճարման տարեկան գումարի և ՀՆԱ հարաբերությունն արտահայտած տոկոսներով, որը բնութագրում է պարտապան երկրի ազգային տնտեսության վրա ընթացիկ պարտքային բեռի ազդեցությունը, և ցույց է տալիս ազգային արդյունքի այն մասնաբաժինը, որն ուղղվում է պարտքային պարտավորությունների կատարմանը: Ցուցանիշը կիրառելի է արտաքին, ներքին և համախառն պետական պարտքի գնահատման համար:

⁵⁸ Այս ցուցանիշը նաև եվրոգոտում ներառվելու Մասստրիխտյան պայմաններից մեկն է: Ներկայիս Ֆինանսատնտեսական ճգնաժամի պայմաններում եվրագոտում միջարք երկրներում դիտվում է պետական պարտքի 60% սահմանագծի խախտում:

⁵⁹ Կարճիկյան Ա., Կարճիկյան Ք. «ՀՀ պետական բյուջեի պակասունըդի, պետական պարտքի վերլուծության և կառավարման նոր մոտեցումներ», Հայաստան, Ֆինանսներ և Էկոնոմիկա, #5 (131) մայիս 2011, էջ 4-5:

• Ար տաք ի ն պե տակ ան պար տք ի և ար տահ ան մ ան հար ար եր ակ ց ու թ յ ու ն ը ար տահ այ տաժ տո կ ու ն եր ո վ (ԱՊՊ /Ար տահ .*100): Այ ս ց ու ց ան ի շ ը ց ու յ ց է տալ ի ս պե տո ո թ յ ան ար տաք ի ն պե տակ ան պար տք ի մ ար մ ան հ ն ար ա վ ո թ ու թ յ ու ն ը կ ապ վ աժ տ վ յ ալ եր կ թ ի ար տահ ան մ ան ո լ ո թ տ ի գ ար գ ա ց վ աժ ու թ յ ան ս ս տ ի ճ ան ի ց : Առ ա վ ե լ ծ ան ր պար տք ի ք ե ո ու ն ե ց ո ղ եր կ թ ն եր ու մ այ ս ց ու ց ան ի շ ը գ եր ա գ ան ց ու մ է 275%-ը , մ ի ջ ի ն պար տք ի ք ե ո ու ն ե ց ո ղ եր կ թ ն եր ու մ այ ն կ ա գ մ ու մ է 165-275% , ի ս կ ն վ ա գ պար տք ի ք ե ո ու ն ե ց ո ղ եր կ թ ն եր ու մ մ ի ն չ և 165%:

• Ար տաք ի ն պե տակ ան պար տք ի ԶՆԱ-ի և ար տահ ան մ ան հար ար եր ակ ց ու թ յ ու ն ը ար տահ այ տաժ տո կ ու ն եր ո վ (ԱՊՊ ԶՆԱ /Ար տահ .*100): Պար տք ի առ ա վ ե լ ծ ան ր ք ե ո ու ն ե ց ո ղ եր կ թ ն եր ու մ այ ս ց ու ց ան ի շ ը գ եր ա գ ան ց ու մ է 220%-ը , մ ի ջ ի ն պար տք ի ք ե ո ու ն ե ց ո ղ եր կ թ ն եր ու մ այ ն կ ա գ մ ու մ է 132-220% , ի ս կ ն վ ա գ պար տք ի ք ե ո ու ն ե ց ո ղ եր կ թ ն եր ու մ մ ի ն չ և 132%: Մ ի ա ժ ա մ ան ակ , մ ե կ տար վ ա ը ն թ ա ց ք ու մ ց ու ց ան ի շ ի ա վ ե լ ի ք ան 25% աճ ը ն ու յ ն պե ս վ տան գ ա վ ո թ է հ ա մ ար վ ու մ պե տո ո թ յ ան վ ճ ար ու ն ակ ու թ յ ան տե ս ան կ յ ու ն ի ց :

• Ար տաք ի ն պար տք ի ս պաս ար կ մ ան և տո կ ու ս ա վ ճ ար ի տար ե կ ան գ ու մ ար ի և ար տահ ան մ ան հար ար եր ակ ց ու թ յ ու ն ը (ԱՊՊ ս պս . և տո կ ու ս ա վ ճ ար /Ար տահ .*100): Այ ս ց ու ց ան ի շ ը թ ու յ լ է տալ ի ս գ ն ա հ ա տե լ եր կ թ ի կ առ ա վ ար ու թ յ ան և ո ե գ ի դ ե ն տ ն եր ի պե տակ ան պար տք ի մ ար մ ան հ ա մ ար ան հ ր ա ժ ե շ տ ար տար ժ ու յ թ ձ ե ո ք ք եր ե լ ու հ ն ար ա վ ո թ ու թ յ ու ն ը : Առ ա վ ե լ ծ ան ր պար տք ի ք ե ո ու ն ե ց ո ղ եր կ թ ն եր ու մ այ ս ց ու ց ան ի շ ը գ եր ա գ ան ց ու մ է 25% (մ ի այ ն ս պաս ար կ մ ան մ ս ս ո վ ` 30% , տո կ ու ս ա վ ճ ար ի մ ս ս ո վ ` 20%) , մ ի ջ ի ն պար տք ի ք ե ո ու ն ե ց ո ղ եր կ թ ն եր ու մ այ ն կ ա գ մ ու մ է 15-25% (մ ի այ ն ս պաս ար կ մ ան մ ս ս ո վ ` 18-30% , տո կ ու ս ա վ ճ ար ի մ ս ս ո վ ` 12-20%) , ի ս կ ն վ ա գ պար տք ի ք ե ո ու ն ե ց ո ղ եր կ թ ն եր ու մ մ ի ն չ և 15% (մ ի այ ն ս պաս ար կ մ ան մ ս ս ո վ ` 18% , տո կ ու ս ա վ ճ ար ի մ ս ս ո վ ` 12%)⁶⁰:

• Պե տակ ան պար տք ի և պե տակ ան ք յ ու ջ ե ի ե կ ա մ ու տ ն եր ի հար ար եր ու թ յ ու ն ը (ՊՊ /ՊԲԵ*100): Վե ր ջ ի ն ս ց ու յ ց է տալ ի ս եր կ թ ի պե տակ ան ք յ ու ջ ե ի վ ր ա պար տք այ ի ն ճ ն շ մ ան մ ե ծ ու թ յ ու ն ը : Փ ո խ առ ու ի պար տք այ ի ն կ այ ու ն ու թ յ ան գ ն ա հ ա տ մ ան այ ս ց ու ց ան ի շ ը

⁶⁰ Andrews D., Boote A.R., Rizavi S.S., Singh S., Debt Relief for Low-Income Countries. The Enhanced HIPC Initiative. Washington DC, IMF, 1999, p. 28.

թույլ է տալ իս պարզել պետական պարտքի այն վիճակը, որի դեպքում կառավարությունը հնարավորություն ունի ամբողջությամբ և ժամանակին կատարելու իր պարտքային պարտավորությունները: Ցուցանիշը կիրառելի է արտաքին, ներքին և համախառն պետական պարտքի գնահատման համար: Ցուցանիշի 250% արժեքի սահմանագիծը դիտարկվում է որպես պարտքային կայունության ապացույց⁶¹□

• Պետական պարտքի սպասարկման ու վճարման տարեկան գումարի և պետական բյուջեի եկամտներին հարաբերությունը (ՊՊ սպասարկում և տոկոսավճար /ՊԲԵ.*100): Այն արտացոլում է երկրի կառավարության ընթացիկ վճարունակությունը, և կիրառելի է ինչպես արտաքին, այնպես էլ ներքին և համախառն պետական պարտքի գնահատման համար: Որպես սահմանային մեծություն ընդունված է ցուցանիշի 10% մեծությունը: Նշենք նաև, որ այս ցուցանիշը հաշվարկվում է նաև պետական բյուջեի միայն հարկային եկամտներին կատարմամբ, և կարևորվում է այն առումով, որ առավել պարզ պատկերացում է տալ իս հատկապես հարկատուներին վրա պետական պարտքի բեռի ծանրությունը վերաբերյալ, քանի որ պետական պարտքից բխող տոկոսավճարները և սպասարկումը (առանձին կամ միասին վերցված) եկամտի այլ աղբյուրներին բացակայության պարագայում հարկային եկամտներին հաշվին վճարելով՝ կառավարության հարկաբյուջեային կայունության վրա պարտքի ազդեցությունն առավել նուրբ, սոցիալական և ռիսկային բնույթ է կրում: Պետք է նշել, որ այս ցուցանիշները աշխարհի տարբեր երկրներում խիստ տարբերվում են: Տոկոսավճարներին և պարտքի սպասարկման մեծություններին համարառանձին վերցված սահմանագծերը տարբեր են, ինչը կախված է ինչպես տվյալ երկրի տնտեսության զարգացման աստիճանից, այնպես էլ տնտեսության մեջ պետության ունեցած դերից: Օրինակ, այլ հավասար պայմաններում, երկիրը ցածր պարտքային պարտավորվածություն ունեցող է համարվում, եթե նրա պետական պարտքի տոկոսավճարներին ամենամյա վճարումները չեն գերազանցում տվյալ բյուջեային տարվա հարկային

⁶¹ Andrews D., Boote A.R., Rizavi S.S., Singh S., Debt Relief for Low-Income Countries. The Enhanced HIPC Initiative. Washington DC, IMF, 1999, p. 4.

եկամուտները 12,5%-ը (12,5-20%-ը՝ միջինացված ցուցանիշ, 20%-ից բարձրը՝ ծանր պարտավորվածությունը ամբերկրներ): Ինչ վերաբերում է պետական պարտքի ամենամյա սպասարկման և բյուջեի հարկային եկամուտներին հարաբերակցությանը, ապա այստեղ միջին պարտավորվածությունը ամբերկրներ են համարվում, երբ պետական պարտքի ամենամյա սպասարկմանը բաժին է ընկնում պետական բյուջեի հարկային եկամուտներին 25-40%-ը (մինչև 25%-ը՝ թեթև, իսկ 40%-ից բարձրը՝ ծանր պարտավորվածությունը ամբերկրներ)⁶²:

• Կուտակված արտարժույթին և թանկարժեք մետաղներին պահուստի և արտաքին պարտքի սպասարկման ու վճարման տարեկան գումարի հարաբերակցությունը հանդես է գալիս որպես պետության վճարունակություն կարևոր ցուցանիշ: Վերջինիս սահմանային մեծությունն է համարվում 100% արժեքը, իսկ դրանից ավելի փոքր ցուցանիշը ցույց է տալիս պետության և քաղաքացիներին՝ արտաքին պետական պարտքի կարճաժամկետ սպասարկման հնարավոր դժվարությունները:

Վերը նշված ցուցանիշներին ազդեցությունը հաշվի առնելով, Համաշխարհային բանկի մասնագետներն առանձնացնում են պարտապան երկրի պարտքային կայունությունը 3 հիմնական գործոն՝ 1. կուտակված արտաքին պետական պարտքի մեծությունը և մարման պայմանները, 2. տնտեսության զարգացման ցուցանիշերը (ՀՆԱ, արտահանման, հարկային մուտքերի աճ և այլն), 3. նոր ֆինանսական միջոցների ներգրավման դինամիկան և կառուցվածքը (արտոնյալ և սովորական փոխառություններին հարաբերակցությունը, ինչպես նաև դրամաշնորհները⁶³):

Հարկ է նշել, որ վերը նշված գործակիցները բավարար չեն երաշխավորում երկրի պարտքային խնդիրներից զերծ լինելը: Շատ երկրներ սահմանային վատագույն ցուցանիշներին սահմաններում գտնվելու պայմաններում կարողացել են ապահովել պարտքի սպասարկման վճարումներին ժամանակացույցը, այն դեպքում, երբ որոշ երկրներ կարողացել են

⁶² Իսրայելյան Ս. Հ. «Պետական Պարտքի բեռը և հարկաբյուջե տային կայունությունը վրասնա ազդեցությունը գնահատման խնդիրը» թեմայով տ.գ.թ. գիտական աստիճանի հայցման ատենախոսություն, Երևան 2003, էջ 53-56:

⁶³ The Challenge of Maintaining Long-Term External Debt Sustainability. World Bank, IMF. April 20, 2001. <http://www.imf.org/external/np/hipc/2001/t/042001.pdf>.

ապահովել գործակիցներին ընդունելի մեծությամբ՝ վճարումներին ժամանակացույցի խախտման կամ պարտքի վերականգնման գնով⁶⁴ Վերջինս հաստատում է, որ պարտքային գործակիցներին նշված սահմանային մեծությամբ հստակ սահմանված մեծությամբ ներկայացնելու, և որոնց խախտումը պարտապան երկրում պետք է խնդիրներ առաջացնի: Միանշանակ է, որ տարբեր կազմակերպություններին կողմից հաշվարկվող պարտքային տարբեր գործակիցներին սահմանային նվազագույն արժեքները բավականին պայմանական են, որը կախված է, առաջին հերթին, նաև պարտապան երկրում արձանագրված մակրոտնտեսական ցուցանիշերի, վերլուծության նպատակների, վերլուծությունից հետո: Օրինակ, տարբեր երկրներում մակրոտնտեսական իրավիճակի առանձնահատուկ բնութագրիչների պատճառով որոշակի, առանձին վերցրած պարտապանի դեպքում կարող են արձանագրվել առանձին գործակիցներին վտանգավոր արժեքներ՝ այլ գործակիցներին միանգամայն ընդունելի արժեքների համադրմամբ: Այսպես, ամերիկյան հայտնի տնտեսագետ Ջ. Մաքսը վերլուծելով XX դարի 90-ականներին ճգնաժամում հայտնված երկրներին հիմնական բնութագրերը, որպես ընդհանուր գիծ առանձնացնում է արտաքին պարտքի մեծ ծավալը: Նրա տրամաբանությամբ առաջնորդվելու դեպքում Հարավային Կորեայում (ինչու չէ նաև Ինդոնեզիայում) պարտքային ճգնաժամի ծագումն ընդհանրապես կարելի է բացառել: Թե՛ հարկաբյուջեային, թե՛ դրամավարկային և թե՛ արտաքին առևտրի ոլորտներում այս երկրներն ամենաօրինակելի վարքագիծն էին դրսևորում: Նույնիսկ այսօրվա չափանիշներով 1990-ականներին սկզբին Հարավային Կորեայի համար արտաքին պարտք/ՀՆԱ հարաբերակցությունը աննշան մեծությամբ էր՝ ընդամենը 15%: Բայց հիշատակված վերլուծության հրատարակումից երեք տարի էլ չէր անցել, երբ պարտքային ամենախոր ճգնաժամը բռնկվեց հենց Արևելյան Ասիայի երկրներում⁶⁵: Սա ևս վկայում է այն մասին, որ պարտքային ճգնաժամերը, որպես բարդ ու բազմակողմանի

⁶⁴ Cohen D., "Growth and External Debt: A New Perspective on the African and Latin American Tragedies," Center for Economic Policy Research Discussion Paper No. 1753 (London), 1997. <http://ideas.repec.org/p/cpr/ceprdp/1753.html>.

⁶⁵ Մարգարյան Ա., Քյոնիքսի Ա. «Պարտքային ճգնաժամեր», Հայաստանի ֆինանսներ և էկոնոմիկա, #3 փետրվար 2006, էջ 55:

Երևույթներ, չեն կարող որոշվել մեկ կամ մի քանի գործունեություններով: Որոշ հետազոտողներ էլ պնդում են, որ կան երկրներ, որոնք պարտք չհանդուրժող երկրներ են, որոնց համար պետական պարտք / ՀՆԱ հարաբերակցությունը չպետք է գերազանցի 15%-ը: Մեր կարծիքով, դրանք այն երկրներն են, որոնք պարտքային միջոցների արդյունավետ օգտագործման հետ կապված խնդիրներ են ունեցել և որոնք շարունակում են այդ միջոցներին անարդյունավետ կառավարումը, որն էլ ընթանում է նախկին պարտքերը նորերով փակելու անվերջ քաղաքականությունով:

Այս համատեքստում կարծում ենք տեղին է նշել, որ ամերիկյան Bank of America bank-ի կողմից յուրաքանչյուր չորս տարին մեկ աշխարհի շուրջ 80 երկրի համար ֆինանսական և տնտեսական միջառք ցուցանիշների հիման վրա հաշվարկվում է երկրի հիմնական ռիսկը՝ երկրի միագումար ռիսկը, որը համեմատվում է ուղենշային համարվող երկրների 14 բենջմարկային խմբերի՝ ըստ յուրաքանչյուր ցուցանիշի միջին արժեքների հետ: Եվ ահա պարզվում է, որ այս հաշվարկի ներքին հիմքում ընկած 10 գործակիցներից առաջին չորսի հաշվարկման հիմքում ընկած է արտաքին պարտքը⁶⁶: Դրանք են՝ արտաքին պարտքի սպասարկում արտահանում, արտաքին պարտք արտահանում, արտաքին պարտք ՀՆԱ և արտաքին պարտք միջազգային պահուստներ հարաբերակցությունները: Նշենք, որ թվարկված ցուցանիշներից առաջին երեքը հաշվարկվում և արտացոլվում են «ՀՀ պետական պարտքը» տարեկան հաշվետվություններում, ինչը սակայն չենք կարող ասել արտաքին պարտք միջազգային պահուստներ հարաբերակցության մասին: Վերջինս անմիջականորեն երկրի վճարունակությունը բնութագրող ցուցանիշ է և կարծում ենք, որ արտաքին պարտքի հիմնախնդրի ուսումնասիրման ընթացքում չպետք է անտեսվի:

Պետք է նշել, որ չնայած միջազգային կառույցների կողմից սահմանված պարտքի կայունություն ցուցանիշներին, «Jubilee Debt Campaign»-ի կողմից կատարված առավել թարմ վերլուծություններին

⁶⁶ Մաթևոսյան Գ. <<Երկրի վճարունակության վրա միջազգային պահուստների ազդեցության հիմնահարցը>>, Հայաստանի ֆինանսներ և էկոնոմիկա, #10-11 սեպտեմբեր - հոկտեմբեր 2004, էջ 100-101:

արդյունքները⁶⁷, որոնք հիմնված են վերջին տարիների զարգացումների և տարբեր երկրներում առկա պարտքային հիմնախնդիրների ուսումնասիրման վրա վկայում են, որ պարտքային ճգնաժամի ռիսկային գոտում հայտնվում են այն երկրները, որոնց գուտ պարտք/ ՀՆԱ հարաբերակցությունը գերազանցում է 30%-ը, ընթացիկ գործարքների հաշվի դեֆիցիտը անցնում է ՀՆԱ 5%-ից, իսկ պարտքի սպասարկման գումարները գերազանցում են կառավարության եկամուտների 10%-ը:

Հոդվածում բերված է երկրների ցանկը, որոնք այս պահին արտաքին պարտքի լուրջ խնդիրներ ունեն: Դրանք հանդես են գալիս երկու առանձնացված խմբերով: Առաջին խմբում արտաքին պարտքի ճգնաժամի բարձր ռիսկ ունեցող երկրներն են, որոնք թվով 14-ն են, իսկ եկրորդ խմբում երկրներն են որոնց մոտ արդեն իսկ առկա է պարտքային ճգնաժամի խնդիրը: Այդ երկրները թվով 24 են, որոնց մեջ ընդգրկված է նաև ՀՀ-ն:

Այսպիսով, տարբեր կառույցների և տարբեր հետազոտողների մոտգոյություն ունեն պարտքի կայունության գնահատման տարբեր մոտեցումներ և արժեքային համասնություններ, որոնք, սակայն, մեր կարծիքով, միանշանակ չեն կարող կանխատեսել պարտքային ճգնաժամի հասունության կնկրետ ժամանակն ու չափերը, քանի որ, գործնականում կիրառվող պարտքային ցուցանիշերից և ոչ մեկն ամբողջական չի ներկայացնում պարտապան երկրի պարտքային դիրքի բոլոր կողմերը: Այնուհանդերձ, որքան մեծ են սահմանված ցուցանիշերից շեղումների մեծությունը, այնքան մեծ է պարտքային խնդիրների առաջացման հավանականությունը, և հակառակը, որքան մեծ է երկրի՝ սահմանային ցուցանիշերից ունեցած «անվտանգ գոտին», այնքան մեծ է երկրում հնարավոր խնդիրների՝ առանց լուրջ սոցիալ-տնտեսական ցնցումների լուծման հավանականությունը: Կարծում ենք, որ այդ ցուցանիշներն անհրաժեշտ է դիտարկել ոչ թե առանձին առանձին, այլ մեկ համալիր ամբողջականության մեջ՝ ցուցանիշներից մեկի

⁶⁷ Heather Stewart <14 countries are spiraling towards government debt crises>, Jul. 11, 2015, The Guardian, <http://www.businessinsider.com/greece-isnt-the-only-debt-crisis-2015-7#ixzz3g12ZltZM>

բարձր լինելու պարագայում իջեցնելով մյուսներին համար
սահմանված շեմային տիրույթը:

ՀՀ պարտքի կայունության ցուցանիշներին դիմավելյալի
ունենանախրմանն ու վերլուծությանը կանդիդատան ք
աշխատանքի հաջորդ բաժնում:

ԳԼՈՒԽ 2. ՀՀ ԱՐՏԱՔԻՆ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏՔԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԲԱՂԱԴՐՈՒՄԻ Հ ԱՄԱԴՐԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

2.1 ՀՀ պետական պարտքի կառուցվածքի և ցուցանիշների վերլուծությունը

Խորհրդային Միության փլուզումից հետո, ՀՀ-ն տնտեսվարման շուկայական համակարգ անցում կատարեց արտաքին ֆինանսական պարտավորությունների գրոյական մակարդակով, սակայն ժառանգեց ԽՍՀՄ-ի հաստատված ավանդատունների և կատմամբ պարտավորությունները, որոնք թեև ճանաչվեցին ՀՀ ներքին պետական պարտք⁶⁸, սակայն հետագա տարիներին ՀՀ ազգային արժույթով գնահատելու և դրանք վերադարձնելու մեխանիզմներ մշակելու ուղղությամբ էական քայլեր չարվեցին: 1992թ-ին ստացվեցին արտաքին առաջին վարկերը, իսկ 1993թ-ին թողարկվեցին ՀՀ պետական առաջին պարտատուերը (ներքին շահող փոխառություն պարտատուեր): Իսկզբանե պետական պարտքի առաջացման պատճառներն էին տնտեսական խորը ճգնաժամը, շուկայական համակարգի անցման խնդիրները, Արցախյան պատերազմը, Մայիսական երկրաշարժը, տնտեսական շրջափակումը, պարենային խնդիրները, ազգային արժույթի ներդրումը, վճարային հաշվեկշռի ընթացիկ հաշվի մեծ պակասությունը և այլն: Տնտեսական և սոցիալական վերանայնալ հիմնախնդիրների լուծման պատակով արտաքին պարտքի ներգրավման անհրաժեշտությունը հիմնականում պայմանավորված էր ներքին աղբյուրների անհամարժեքությամբ:

Անկախություն առաջին տարիներին ստացվող վարկերը մեծամասամբ ուղղված էին էներգետիկ համակարգի պահպանմանն ու զարգացմանը (Ռուսաստան), ինչպես նաև ՀՀ պարենային ապահովմանը (Եվրամիություն, ԱՄՆ): Ներգրավում էին հիմնականում ոչ արտոնյալ պայմաններով և ապրանքային վարկի տեսքով, մանավորապես Հայաստան էր առաքվում հացահատիկ և բնական գազ:

⁶⁸ Համաձայն ԱՊՀ երկրների միջև կնքված «Նախկին ԽՍՀՄ ներքին պարտքի սպասարկման սկզբունքների և մեխանիզմների մասին» 1992թ-ի մարտի 13-ի համաձայնագրի, յուրաքանչյուր հանրապետության քաղաքացիներին ԽՍՀՄ-ի ավանդների մարումը պետք է կատարվի այդ հանրապետության բյուջե տային միջոցների հաշվին:

Անդամակցելով ՀԲ-ին և ԱՄՀ-ին, ՀՀ-ն ոչ միայն զգալիորեն մեծացրեց արտաքին փոխառու միջոցներին օգտվելու հնարավորությունը, այլ հաշվի առնելով այդ միջոցները բավականին արտոնյալ պայմանները⁶⁹, հնարավոր դարձրեց 1994-97թթ. միջարքներ դրումային ծրագրերի մեկնարկումը: Միաժամանակ, հնարավոր դարձավ էականորեն չափվելով հարկաբյուրեցության նույնիսկ վրա՝ արտաքին փոխառություններին հաշվին ֆինանսավորելու բյուրեցի առկա պակասությունը: ԵՄ և ՀՀ միջև 1992թ. կնքված 58 մլն էքյուրի (30 և 28 մլն.) պարենային վարկի պայմանագրի արդյունքում պետական պարտքի մարման և սպասարկման առաջին և երկրորդ խնդիրներն առաջացան 1995-1996թթ., երբ նախատեսված էր մարել պարտքը: Հետագայում և երկրորդ խնդիրներն առաջացան նաև 1999-2001թթ., երբ պետք է իրականացվեին զգալի վճարումներ էներգետիկ ոլորտի պահպանման համար վերցված ոչ արտոնյալ վարկերի մարման և սպասարկման գծով, ինչը հատկապես զգալի էր այն պատճառով, որ այդ տարիներին պետական բյուրեցի ծրագրային մուտքերի հետ կապված խնդիրներ կային՝ կապված օտարերկրյա պաշտոնական տրանսֆերտներին և այլ արտաքին աղբյուրներին ներգրավման հետ: Այս ընթացքում ՀՀ-ն կարողացել է մարել այդ պարտավորություններին մի մասը, իսկ մի մասն էլ բանակցություններին միջոցով վերաձևակերպվել են: Օրինակ՝ 1998թ. Եվրամիության տրամադրած դրամաշնորհի հաշվին մարվել է 30 մլն. էքյուր վարկի մնացորդը, իսկ 28 մլն. էքյուր վարկը վերաձևակերպվել է: Իսկ թուրքմենական վարկի մարման ժամկետը երկարացվեցվել է (ընդ որում, մարման մի մասը պետք է կատարվեր ապրանքներով): 2003թ. ին կյանքի կոչվեց «գույք պարտքի դիմաց» ծրագիրը, որով մարվեցին ՌԴ-ին նկատմամբ ունեցած վարկային պարտավորությունները: Նշենք, որ հիշյալ վարկերը ՀՀ պետական պարտքի պրոտֆելում երբևէ եղած ամենածանր պայմաններով

⁶⁹ Զարգացման Միջազգային Ընկերակցության վարկերն ունեին 10 տարի մարման արտոնյալ ժամկետ, 0.75% տոկոսադրույք, իսկ նրանց գրանտայնությունը կազմում էր 75-76%:

միջոցներն են եղել, և արդեն ներգրավման պահին ակնհայտ էր, որ երկիրը մարման գծով լուրջ դժվարություններ կունենա⁷⁰:

Պետք է նշել, որ վարկի արտոնյալություն սկզբունքն էական ազդեցություն է թողել մինչև այժմ գործող վարկային զամբյուղի կառավարման վրա, որը սակայն այսօր նորովի մոտեցումներ է պահանջում՝ պայմանավորված վերջին տարիների ներգրավված փոխառությունների հիմնականում ոչ արտոնյալ պայմաններով: Այսպես 2011 թվականին նոր ստացված վարկային միջոցները արտոնյալություն միջին մակարդակը կազմել է 34%, 2012 թվականին՝ 30%: 2013թ.-ին այս ցուցանիշը դրսևորել է բարելավման միտում: 2013 թվականին նոր կնքված վարկերի արտոնյալություն միջին մակարդակը կազմել է 36%: Հարկ է նշել, սակայն, որ ներգրավված փոխառում միջոցների արտոնյալություն աստիճանը գնահատելիս հաշվի են առնվում ծրագրի շրջանակներում տրամադրվող ոչ միայն վարկային, այլև դրամաշնորհային միջոցները⁷¹:

Նախկինում ՀՀ արտաքին պետական պարտքի զամբյուղի հիմնականում արտոնյալ վարկերից կազմված լինելու հանգամանքը պատճառ հանդիսացավ, որ պետությունը սույն ոլորտի կարգավորման ազգային օրենսդրության մեջ փոփոխություններ մտցնելու լուրջ պատճառներ չտեսնի: Սա բավականին լուրջ խնդիր էր, որը չվրիպեց նաև 2006թ. ՀՀ այցելած Համաշխարհային բանկի մասնագետներին ու շաղրություններին, ովքեր առաջարկեցին մշակել պարտքի կառավարման ֆորմալ և ամբողջական այնպիսի ռազմավարություն, որը թույլ կտա ձևավորել պարտքի կառավարմանը վերաբերող հստակ քաղաքականություն: Նման ռազմավարության մշակումը և ընդունումը էական է, քանի որ արտաքին պետական պարտքի գծով արտոնյալ վարկերի ժամկետների ավարտման արդյունքում (2014թ. տարեվերջի դրությամբ ՀՀ արտաքին պետական վարկերի կառուցվածքում արտոնյալ վարկերի տեսակարար կշիռը կազմել է 71.2%⁷²) 2013 թվականին ույն ժամանակատվածի

⁷⁰ Ա. Մարգարյան, Ա. Քյուրումյան «Պարտքի կարգավորման միջազգային փորձնու հայաստանյան պրակտիկան», Հայաստանի ֆինանսներ և էկոնոմիկա, # 4 (81) ապրիլ 2007, էջ 12:

⁷¹ ՀՀ 2015-2017թթ. Պետական միջնաժամկետ ծրագրի ծրագիր, էջ 593
⁷² ՀՀ պետական պարտքի 2014 թ. տարեկան հաշվետվություն 21-րդ էջում նշվում է, որ առևտրային վարկերի տեսակարար կշիռը 2013թ. տարեվերջին կազմել է 28.8%:


դրույթը ամբ և վազելով 2.4 տոկոսային կետով⁷³։ Համեմատության համար նշենք, որ 2008թ.-ի տարեվերջի դրույթը ՀՀ արտաքին պետական վարկերի կառուցվածքում արտոնյալ վարկերի տեսակարար կշիռը կազմել է 99.1%⁷⁴) տարեցտարի մեծանալու է սպասարկման ծավալը։ Այսպես, 2008թ.-ի ընթացիկ պարտքը 55.1 մլրդ. դրամից⁷⁵ 2012թ.-ին դարձել է 150.3 մլրդ. դրամ, իսկ 2013թ.-ին՝ 378.4 մլրդ. դրամ⁷⁶ (2013թ.-ի սպասարկման ծախսերի աճը պայմանավորված է նաև ՌԴ 500 մլն ԱՄՆ դոլարի վարկի վաղաժամ կետ մարումով)։ Այս հանգամանքը հիմնականում պայմանավորված է նրանով, որ 2007-2008թթ. ավարտվել են արտոնյալ վարկերի ժամկետները, և քանի որ 2008թ. Հայաստանը դուրս է եկել Ջարգացման Միջազգային Ընկերակցության կողմից արտոնյալ վարկերով ֆինանսավորվող երկրներին շարքից, ապա պարզ է, որ առաջիկայում ստացվող վարկերը կլինեն ոչ արտոնյալ պայմաններով, ինչն էլ անմիջականորեն կանդրադարձնի վարկերի մարման և սպասարկման գումարների աճի վրա։

Պարտքային հիմնախնդրի առկայությունը և հնարավոր տնտեսական զարգացումներն, իրենց հերթին, առավել առաջնային են դարձնում ՀՀ պարտքի կայունությունը գաղափարը։ Պարտքի կայունությունը ենթադրում է պարտապան երկրի հնարավորությունը սպասարկելու իր ընթացիկ և ապագա պարտավորությունները՝ առանց խաթարելու երկրի սոցիալ-տնտեսական բնական զարգացումը և որի դեպքում կարիք չի առաջանա անդրադարձնել պարտքի դուրսգրման ու վերակառուցման հարցերին։ Հատկապես զարգացող, ինչպես նաև բացասական առևտրային կամ ընթացիկ հաշվեկշիռ ունեցող երկրներին պարագայում լուրջ սոցիալ տնտեսական ցնցումներին խուսափելու համար անչափ կարևոր է վճարունակություն և պարտքի կայունություն ապահովման խնդիրը։ Թերևս այս հանգամանքով է պայմանավորված վերջին տարիներին ՀՀ Ֆինանսների նախարարության կողմից ՀՀ կառավարության պարտքի կառավարման

⁷³ ՀՀ պետական պարտքի 2013թ. տարեկան հաշվետվություն 18-րդ էջում նշվում է, որ առևտրային վարկերի տեսակարար կշիռը 2013թ. տարեվերջին կազմել է 26.4%:
⁷⁴ ՀՀ պետական պարտքը, տարեկան հաշվետվություն 2008թ., էջ 19:
⁷⁵ ՀՀ 2011-2013թթ. Պետական միջնաժամկետ ծախսերի ծրագիր, էջ 361:
⁷⁶ ՀՀ 2015-2017թթ. Պետական միջնաժամկետ ծախսերի ծրագիր, էջ 598:

միջնաժամկետ տնտեսական արձագանքի կազմումը, ինչպես նաև 2011թ. պարտքի կայունության վերլուծությունը :

Պետական պարտքի կայունության տեսանկյունից կարևորվում են միջարք ցուցանիշներ, որոնց մենք արդեն անդրադարձել ենք աշխատանքի առաջին մասում և որոնք անհրաժեշտ է վերլուծել նաև ՀՀ պարտքի կայունության գնահատման և հետևաբար նաև անվտանգության գնահատման տեսանկյունից: Այս համատեքստում ուսումնասիրենք ՊՊՀՆԱ հարաբերակցությունը, որի անվտանգ կշիռը չպետք է գերազանցի 60%-ը: Այս ցուցանիշը ցույց է տալիս, թե երկրում արտադրված ապրանքների և մատուցած ծառայությունների որմասն է ուղղվում պարտավորությունների մարմանը՝ տնտեսության խթանմանն ու կայունացմանն ուղղվելու փոխարեն: ՀՀ-ում վերջին 13-14 տարիներին պետական պարտքն աճել է մոտ հինգ անգամ (1999թ.-ի 930.3 մլն. ԱՄՆ դոլարի փոխարեն 2013թ.-ին կազմել է 4,588.5 մլն. ԱՄՆ դոլար (տե՛ս, Հավելված 2.1.1), սակայն, ի հաշիվ տնտեսական համարժեք գարգացումների, ՊՊՀՆԱ հարաբերակցությունն էականորեն չի փոխվել: Այս ժամանակահատվածում պարտքի բեռը՝ դրամով արտահայտված, չի գերազանցել պարտքի ցածր բեռի վերին սահման համարվող 50%-ը՝ կազմելով 49.3%: Դոլարով արտահայտելու պարագայում պատկերը գրեթե չի փոխվում, քանի որ այն է կազմում միայն 1999թ.-ը, երբ ՊՊՀՆԱ հարաբերակցությունը 0.4 տոկոսային կետով գերազանցեց ՊՊՀՆԱ հարաբերակցության վերին սահմանը՝ կազմելով 50.4% (տե՛ս, Գծապատկեր 2.1.1):



**Գծ ապատկեր 2.1.1: 1999-2014թթ. ՀՀ պե տակ ան պար տք ի տե սակ ար ար կ շ ի ն ը
ՀՆԱ-ն ւ մ ⁷⁷**

Գծ ապատկերից երևում է, որ պարտքի բեռնի կտրուկ նվազում է նկատվում հատկապես սկսած 2002թ.-ից՝ պայմանավորված ինչպես տնտեսական աճի քարտեզ մակարդակով, մակրոտնտեսական ցուցանիշների բարելավմամբ, այնպես էլ դրամի դիրքի ամրապնդմամբ: ՀՀ դրամի մոտ երկու անգամ արժևորումը պարտքի բեռը բնութագրող ցուցանիշները 2003-2008 թվականներին քարտեզավեց մոտ 1.8 անգամ, իսկ վերջինիս մոտ 90% կազմող արտաքին պետական պարտքը՝ գրեթե 2 անգամ⁷⁸:

Պարտք ՀՆԱ հարաբերակցության ամենացածր ցուցանիշն արձանագրվել է 2008թ.-ին՝ 16.3%, իսկ արդեն 2009թ.-ից վերջինս կտրուկ աճ է գրանցել՝ պայմանավորված պարտքի ներգրավման ծավալների աննախադեպ աճով (2008թ.-ի 1,906.0 մլն.ԱՄՆ դոլարից ՀՀ պետական պարտքը 2009թ.-ին դարձավ 3,362.7 մլն.ԱՄՆ դոլար): Եվ ինչպես երևում է գծապատկերի 2.1.1-ից, կորը շարունակում է աճել՝ փաստելով պարտքային ճգնաժամի վտանգի մասին:

Վերոնշյալ տվյալները, ինչպես արդեն նշեցինք, հաշվարկված են դոլարային արտահայտությամբ: Դրամային արտահայտությամբ պատկերն ունի մի քիչ այլ միտում: Մասնավորապես, 2014թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ պետական պարտք ՀՆԱ հարաբերակցությունը կազմել է 43.6%, նախորդ տարվա նույն ցուցանիշի համեմատությամբ ավելանալով 2.7 տոկոսային կետով⁷⁹: Պատկերն ավելի քան մտահոգիչ է դառնում 2015թ.-ի առաջին կիսամյակի տվյալներով, ըստ որի ՀՀ պետական պարտք ՀՆԱ հարաբերակցությունը գրանցել է ամենավատ ցուցանիշը՝ 51.8%՝ հատելով «Պետական պարտքի մասին» ՀՀ օրենքով սահմանված թույլատրելի շեմի լրացուցիչ սահմանափակման 50%-ի շեմը, ինչին էլ հետևեց փոփոխությունը, ըստ որի սահմանափակումը


⁷⁷ Գծ ապատկերի կառուցման համար հիմք են ծառայել ՀՀ ԱՎԾ, ՀՀ ՖՆ տվյալները, ինչպես նաև ՀԲ-ի <http://data.worldbank.org/indicator/NY.GDP.MKTP.CD> կայքում ՀՀ-ի ՀՆԱ-ի վերաբերյալ տվյալները՝ դոլարային արտահայտությամբ:

⁷⁸ Հնվեսյան Ս. Մ. Արտաքին պետական պարտքի արդյունավետ կառավարման հիմնախնդիրները (ՀՀ օրինակով) ատենախոսություն Ը.00.03- «Ֆինանսներ, դրամաշրջանառություն և վարկ» մասնագիտություն ամբիոն տնտեսագիտական թեկնածուի գիտական ստիճանի հայցման համար, Երևան 2010, էջ 60:

⁷⁹ Տե՛ս, ՀՀ պետական պարտքի 2014 թվականի տարեկան հաշվետվություններ, էջ 5:

վերագրվեց ոչ թե պարտք ՀՆԱ հարաբերակցությանը, այլ բացառապես կառավարության պարտք ՀՆԱ հարաբերակցությանը:

ՀՀ պետական պարտքի դինամիկան հասկանալու համար դիտարկենք ստորև ներկայացված գծապատկերը, որտեղ առանձին-առանձին ներկայացված է յուրաքանչյուր տարի ՀՆԱ-ի, պետական պարտքի և արտաքին պետական պարտքի նախորդ տարվա նկատմամբ գրանցած փոփոխությունը:



Գծապատկեր 2.1.2 ՀՀ տնտեսական աճի⁸⁰ և պետական պարտքի աճի ցուցանիշները 1999-2013թթ.⁸¹

Ինչպես տեսնում ենք, 2000-2008թթ. ընթացքում պետական պարտքի ցուցանիշների աճի տեմպին գնաճահեռ գրանցվել է ՀՆԱ-ի աճի էլավելի առաջանցիկ տեմպ, այն դեպքում, երբ 2009թ.-ից պատկերը փոխվում է հակառակ ուղղությամբ: Նման կտրուկ փոփոխությունը արտահայտում է 2008թ. տարեվերջից նկատվող համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի ազդեցությունը, որի հետևանքով խաթարվեց ՀՀ տնտեսության մինչճգնաժամյան տարիների

⁸⁰ ՀՆԱ-ի հավելաճի տեմպի հաշվարկման հիմքում ընկած է ՀԲ-ի կոդից՝ <http://data.worldbank.org/indicator/NY.GDP.MKTP.CD> կայքում ՀՀ ՀՆԱ դոլարային համարժեքները:
⁸¹ Պետական պարտքի աճի ցուցանիշները հաշվարկվել են ՀՀ ԱՎԾ և ՀՀ ՖՆ տվյալների հիման վրա:


մակրոտնտեսական կայունությունը, նվազեցին բյուջե տային եկամուտները և մեծացավ ընթացիկ հաշվի պակասունը՝ անհրաժեշտություն առաջացնելով մեծ ծավալի պարտք ներգրավել: Արդյունքում, պետական պարտքի բեռը դարձավ անկայուն, և պետական, հատկապես արտաքին պարտքի կայունություն վերլուծությունը ստացավ օրակարգային նշանակություն:

Անդրադառնանք պարտքի բեռի և կայունության գնահատման հաշտության՝ ԱՊՊ ՀՆԱ հարաբերակցությանը, որի օպտիմալ արժեքը, ինչպես արդեն նշել ենք նախորդ բաժնում, չպետք է գերազանցի 30-35%-ը: Գծապատկեր 2.1.1-ից երևում է, որ 1999-2008թթ.-ներին ընթացքում այս ցուցանիշը ևս դրսևորել է նվազման միտում (բացառությամբ 2002թ-ի), սակայն պետք է նշենք նաև, որ մինչև 2004թ.-ը ցուցանիշը գերազանցել է ԱՄՆ-ի կողմից թույլատրելի սահմանը: 2008թ. ԱՊՊ ՀՆԱ հարաբերակցության արձանագրած գրեթե 3.5 անգամ նվազմանը 2009թ.-ին հաշտության մոտ 2.5 անգամ աճ, որն էլ ավելի խորացավ 2010թ.-ից սկսած և առայսօր էլ ԱՊՊ ՀՆԱ հարաբերակցությունը գերազանցում է թույլատրելի շեմը (տե՛ս գծապատկեր 2.1.1): Եվ թե 2002-2008թթ. ԱՊՊ ՀՆԱ հարաբերակցության նվազումը պայմանավորված էր տնտեսական երկնիշաճով, ինչպես նաև դրամի մոտ 50% արժևորմամբ, ապա 2009թ. աճը պայմանավորված էր ինչպես տնտեսական երկնիշաճ՝ 25.8% անկմամբ⁸² ու դրամի կտրուկ արժեզրկմամբ (2008-ի նկատմամբ միջինը մոտ 18.7%), այնպես էլ արտաքին պետական պարտքի 88.1% աճով:

ՀՀ պետական պարտքի հիմնական մասը բաժին է ընկնում արտաքին աղբյուրներին և ստացված միջոցներին: Սակայն, վերջին տարիներին, բացառությամբ 2000, 2002, 2009 և 2014 թվականներին, պետական պարտքի կառուցվածքում արտաքին պետական պարտքի

⁸² 2009թ. գրանցված տնտեսական անկումը դրամով կազմում է 14.1%, սակայն էլ ներկայումս հանգամանքից, որ հիմնական ցուցանիշները գնահատվել և վերլուծվել են դրամային արժեքներով, համադրելիություն և գնահատականում առավել օբյեկտիվ լինելու համար տնտեսական անկումը ևս ներկայացված է դրամային արժեքով:

տե սակարար կշիռը նվազման միտում է ունեցել : Այսպես, եթե 1999թ.-ին պետական պարտքի 93.6%-ը կազմում էին արտաքին վարկերը (որն, ի դեպ, այս ժամանակաշրջանի ամենաբարձր ցուցանիշն էր), ապա 2006թ.-ին այդ ցուցանիշն արդեն կազմում էր 86.1%, իսկ 2008թին՝ 82.7% (տե՛ս, Գծապատկեր 2.1.3):



Գծապատկեր 2.1.3 ՀՀ արտաքին և ներքին պետական պարտքի համեմատական ցուցանիշները 1999-2014թթ⁸³.

Գծապատկերից երևում է, որ թեև ներքին պետական պարտքի ծավալները բավականին զիջում են արտաքին պարտքին, 1999-2014թթ. ընթացքում ներքին պետական պարտքի տեսակարար կշիռն ընդհանուր պարտքի մեջ ավելացել է ավելի քան 2 անգամ : Այս երևույթն, առաջին հերթին, կապված է պետական պարտատոմսերի շուկայի զարգացման, ներքին ֆինանսական, այդ թվում նաև բորսայական շուկայի աշխուժացման, ինչպես նաև պետական պարտատոմսերի մանրածախ վաճառքի համակարգի դրական միտումների հետ, ինչը թեև չի կարելի բավարար համարել, սակայն առաջընթացն ակնհայտ է : Ներքին պարտքի տեսակարար կշռի ավելացումը վկայում է ներքին պետական պարտատոմսերի նկատմամբ վստահության աճի մասին, ինչպես նաև


⁸³ Գծապատկերը կառուցված է հավելված 2.1.1-ի տվյալների հիման վրա :

հնարավորություն է տալիս ենթադրություն անելու, որ առկա են արտաքին պարտքը, թեկուզև մասամբ, ներքինով փոխարինելու համապատասխան հնարավորություններ: Վերջինիս ավելացման արդյունք էր նաև այն, որ 2004թ-ից հետո երկարաձգվեց և էժանացվեց ներքին պարտքի ֆինանսական գործիքները: Ներքին պետական պարտքը սովորաբար ձևավորվում է պետական արժեթղթերի թողարկման և տեղաբաշխման արդյունքում, ինչպես նաև ներառում է կառավարության և տանձնածուղղակի պարտքային պարտավորությունները՝ ռեզիդենտների նկատմամբ՝ ՀՀ առևտրային բանկերի և ՀՀ ռեզիդենտ ֆիզիկական և իրավաբանական անձանցից փոխատվությունները (վարկերը) Հայաստանի Հանրապետության կառավարությանը: Նախկինում ՀՀ կառավարությանը ՀՀ ԿԲ կողմից նույնպես կարող էին տրամադրվել փոխառություններ, իսկ ներկայումս համաձայն «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» օրենքի 34-րդ հոդվածի՝ կենտրոնական բանկի կողմից ՀՀ կառավարությանը վարկավորելն արգելվում է:

Ելնելով այն հանգամանքից, որ պետական պարտքի ընդհանուր ծավալում հիմնական մասը արտաքին փոխառություններն են, այնուհետև մեր կողմից հիմնական վերլուծությունները կկատարվեն վերջինիս շրջանակներում: Այս որոշումը պայմանավորված է նաև այն հանգամանքով, որ ի տարբերություն ներքին փոխառությունների, որոնց ժամանակ վճարվող տոկոսագումարները «չեն աղքատացնում երկիրը», արտաքին փոխառությունների դիմաց վճարումներն ուղղակիորեն անդրադառնում են երկրի կապիտալ վրա: Արտաքին պարտքը սահմանափակում է նաև պետության անկախությունը և փասկան քաղաքականության մշակման և իրագործման գործում, ինչպես նաև թուլացնում պետական կառավարման մարմիններին և փասկան

ներու ժով սեփական խնդիրները հոգալու հնարավոր ուղիների մշակման շահագրգռվածությունը:

Եվ այսպես, անդրադարձնելով արտաքին պետական պարտքի կառուցվածքին, պետք է, առաջին հերթին, առանձնացնել բնորոշման միջարք հատկանիշներ՝ ըստ վարկատուների, ըստ վարկառուների, ըստ վարկերի տրամադրման արժույթի, ըստ վարկերի դրույքի տեսակի, արտոնյալության աստիճանի և այլն: Դրանցից յուրաքանչյուրին փորձենք անդրադարձնել առանձին: Գծապատկեր 2.1.4-ում ներկայացված 2.1.2-ում ներկայացված է ՀՀ արտաքին պարտքի կառուցվածքն ըստ վարկառուների: Հավելված 2.1.2-ից երևում է, որ ՀՀ կառավարության արտաքին պարտքը 2014թ.-ին 1999թ.-ի համեմատ աճել է 5 անգամ, իսկ ՀՀ ԿԲ պարտքը՝ մոտ 2.2 անգամ:




Գծապատկեր 2.1.4 ՀՀ Արտաքին պարտքի կառուցվածքն ըստ վարկառուների 1999-2014թթ.⁸⁴

Գծապատկեր 2.1.4-ից երևում է, որ 1999-2014թթ. ընթացքում ՀՀ արտաքին պարտքի կառուցվածքում միջինը 82.4%-ը կազմում են կառավարության արտաքին պարտավորությունները՝ ներառյալ արտաքին պետական երաշխիքները, իսկ 17.6%-ը՝ Կենտրոնական բանկի

⁸⁴ Գծապատկերի կառուցման համար հիմք է ծառայել ՀՀ Ֆինանսների նախարարության կողմից հրատարակվող ՀՀ պետական պարտքի տեղեկագրերն ու հաշվետվությունները:

արտաքին պարտավորությունները, կրկին ներառյալ արտաքին պետական երաշխիքները:

Էական նշանակություն ունի նաև ՀՀ արտաքին պարտքի վերլուծությունը ստվարկատուների կառուցվածքի (տե՛ս, Գծապատկեր 2.1.5):



Գծապատկեր 2.1.5 ՀՀ Արտաքին պարտքի կառուցվածքը՝ ստվարկատուների 1999-2013թթ.⁸⁵.

Ինչպես երևում է 2.1.5 գծապատկերից, ՀՀ արտաքին պարտավորությունները հիմնականում ներգրավված են ֆազմակողմ վարկատուներից, որը հատկապես զգալի է 2003-2006թթ ընթացքում, երբ վերջիններիս բաժին էր ընկնում ընդհանուր արտաքին պարտքի 89%-ը: Սակայն սկսած 2007թ-ից, վերջինիս մասնաբաժինը սկսեց կրճատվել, 2009թ-ին դառնալով 67.9%, իսկ 2013թ.-ին հասավ նվազագույն մակարդակին՝ 67.6%: 2013թ.-ին պետական պարտքի կառավարման ֆազավորում գրանցված ֆազմակողմ միտումը պայմանավորված է եղել ՌԴ երկկողմ վարկային պայմանագրի վաղաժամ կետմարումով:

2013թ. ստորագրվել են 10 նոր վարկային համաձայնագրեր: Ընդ որում ԱՄՆ-ից և ԱՄՆ-ից ստացված փոխառումիջոցներին մասնաբաժինները նվազել են, փոխարենն աճել են Եվրոպական ներդրումային ֆանդի, ՎՋԵԲ-ի, ԱԶԲ-ի և ՎՋՄԲ-ի մասնաբաժինները⁸⁶:

Այն հանգամանքը, որ ֆազմակողմ ֆինանսական հաստատություններին կատմամբ ՀՀ պարտավորություններն

⁸⁵ Գծապատկերի կառուցման համար աղբյուր է հանդիսացել ՀՀ ՖՆՍՎՅԱԿ ներքին: ⁸⁶ ՀՀ պետական պարտքը, տարեկան հաշվետվություն 2013թ., էջ 15:

անհամեմատ ավելի մեծ տեսակարար կշիռ ունեն, քան երկկողմ վարկատուներին դեպքում, ու շագրավ է մի շարք պատճառներով : Նախ, բազմակողմ ֆինանսական հաստատություններին ցատկաձև վարկերի մեծ մասն ունեն արտոնյալ պայմաններ (35-40 տարի ժամկետով, որից առաջին 10 տարիներն արտոնյալ տոկոսադրույքներով), ինչպես նաև երկկողմ պարտավորություններին աճը ենթադրում է կախվածություն մեծացում կնկրեստ երկրներին (թեև այս դեպքում ևս առկա է կախվածություն հանգամանքը, մանավանդ, եթե այդ միջազգային ֆինանսական հաստատություններում գերիշխող դեր ունեն առանձին երկրներ): Այդուհանդերձ, կախվածություն փաստը ինչպես առանձին երկրներին կամ միջազգային կազմակերպություններին, այնպես էլ առանձին ներդրողներին, հարկաբյուջե տային անկայունություն հիմք կարող է հանդիսանալ՝ միաժամանակ վտանգելով ամբողջ տնտեսությունը: Նման իրավիճակներ արդեն իսկ տեղի են ունեցել, երբ նախօրոք համաձայնեցված պայմաններով (Հաստատանի կողմից այդպայմանները կատարելուց հետո) վարկեր են տրամադրվել, այն դեպքում, երբ այդ միջոցներին ստացումը ծրագրավորված է եղել պետական բյուջեով, բյուջե տային ծախսերի համապատասխան կրճատմամբ: Որոշ դեպքերում այդ վարկային պարտավորությունները եղել են պետական երաշխիքներ, և դրանց չստացվելու պայմաններում, ելնելով երկրի համար դրանց խիստ կարևորությունից, կառավարությունը ստիպված է եղել այդ միջոցները տրամադրել պետական բյուջեից՝ ի հաշիվ բյուջե տային այլ ծախսերի: Ուստի, այս տեսանկյունից կարևորվում է փոխառու աղբյուրներին հնարավոր դիվերսիֆիկացումը: Սա վերաբերում է պետական պարտքի ինչպես արտաքին, այնպես էլ ներքին աղբյուրներին:

Արտաքին պարտքի ծավալների փոփոխությունները պայմանավորված են ոչ միայն ՀՀ կողմից տարբեր տարիներին ընթացքում նոր վարկերի ներգրավման, այլ նաև արտաքին պարտքի զամբյուղում առկա տարբեր արտաթույլների փոփոխություններով: Ուստի, այս առումով կարևոր նշանակություն է ստանում արտաքին պարտքի արժույթային կազմի ուսումնասիրությունը, քանզի դրա փոփոխություն

ան միջակ անորոշում է պարտքի մակարդակի վրա: Քանի որ մինչ օրս ՀՀ-ին վարկավորում են հիմնականում միջազգային կառույցները, վարկային գամբյունի մեջ ամենամեծ տեսակարար կշիռը բաժին է ընկնում ՓՀԻ-ին (փոխառություն հատուկ իրավունք), այնուհետև ԱՄՆ դոլարին, եվրոյին և իենին (տե՛ս, Աղյուսակ 2.1.1 և Գծապատկեր 2.1.6), իսկ ամենաչնչին մասնաբաժինը ընկնում է ԱՄԷ դիրհամին: Ճապոնական իենը որպես նորարժույթ Հայաստանի արտաքին պարտքի մեջ գոյացավ միայն 2007թ.:

Աղյուսակ 2.1.1

ՀՀ արտաքին պետական պարտքի արժույթային կառուցվածքը 2011-2013թթ, %⁸⁷

Արժույթ	2011	2012	2013
ԱՄՆ դոլար	19.9	21.3	13.6
ՓՀԻ	62.9	60.6	65.4
Եվրո	6.0	8.5	11.8
Ճապոնական իեն	11.0	9.5	9.1
ԱՄԷ դիրհամ	0.1	0.1	0.2

Ինչպես երևում է աղյուսակ 2.1.1-ից, 2013թ. արտաքին պարտքի ավելի քան 65%-ը ՓՀԻ-ով ներգրավված վարկերն են: Այս ցուցանիշը նախորդ տարվա համեմատ աճել է 4.8 տոկոսային կետով: Փոխարենը նվազել է ԱՄՆ դոլարով ներգրավված վարկերի տեսակարար կշիռը, ինչը պայմանավորված է եղել ՌԴ վարկի մարմամբ և ԱՄՆ-ի մասնաբաժնի նվազմամբ: 2001-2008թթ. ընթացքում (տե՛ս, Հավելված 2.1.3) ԱՄՆ դոլարով արտահայտված վարկային պարտավորությունները զգալի կրճատվել են (27%-ից հասնելով 3.6%), իսկ արդեն սկսած 2009թ-ից, այն կրկին աճի միտում է ունեցել՝ 2012թ.-ին կազմելով 21.3%, որը 2013թ.-ին գրանցած ցուցանիշը գերազանցել է 7.7.տոկոսային կետով: 2012թ.-ին ԱՄՆ դոլարով տրամադրված վարկերի մասնաբաժնի աճը պայմանավորված է եղել ՎՋՄԲ-ի կողմից վարկավորման ծավալների աճով:

⁸⁷ Տվյալները վերցված են 2012-2013թթ. ՀՀ պետական պարտքի դեկտեմբեր ամսվա տեղեկագրերից, որոնց կարելի է ծանոթանալ www.mfe.am կայքից:

2012թ.-ի համեմատ 2013թ.-ին 21.5%-ով աճել է եվրոյով տրամադրված վարկերի մասնաբաժինը՝ ի հաշիվ հիմնականում Եվրոպական Ներդրումային Բանկի, ՎԶԵԲ-ի և Գերմանիայի կոդից տրամադրված վարկերի, իսկ ճապոնական իենով տրամադրված վարկերի մասնաբաժինը պայմանավորված է եղել ճապոնական իենով տրամադրված վարկերի մարումներով:

Դիտարկենք ՀՀ կառավարության պարտքի արժույթային կառուցվածքը 2013-2014թթ. կտրվածքով (տե՛ս, Հավելված 2.1.4): Ինչպես տեսնում ենք հավելվածից ՀՀ կառավարության պարտքի հիմնական մասնաբաժինը պարտքն է: 2014թ.-ին այն կազմել է ՀՀ կառավարության պարտքի 84.7%-ը կամ 1,609.8 մլրդ.դրամ: Այս ցուցանիշը նախորդ տարվա համեմատ նվազել է 1.3 տոկոսային կետով: 2014թ.-ի ՀՀ կառավարության պարտքի ծավալի վրա ՀՀ արտարժույթի շուկայում փոխարժեքների փոփոխության ազդեցությունը գնահատելու համար ներկայացնենք 2014թ. ՀՀ կառավարության պարտքի արտարժույթային կառուցվածքը (տե՛ս, Աղյուսակ 2.1.2):

Աղյուսակ 2.1.2

2014թ. ՀՀ կառավարության պարտքի արտարժույթային կառուցվածքը⁸⁸

Արտարժույթ	2014թ.
ԱՄՆ դոլար	35.7
ՓՀԻ	48.3
Եվրո	8.5
Ճապոնական իեն	7.4
ԱՄԷ դիրհամ	0.1

Եթե հաշվի առնենք նաև այն փաստը, որ 2011թ.-ի հունվարի 1-ից ՓՀԻ -ով արժույթային գամբյուրի 41.9%-ը լրացնում է ԱՄՆ դոլարը, 37.4%-ը՝ եվրոն, 9.4%-ը՝ ճապոնական իենը, իսկ մնացած 11.3%-ը՝

⁸⁸ Հաշվարկը կատարվել է ՀՀ պետական պարտքի 2014թ.-ի դեկտեմբեր ամսվա տեղեկագրի էջ 3-ի տվյալների հիման վրա:

անգլիական ֆունտ ստեռլինգը⁸⁹, ապա պարզ է դառնում, որ դոլարի նմանությամբ թերի իրական մասնաբաժինն ավելի մեծ է: (տե՛ս, Աղյուսակ 2.1.3):

Աղյուսակ 2.1.3

2014թ. ՀՀ կառավարության պարտքի իրական արժույթային կառուցվածքը, %-ն երևի⁹⁰

Արժույթ	2014թ.
ԱՄՆ դոլար	55.9
Անգլիական ստեռլինգ	Ֆունտ 5.4
Եվրո	26.6
Ճապոնական իեն	12.0
ԱՄԷ դիրհամ	0.1

Փոքր տնտեսությունները ամբողջությամբ կախված են դոլարից, այդ թվում՝ ՀՀ-ի համար, փոխարժեքների թեկնուզ նվազ տասնամյակներից կարող են բացասաբար անդրադառնալ մակրոտնտեսական ցուցանիշներին վրա, իսկ համաշխարհային շուկայում ԱՄՆ դոլարի կամ եվրոյի ամրապնդումը կարող են մեծացնել ՀՀ պարտքի բեռը:

Հիմնվելով ՀՀ կառավարության պարտքի իրական արժույթային կառուցվածքի և 2014թ.-ի արտարժույթի փոխարժեքների վրա, հաշվենք ՀՀ կառավարության պարտքի ծավալային փոփոխությունը՝ պայմանավորված արտարժույթների փոխարժեքների փոփոխությամբ (տե՛ս, Աղյուսակ 2.1.4):

2014թ.-ի տարեկապի փոխարժեքներով ՀՀ կառավարության պարտքը այլ հավասար պայմաններում կկազմեր 1,742.7 մլրդ. դրամ (1,451.9 մլրդ. դրամը արտարժույթով պարտքն է, 290.8 մլրդ. դրամը՝ դրամային)՝ փաստացի 1,900.6 մլրդ. դրամի փոխարեն (1,609.8 մլրդ. դրամ):

⁸⁹ IMF determines new currency weights for SDR valuation basket, Press Release No. 10/434, November 15, 2010, IMF <http://www.imf.org/external/np/tre/sdr/sdrbasket.htm>:

⁹⁰ Հաշվարկը կատարվել է հեղինակի կողմից՝ հիմք ընդունելով ՀՀ պետական պարտքի 2014թ.-ի դեկտեմբեր ամսվա տեղեկագրի էջ 3-ի տվյալները, տե՛ս www.mfe.am կայքում:

դրամը արտարժույթի վարտքն է, 290.8 մլրդ. դրամը՝ դրամային):
 Հետևաբար, արտարժույթի փոխարժեքներին փոփոխություն
 ազդեցությունը ՀՀ կառավարության պարտքի ծավալի վրա կազմել է
 157.9 մլրդ. դրամ, որը մոտ 2,5 անգամ գերազանցում է 2014թ.-ին
 ծրագրված պարտքի գծով տոկոսավճարներին գումարին (63.4մլրդ.
 դրամ⁹¹), ավելի քան 47%-ով գերազանցում է 2014թ.-ին արտաքին
 աղբյուրներին ներգրավված վարկերին և փոխառություններին
 ընդհանուր գումարին (106.75մլրդ. դրամ⁹²):

Աղյուսակ 2.1.4

**ՀՀ արտարժույթի շուկայում փոխարժեքներին փոփոխություն
 ազդեցությունը ՀՀ կառավարության 2014թ.-ի արտարժույթային
 պարտքի վրա⁹³**

	Առ 01.01.2014 արտարժույթի փոխարժեքը, դրամ	Առ 01.31.2014 արտարժույթի փոխարժեքը, դրամ	ՀՀ ԱՊՊ-ն տարեսկզբի փոխարժեքով, մլրդ. դրամ	ՀՀ ԱՊՊ-ն տարեվերջի փոխարժեքով, մլրդ. դրամ
ԱՄՆ դոլար	405.64	474.97	768.4	899.7
Անգլիական ֆունտ ստեռլինգ	668.4	737.68	79.6	87.8
Եվրո	559.54	577.47	414.3	427.6
Ճապոնական իեն	38.70	39.69	188.0	192.8
ԱՄԷ դիրհամ	110.45	129.31	1.6	1.9

Փոխարժեքներին տատանումների հետևանքով հնարավորինս քիչ
 վնասներ կրելու տեսանկյունից կարևորվում է արտաքին վարկային
 գամբյուրի հեջավորման հիմնախնդիրը, որը հնարավոր է
 իրականացնել ինչպես արժույթային դիվերսիֆիկացման, այնպես էլ
 արտաքին պարտքի ինտերնալացման ճանապարհով: Վերջինս առավել
 սուր դրսևորում ունի փոխարժեքի լրիվ ազատականացման
 պայմաններում, ինչպես օրինակ ՀՀ-ում, երբ ՀՀ Կենտրոնական
 բանկը նույնիսկ փոխարժեքներին տատանման միջանցք չի
 սահմանում, և ՀՀ դրամ/ԱՄՆ դոլարի միջև հարաբերակցությունը

⁹¹ ՀՀ 2015-2017թթ. միջնաժամկետ ծախսերի ծրագիր, էջ 66:
⁹² ՀՀ պետական պարտքի ամսական տեղեկագիր, դեկտեմբեր 2014, էջ 2, տե՛ս www.mfe.am:
⁹³ 2014թ.-ի արտարժույթի փոխարժեքները տարեսկզբի և տարեվերջի դրություններ
 վերցված են ՀՀ ԿԲ-ի պաշտոնական կայքից
<https://www.cba.am/am/SitePages/ExchangeArchive.aspx>

մի անգամ այն ազատականացվել է, ինչը հնարավոր է դարձնում, որ փոխարժեքային տատանումները գործեն ոչ հոգուտ պետական ծախսերի կրճատման:

Արտաքին պարտքի բեռի վրա արժույթների փոխարժեքների փոփոխության ազդեցությունը չեզոքացնելու համար անհրաժեշտ է նոր վարկային պայմանագրեր ստորագրելիս հաշվի առնել արտահանման կառուցվածքը և վարկերը ներգրավել այնպիսի արժույթներով, որոնք հնարավորինս համապատասխանում են արտահանման արժույթային կազմին, անհրաժեշտ է արտոնություններ սահմանել հատկապես փոքր և միջին արտահանող տնտեսությունների համար և որ շատ կարևոր է անհրաժեշտ է ունենալ արտարժույթով արտահայտված միջազգային պահուստների բավարարման արդյակ:

Շատ կարևոր է արտաքին պարտքը դիտարկել ըստ արտոնյալության պայմանների և ժամկետների, քանի որ դա նույնպես էական անդրադարձ կարող է ունենալ պարտքի բեռի վրա: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ յուրաքանչյուր երկիր փոխառումիջոցների արդյունավետության քարտեզագրման նպատակով պարտավոր է ձգտել առավել նպատակահարմար և արտոնյալ պայմաններով փոխառումիջոցների ներգրավմանը, ապա ակնհայտ է, որ նշյալ ինդքի կարևորությունն տեսանկյունից, նախևառաջ, պարտադիր պայման պետք է լինի տարբեր վարկատեսակների տրամադրման պայմանների համադրումը: Վերջիններիս արտոնյալության մակարդակը հիմնականում որոշվում է գրանտ-էլեմենտի կիրառմամբ, որի մասին արդեն խոսվել է աշխատանքի առաջին բաժնում:

Եթե 1997թ-ին արտաքին պարտքի գրանտ-էլեմենտը կազմում էր 19.2%, որը բավականին փոքր ցուցանիշ էր որպես արտոնյալ բնորոշման համար, ապա հետագայում այն բավականին աճ ունեցավ՝ 2001թ-ին՝ 32.4%⁹⁴, իսկ 2008թ-ին արդեն՝ 55.3%: Սկսած 2009թ.-ից այս ցուցանիշը դրսևորեց նվազման միտում: 2008թ.-ի համեմատ 2009թ-ին ՀՀ արտաքին պարտքի գրանտ-էլեմենտը նվազեց 16 տոկոսային կետով՝

⁹⁴ Իսրայելյան Ս. Հ. «Պետական պարտքի բեռը և հարկային շեղումները կայունությունը վրանրա ազդեցություն գնահատման հիմնական դիրքը» ատենախոսություն, էջ 67:

կազմելով 39.3%⁹⁵: 2010թ-ին այն կազմել է 32%, 2011թ-ին՝ 34%⁹⁶, 2012թ-ին՝ 30%⁹⁷, իսկ 2013թ-ին՝ 36%⁹⁸:

Նոր ասացված փոխառու միջոցները համար Հայաստանի Հանրապետությանը Արժույթի Միջազգային Հիմնադրամի հետ փոխհամաձայնեցված հենանիշ է սահմանել արտոնյալության միջին մակարդակի 30%-ը, չնայած որ, նույն ԱՄՆ գնահատումները համաձայն պարտքը համարվում է արտոնյալ, եթե նրա գրանտայինության մակարդակը փոքր է 35%-ից⁹⁹: Տվյալները ցույց են տալիս, որ 2009թ-ից սկսած, բացառությամբ 2013թ-ի, կարելի է արտաքին պարտքը միջազգային որեւէ ընդունված չափանիշները համաձայն, ընդհանուր առմամբ, արտոնյալ չհամարել: Այս առումով, նպատակահարմար է դիտարկել նաև ընդհանուր արտաքին պարտքի մեջ արտոնյալ վարկերի մասնաբաժնի ցուցանիշը, որն, ի հարկե անմիջականորեն կապված է գրանտայինության-տարրի փոփոխության միտման հետ: Այսպես, 1997թ-ին արտոնյալ վարկերի տեսակարար կշիռը կազմում էր 45.74%, 2001թ-ին՝ 67.9%, իսկ 2008, 2009, 2010, 2011թթ. համապատասխանաբար՝ 99%, 52.3%, 62.1% և 65.7%¹⁰⁰ (տե՛ս, Հավելված 2.1.5): Հավելվածում ներկայացված տվյալները ցույց են տալիս, որ մինչև 2008թ. արտոնյալ պայմաններով վարկերի տեսակարար կշիռը աճի միտում է ունեցել, որը սակայն կտրականապես փոխվեց 2009թ-ից սկսած՝ պայմանավորված նույն թվականին առևտրային պայմաններով ստանձնած վարկային պարտավորությունների հետ: ՀՀ արտաքին պետական պարտքի կառուցվածքում առևտրային վարկերի տեսակարար կշիռի աճի միտումը շարունակվեց նաև մինչև 2012թ.: Արդյունքում 2011թ. տարեվերջի դրությամբ առևտրային վարկերի մասնաբաժինը կազմեց 42.4%, իսկ 2012թ. տարեվերջի դրությամբ առևտրային և

⁹⁵ Մոդոյան Ա., Ալեքսանյան Ա. «ՀՀ արտաքին պարտքը 2011թ», ՀՀ ԿԲ, 2012, էջ 55:
⁹⁶ ՀՀ կառավարության պարտքի կառավարման 2013-2015թթ. ռազմավարական ծրագիր, էջ 4:
⁹⁷ ՀՀ կառավարության պարտքի կառավարման 2014-2016թթ. ռազմավարական ծրագիր, էջ 5:
⁹⁸ ՀՀ Կառավարության պարտքի կառավարման 2015-2017 թվականների ռազմավարական ծրագիր, էջ 564:
⁹⁹ Իսրայելյան Ս. Հ. «Պետական պարտքի բեռը և հարկաբյուրեցության կայունությունը վրանրազդեցություն գնահատման հիմնախնդիրը» ատենախոսություն, էջ 67:
¹⁰⁰ 2008-2011թթ. Տվյալները վերցված են Ա.Մոդոյան, Ա.Ալեքսանյան <<ՀՀ արտաքին պարտքը 2011թ>>, ՀՀ ԿԲ, 2012, էջ 55:

առևտրային ինքնուրույն պայմաններով տրամադրված վարկերի մասնաբաժինը՝ 44.5%:

2013թ. տարեկան զիջումները, սակայն, ՀՀ կառավարության վարկերի և փոխառություններին կառուցվածքում արձանագրված առևտրային վարկերի տեսակարար կշռի էական աճը դրսևորել է նվազման միտում՝ կազմելով 26.4%¹⁰¹:

Հիմնականում արտոնյալ պայմաններով ֆինանսավորման ընթացքը, ստիպում է վտանգներ տեսնել ոչ արտոնյալ պայմաններին մեջ, ինչն, իր հերթին, լուրջ հիմքեր ունի: Եթե նույնիսկ եղել են ոչ արտոնյալ վարկեր, ապա դրանք կամ վերաձևակերպվել են կամ դադարեցվել, օրինակ 1998թ. վաղաժամկետ դադարեցվել է դրանցից մեկի՝ Վերակառուցման և Ջարգացման Եվրոպական Բանկի կողմից ոչ արտոնյալ պայմաններով տրամադրված մեկ վարկային պայմանագրի¹⁰²: Իսկ 1999-2008 թթ. ընթացքում ոչ արտոնյալ պայմաններով նոր վարկային պայմանագրեր (բացառությամբ ՀՀ կառավարության կողմից տրամադրված երկու արտաքին երաշխիքներին) չեն ստորագրվել, իրականացվել է ոչ արտոնյալ վարկերի վաղաժամկետ մարում, օրինակ՝ 1999թ.-ից իրականացվեց Եվրամիություն կողմից տրամադրված վարկի վաղաժամկետ մարում, 2013թ.-ին՝ ՌԴ վարկերի վաղաժամկետ մարում:

Չնայած ՀՀ կառավարությունը շարունակում է արտոնյալ պայմաններով փոխառումիջոցներ տրամադրող վարկատուներին հետ համագործակցությունը, պահպանում է ԱՄՆ հետ փոխհամաձայնեցված հենանիշը նոր ստացված փոխառումիջոցների արտոնյալության միջին մակարդակը 30%-ի¹⁰³ չափով պահպանելու, այնուհանդերձ, այն փաստը, որ 2008թ. Հայաստանը դուրս է եկել ՀԲ կողմից արտոնյալ վարկերով ֆինանսավորվող երկրների շարքից, արդեն իսկ անհանգստանալու պատճառ է դարձել: Հարկ է նշել նաև, որ ներգրաված փոխառումիջոցների արտոնյալության ստիճանը գնահատելիս հաշվի է առնված ծրագրի շրջանակներում տրամադրված ոչ միայն վարկային, այլև դրամաշնորհային միջոցները: Իսկ դա

¹⁰¹ ՀՀ պետական պարտքը, տարեկան հաշվետվություն 2013, էջ 18:
¹⁰² Համաձայն ՀՀ և ՎԶԵԲ-ի միջև 1995թ. դեկտեմբերի 15-ին ստորագրված պայմանագրի, նրա ընդհանուր գումարը կազմում էր 15 մլն. ԱՄՆ դոլար:
¹⁰³ ՀՀ Կառավարության պարտքի կառավարման 2014-2016 թվականներին նազմավարական ծրագիր, էջ 5:

նշանակում է, որ արտաքին վարկերի արտոնյալություն մակարդակն իրականում ներկայացված իջավելի ցածր է:

Արտաքին պարտքի արտոնյալություն մասին պատկերացում են սալիս նան նրատոկոսադրույքն ու ժամկետայնությունը:

Միջազգային վարկերի օգտագործման արդյունավետություն, պարտքային բեռի ծանրություն տեսանկյունից կարևոր նշանակություն ունի վերջիններս ժամկետները: Ընդհանուր առմամբ, պետական պարտքի խոցելիություն կարևոր ցուցանիշներն են կարճաժամկետ վարկի տեսակարար կշիռը ընդհանուր պարտքի մեջ: Մինչև 2011թ. ընկած ժամանակահատվածում ՀՀ վարկային պայմանագրերը կնքվել են միջինը 28 տարի ժամկետով, որի ընթացքում առավելագույն ժամանակահատվածը եղել է մինչև 40 տարի, իսկ նվազագույնը 5 տարի, որն ի դեպ գրանցվել է 1 անգամ, երբ ԱՄՆ-ն 2009թ.-ին ՀՀ կառավարությանը՝ 202,4 մլն. և ՀՀ ԿԲ-ին՝ 331,2 մլն. SDR-ի չափով վարկ տրամադրեց «Stand-by Arrangement» ծրագրի շրջանակներում¹⁰⁴: 2012թ.-ին վարկային պայմանագրերի առավելագույն ժամկետը կազմել է 32 տարի, նվազագույնը՝ 12 տարի¹⁰⁵, 2013թ.-ին կնքված վարկային պայմանագրերի միջին ժամկետը կազմել է մոտ 23 տարի, առավելագույնը՝ 30 և նվազագույնը՝ 15 տարի տևողությամբ: Չնայած այն հանգամանքին, որ արտաքին պարտքի մասով վարկային գամբյուրը բացառապես կազմված է երկարաժամկետ վարկային պարտավորություններից, որպես հիմնախնդիր անհրաժեշտ է առանձնացնել այն հանգամանքը, որ ՀՀ կառավարության պարտքի մինչև մարումը մնացած միջին ժամկետը վերջին տարիներին դրսևորել է նվազման միտում (2013թ.-ի 12.10 տարվա փոխարեն 1014թ.-ին կազմել է 11.87 տարի¹⁰⁶):

Պետական պարտքի բեռի խնդիրը «խոցելի» է ոչ միայն ժամկետայնություն, արժույթի, այլ նաև տոկոսադրույքների տեսակետից, որն ավելացնելով պայմանական պարտավորությունների ծավալները, կարող է տնտեսական ճգնաժամերի պատճառ դառնալ: Մասնավորապես, մեծ ծավալի լողացող

¹⁰⁴ Հաշվարկներն ուտ «Հայաստանի Հանրապետության պետական պարտքը», 2011թ տարեկան հաշվետվություն էջ 33-39 էջերում բերված տվյալներին:

¹⁰⁵ ՀՀ պետական պարտքի տարեկան հաշվետվություն 2012, էջ 41-41:

¹⁰⁶ ՀՀ պետական պարտքի մասնական տեղեկագիր, դեկտեմբեր 2014թ., էջ 3, տե՛ս www.mfe.am կայքում:

տոկոսադրույքով պետական պարտքի ներգրավման պարագայում, երբ զգալիորեն փոխվում են ֆինանսական շուկայի պայմանները, պարտքի սպասարկումը մեծ բեռ է դառնում պետական բյուջեի համար՝ ազդելով երկրի վարկունակության վրա:

1999-2008թթ. ընկած ժամանակահատվածում ՀՀ արտաքին պետական պարտքի կառուցվածքում գնալով նվազել են լոդացող տոկոսադրույքով վարկերի տեսակարար կշիռները (տե՛ս, Հավելված 2.1.6) և արդեն 2008թ.-ին ՀՀ կառավարությունը չունեք լոդացող տոկոսադրույքով ֆինանսական պարտավորություններ: Պատկերը փոխվեց 2009թ. տարեվերջին՝ պայմանավորված համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի հետևանքով արտաքին վարկեր ներգրավելու անհրաժեշտությամբ: Ընդ որում եթե մինչև 2009թ ՀՀ կառավարությունն արտաքին աղբյուրներից նոր ֆինանսական պարտավորություններ հիմնականում ստանձնում էր արտոնյալ պայմաններով, ապա 2009թ.-ից սկսած պարտքային պորտֆելում հայտնվել են նաև շուկայական մոտ հատկանիշներ ունեցող գործիքներ, որոնց մի մասն ունի լոդացող տոկոսադրույք: Միայն 2009թ.-ի ընթացքում արտաքին աղբյուրներից ներգրավված վարկային միջոցների մոտ 72%-ը տրամադրվել է լոդացող տոկոսադրույքով: Արդյունքում 2009թ. տարեվերջի դրությամբ ՀՀ արտաքին պետական պարտքի կառուցվածքում լոդացող տոկոսադրույքով վարկերի մասնաբաժինը կազմել է 34.5%¹⁰⁷: Նույն ցուցանիշը 2010թ.-ին կազմել է 36.4%¹⁰⁸, 2011թ.-ին՝ 36.6%¹⁰⁹, 2012 թ.-ին 35.3%¹¹⁰: 2013թ. վերջի դրությամբ ՀՀ արտաքին պարտքի կառուցվածքում լոդացող տոկոսադրույքով վարկերի մասնաբաժինը նախորդ տարվա համեմատ նվազել է 13.1 տոկոսային կետով՝ կազմելով 22.2%¹¹¹, ինչը պայմանավորված է եղել եվրասպարտատումների թողարկման արդյունքում Ռուսաստանի

¹⁰⁷ «Հայ ստատիստիկական բյուրոյի պետական պարտքը», տարեկան հաշվետվություններ 2009, էջ 29:

¹⁰⁸ «Հայ ստատիստիկական բյուրոյի պետական պարտքը», տարեկան հաշվետվություններ 2010, էջ 24:


¹⁰⁹ «Հայ ստատիստիկական բյուրոյի պետական պարտքը», տարեկան հաշվետվություններ 2011, էջ 23:

¹¹⁰ «Հայ ստատիստիկական բյուրոյի պետական պարտքը», տարեկան հաշվետվություններ 2012, էջ 12:

¹¹¹ Տե՛ս 2013թ. ՀՀ պետական պարտքի դեկտեմբերամսական տեղեկագիրը, www.mfe.am:

Դաշնություն հանդես է դնում լոնդոնյան տոկոսադրույքով վարկի մարումով:

Լոնդոնյան տոկոսադրույքով վարկերի տոկոսադրույքի հաշվարկման հիմքում ընկած են միջազգային շուկայում ձևավորվող Libor և Euribor տոկոսադրույքները, որոնց վարքագիծը կախված է միջազգային ֆինանսական շուկայում առկա իրավիճակից և խիստ տատանողական է: Գծապատկեր 2.1.9-ի միջոցով դիտարկենք վերջին քսանհինգ տարիների 6-ամսյա USD Libor-ի և 6 ամսյա Euribor-ի դինամիկան:



Գծապատկեր 2.1.6: 6-ամսյա USD Libor-ի և 6 ամսյա Euribor-ի միջին ամսական դրույքաչափերի դինամիկան¹¹²

2014թ. ընթացքում ՀՀ կառավարության կողմից արտաքին աղբյուրներին ներգրավված վարկային միջոցների կառուցվածքում 46.8%-ը կազմել են լոնդոնյան տոկոսադրույքով վարկերի գծով կատարված մասհանումները, իսկ 53.2%-ը՝ ֆիքսված¹¹³: 2014թ.-ի վերջին դրույքամբ ՀՀ կառավարության վարկերի ու փոխառություններին կառուցվածքում լոնդոնյան տոկոսադրույքով վարկերի մասնաբաժինը կազմել է 16.1%՝ երկու տոկոսային կետով գերազանցելով նախորդ տարվացուցանիշը:

Այն փաստը, որ արտաքին վարկերի լոնդոնյան տոկոսադրույքի հաշվարկման հիմքում հիմնականում ընկած են միջազգային շուկայում ձևավորվող Libor և Euribor տոկոսադրույքները, պատճառ է,

¹¹² «Հայաստանի Հանրապետության պետական պարտքը», տարեկան հաշվետվություններ 2013, էջ 18:
¹¹³ ՀՀ պետական պարտքի 2014թ. տարեկան հաշվետվություններ, էջ 20:

նր միջազգային ֆինանսական շուկայում տիրոնդ իրավիճակից խիստ
 կախվածություն պայմաններում, տվյալ վարկերի մասնաբաժնի աճի
 հետևելու մեծանասն տոկոսադրույքի ուղիք (տե՛ս գծապատկեր
 2.1.6): Գծապատկերից երևում է, որ լոնգոն տոկոսադրույքների (USD
 Libor, Euribor) դիսկոնտի պարզին մի քանի տարվա ընթացքում բազմիցս
 անգամ փոփոխությունների ենթարկվել (մասնավորապես վերջին
 տարիներին Libor-ը նվազել է շուրջ 4-5 տոկոսային կետով):
 Մասնագետները կարծիքով, վերջինս կարող է արտաքին պարտքի
 տոկոսադրույքը զգալիորեն փոփոխել (0.6-0.7 տոկոսային կետով),
 ինչը ենթադրում է պետական բյուջեից պարտքի սպասարկման
 նպատակով մի քանի միլիարդ ավելի գումարների տրամադրում:
 Այսպես, համաձայն 2015-2017թթ. պետական միջնաժամկետ ծախսերի
 ծրագրի միջազգային ֆինանսական շուկաներում
 տոկոսադրույքների աճի պարագայում լոնգոն տոկոսադրույքների
 1 տոկոսային կետի փոփոխության դեպքում ՀՀ կառավարության
 արտաքին պարտքի գծով տոկոսային ծախսերը կփոփոխվեն միջինը
 տարեկան մոտ 6.3 մլն ԱՄՆ դոլարի չափով՝ նախորդ
 ռազմավարությունում ամրագրված 9.6 մլն ԱՄՆ դոլարի փոխարեն¹¹⁴:
 Հետևաբար պարտքի սպասարկման կանխատեսվելիություն
 կարևորությունից ելնելով անհրաժեշտ է հնարավորինս խուսափել
 լոնգոն դրույքով ներվարկերի ներգրավումից:

Լոնգոն տոկոսադրույքով վարկերի հետ կապված ուղիքերի
 մեղմացման տեսանկյունից բավականին մեծ առաջընթաց կարելի է
 համարել այն, որ ներկայումս ՎՋՄԲ-ի, ՎՋԵԲ-ի, ԵՆԲ-ի և ԱՋԲ-ի կողմից
 Հայաստանին լոնգոն տոկոսադրույքով տրամադրվող վարկերի
 դեպքում վարկային համաձայնագրերով ամրագրված են
 համապատասխան դրույթներ, որոնք վարկառուին հնարավորություն
 են ընձեռում ուղիքը նվազեցնելու նպատակով կիրառել
 հեջավորման գործիքներ, մասնավորապես փոխարկել վարկի ամբողջ
 գումարի կամ դրամի մասի արժույթը մեկ այլ արժույթի հետ,
 ֆիքսել վարկի օգտագործված և չմարված գումարի նկատմամբ
 կիրառվող լոնգոն տոկոսադրույքը, սահմանել տոկոսադրույքի

¹¹⁴ 2015-2017թթ. Պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրի էջ 3:

առավելագույն սահմանաչափ, մոդելավորել մայր գումարի մարման ժամանակացույցը¹¹⁵:

Տոկոսադրույքի հետ կապված հաջորդ խնդիրը պայմանավորված է այն հանգամանքով, որ հաշվի առնելով այն, որ Հայաստանի Հանրապետությանը մեկ շնչին ընկնող Համախառն Ազգային Եկամտի ցուցանիշով վերջին մի քանի տարիներին շարունակաբար գերազանցել է Ջարգացման Միջազգային Ընկերակցության (ՋԱԸ կամ IDA) կողմից սահմանվող շեմը և դիտարկվել է վարկունակ՝ ՎՋՄԲ-ի պայմաններով վարկավորման տեսանկյունից, ՋԱԸ-ն, հիմնվելով վերջինիս հետ ստորագրված մի շարք վարկային համաձայնագրերի դրույթների վրա, հայտնել է, որ այդ վարկերի սպասարկման գծով վճարումների ժամանակացույցերը ենթակա են վերանայման: Արդյունքում սահմանվել է ՋԱԸ-ի կողմից տրամադրված վարկերի գծով լրացուցիչ տոկոսադրույք՝ տարեկան 1.7%-ի չափով: Հասկանալու համար թե ինչպես կանդրատանա այդ փոփոխությունը ՀՀ արտաքին պարտքի կայունությունը ցուցանիշների վրա, բավարարել նշել, որ ՀՀ պարտքը ՋԱԸ-ին 2013թ.-ի դրությամբ կազմել է մոտ 1,3 մլրդ. ԱՄՆ դոլար:

ՀՀ արտաքին պետական պարտքի աճը մշտապես ուղեկցվել է ՀՀ ընթացիկ հաշվի հաշվեկշռի բավականին մեծ բացասական մնացորդով: Պարտքի սպասարկման թեթև բեռի պայմաններում սազուցելն այդքան էլ չանհանգստացնի, սակայն պարտքի սպասարկման ծավալների աճին գուցե խնդիրը դառնում է առավել քան հրատապ: 2010, 2011, 2012թթ. ՀՀ կառավարության ընթացիկ արտաքին պարտքի սպասարկումը կազմել է համապատասխանաբար 24.3, 24.9 և 44.7 մլրդ. դրամ¹¹⁶, ապա 2013թ.-ին՝ 263.2 մլրդ. դրամ¹¹⁷: Առաջիկա տարիներին ևս ՀՀ կառավարության արտաքին պարտքի գծով մարումները կաճեն՝ պայմանավորված գործող վարկերից շատերի արտոնյալ ժամկետների ավարտով, վարկային պայմանագրերի համաձայն տոկոսային արտահայտությամբ մարման ենթակա գումարների աճով: Բնական է, որ գարգացումների նման ընթացքը վտանգավոր է երկրի

¹¹⁵ «Հայաստանի Հանրապետության պետական պարտքը», տարեկան հաշվետվություններ 2012թ., էջ 24:

¹¹⁶ Աղբյուրն ըստ ՀՀ ՄԺԾԾ 2014-2016թթ., էջ 546:

¹¹⁷ Աղբյուրն ըստ ՀՀ ՄԺԾԾ 2015-2017թթ., էջ 569:

վճարունակություն և ֆինանսական կայունություն տեսանկյունից: Աղյուսակ 2.1.2-ի միջոցով դիտարկենք ՀՀ արտաքին պարտքի կայունություն գնահատման միջաբանի 2-րդ ցուցանիշների 1999-2013թթ. դինամիկան:

Աղյուսակ 2.1.5

ՀՀ արտաքին պարտքի կայունություն քանակադիշները 1999-2013թթ., %¹¹⁸

Տարիներ	ԶՆԱ/ ՀՆԱ	ԶՆԱ/ Արտ	ԱՊՍ/ Արտ	Տնկա/ Արտ	ԱՊ/ Արտ	ԱՊ/ ՀՆԱ	ԱՊՍ/ ԲԵ
1999	30	144	16	5	227	47	17
2000	28	119	11	3	192	45	16
2001	28	109	10	3	168	43	16
2002	28	96	10	3	147	43	17
2003	26	81	16	1	121	39	28
2004	21	69	9	1	110	33	17
2005	14	50	4	1	78	22	8
2006	11	46	4	1	80	19	6
2007	9	47	3	1	82	16	3
2008	9	57	3	1	90	14	2
2009	26	169	5	2	222	34	4
2010	28	134	5	2	170	36	4
2011 ¹¹⁹	30	126	4	2	148	35	4
2012	34	133	9	2	146	38	10
2013 ¹²⁰	36	134	31	2	139	37	33
Միջին	24	101	9	2	141	33	12

Ինչպես երևում է աղյուսակից, արտաքին պարտքի բեռի քանակադիշները 1999-2008թթ. ժամանակահատվածում դրսևորել են կայուն նվազման դինամիկա, որը սակայն սկսած 2009թ.-ից փոխել է շարժման ուղղությունն ու տեմպը: Եվ թեև վերջին տասնհինգ տարիների ընթացքում գրանցված միջին ցուցանիշներից և ոչ մեկի արժեքը չի գերազանցել նվազ պարտքի բեռ հանդիսացող շեմային արժեքները (տե՛ս, Հավելված 2.1.7), այնուամենայնիվ պարտքի բեռի

¹¹⁸ ԶՆԱ՝ գուտներ կարժեք, Արտ՝ արտահանում, ՀՆԱ՝ համախառն ներքին արդյունք, ԱՊ՝ արտաքին պարտք, ԱՊՍ՝ արտաքին պարտքի սպասարկում, ԲԵ՝ բյուջե տային եկամուտներ:

¹¹⁹ 1999-2011թթ. տվյալների համար աղբյուր է հանդիսացել «Հայաստանի Հանրապետության պետական պարտքը» 2011թ. տարեկան հաշվետվություն, էջ 27:

¹²⁰ 2012-2013թթ. տվյալների համար աղբյուր է հանդիսացել ՀՀ ՖՆ տվյալները:

կայ ունույթյան հարցն այսօր կարելի է դնել կասկածի տակ՝ հաշվի առնելով վերջին տարիներին վերոնշյալ ցուցանիշներին կտրուկ աճը: Այսպես, 2013թ.-ին պարտքի զուտ ներկա արժեք ՀՆԱ հարաբերակցությունը 2008թ.-ի ցուցանիշը գերազանցել է 27 տոկոսային կետով:

Հաջորդը՝ արտահանման նկատմամբ արտաքին պարտքի և արտաքին պարտքի զուտ ներկա արժեքի հարաբերակցության ցուցանիշներն են, որոնք, իրենց հերթին, բնութագրում են արտաքին պարտքը սպասարկելու՝ երկրի արտարժույթին հնարավորությունները և կայունությունը: Դիտարկված ցուցանիշներին առումով պատկերը հետևյալն է՝ 1999-2013թթ. կտրվածքով արտաքին պարտքի ՋՆԱ/արտահանում հարաբերակցությունը միջինը կազմել է 101%, ինչը բավականին լավ ցուցանիշ է, եթե հաշվի առնենք, որ նվազ պարտքի բեռ ունեցող երկրների համար սահմանված է 132%-ը: Սակայն առանձին տարիներին կտրվածքով այս սահմանին ոչ միայն մոտեցել ենք, այլ նաև գերազանցել՝ 1999, 2009, 2010 թվականներ: ՋՆԱ արտահանում հարաբերակցության սահմանային շեմը գերազանցել ենք նաև 2012-2013 թվականներին: Նման պատկեր է նաև արտաքին պարտք/արտահանում ցուցանիշի դեպքում, որի դեպքում նույնպես, թեև 1999-2013թթ. միջին ցուցանիշը փոքր է նվազ պարտքի բեռ ունեցող երկրների սահմանային ցուցանիշից 24 տոկոսային կետով, սակայն վճարունակությունը բնութագրող այս ցուցանիշը միջտյուր, որ գտնվել է կայուն համարվող մակարդակում: Այն հատել է կայունությունից վերին սահմանը (165%) 1999-2001թթ., սակայն, սկսած 2000թ.-ից նկատվել է ցուցանիշի աստիճանական բարելավում: Առավել արդյունավետ հարաբերակցություն գրանցվել է 2005թ., որից հետո աստիճանաբար բարձրանալով 2009թ.-ն գրանցել է վատագույն ցուցանիշը՝ 222%:

Իրացվելիք ունեցող ցուցանիշներին գծով արտաքին պարտքի կայունությունը կարող է արտահայտվել բյուջեի եկամուտների կամ արտահանման նկատմամբ արտաքին պարտքի սպասարկման կամ տոկոսավճարների հարաբերակցությամբ: Արտաքին պարտքի սպասարկման և բյուջեի եկամուտների հարաբերակցությունը համարվում է կայուն, եթե չի գերազանցում միջին համարվող 22.5%-

ը, և հետևաբար կարող ենք ասել, որ 1999-2013թթ ժամանակահատվածում գրանցված միջին ցուցանիշը գտնվել է անվտանգության սահմաններում՝ 12% արդյունքով: Համեմատաբար անկայուն մակարդակ է գրանցվել 1999-2004թթ. ընթացքում, որը սակայն սկսած 2005թից նվազման միտում է ունեցել: Այս ցուցանիշի գծով ևս 2013թ.-ին ունեցել ենք սահմանային շեմի հատում, ինչը նույնպես անհանգստություն տեղիք է տալիս, քանի որ գաղտնիք չէ, որ այս ցուցանիշը ոչ միայն խոսում է երկրի վարկավորման ներուժի, այլ նաև՝ բյուջե տային եկամուտների այլընտրանքային օգտագործման՝ սոցիալական ծախսեր, պետական գնումներ, պետական ներդրումներ կատարելու կորցրած հնարավորությունների մասին:

Մտահոգիչ է նաև արտաքին պարտքի սպասարկում արտահանում հարաբերակցության 2013թ. գրանցած առավելագույն ցուցանիշը՝ 31%, որը 13 տոկոսային կետով գերազանցում է նվազ պարտք ունեցող երկրների համար սահմանված շեմային մեծությունը և 1 տոկոսային կետով՝ միջին պարտքի բեռ ունեցող երկրների համար սահմանված շեմը:

Ամփոփելով կարող ենք նշել, որ պարտքի կայունությունը բնութագրող հիմնական ցուցանիշները 2000-ից մինչև 2008թ. ընդհանուր առմամբ դրսևորել են բարելավման միտում և գտնվել են կայունության թույլատրելի շրջանակներում: Վիճակը կտրուկ փոխվել է սկսած 2009թ-ից, երբ պարտքի ծավալը կրկնապատկվեց՝ համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամով պայմանավորված: Ընդ որում պարտքը բնութագրող ցուցանիշների բացասական փոփոխությունները պայմանավորված էին ոչ միայն պարտքի ֆիզիկական ծավալների կտրուկ աճով, այլ ինչպես արդեն նշել ենք պարտքի ներգրավման ոչ շահավետ պայմաններով, ՀՆԱ-ի երկնիշան կմամբ, արտահանման ծավալների կրճատմամբ, ինչպես նաև պարտքի արտոնյալ ժամկետներին ավարտմամբ պայմանավորված պարտքի մարումների հետ:

Նշենք նաև, որ վերջին տարիներին առևտրային պայմաններով ներգրավված վարկերի սպասարկման արդյունքում մարումների հետ մեկտեղ է ապես կաճեն նաև տոկոսային ծախսերը, ինչը նույնպես իր բացասական անդրադարձը կունենա պարտքի կայունության վրա, իսկ

է թէ հաշվի առնենք նաև «Jubilee Debt Campaign»-ի վերլուծության արդյունքները¹²¹, որոնք վկայում են, որ ՀՀ-ն արդեն իսկ ունի պարտքային լուրջ խնդիրներ, ապա ապագայում պարտքային բեռի ավելացման ամենաչնչին միտումն անգամ կարող է ծանր հետևանքներ ունենալ :

2.2 ՀՀ պետական բյուջեի սոցիալական ծախսերի և սոցիալական ուղղվածության արտաքին պետական վարկերի փոխկապվածությանը

Յուրաքանչյուր կառավարություն իր քաղաքական գործառնությունների մեջ առավել ապեւ կարևորում է կոնկրետ այս կամ այն ոլորտի զարգացման կամ կարգավորման խնդիրները, որոնց լուծումը տվյալ ժամանակաշրջանում գերակա է և անհետաձգելի: Այդ ուղղվածությունն անմիջապես իր արտահայտությունն է գտնում պետական բյուջեի ծախսերի ուղղությունների վրա: Եթե դիտարկելու լինենք ՀՀ բյուջեն, կտեսնենք, որ բյուջեային ծախսերի մեջ ամենամեծ տեսակարար կշիռը կազմում են սոցիալական ծախսերը: Եվ ոչ միայն ՀՀ-ում, այլև աշխարհի շատ երկրներում այս հարաբերակցությունը պահպանվում է: Սահարյեքնական է՝ պայմանավորված այն հանգամանքով, որ ժամանակակից ժողովրդավար պետության ձևավորումն ու գոյությունը, հարկերի հավաքագրումն ու պարտքային պարտավորությունների ստանձնումը վերջին հաշվով ունեն մեկ նպատակ՝ ապահովել հասարակության սոցիալական բոլոր խմբերի համար սոցիալական արդարություն, բարեկեցիկ կյանք և սոցիալ-կենցաղային պայմանների բարելավում:

2000թ. ՄԱԿ-ի հազարամյակի համաժողովի ժամանակ ՄԱԿ-ի անդամ 189 երկրների ղեկավարների կողմից ընդունված հազարամյակի Հոչակագրում որպես գերխնդիր առաջ քաշվեց աղքատության հաղթահարումը, իսկ որպես արդյունքների ամփոփման վերջնաժամկետ ընդունվեց 2015թ.-ը: ՄԱԿ-ի զարգացման ծրագրի շրջանակներում յուրաքանչյուր տարի ամփոփվում է տարբեր

¹²¹ Այս մասին ավելի մանրամասն տե՛ս <http://www.businessinsider.com/greece-isnt-the-only-debt-crisis-2015-7#ixzz3g12zltZM> կայքում:

Երկրորդ փուլում մարդկային զարգացման համաթվի (ՄՋՀ) դիտարկման, որն
իր մեջ ներառում է երեք բաղկացուցիչ՝ 12 նշի հաշվով ՀՆԱ-ն,
կյանքի տևողությունը և կրթական մակարդակը:

ՀՀ-ում Աղքատության հաղթահարման նախագծի ծրագրի
մշակման աշխատանքները, վարչապետի որոշմամբ, սկսվեցին 2000թ.-
ին, որը հաստատվեց 2003թ.-ին: Ծրագրի իրականացման
աշխատանքների ցանց է շարունակվում 15 տարի, այդ տարիների ընթացքում,
սակայն, ՀՀ մարդկային զարգացման համաթիվը դրական տեղաշարժ չի
ունենցել: 2003թ.-ի 0.76-ի¹²² փոխարեն 2013թ.-ի տվյալներով ՀՀ ՄՋՀ-ն
կազմել է 0.73¹²³: Համաթվի նվազումը հիմնականում տեղի է ունենցել
բնակչության կյանքի տևողության և կրթական մակարդակի
ինդեքսների նվազման հետևանքով: Վերոնշյալ փաստը
տարակուսանքի տեղիք է տալիս, քանզի նշված ժամանակահատվածում
ՀՀ կառավարությունը բազմաթիվ վարկային ծրագրեր է
իրականացրել, որոնք պետք է ուղղված լինեին հասարակության
սոցիալական խնդիրների մեղմմանը: Աշխատանքի այս բաժնում
կփորձենք ուսումնասիրել վերոնշյալ վարկային ծրագրերի և ՀՀ
հասարակության սոցիալական բնութագրիչների միջև եղած կապը:

Ժամանակակից համաշխարհային զարգացումները սոցիալական
ազդեցություն տեսանկյունից բնութագրվում են որոշակիորեն
միմյանց հակասող երկու միտումներով: Եթե առաջինի դեպքում
գնալով ու ժեղանում է միջազգային ֆինանսական կապիտալի գլոբալ
գերիշխանությունը, ապա երկրորդի պարագայում գերիշխողը
մարդկային զարգացումն է, կամ, այսպես կոչված՝ «մարդկային
դեմքով» սոցիալ-տնտեսական զարգացումը, որի արդյունքում
հասարակության մնացած բոլոր այլ արժեքներին կատամբ
գերիշխող են դառնում մարդկային որակները և սոցիալական
հիմնահարցերը: «Սոցիալական» տերմինը սովորաբար օգտագործվում
է սոցիալական ապահովության իմաստով, սակայն ավելի լայն
իմաստով, սոցիալական ընդունված է անվանել այն ամենը, ինչն
անմիջականորեն վերաբերում է հասարակությանը, մարդկանց
կյանքին՝ սոցիալական ապահովման, կրթություն, առողջապահության,

¹²² Human Development report 2005, http://hdr.undp.org/sites/default/files/reports/266/hdr05_complete.pdf
¹²³ Human Development report 2014, <http://hdr.undp.org/sites/default/files/hdr14-report-en-1.pdf>

Բարձրագույն, մշակույթի և այլ բնագավառներում¹²⁴: Որպես ստեղծագործական կառուցվածքային բաղկացուցիչ մաս, «սոցիալական ոլորտ» համակարգը ներկայացնում է այնպիսի բնագավառներ, որոնք ներկայացնում են կենսական բարիքները սպառման միջոցով վերջնական պահանջարկի բավարարման հետ, դրանով իսկ՝ անհատի և հասարակության ապրելակերպի բարելավման հետ: Սոցիալական ոլորտի բարելավման հիմնահարցը մարդկային զարգացման հայեցակարգի շրջանակներին ընդլայնման և առավել ընդգրկուն դառնալու միտում է ձեռք բերել: Այլ կերպ ասած, մարդկային զարգացման հայեցակարգը հետզհետե վերափոխվում է սոցիալական առաջընթացի հայեցակարգի, որտեղ շեշտադրվում է սոցիալական ոլորտի որակական պարամետրերի բարելավման անհրաժեշտությունը: Այս ստեղծագործությունից հավաստի է այն մտեցումը, ըստ որի, սոցիալական ոլորտում բարեփոխումները իրականացումն անհնար է առանց հասարակական կյանքի բոլոր կողմերի արմատական փոփոխությունների, իսկ հաջողությունների մասին հնարավոր է դատել բնակչության կենսամակարդակի ստիճանով և գործընթացի նկատմամբ բնակչության տարբեր խավերի վերաբերմունքով¹²⁵

Եվ այսպես, պետության առջնական գնած են միջաբաններ, որոնց լուծման նպատակով պետություններն օգտագործում են ինչպես իրենց սեփական ռեսուրսները, այնպես էլ ներգրավված ռեսուրսներ, ինչպիսիք են փոխառությունները և դրամաշնորհները: Ընդ որում եթե պետական դրամաշնորհները տրվում են անվերադարձելիության և անվճարելիության սկզբունքներով, փոխառությունները փոխատուի համար ապահովում են հավելյալ եկամուտ, իսկ փոխառուի համար, բնականաբար, ենթադրում են հավելյալ ծախս: Վերջինս ստիպում է փոխառու կողմից առավելապես զգույշ վերաբերվել այդ միջոցներին՝ հնարավորինս օբյեկտիվորեն գնահատել այդ միջոցների արդյունավետությունը: Ընդհանրապես փոխառու

¹²⁴ Այս մասին ավելի մանրամասն տե՛ս Райзберг Б.А., Стародубцева Е.Б., Курс экономики: Учебник. - 5-е изд., перераб. и доп. - М.: ИНФРА-М, 2014. - с. 549-558

¹²⁵ Մինասյան Է.Գ. «ՀՀ Սոցիալական քաղաքականությունը (1990-2003 թթ.)», [http://raber.asj-oa.am/3/1/2003-2\(3\).pdf](http://raber.asj-oa.am/3/1/2003-2(3).pdf):

միջոցները, այդ թվում՝ արտաքին փոխառությունները, ներգրավվում են ինչպես կոնկրետ նպատակով, այնպես էլ առանց հստակ նպատակի: Թվում է, թե այն միջոցները, որոնք իսկզբանե ներգրավվում են կոնկրետ նպատակով, պետք է լինեն առավել արդյունավետ, քան, ենթադրենք, մյուս միջոցները: Սոցիալական ուղղվածություն ունեցող արտաքին փոխառությունների և հասարակության սոցիալական բարեկեցության վրա դրանց հնարավոր ազդեցության բացահայտման նպատակով աշխատանքի այս բաժնում փորձել ենք ընդգրկել նաև արտաքին վարկային այնպիսի ծրագրերը, որոնք իրենց բնույթով, ամենաառանցքային ու հիմնարար դրույթներով սոցիալական են, պետք է նպաստեն մարդկանց կյանքի ու գործունեության պայմանների բարելավմանը, ինչպես նաև համապատասխան նախարարյալներ ստեղծեն սոցիալական բնույթի տարբեր խնդիրների հաղթահարման համար՝ սոցիալական ծառայությունների, հատկապես առողջապահության ու կրթության նրակի և մատչելիության բարձրացման, սոցիալական ապահովության մեխանիզմների բարելավման և այլնի միջոցով¹²⁶:


Ինդիրն այն է, որ արտաքին փոխառությունների սոցիալական հետևանքները կարելի է դիտարկել երկու մոտեցմամբ: Առաջին մոտեցմամբ դիտարկվում է այն հարցը, թե փոխառություններ հանդիսացող վարկային ծրագրերը որքանով են սոցիալական և համահունչ են արդյոք պետական բյուջեի սոցիալական ծրագրերի հետ: Վերջինս կուսումնասիրենք այս և հաջորդ ենթազույգ խնդիր շրջանակներում: Երկրորդ մոտեցումը ենթադրում է փոխառությունների սոցիալական հետևանքների դիտարկումը պետական պարտքի կուտակման, ինչպես նաև հետագա սպասարկման տեսանկյունից: Ինչին էլ կանդրատանանք երրորդ գլխի շրջանակներում:

Ըստ տարբեր գնահատականների, պետական ֆինանսական ռեսուրսների արդյունավետ օգտագործման, սովորաբար տնտեսության կրճատման շնորհիվ սոցիալական ոլորտին կատարվող հատկացումները ընդհանուր ծախսերի մեջ կարելի է հասցնել մինչև 55%: Վերջին տարիներին պետական բյուջեից սոցիալական

¹²⁶ <<Մարդկային աղքատությունն ու աղքատամետ քաղաքականությունը Հայաստանում>> ՄԱԿ-ի Հայաստանյան գրասենյակ, Երևան 2005, էջ 108:

նլոբրտի¹²⁷ ֆինանսավորումը չի գերազանցել 50%-ը, ըստ ՄԺԾԾ կանխատեսումների, այս առումով էական փոփոխություններ չեն սպասվում նաև 2015-2017թթ: Այս ժամանակահատվածում սոցիալական ծախսերը ընդհանուր ծախսերի մեջ չեն գերազանցի 49%-ի շեմը՝ համապատասխանաբար ունենալով հետևյալ ծրագրային ցուցանիշները՝ 48.10%, 48.92%, 48.51%¹²⁸:

Այս ընթացքում ամենաբարձր ցուցանիշը գրանցվել է 2012թ.-ին՝ 47.9%, իսկ 1999-2013թթ ընթացքում միջինը կազմել է 38% (գծապատկեր 2.2.1):



Գծապատկեր 2.2.1: 1999-2013թթ. սոցիալական ոլորտին կատարվող հատկացումները ՀՀ ՊԲ-ի ընդհանուր ծախսերի մեջ, %¹²⁹

Գծապատկերից երևում է, որ 1999-2013թթ. ժամանակահատվածում, չնայած տարբեր տարիներին դիտարկված փոքր վայրիվերումներին (կտրուկ փոփոխություններ դիտարկվել է միայն 2008թ.-ին և 2013թ.-ին), ՀՀ ՊԲ-ից սոցիալական ոլորտին կատարվող հատկացումները հիմնականում ունեցել են աճի միտում: 1999թ.-ի 27%-ի փոխարեն 2012թ.-ին ՊԲ-ից սոցիալական ոլորտին ուղղվող հատկացումները կազմել են 47.9%, ինչը սակայն 2013թ. նվազել է մինչև 42.3%: Այնուհանդերձ այս դինամիկան բավարար չէ ՀՀ բյուջեն

¹²⁷ Սոցիալական ոլորտի մեջ ներառվել են հետևյալ ուղղությունները՝ կրթություն և գիտություն, առողջապահություն, սոց. ապահովագրություն և սոց. ապահովություն, մշակույթ, տեղեկատվություն, սպորտ և կրոն:

¹²⁸ Հայաստանի Հանրապետության 2015-2017թթ. միջնաժամկետ ծախսերի ծրագիր, էջ 65:

¹²⁹ Գծապատկերը կառուցվել է հավելված 2.2.1-ի տվյալների հիման վրա:

սոցիալական անվանելու համար: Դրա համար առավել ճիշտ կլինի ուսումնասիրել ՊԲ-ից սոցիալական ոլորտին կատարված ծախսերի դինամիկան ՊԲ-ի եկամուտների դինամիկայի հետ համադրության մեջ: Սոցիալական ոլորտին կատարված հատկացումների բացարձակ ցուցանիշները դրամային արտահայտությամբ բերված են հավելված 2.2.3-ում, սակայն հաշվի առնելով այն հանգամանքը, որ արտաքին աղբյուրներից ֆինանսավորումը հիմնականում կատարվում կամ արտահայտվում է ԱՄՆ դոլարով, համեմատության նկատմամբ տեսանկյունից առավել նախընտրելի է բյուջե տային ցուցանիշները և արտացոլել դոլարով՝ տվյալ ժամանակաշրջանի միջին փոխարժեքին համապատասխան: ՀՀ պետական բյուջեի եկամուտների և սոցիալական ոլորտին ուղղված հատկացումների 1999-2013թթ. դինամիկան դոլարային արտահայտությամբ ներկայացված է հավելված 2.2.2-ում:

Հավելվածից երևում է, որ 2013թ.-ին նախորդ տարվա համեմատածել են պետական բյուջեի թե՛ եկամուտները (11,2%), և թե՛ ծախսերը (11,6%): Այնինչ պետական բյուջեից սոցիալական ոլորտին՝ կրթությանը, գիտությանը, մշակույթին, սոցիալական ապահովագրությանն ու ապահովությանը միասին տրվող հատկացումների ծավալները նույն ժամանակահատվածում նվազել են մոտ 1,5%-ով: Նշենք որ այս ոլորտներից յուրաքանչյուրին հատկացվող գումարի չափը նվազել է, բացառությամբ սոցիալական ապահովագրությանն ու ապահովությանը տրվող հատկացման, որը նախորդ տարվա համեմատածել աճել է 0,1%-ով:

Այնհայտ է, որ պետության սոցիալական քաղաքականության արդյունավետությանը, մասշտաբները, ֆինանսական հնարավորությունները կախված են առաջին հերթին տվյալ երկրի տնտեսական զարգացվածության մակարդակից, ինչից կարելի է հետևություններ անել, որ յուրաքանչյուր երկրի սոցիալական արդյունավետ քաղաքականության նախադրյալները թաքնված են տնտեսական զարգացման դրական միտումների և հեռանկարների մեջ: Կարելի է ասել, որ յուրաքանչյուր տնտեսական բարեփոխումից հետևից բերում է համապատասխան սոցիալական բարեփոխումներ, և ընդհակառակը՝ ցանկացած տնտեսական հետընթաց հղի է սոցիալական

անկման երևույթներով¹³⁰: Մոցիսկան լուրջ խնդիրներ հարկայնությամբ առավել ակնհայտ է դարձնում պետության դերը մոցիսկ-տնտեսական գործընթացներում, իսկ տնտեսական քաղաքականության մոցիսկան ասպեկտները կայանում են նրանում, որ կառավարությունը, տնտեսական որոշումները նդունելով ստիպված է հաշվի առնել բնակչության տարբեր շերտերի մոցիսկան արձագանքը¹³¹: Նման իրավիճակը բերում է նրան, որ մոցիսկան լարվածությունն ավագանին պատակով պետությունը փորձում է այդ ուղղությամբ մեծացնել բյուջեի ծախսերի բեռնվածությունը, ինչը ենթադրում է հարկային եկամուտների ավելացման անհրաժեշտություն: Եվ թե խնդիրը չի լուծվում տնտեսության սովորաբար հատվածից հարկային եկամուտների ավելացմամբ, ապա մնում է երկու հիմնական ճանապարհ` բարձրացնել հարկային դրույքաչափերը կամ ներգրավել մոցիսկան պատակների համար տրամադրվող արտաքին միջոցներ: Իհարկե, նշված միջոցները նշված խնդրի համար վերջնական լուծումներ չեն (ավելի կարող են ծնել լրացուցիչ մոցիսկան լարվածություն, քանի որ հարկերի մեծացման արդյունքում մի կողմից կրճատում են կազմակերպությունների և աշխատողների եկամուտները, մյուս կողմից` արտաքին փոխառում միջոցների ներգրավմամբ բարձրացնում են բյուջեի ծախսային ծանրաբեռնվածությունն ապագայում), այնուհանդերձ հետագա մոցիսկ-տնտեսական արդյունավետ քաղաքականության արդյունքում հնարավոր է թեթևացնել նաև բյուջեի ավելորդ ծանրաբեռնվածությունը:

Պետական բյուջեով նախատեսված մոցիսկան ուղորդված հասցեագրված հատկացումներից բացի, ինչպես պետական, այնպես էլ միջազգային համագործակցության մակարդակով, մոցիսկան ուղորդում ծրագրային մոտեցումների ներդրման ուղղություններով որոշակի քայլեր են իրականացվում, որոնք սակայն այժմ են ընկնում միայն առանձին մոցիսկան

¹³⁰ Մյանյան Ա. Վ. «Բյուջեի ծախսային քաղաքականությունը և մոցիսկան հիմնական խնդիրները ՀՀ-ում», տ.գ.թ. գիտական աստիճանի հայցման ատենախոսություն, Երևան 2006, էջ 42:
¹³¹ Баликоев В.З., «Общая экономическая теория», 4 изд., перераб. и доп. Новосибирск: ЮКЭА, 1998, ст.385.

հիմնախնդիրները լուծմանն ուղղված ծրագրերի մշակմամբ (Աղքատության հաղթահարման նազմավարական ծրագիր, Հակակոռուպցիոն նազմավարության ծրագիր, ՀԲ-ի կողմից առաջարկված սոցիալական ծրագրերն այլն): Անկախամենի նչից, այս ծրագրերի համատեղ և արդյունավետ իրագործումը, կարևոր նախադրյալներ կարող է ստեղծել սոցիալական նազմավարության իրագործման համար՝ դառնալով մեր երկրի սոցիալ-տնտեսական առաջընթացի հիմնական նախապայմաններինց մեկը: Ինչպես ցույց է տալիս միջազգային փորձը, վարկային ծրագրերի արդյունավետության բարելավմանը զուգընթաց, օժանդակություն և ստացող երկրներում բարելավվել են նաև քաղաքական և տնտեսական ոլորտներում առկա այլ խնդիրներ, ինչը զգալիորեն կախված է եղել սոցիալական և ենթակառուցվածքային ներդրումների արդյունավետության բարձր մակարդակից¹³²: Խնդիրը նրանում է, որ արտաքին օժանդակությունը հիմնականում նպատակաուղղված է եղել դեպի աղքատ, սակայն դրական և արդյունավետ տնտեսական քաղաքականություն իրականացնող երկրներ, քան զի դոնորների գործունեությունն ավելի ընտրանքային է դարձել հատկապես վերջին տարիներին¹³³: Ստացող երկրների համար պարտքը բեռ է, խնդիր ապագայի համար, սակայն շատ կարևոր է նաև, թե պարտքն ինչպես է օգտագործվում, ինչ ուղղություններով և ինչ մեխանիզմներով է ծախսվում: Հայաստանն իր պատմության ողջ ընթացքում նախապատվություն է տվել 3 տիպի վարկային ծրագրերի՝ ֆինանսական կայունացում, ինստիտուցիոնալ փոփոխություններ և ենթակառուցվածքների զարգացում: Ընդ որում՝ 1990-ական թթ. նախապատվությունը տրվում էր կայունացնող և ինստիտուցիոնալ փոփոխություններ ենթադրող վարկերին, իսկ 2000թ. հետո աստիճանաբար մեծանում է ենթակառուցվածքներին ուղղվող վարկերի տեսակարար կշիռը: 2008թ. Հայաստանի վարկային պատմությունը լուրջ կառուցվածքային փոփոխություն է կրել. ստացված միջոցներն մեծ մասը փոխկապակցված չեն: Այսինքն՝

¹³² Մեդրակյան Կ. Տ. «Արտաքին վարկավորման արդյունավետության գնահատման հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները ՀՀ-ում», տ.գ.թ. գիտական աստիճանի հայցման ատենախոսություն, Երևան 2007, էջ 11:


¹³³ Kraay, Aart, and Claudio Raddatz. 2005. "Poverty Traps, Aid, and growth". WorldBank, Washington, D.C. <http://www.imf.org/external/np/seminars/eng/2005/famm/pdf/kraay.pdf>.

Հայաստանի կառավարությունը դրանք ուղղորդում է բյուջե և ինքնուրույն էություն ունեցող ձևերով: Անկախ ամեն ինչից, պետք է ընդունել, որ սոցիալական բարեփոխումներ և զարգացում գրանցելու առաջնային պայմանը պետք է լինի այն, որ աղքատության հաղթահարման և սոցիալական զարգացման նպատակներով արդյունավետ իրականացման դոնոր հանրության ջանքերը անպայմանորեն կոորդինացվեն և արդյունավետորեն համակցվեն տրամադրվող միջոցները որպես օժանդակություն ստացող երկրի բյուջեի հետ:

Սոցիալական ոլորտներին ուղղված միջոցների արդյունքում ձևավորված ՀՀ արտաքին պարտավորության ուսումնասիրությունը մեր կողմից իրականացվել է ինչպես հաշվի առնելով այդ պարտավորությունների արդյունքում ձևավորված պարտքի մնացորդներին ծավալները, այնպես էլ պարտավորությունների շրջանակներում փոխառում միջոցների տարեկան հատկացումները, որպես պարտքի նոր ստացված ծավալներ:

Առաջին մոտեցումը, որը կարելի է տարանջատել որպես արտաքին պարտքի մնացորդային արժեքում սոցիալական բաղադրիչներին բացահայտման մոտեցում, ընդհանուր առմամբ, բնութագրում է, թե սոցիալական ոլորտին ուղղված վարկերը (տե՛ս, Հավելված 2.2.4) և փոխառությունները ինչ կշիռ ունենան արտաքին պետական պարտքի (նաև կառավարության արտաքին պարտքի մասով) մեծության մեջ, հետևաբար կարելի է գնահատել տվյալ երկրի արտաքին պարտավորությունների սոցիալական հիմնավորվածությունը և արտաքին փոխառություններին հաշվին լուծելի սոցիալական խնդիրներին մասշտաբները: Մակայն այս մոտեցման ամենամեծ թերությունն այն է, որ վերջնական մնացորդային արժեքները ներկայացնելով, չենք կարող արտացոլել, թե տվյալ տարվա ընթացքում որքան արտաքին վարկային և փոխառում միջոցներ են ուղղվել սոցիալական խնդիրներին լուծմանը: Ինչից հետևում է, որ գուցե համեմատականներ հնարավոր չի լինի իրականացնել ՀՀ պետական բյուջեից սոցիալական ոլորտին ուղղվող ծախսերի հետ:

Սոցիալ ակ ան ու ռ ր տի ն ու ղ ղ վ ած ար տաք ի ն
 պար տավ ո ռ ու թ յ ու ն ն եր ի մ ն աց ո ռ ղ ա յ ի ն ար ժ ե ք ն եր ի ղ ի ն ամ ի կ ան
 կ ար ո ղ ե ն ք տե ս ն ե լ գ ծ ապատկ եր 2.2.2 մ ի ջ ոց ո վ :




Գծ ապատկ եր 2.2.2: ՀՀ ար տաք ի ն պար տավ ո ռ ու թ յ ու ն ն եր ու մ (մ ն աց ո ռ ղ ու մ) ս ոց ի ալ ակ ան ու ռ ր տի ն ու ղ ղ վ ած փ ո խ առ ու թ յ ու ն ն եր ի բ աժ ն ե մ ա ս ը 1999- 2013թ թ.¹³⁴, (%)

Տ վ յ ալ ն եր ի ց եր ն ու մ է , ո ռ Հ Հ ը ն ղ հ ան ու ռ ար տաք ի ն պե տակ ան պար տք ի ծ ալ ալ ն եր ու մ ս ոց ի ալ ակ ան ու ռ ր տի ն ու ղ ղ վ ած փ ո խ առ ու թ յ ու ն ն եր ի մ ն աց ո ռ ղ ն եր ի մ ա ս ն աբ աժ ի ն ը 1999-2009թ թ . գ գ ալ ի ո ռ ե ն գ եր ազ ան ց ե լ է կ առ ալ ար ու թ յ ան ար տաք ի ն պե տակ ան պար տք ի մ ե ջ ս ոց ի ալ ակ ան ու ռ ր տի ն ու ղ ղ վ ած կ առ ալ ար ու թ յ ան ար տաք ի ն փ ո խ առ ու թ յ ու ն ն եր ի մ ա ս ն աբ աժ ի ն , 2010թ -ի ց ա ղ տար բ եր ու թ յ ու ն ը ն վ ազ ե լ է , ի ս կ ար ղ ե ն 2012թ -ի ն պատկ եր ը փ ո խ վ ե լ է ի օ գ ու տ կ առ ալ ար ու թ յ ան ար տաք ի ն պար տք ի մ ե ջ ս ոց ի ալ ակ ան ու ռ ր տի ն ու ղ ղ վ ած պար տավ ո ռ ու թ յ ու ն ն եր ի մ ա ս ն աբ աժ ի ն : Այ ն ու ա մ ե ն ա յ ն ի վ , 1999-2013թ թ . ը ն թ աց ք ու մ ը ն ղ հ ան ու ռ ար տաք ի ն պար տք ի մ ն աց ո ռ ղ ա յ ի ն ար ժ ե ք ն եր ու մ ս ոց ի ալ ակ ան ու ռ ր տի ն ու ղ ղ վ ած փ ո խ առ ու թ յ ու ն ն եր ի մ ա ս ն աբ աժ ի մ ի ջ ի ն ց ու ց ան ի ջ ը ` 18.3% , ալ ե լ ի ք ան 2 ան գ ամ գ եր ազ ան ց ե լ է կ առ ալ ար ու թ յ ան ար տաք ի ն պե տակ ան պար տք ի մ ե ջ ս ոց ի ալ ակ ան ու ռ ր տի ն ու ղ ղ վ ած կ առ ալ ար ու թ յ ան ար տաք ի ն փ ո խ առ ու թ յ ու ն ն եր ի մ ա ս ն աբ աժ ի մ ի ջ ի ն աց վ ած ց ու ց ան ի ջ ի ն ` 8.8% : Մ ա կ ա յ ն , ե թ ե ղ ի տար կ ե ն ք ս ոց ի ալ ակ ան ու ռ ր տի ն ու ղ ղ վ ած փ ո խ առ ու թ յ ու ն ն եր ի ար ղ յ ու ն ք ու մ ձ ն ալ ո ռ վ ած պար տք ի ծ ալ ալ ն եր ի տար ե կ ան հ ալ ե լ ա ճ ի տե մ պե ռ ը 2000-2013թ թ . ը ն թ աց ք ու մ պատկ եր ը կ լ ի ն ի հ ա կ առ ա կ ը : Հ Հ ար տաք ի ն պար տավ ո ռ ու թ յ ու ն ն եր ու մ

¹³⁴ Գծ ապատկ եր ը կ առ ու ց վ ե լ է հ ալ ե լ վ ած 2.2.3-ի տվ յ ալ ն եր ի հ ի մ ան վ ռ ա :

սոցիալական ոլորտին ուղղված փոխառություններին արդյունքում ձևավորված պարտքի ծավալներին տարեկան հավելաճի տեմպը միջինը կազմում է 5.9%, որը 4 անգամ զիջում է կառավարության արտաքին պարտավորություններում սոցիալական ոլորտներին ուղղված փոխառություններին (վարկերի) արդյունքում ձևավորված պարտքի ծավալներին տարեկան հավելաճի միջինացված ցուցանիշին՝ 24.7%:


Ինչպես արդեն նշեցինք, պարտքի մնացորդային ծավալները չենք կարող համադրել պետական բյուջեից կատարվող սոցիալական հատկացումների հետ: Դրա համար առավել նպաստակահարմար է օգտագործել տարեկան կտրվածքով ստացվող փոխառություններին ցուցանիշը: Սոցիալական նպատակներով ստացված միջոցները համադրելով ՀՀ ՊԲ սոցիալական հատկացումների հետ, կարող ենք պարզել վերջիններին նպատակային փոխկապվածության միտումները (տե՛ս, Գծապատկեր 2.2.3 և Հավելված 2.2.4):



Գծապատկեր 2.2.3: ՀՀ ՊԲ-ից կատարվող սոցիալական հատկացումների և արտաքին պարտավորություններում սոցիալական ոլորտին ուղղված ուղղության վարկային ծրագրերի տարեկան ստացումների դինամիկան 1999-2013թթ.¹³⁵,(%)

¹³⁵ Գծապատկերը կառուցվել է հավելված 2.2.4-ում բերված տվյալների հիման վրա:

Վերը բերված տվյալները հավաստում են, որ սոցիալական ոլորտին տարեկան ուղղորդված ֆինանսական միջոցները, կախված ֆինանսավորման աղբյուրներից, 1999-2013թթ. ընթացքում տարբեր և անհամապատասխան կշիռներ ունեն ընդհանուր ֆինանսավորման ծավալներում, ինչպես նաև միմյանց նկատմամբ փոխկապվածությունը գրեթե բացակայում է: Ինչ վերաբերում է վերը նշված ցուցանիշների կշիռների անհամապատասխանությանը, ապա նշենք, որ ամենաբարձր տեսակարար կշիռը սոցիալական ոլորտին ուղղված ծախսերի առումով ունեն ՆԲ-ից հատկացվող միջոցները՝ 1999-2013թթ. միջինը 37.1% (նվազագույնը՝ 27% (1999թ.), առավելագույնը՝ 49.8% (2012թ.)): ՀՀ Կառավարության կողմից ներգրավված արտաքին փոխառությունների մեջ սոցիալական ոլորտում նույնպես կարկային ծրագրերի տեսակարար կշիռը դիտարկված 1999-2013թթ. ժամանակահատվածում կազմել է միջինը 15.8% (նվազագույն ցուցանիշը՝ 2.4% գրանցվել է 2009, 2013 թվականներին, իսկ առավելագույնը՝ 44.7% 2006թ.-ին: Նշենք նաև, որ հատկապես այս երկու ցուցանիշները բովանդակային առումով փոխկապված են, ինչը պայմանավորված է այն հանգամանքով, որ կառավարությանը սոցիալական նպատակներով տրամադրված փոխառությունները նվարկերը պետք է դրական ազդեցություն ունենան պետական բյուջեից կատարվող սոցիալական հատկացումների վրա: Այս առումով ուշագրավ է ՀՀ ՊԲ-ից սոցիալական ոլորտին հատկացումների մեջ կառավարության արտաքին վարկատուներից բուն սոցիալական բնույթի փոխառությունների բաժնեմասը (տե՛ս, Գծապատկեր 2.2.4):




Գծ ապատկեր 2.2.4: ՀՀ ՊԲ սոցիալական ծախսերի կախվածությունը կառավարության սոցիալական նպատակներով վարկերի տարեկան ստացումներից, 1999-2013 թթ., %¹³⁶

Ստացվում է, որ 1999-2013թթ. ընթացքում ՊԲ-ից սոցիալական նպատակներով հատկացված միջոցների միջինը մոտ 5%-ի չափով սոցիալական ծրագրերի շրջանակներում փոխառություններ են ստացվել արտաքին միջոցներից, և եթե հաշվի չառնենք արտաքին դրամաշնորհներ ենթադրող սոցիալական ծրագրերը, ապա կարելի է ասել, որ սոցիալական ոլորտին ուղղված միջոցառումների գերակշիռ մասը ֆինանսավորվել է ՊԲ ներքին աղբյուրների հաշվին:

ՀՀ ՊԲ-ից կատարվող սոցիալական հատկացումների և ՀՀ կառավարության սոցիալական նպատակներով ներգրավված փոխառությունների տարեկան ծավալների միջև առկա կապի բացահայտման տեսանկյունից կարևորվում է վերջիններիս տարեկան հավելածի տեմպերի ուսումնասիրումը (տե՛ս, Գծ ապատկեր 2.2.5 և Հավելված 2.2.5):

¹³⁶ Հաշվարկները կատարվել են հեղինակի կողմից՝ հիմք ընդունելով ՀՀ ՖՆ տվյալները:



Գծ ապաստկ եր 2.2.5 ՀՀ պե տակ ան բյ ու ջ ե ի ս ոց ի ս ալ ակ ան հ առ կ աց ու մ ն եր ի հ ալ ե լ աճ ի ն կ առ ալ ար ու թյ ան ս ոց ի ս ալ ակ ան ո լ որ տի ն ու ղ ղ վ ած ծ ր ագր եր ի շ ր ջ ան ակ ն եր ու մ ս տաց վ ած վ ար կ եր ի տար ե կ ան ս տաց ու մ ն եր ի հ ալ ե լ աճ ի դ ի ն ա մ ի կ ան 2000-2013թթ.¹³⁷

Գծ ապաստկ եր ից եր ն ու մ է, որ ս ոց ի ս ալ ակ ան ո լ որ տի ն ու ղ ղ վ ած հ առ կ աց ու մ ն եր ի հ ալ ե լ աճ ի տե մ պե ր ը դ ի տար կ վ ած ժ ա մ ան ակ ա հ առ տվ ած ու մ մ ի մյ ան ց հ ե տ փ ո խ կ ապ վ ած ու թյ ու ն չ ու ն ե ց ո ղ պ ա ս տ կ եր ե ն ն եր կ այ ա ց ն ու մ: Օր ի ն ակ, 2000թ-ի ն, չ ն սյ ած կ առ ալ ար ու թ-յ ան ար տաք ի ն պ ար տա վ որ ու թյ ու ն ն եր ու մ մ ո տ 17.4 տ ո կ ո ս ո վ աճ ե լ է ս ոց ի ս ալ ակ ան ո լ որ տի ն ու ղ ղ վ ած փ ո խ առ ու թյ ա մ ք ս տաց վ ած մ ի ջ ո ց ն եր ը, այ ն ու հ ան դ եր ձ, ը ն դ հ ան ու ր ՊԲ-ի շ ր ջ ան ակ ն եր ու մ ս ոց ի ս ալ ակ ան ո լ որ տի ն հ առ կ ա ց վ ած ֆ ի ն ան ս ակ ան մ ի ջ ո ց ն եր ը ն վ ազ ե լ է ն: Առ ան ձ ի ն տար ի ն եր ի ն առ կ ա վ ի ճ ակ ն եր ի ն չ ան դ ր ադ առ ն ալ ո վ ն շ ե ն ք, որ ն շ վ ած ժ ա մ ան ակ ա շ ր ջ ան ու մ, ը ն դ հ ան ու ր առ մ ա մ ք, կ առ ալ ար ու թյ ան ար տաք ի ն պ ար տա վ որ ու թյ ու ն ն եր ու մ ս ոց ի ս ալ ակ ան ո լ որ տի ն ու ղ ղ վ ած ծ ր ագր եր ի շ ր ջ ան ակ ն եր ու մ ս տաց վ ած փ ո խ առ ու թյ ու ն ն եր ի տար ե կ ան հ ալ ե լ աճ ը մ ի ջ ի ն ը կ ազ մ ե լ է 42.6%, այ ն դ ե պք ու մ, որ ՀՀ պե տակ ան բյ ու ջ ե ի ս ոց ի ս ալ ակ ան ծ ախ ս եր ի մ ի ջ ի ն տար ե կ ան հ ալ ե լ աճ ը (դ ո լ ար ո վ հ ա շ վ ար կ վ ե լ ու ղ ե պք ու մ) կ ազ մ ե լ է ը ն դ ա մ ե ն ը 20.4%, կ ա մ 2 ան գ ա մ ա վ ե լ ի պ ակ ս ս (տե՛ ս, Հ ալ ե լ վ ած 2.2.6):

¹³⁷ Գծ ապաստկ եր ը կ առ ու ց վ ե լ է հ ալ ե լ վ ած 2.2.5-ի տվյ ալ ն եր ի հ ի մ ան վ ր ա:

Դիտարկվող ցուցանիշների միջև առկա կապի ուսումնասիրության տեսանկյունից հետաքրքիր է նաև վերջիններիս հավելաճի տեմպերի հիման վրա հաշվարկված հավելաճի առաձգականության կամ ճկունության (elasticity¹³⁸) գործակիցը, որը բնութագրում է, թե կառավարության արտաքին պարտավորությունն ներքուստ սոցիալական ոլորտին ուղղված ծրագրերի 1%-աճն ինչպես է անդրադարձնում ՀՀ պետական բյուջեի սոցիալական ծախսերի վրա:

Հավելվածի արդյունքները վկայում են, որ 2000-2013թթ. ընթացքում միջինացված առաձգականության կամ ճկունության ցուցանիշը կազմել է 0.47, այսինքն, կառավարության արտաքին պարտավորությունն ներքուստ սոցիալական ոլորտին ուղղված փոխառությունների 1% ավելացումն ուղեկցվել է բյուջեի սոցիալական ծախսերի 0.47% ավելացմամբ: Առաձգականության նման ցածր գործակիցը վկայում է ՀՀ ՊԲ-ի սոցիալական ծախսերի աճի նվազ հակվածության մասին:

Դիտարկված ցուցանիշների միջև եղած խզումը կասկածի տակ է դնում ներգրավված վարկային միջոցների արդյունավետության և նպատակայնության հարցը, ինչի համար էլ աշխատանքի հաջորդ բաժնում կուսումնասիրենք կոնկրետ վարկային ծրագրերի բովանդակությունը, վերջիններիս կատարման ընթացքը և այդ ընթացքում բացահայտված շեղումները:

2.3 Սոցիալական բովանդակության վարկերի նկատմամբ ֆինանսական վերահսկողություն արդյունքները

Վարկերի օգտագործման արդյունավետության խնդիրներն առավել արդիական են դառնում հատկապես ֆինանսական ճգնաժամերից հետո, երբ մեծանում է ֆինանսական ռեսուրսների

¹³⁸ Ցուցանիշը հաշվարկվել է $E_x(y) = \frac{x}{y} \frac{dy}{dx}$ բանաձևի հիման վրա, որտեղ $\frac{dx}{x}$ -ը x-անկախ փոփոխականի հավելաճն է, իսկ $\frac{dy}{y}$ -ը՝ y-կախյալ փոփոխականի հավելաճը: Ցուցանիշը ցույց է տալիս փոփոխականների միջև եղած կախվածությունը, կամ որքան կփոփոխվի y-ը x-ի 1%-ով փոփոխության պարագայում: Ավելի մանրամասն այս մասին տե՛ս Лопатников Л. И. Экономико-математический словарь: Словарь современной экономической науки. — 5-е изд., перераб. и доп. — М.: Дело, 2003, с. 426


նկատմամբ պահանջարկը: Եվ քանի որ ֆինանսատնտեսական ճգնաժամերն ուղեկցվում են ֆինանսատնտեսական ցուցանիշների անկմամբ, ներգրավված վարկային միջոցների և պասարկումը դառնում է առավել ռիսկային՝ էլավելի կարևորելով ֆինանսական միջոցների արդյունավետ օգտագործման խնդիրը: Վերջինս ենթադրում է փոխառությունների ներգրավման նպատակներին, պայմաններին, ակնկալվող արդյունքներին հստակեցում, ներգրավված միջոցների օգտագործման նկատմամբ վերահսկողություն խստացում, այդ միջոցների անարդյունավետ ծախսման դեպքերում պատժի կիրառում:

Այսօր միջազգային կազմակերպությունները և զարգացած երկրները, ելնելով տարբեր պատճառներին, որոնց վերջնական նպատակներին է նաև ոչ միայն վարկառուին, այլ նաև սեփական բարեկեցության աճը և ազդեցության ընդլայնումը, տարեցտարի մեծացնում են աղքատ և զարգացող երկրներին տրամադրվող օժանդակության չափերը, ինչն, անխուս, որպես օժանդակություն, կարող է թուլացնել աղքատ երկրներում առկա նեոուսերի սահմանափակության խնդիրը՝ հնարավորություն ընձեռնելով այդ երկրներին ներդրումներ իրականացնել ենթակառուցվածքներում և սոցիալական ոլորտի զարգացման ծրագրերում: Այս է պատճառը, որ ցածր եկամտունեցող երկրներին արտաքին տնտեսական հնաքերում օժանդակության միջոցները գերակշիռ մաս են կազմում:

1992թ-ին Հայաստանը անդամագրվեց ՄԱԿ-ին, ԱՄՆ-ին, ՎՋՄԲ-ին, 1993թ-ին՝ Միջազգային Զարգացման Ընկերակցությանը, 1995թ-ին՝ Միջազգային Ֆինանսական Կորպորացիային և Բազմակողմանի Ներդրումների Երաշխավորման Գործակալությանը: Հայաստանի տնտեսությունը ճգնաժամից հանելու և անցումային գործընթացն արդյունավետ իրականացնելու նպատակով, սկսած 1991թ-ից ՀՀ կառավարությունը ՀԲ-ի և ԱՄՆ օժանդակությամբ, լծվեց շուկայական տնտեսության անցման վերափոխումներին իրականացմանը: Սկզբնական փուլում միջոցները հիմնականում տրամադրվում էին մարդասիրական օգնությունների տեսքով, իսկ արտաքին վարկավորումը հիմնականում տրամադրվում էր տնտեսության կայացման և վերականգնման նպատակով:

կառուցվածքային բարեփոխումների ծրագրերի իրականացման համար :

1990թ-ի սկզբներին մինչև օրս ՀՀ-ին տրամադրվել են խոշոր ծավալների հասնող արտաքին վարկեր, որի ընթացքում ՀՀ-ն միջազգային ֆինանսական կազմակերպությունների և օտարերկրյա պետությունների հետ ստորագրել է մոտ 4 մլրդ. ԱՄՆ դոլարի վարկային համաձայնագրեր՝ դոլարով՝ 1.1 մլրդ (որից ԿԲ-ին բաժին է ընկնում 50 մլն.-ը), ՀՓԻ-ով՝ 2.04 մլրդ (որից ԿԲ-ին բաժին է ընկնում 588.2 մլն.-ը), եվրոյով՝ 473.6մլն. (որից ԿԲ-ին բաժին է ընկնում 127.8 մլն.-ը), իենով՝ 31.8մլն. և 36.7 մլն. արաբական դինարով¹³⁹: 2014թ. հունիսի 30-ի դրությամբ ՀՀ արտաքին պետական վարկերի 81.9%-ը կազմել են միջազգային կազմակերպություններից ստացված վարկային միջոցները, 17.6%-ը՝ օտարերկրյա պետությունների կողմից տրամադրված վարկերը, իսկ մնացած 0.5%-ը՝ առևտրային բանկերից ստացված վարկերը: ՀՀ արտաքին պետական պարտքի կառուցվածքն ըստ առանձին վարկատուների ներկայացված է գծապատկեր 2.3.1-ում:



Գծապատկեր 2.3.1: ՀՀ արտաքին պետական պարտքի կառուցվածքն ըստ վարկատուների 2014թ. հունիսի 30-ի դրությամբ¹⁴⁰

¹³⁹ Տվյալները հաշվարկվել են ըստ ՀՀ պետական պարտքը, 2011, 2012 թվականների հաշվետվությունների:

¹⁴⁰ Գծապատկերը կառուցվել է ՀՀ պետական պարտքի 2014թ. Լիխամյակի հաշվետվության հիման վրա, www.mfe.am

Ինչպես նկատում ենք քաղաքացիական պարկատուների կառուցվածքում ամենամեծ տեսակարար կշիռն ունի Համաշխարհային Բանկը (ՀԲ)՝ 50.3%: Վերջինիս խմբին են պատկանում Վերակառուցման և Զարգացման Միջազգային Բանկը (ՎՋՄԲ)՝ 10.1% և Զարգացման Միջազգային Ընկերակցությունը (ԶՄԸ)՝ 40.2%: Համաշխարհային բանկը ամբողջ աշխարհում համարվում է զարգացող երկրների համար ֆինանսական և տեխնիկական աջակցության կարևորագույն աղբյուր: ՎՋՄԲ-ի (IBRD) հիմնական առաքելությունը միջին եկամուտ և վստահություններ շնչող աղքատ երկրների զարգացումն է, մինչդեռ ԶՄԸ-ի (IDA) գործունեությունն ուղղված է ծայրահեղ աղքատության շեմին գտնվող երկրների զարգացմանը: Միասին այդ կառույցները զարգացող երկրների կրթական, առողջապահական, ենթակառուցվածքների, կապի և այլ ոլորտներում տրամադրում են ցածր, ինչպես նաև առանց տկուսադրության վարկեր, դրամաշնորհներ¹⁴¹: ՀԲ-ի կողմից իրականացվող ծրագրերի կարևոր առանձնահատկություններն են երից մեկն էլ այն է, որ վերջիններս ունեն շարունակական բնույթ, և իրականացվում են մեծ մասամբ փուլային սկզբունքով, ամեն մի փուլում ունենալով իրենց առանձնատու կխարսխային նպատակները: Կարևոր է նշել նաև, որ ընդհանուր սոցիալական ոլորտին ուղղված վարկային ծրագրերի իրականացնողը ևս հանդիսանում է ՀԲ-ը: Ընդհանուր առմամբ, այն աջակցում է ՀՀ-ին գյուղատնտեսության և շրջակա միջավայրի, կրթության, առողջապահության, պետական ծառայությունների և մասնավոր հատվածի զարգացման, էներգետիկայի և ճանապարհաշինության ոլորտներում բարեփոխումների իրականացման գործում:

ՀԲ-ին ՀՀ-ն անդամակցել էր դեռևս 1992թ-ի սեպտեմբերին¹⁴², և հանդիսանում է ՀՀ-ին վարկեր տրամադրած առաջին ֆինանսական կազմակերպություններից մեկը: ՀԲ-ի առաջին գործառնությունը ՀՀ-ում իրականացվել է 1993թ-ին՝ ինստիտուցիոնալ բարեփոխումների վարկի տրամադրմամբ, որոնք անցումային

¹⁴¹ «Համաշխարհային բանկը Հայաստանում», <http://www.arspiu.com/5.0.html>
¹⁴² 2000թ-ի ապրիլի 21-ից ՀՀ-ն օգտվում է վարկավորման IDA պայմաններից՝ վարկերը տրամադրվում են 40 տարի ժամկետով, որից 10-ը՝ արտոնյալ և 0.75% տկուսադրության չափով:

տնտեսությունը կառավարելու, ինչպես նաև քաղաքականության մշակման գործում քարեփոխումներ իրականացնելու նպատակ ունեին և օգնում էին ամրապնդել երկրի հնարավորությունները քաղաքականության քարեփոխումներ իրականացնելու և անցումային տնտեսությունը կառավարելու հարցում¹⁴³: Մի կողմից Հայաստանը ներգրավում էր վարկեր իրավական, մյուս կողմից՝ տնտեսական քարեփոխումներ իրականացման համար: Վերջինիս գործունեության նպատակն էր նպաստել երկրում տնտեսական աճի ձևավորմանը, քարելավել սոցիալական վիճակը, կրճատել գործազրկությանը: Մինչ այդ ՋՄԸ-ն աջակցել էր 1988թ. Հայաստանում տեղի ունեցած երկրաշարժի հետևանքով առաջացած տնտեսական և սոցիալական խնդիրներին լուծմանը:

ՀԲ-ի միջոցներով ներկայումս ծրագրեր են իրականացվում հետևյալ ուղղություններով՝ գյուղատնտեսություն, առողջապահություն, ճանապարհաշինություն, ենթակառուցվածքների զարգացում, ռոնգում և ջրամատակարարում, կրթություն և այլն: Ընդհանուր առմամբ 2013թ.-ի դրությամբ ՀԲ-ի և ՀՀ կառավարության միջև կնքվել է ավելի քան 1.9 մլրդ. ԱՄՆ դոլարի պայմանագրեր, որոնցից 1.7 մլրդ.-ը ՋՄԸ-ի կողմից (տե՛ս, Հավելված 2.3.1): Եթե համագործակցության սկզբնական փուլում միջոցներն ուղղվում էին քաղաքացիական տնտեսության և կառուցվածքային քարեփոխումներ իրականացմանը, տնտեսության զարգացման նախադրյալներին ձևավորմանը՝ կապված երկրի տնտեսական հետամնացության հետ, ապա այսօր նախագծերի և ծրագրերի գերակշիռ մասնը նդգրկում է սոցիալական ոլորտը: Սոցիալական ոլորտներին ուղղված ծրագրերն ամբողջովին իրականացվում են քաղաքացիական Վարկատունների աջակցությամբ, իսկ որպես վարկառու հանդես է գալիս ՀՀ կառավարությունը: 2013թ. դրությամբ ՀԲ-ի կողմից իրականացվող սոցիալական ոլորտին ուղղված 22 ծրագրերից 3-ը իրականացնում է ՎՋՄԲ-ն՝ 24.8 մլն. ԱՄՆ դոլարը նդհանուր արժեքով, իսկ մնացածը իրականացնում է ՋՄԸ-ն՝ 289.2 մլն ԱՄՆ դոլար արժեքով (տե՛ս, Հավելված 2.3.2): Առաջին ծրագիրն այս 2 քաղաքացիական հանդիսանում է «Սոցիալական ներդրումներ

¹⁴³ Տե՛ս www.mfe.am կայքից ՀՀ միջազգային համագործակցությունը:

հիմնադրամի «Ծրագրեր», որը սկիզբ է դրվել դեռևս 1995թ-ին, իսկ արդեն 2012թ-ին կնքվել է համաձայնագիր վերջինիս վերաֆինանսավորման վերաբերյալ՝ «Սոցիալական ներդրումներ հիմնադրամի III ծրագրի լրացուցիչ III ֆինանսավորման» ծրագիր: ՀԲ-ի կողմից տրամադրված գրեթե բոլոր ծրագրային վարկերը տրամադրվել են արտոնյալ պայմաններով: Փորձենք ավելի մանրամասն ներառնալ այդ ծրագրերին:

Առաջինը Սոցիալական ներդրումներ հիմնադրամի ծրագրին է, որի նպատակը հասարակության խոցելի խմբերի կենսամակարդակի բարձրացումն է, ինչպես նաև առավել աղքատ համայնքների ենթակառուցվածքների և ծառայությունների զարգացման աջակցությունը: Ծրագրերը իրականացվել է ՋՄԸ-ի աջակցությամբ, բացառությամբ 2010թ-ին ստորագրված «Սոցիալական ներդրումներ հիմնադրամի III ծրագրի II լրացուցիչ ֆինանսավորում» ծրագրի, որն իրականացրել է ՎՋՄԲ-ն: Ծրագրի իրականացման նպատակով ստորագրվել են մի շարք վարկային պայմանագրեր: Ծրագրի շրջանակներում կնքված առաջին պայմանագրերը ստորագրվել է 1995թ.-ին: Վարկի գումարը կազմել է 8.1 մլն SDR, II պայմանագրերը ստորագրվել է 2000թ.-ին, վարկի գումարը կազմել է 14.9 մլն SDR, երրորդը՝ 2006թ.-ին, վարկի գումարը կազմել է 16.9մլն SDR¹⁴⁴, որը երեք անգամ լրացուցիչ ֆինանսավորվել է ընդհանուր 19.3 մլն SDR-ի չափով:

2007թ-ին սոցիալական ներդրումներ հիմնադրամի վարկային երրորդ ծրագրի շրջանակներում կատարված ծախսերը կազմել են ավելի քան 1.8 մլրդ դրամ՝ 7.1%-ով գերազանցելով նախատեսված ցուցանիշը, իսկ սոցիալական ներդրումներ հիմնադրամի երկրորդ ծրագրի շրջանակներում նախատեսված 190.2 մլն դրամի փոխարեն փաստացի ծախսերը կազմել են շուրջ 186.3 մլն դրամ՝ ապահովելով 98% կատարողական: Ծրագրի շրջանակներում նախատեսված է եղել սկսել շինարարական աշխատանքները 18 առողջապահական հիմնարկներում, սակայն փորձաքննության արդյունքում դրանց մի մասը տեղափոխվել է այլ ոլորտներ¹⁴⁵: Հայաստանի սոցիալական

¹⁴⁴ «ՀՀ պետական պարտքը 2011, տարեկան հաշվետվություն», էջ 33-36:

¹⁴⁵ «ՀՀ 2007թ.պետական բյուջեի կատարման վերաբերյալ» հաշվետվություն, էջ 119:

ներդրումները հիմնադրամի երրորդ վարկային ծրագրի շրջանակներում 2008թ-ին օգտագործվել է ավելի քան 2.1 մլրդ դրամ՝ 25.7%-ով գերազանցելով նախատեսվածը, այն դեպքում, որ ՀԲ-ի աջակցությամբ իրականացվող՝ ՀՄՀ երրորդ ծրագրի շրջանակներում կատարվել են 55.6 մլն դրամի ծախսեր, որոնք ապահովել են ծրագրված հատկացումների 38.3% կատարողական: Հայաստանի սոցիալական ներդրումների հիմնադրամի երրորդ ծրագրի շրջանակներում նախատեսված 58.5 մլն դրամի փոխարեն ծախսերը կազմել են շուրջ 30.9 մլն դրամ՝ ապահովելով 52.8% կատարողական¹⁴⁶: 2008թ-ին Սոցիալական ներդրումների հիմնադրամի երկրորդ ծրագրի շրջանակներում նախատեսված 699.9 մլն դրամի փոխարեն ծախսերը կազմել են շուրջ 771.6 մլն դրամ, որից 658.6 մլն դրամը՝ վարկային միջոցներին, 113 մլն դրամը՝ կառավարության համաֆինանսավորման հաշվին՝ 10.2%-ով գերազանցելով նախատեսված ցուցանիշը: 2009թ-ին սոցիալական ներդրումների հիմնադրամի երրորդ վարկային ծրագրի շրջանակներում ծախսվել է շուրջ 1.2 մլրդ դրամ (որից 908.6 մլն դրամը՝ վարկային միջոցներին, 267.7 մլն դրամը՝ կառավարության համաֆինանսավորման հաշվին)՝ ապահովելով նախատեսվածի 99.2%-ը¹⁴⁷: Ծրագրից շեղումը պայմանավորված էր որոշ գնումների և տեղական իշխանությունների ֆինանսական ունուցման երկրորդ պայմանագրի կատարման հետաձգմամբ, ինչպես նաև գործառնական ծախսերի տնտեսումներով: Հայաստանի սոցիալական ներդրումների հիմնադրամի երրորդ վարկային ծրագրի արացուցիչ ֆինանսավորման շրջանակներում 2009թ-ին ծախսվել է ավելի քան 2.2 մլրդ դրամ (որից 1.9 մլրդ դրամը՝ վարկային միջոցներին, 311.7 մլն դրամը՝ կառավարության համաֆինանսավորման հաշվին)՝ ապահովելով 100% կատարողական: Հայաստանի սոցիալական ներդրումների հիմնադրամի երրորդ ծրագրի շրջանակներում 2009 թվականին կատարվել են 48.8 մլն դրամի ծախսեր, որոնք ապահովել են ծրագրված հատկացումների 53.2% կատարողական: Ցածր կատարողականը պայմանավորված է նրանով, որ ծրագրի ավարտը տեղափոխվել էր 2010 թվական: Հայաստանի սոցիալական

¹⁴⁶ «ՀՀ 2008թ.պետական բյուջեի կատարման վերաբերյալ» հաշվետվությունում, էջ 173:
¹⁴⁷ «ՀՀ 2009թ.պետական բյուջեի կատարման վերաբերյալ» հաշվետվությունում, էջ 140:

ն եր դր ու մ ն եր ի հ ի մ ն ադր ա մ ի եր ր ո ղ ծ ր ա գ ր ի շ ր ջ ա ն ա կ ն եր ու մ ն ախա տե ս վ ած 223.5 մ լ ն դր ա մ ի փ ո խ ա ր ե ն ծ ախս եր ը կ ա գ մ ե լ ե ն շ ու ր ջ 89.5 մ լ ն դր ա մ ¹⁴⁸: Հ ա յ ա ս տ ա ն ի ս ո ճ ի ա կ ա կ ա ն ն եր դր ու մ ն եր ի հ ի մ ն ադր ա մ ի եր ր ո ղ ծ ր ա գ ր ի շ ր ջ ա ն ա կ ն եր ու մ կ ա տ ա ր վ ե լ ե ն 486 մ լ ն դր ա մ ի ծ ախս եր ՝ կ ա գ մ ե լ ո վ ն ախա տե ս վ ած ց ու ց ա ն ի շ ի 90.4%-ը: Ծր ա գ ր ի ն Հ Հ կ առ ա վ ա ր ու թ յ ու ն ը մ ա ս ն ա կ ց ու թ յ ու ն է ց ու ց ա ր եր ե լ 69.9 մ լ ն դր ա մ ի չ ա փ ո վ, ի ս կ վ ա ր կ ա յ ի ն մ ի ջ ո ճ ն եր ը կ ա գ մ ե լ ե ն 416.0 մ լ ն դր ա մ: Հ ա շ վ ե տ ու տ ա ր ու մ ն շ վ ած դ ա ս ու մ ը ն դ գ ր կ վ ած ն ս 8 ծ ր ա գ ր եր ՝ ն ախա տե ս վ ած 934.4 մ լ ն դր ա մ գ ու մ ա ր ո վ, կ ա ս ե ց վ ե լ ե ն կ առ ա վ ա ր ու թ յ ա ն ո ր ո շ մ ա մ ր:

Հ ա յ ա ս տ ա ն ի ս ո ճ ի ա կ ա կ ա ն ն եր դր ու մ ն եր ի հ ի մ ն ադր ա մ ի եր ր ո ղ վ ա ր կ ա յ ի ն ծ ր ա գ ր ի լ ր ա ց ու ց ի չ ֆ ի ն ա ն ս ա վ ո ր մ ա ն շ ր ջ ա ն ա կ ն եր ու մ 2010թ. ծ ախս վ ե լ է 1.2 մ լ ր դ դր ա մ, ո ր ի ց 1.1 մ լ ր դ դր ա մ ՝ վ ա ր կ ա յ ի ն մ ի ջ ո ճ ն եր ի ց, 167.9 մ լ ն դր ա մ ը ՝ կ առ ա վ ա ր ու թ յ ա ն հ ա մ ա ֆ ի ն ա ն ս ա վ ո ր մ ա ն հ ա շ վ ի ն: Ն շ վ ած ծ ախս եր ը 22.4%-ո վ գ եր ա գ ա ն ց ե լ ե ն ն ախա տե ս վ ած ծ ա վ ա լ ը: Ծր ա գ ր ի գ եր ա գ ա ն ց ու մ ը պ ա յ մ ա ն ա վ ո ր վ ած եր ն ր ա ն ո վ, ո ր շ ի ն ա ր ա ր ա կ ա ն ա շ խ ա տ ա ն ք ն եր ե ն կ ա տ ա ր վ ե լ ն ախա տե ս վ ած ի ց ա վ ե լ ի շ ա տ ո ր յ ե կ տ ն եր ու մ, ի ն չ ա կ ս ն ա ն ն ախա տե ս վ ած ի ց ա վ ե լ ի շ ա տ դ պ ր ո ց ա կ ա ն կ ա հ ու յ ք է ձ ե ո ք ր եր վ ե լ ¹⁴⁹: Ն շ վ ած վ ա ր կ ա յ ի ն ծ ր ա գ ր ի եր կ ր ո ղ լ ր ա ց ու ց ի չ ֆ ի ն ա ն ս ա վ ո ր մ ա ն ծ ր ա գ ր ի շ ր ջ ա ն ա կ ն եր ու մ կ ա տ ա ր վ ե լ ե ն շ ու ր ջ 394.1 մ լ ն դր ա մ ի ծ ախս եր, ո ր ի ց 339.8 մ լ ն դր ա մ ը ՝ վ ա ր կ ա յ ի ն մ ի ջ ո ճ ն եր ի ց, 54.3 մ լ ն դր ա մ ը ՝ կ առ ա վ ա ր ու թ յ ա ն հ ա մ ա ֆ ի ն ա ն ս ա վ ո ր մ ա ն հ ա շ վ ի ն: Ն ախա տե ս վ ած ց ու ց ա ն ի շ ը կ ա տ ա ր վ ե լ է 83.6%-ո վ: Ծր ա գ ր ի ց ած ր կ ա տ ա ր ո ղ ա կ ա ն ը պ ա յ մ ա ն ա վ ո ր վ ած է դ պ ր ո ց ա կ ա ն կ ա հ ու յ ք չ գ ն ե լ ու հ ա ն գ ա մ ա ն ք ո վ ՝ կ ա պ վ ած ծ ր ա գ ր ի ու շ մ ե կ ն ա ր կ ի հ ե տ, ի ն չ ա կ ս ն ա ն դ պ ր ո ց ա կ ա ն կ ա հ ու յ ք ի մ ա տ ա կ ա ր ա ր ու մ ը 2011 թ վ ա կ ա ն տե դ ա փ ո խ ե լ ու հ ա ն գ ա մ ա ն ք ո վ: Հ ա մ ա շ խ ա ր հ ա յ ի ն ր ա ն կ ի ա ջ ա կ ց ու թ յ ա մ ր ի ր ա կ ա ն ա ց վ ո դ ՝ Հ ա յ ա ս տ ա ն ի ս ո ճ ի ա կ ա կ ա ն ն եր դր ու մ ն եր ի հ ի մ ն ադր ա մ ի եր ր ո ղ ծ ր ա գ ր ի շ ր ջ ա ն ա կ ն եր ու մ 2010 թ վ ա կ ա ն ի ն կ ա տ ա ր վ ե լ ե ն ա վ ե լ ի ք ա ն 15.8 մ լ ն դր ա մ ի ծ ախս եր, ո ր ո ն ք ա պ ա հ ո վ ե լ ե ն ծ ր ա գ ր վ ած հ ա տ կ ա ց ու մ ն եր ի 75%-ը ¹⁵⁰: Հ ա յ ա ս տ ա ն ի ս ո ճ ի ա կ ա կ ա ն

¹⁴⁸ «Հ Հ 2009թ. պե տակ ա ն ր յ ու ջ ե ի կ ա տ ա ր մ ա ն վ եր ա ր եր յ ա լ » հ ա շ վ ե տ վ ու թ յ ու ն, է ջ 171:
¹⁴⁹ «Հ Հ 2010թ. պե տակ ա ն ր յ ու ջ ե ի կ ա տ ա ր մ ա ն վ եր ա ր եր յ ա լ » հ ա շ վ ե տ վ ու թ յ ու ն, է ջ 135:
¹⁵⁰ «Հ Հ 2010թ. պե տակ ա ն ր յ ու ջ ե ի կ ա տ ա ր մ ա ն վ եր ա ր եր յ ա լ » հ ա շ վ ե տ վ ու թ յ ու ն, է ջ 147:

ներդրումները հիմնադրամի երրորդ ծրագրի շրջանակներում նախատեսված 70.3 մլն դրամի փոխարեն ծախսերը կազմել են 93.4 մլն դրամ կամ 32.8%-ով ավելի: Ծրագրին կառավարության մասնակցությունն ամբողջությամբ իրականացվել է՝ 10 մլն դրամի չափով, իսկ վարկային միջոցները կազմել են 83.4 մլն դրամ: Ծրագրի գերազանցումը պայմանավորված է նրանով, որ կատարվել են նախատեսված իջավել աշխատանքներ¹⁵¹: 2010թ. Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող՝ Հայաստանի սոցիալական ներդրումները հիմնադրամի (ՀՄՀ) երրորդ ծրագրի շրջանակներում կատարվել են 177.2 մլն դրամի ծախսեր՝ կազմելով նախատեսված ցուցանիշի 84%-ը: Շեղումը պայմանավորված է նրանով, որ համաձայն ՀՄՀ կանոնակարգի ծրագրերի մեկնարկը չի տրվում մինչև համայնքների ներդրման ստանալը: Համայնքների ներդրման ուղացման պատճառով 2 ծրագրի նախատեսված իջում էն մեկնարկել: 2010 թվականին ծրագրի շրջանակներում ավարտվել են շինարարական աշխատանքները 3 կրթական հիմնարկներում:

2011թ-ին ՀՄՀ երրորդ վարկային ծրագրի շրջանակներում ծախսվել է շուրջ 485.4 մլն դրամ, որից 365.4 մլն դրամը՝ վարկային միջոցներին, 120 մլն դրամը՝ կառավարության համաֆինանսավորման հաշվին: Ծրագրի 85.1%-ով կատարումը պայմանավորված է նախագծի լրամշակման պատճառով ժամկետի երկարաձգման և աշխատանքների մասը 2012 թվական տեղափոխելու հանգամանքով: ՀՄՀ երրորդ վարկային ծրագրի լրացուցիչ ֆինանսավորման շրջանակներում ծախսվել է շուրջ 88 մլն դրամ, որից 62.5 մլն դրամը՝ վարկային միջոցներին, 25.5 մլն դրամը՝ կառավարության համաֆինանսավորման հաշվին¹⁵²: Նշված վարկային ծրագրի երկրորդ լրացուցիչ ֆինանսավորման ծրագրի շրջանակներում կատարվել են շուրջ 1.8 մլրդ դրամի ծախսեր, որից 1.4 մլրդ դրամը՝ վարկային միջոցներին, 386.8 մլն դրամը՝ կառավարության համաֆինանսավորման հաշվին: Նախատեսված ցուցանիշը կատարվել է 80.7%-ով: Ծրագրի ցածր կատարողականը պայմանավորված է եղանակային անբարենպաստ պայմանների պատճառով աշխատանքների ժամկետի երկարաձգման և դրանց մի մասը, ինչպես նաև դպրոցական կահույքի մատակարարումը

¹⁵¹ «ՀՀ 2010թ. պետական բյուջեի կատարման վերաբերյալ» հաշվետվություն, էջ 160:
¹⁵² «ՀՀ 2011թ. պետական բյուջեի կատարման վերաբերյալ» հաշվետվություն, էջ 148:

2012 թվական տեղափոխելու հանգամանքով: ՀՄՀ երրորդ ծրագրի շրջանակներում 2011 թվականին կատարվել են շուրջ 21.6 մլն դրամի ծախսեր, որոնք 20.8%-ով գերազանցել են ծրագրված հատկացումները: Ծրագրի հիմնական նպատակներից է բարելավել աղքատ համայնքներում և ամենախոցելի խմբերի համար համայնքային ենթակառուցվածքների որակն ու մատչելիությունը՝ ի պրճագանք բացահայտվող կարիքների: Տվյալ ենթածրագիրն ընդգրկում է համայնքային մակարդակի առողջապահական կենտրոններին, կլինիկաներին, ամբուլատորիաներին և պոլիկլինիկաներին կառուցումն ու վերակառուցումը: ՀՄՀ երրորդ ծրագրի շրջանակներում նախատեսված շուրջ 85.2 մլն դրամի փոխարեն ծախսերը կազմել են շուրջ 137.2 մլն դրամ: Ծրագրին կառավարության մասնակցությունն ամբողջությամբ իրականացվել է՝ 15.2 մլն դրամի չափով, իսկ վարկային միջոցները կազմել են 121.9 մլն դրամ:

ՀՄՀ երրորդ ծրագրի շրջանակներում կատարվել են 171.1 մլն դրամի ծախսեր՝ կազմելով նախատեսված ցուցանիշի 84.8%-ը: Ծրագրին կառավարության մասնակցությունն ամբողջությամբ ֆինանսավորվել է՝ 36.1 մլն դրամի չափով, իսկ վարկային միջոցներից օգտագործվել է 81.5%-ը՝ 135 մլն դրամ: Տվյալ ենթածրագիրը ընդգրկում է տարրական և միջնակարգ դպրոցներին, դրանց ջեռուցման համակարգերին, մարզադահլիճներին կառուցումը, վերակառուցումն ու վերանորոգումը: 2011 թվականին ծրագրի շրջանակներում սկսվել և ավարտվել են շինարարական աշխատանքները 5 կրթական օբյեկտներում:

2012թ-ին ՀՄՀ երրորդ վարկային ծրագրի շրջանակներում ծախսվել է շուրջ 46.6 մլն դրամ, որից 41 մլն դրամը՝ վարկային միջոցներից, 5.6 մլն դրամը՝ կառավարության համաֆինանսավորման հաշվին¹⁵³: Ծրագրի 22%-ով գերազանցումը պայմանավորված է շինարարական աշխատանքների և խորհրդատվական ծառայությունների իրականացմամբ, որոնք բյուջեում չէին նախատեսվել: ՀՄՀ երրորդ վարկային ծրագրի երկրորդ լրացուցիչ ֆինանսավորման ծրագրի շրջանակներում կատարվել են շուրջ 993.3

¹⁵³ «ՀՀ 2012թ. պետական բյուջեի կատարման վերաբերյալ» հաշվետվություն, էջ 148:

մլն դրամի ծախսեր, որից 914.7 մլն դրամը՝ վարկային միջոցներին, 78.6 մլն դրամը՝ ՀՀ կառավարության համաֆինանսավորման հաշվին: Նշված ծախսերը 2.5 անգամ կամ 599 մլն դրամով գերազանցել են նախատեսված ծավալը, ինչը պայմանավորված է եղել նախատեսված իցավելիք քանակով ծրագրերի կատարմամբ: Նշված վարկային ծրագրի երրորդ լրացուցիչ ֆինանսավորման ծրագրի շրջանակներում կատարվել են 878.3 մլն դրամի ծախսեր, որից շուրջ 714.3 մլն դրամը՝ վարկային միջոցներին, 164.1 մլն դրամը՝ կառավարության համաֆինանսավորման հաշվին: Ծրագրի կատարողականը կազմել է 58.1%:

2013թ. Հայաստանի սոցիալական ներդրումների հիմնարամ երրորդ վարկային ծրագրի երկրորդ լրացուցիչ ֆինանսավորման ծրագրի շրջանակներում կատարվել են 27 մլն դրամի ծախսեր, որից 26 մլն դրամը՝ վարկային միջոցներին, 1 մլն դրամը՝ ՀՀ կառավարության համաֆինանսավորման հաշվին՝ ապահովելով 100% կատարողական: Նշված վարկային ծրագրի երրորդ լրացուցիչ ֆինանսավորման ծրագրի շրջանակներում կատարվել են 2.7 մլրդ դրամի ծախսեր, որից 2.1 մլրդ դրամը՝ վարկային միջոցներին, 581.5 մլն դրամը՝ կառավարության համաֆինանսավորման հաշվին: Նախատեսված ծախսերը կատարվել են 80.7%-ով: Ծրագրի կատարողականը պայմանավորված է շինարարական աշխատանքները նախատեսված ից ու շուկայում հանգամանքով¹⁵⁴:

Երկրորդը Առողջապահության ֆինանսավորման և առողջության առաջնային պահպանման ծրագրին է: Այն ստորագրվել է 1997թ.-ին, վարկի գումարը կազմել է 7.2 մլն SDR: Ոլորտի բարեփոխումները հիմնականում ուղղվել են մարզերի գյուղական առողջության առաջնային պահպանման ծառայություններ մատուցողներին ենթակառուցվածքների բարելավմանը, ինչպես նաև ընտանեկան բժշկություններում համար նպաստավոր պայմանների ստեղծմանը:

Երրորդը Կրթության ֆինանսավորման և կառավարման բարեփոխումներին ծրագրին է: Այն ստորագրվել է 1998թ.-ին, վարկի գումարը կազմել է 11.1 մլն SDR: 1998-2002 թթ., այս ծրագրով ինդիքեր դրված ապահովել հանրակրթության համակարգի ֆինանսավորման և

¹⁵⁴ «ՀՀ 2013թ. պետական բյուջեի կատարման վերաբերյալ» հաշվետվություն, էջ 145:

նուսուցչի այսխատավարձի աճը, միջոցների օգտագործման արդյունավետության բարձրացումը, համակարգի գործունեության ժողովրդավարացումը և այլն¹⁵⁵:

Չորրորդը Բնական պաշարների կառավարման և չքավորության նվազեցման ծրագիրն է: Ստորագրվել է 2000թ.-ին, վարկի գումարը կազմել է 6.7մլն SDR: Ծրագրի նպատակն է՝ ՀՀ Գեղարքունիքի և Տավուշի մարզերում բնական պաշարների կայուն կառավարման մեխանիզմների ստեղծումը և դրանց իրականացման միջոցով չքավորության նվազեցումը: Նույն ծրագրի շրջանակներում ՀՀ-ի և ՀԲ-ի միջև 2002թ. հունվարի 1-ին կնքվել է նաև 4.1մլն SDR գումարով դրամաշնորհային համաձայնագիր, որը վավերացվել է 31.08.2002թ.-ին:

2007թ.-ին այս վարկային և դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում ծախսվել է համապատասխանաբար 1.2 մլրդ դրամ (նախատեսվածի 146.3%-ը) և 440.8 մլն դրամ (նախատեսվածի 88.2%-ը): Վարկային ծրագրի շրջանակներում իրականացված ծախսերը գերազանցել են նախորդ տարվա հատկացումները 33.6%-ով, իսկ դրամաշնորհային ծրագրի ծախսերը նվազել են 10.8%-ով¹⁵⁶: 2008թ.-ին վերը նշված ծրագրերի շրջանակներում ծախսվել է համապատասխանաբար 487 մլն դրամ (նախատեսվածի 48.4%-ը) և 279.6 մլն դրամ (նախատեսվածի 62.6%-ը)¹⁵⁷:

Ըստ վարկային համաձայնագրի, ՀՀ-ն պարտավոր է պարբերաբար մուծել պարտավճար՝ վարկի չառհանված հիմնագումարի դիմաց՝ ՄՋԸ-ի կողմից յուրաքանչյուր տարվա հունվարի 30-ին սահմանվող, բաց ռազմավարության քանակության 0.5 տոկոսադրույքով: Վարկի հիմնագումարի առհանումների և մնացորդային գումարների դիմաց ՀՀ-ն պարտավոր է պարբերաբար վճարել սպասարկման վարձ՝ տարեկան 0.75%-ի չափով: Պարտավճարը և սպասարկման վարձը պետք է վճարվեն կիսամյակային մուծումներով՝ յուրաքանչյուր տարվա մայիսի 1-ին և նոյեմբերի 1-ին: Փոխառուն վարկի հիմնագումարը պարտավոր է հետվերադարձնել կիսամյակային մուծումներով՝ յուրաքանչյուր տարվա մայիսի 1-ին և նոյեմբերի 1-ին, սկսած 2012թ.-ից մինչև 2042թ.-ը:

¹⁵⁵ «Կրթական ծրագրերի կենտրոն» ԾԻԳ <http://www.cfep.am/history>
¹⁵⁶ «ՀՀ 2007թ. պետական բյուջեի կատարման վերաբերյալ» հաշվետվություն, էջ 183:
¹⁵⁷ «ՀՀ 2008թ. պետական բյուջեի կատարման վերաբերյալ» հաշվետվություն, էջ 131:

Հինգերորդը Կրթություն և համապատասխանության ծրագիրն է՝ ԿՈՀ: Վերջինիս իրականացման նպատակով ստորագրվել են երկու վարկային պայմանագիր: Առաջինը ստորագրվել է 2004թ.-ին՝ 13.2 մլն SDR չափով, իսկ երկրորդը 2009թ.-ին՝ 17 մլն SDR չափով:

2007թ.-ին ԿՈՀ I ծրագրի շրջանակներում կատարվել են ավելի քան 1.7 մլրդ դրամի ծախսեր՝ ապահովելով 91.5% կատարողական: Ընդ որում, շեղում է արձանագրվել բոլոր ենթածրագրերի գծով¹⁵⁸:

ԿՈՀ I ծրագրով 2008թ.-ին կատարվել են ավելի քան 1.4 մլրդ դրամի ծախսեր, որից 1.3 մլրդ դրամը՝ վարկային միջոցներին, 111.7 մլն դրամը՝ կառավարության համաֆինանսավորման հաշվին՝ ապահովելով 80.5% կատարողական¹⁵⁹: 2009թ.-ի հաշվետու տարվա ընթացքում I ծրագրի շրջանակներում ծախսվել էր շուրջ 1.2 մլրդ դրամ, որը 16.8%-ով գերազանցում էր նախատեսված ցուցանիշը: Ծրագրի գերակատարումը պայմանավորված էր 2008 թվականի վերջին մատակարարված ապրանքների և մատուցված ծառայությունների գծով կրեդիտորական պարտավորությունների առկայությամբ, որոնք մարվել են 2009 թվականի ընթացքում: 2009 թվականը ԿՈՀ I առաջին վարկային ծրագրի իրականացման վերջին տարին էր, իսկ նոյեմբերի 28-ը համաձայնագրով սահմանված էր ԿՈՀ I ծրագրի փակման օրը: 2009 թվականի դեկտեմբերի 1-ից սկսվել են ԿՈՀ II վարկային ծրագրով նախատեսված աշխատանքները: ԿՈՀ II ծրագրի իրականացման համար I ծրագրից հատկացվել է 13.6 մլն դրամ, որը չէր օգտագործվել:

2010թ. ընթացքում II ծրագրի շրջանակներում ծախսվել է 504 հազար դրամ՝ նախատեսված 35.3 մլն դրամի դիմաց: Ծրագիրն ավարտվել է 2010 թվականի առաջին եռամսյակում, և ՀԲ կողմից վարկային այլ միջոցներ չեն ստացվել: 2010 թվականին իրականացվել է ծրագրի սուդիտ, որը ֆինանսավորվել է ՀՀ կառավարության համաֆինանսավորման և նախորդ տարվա վարկային միջոցներին մնացորդի հաշվին¹⁶⁰:

¹⁵⁸ Այդ ենթածրագրերն են՝ 1. հանրակրթության կրթակարգի, առարկայական ուսումնական ծրագրերի և գնահատման նոր համակարգի ստեղծում, 2. տեղեկատվական հաղորդակցման տեխնոլոգիաների ներդրում հանրակրթության համակարգում, 3. ուսուցիչների մասնագիտական կատարելագործում, 4. հանրակրթության համակարգի կառավարման բարելավում և արդյունավետության բարձրացում:

¹⁵⁹ «ՀՀ 2008թ. պետական բյուջեի կատարման վերաբերյալ» հաշվետվություն, էջ 171:

¹⁶⁰ «ՀՀ 2010թ. պետական բյուջեի կատարման վերաբերյալ» հաշվետվություն, էջ 188:

2013թ-ի ՀՀ կառավարության բյուջե տային ուղերձի համաձայն, շարունակվել է ԿՈՀ II վարկային ծրագիրը: Ծրագրով նախատեսված աշխատանքների իրականացման նպատակով 2013 թվականի համար հասկացվել է 3,977.1 մլն դրամ:

Վեցերորդը Առողջապահական համակարգի արդիականացման ծրագիրն է: Այս ծրագրի հիմնական նպատակն է բարձրացնել առողջապահության որակն ու մատչելիությունը, բարելավել ընտրված հիվանդանոցային ցանցի որակն ու արդյունավետությունը, մշակել առողջապահության արդյունավետ քաղաքականություն:

Ինչպես նախկին վարկային ծրագրերի դեպքում, վերջինս նույնպես իրականացվում է փուլային տարբերակով և մինչև 2012թ-ը ծրագրի շրջանակներում ստորագրվել են մի շարք վարկային պայմանագրեր: Մասնավորապես, 2004թ.-ին ստորագրվել է «Առողջապահական համակարգի արդիականացման I ծրագիր»-ը, որի գումարը կազմել է 13 մլն SDR: «Առողջապահական համակարգի արդիականացման II ծրագիր»-ը ստորագրվել է 2007թ.-ին, իսկ վարկի գումարը կազմել է 14.8 մլն SDR: Երկրորդ ծրագրի լրացուցիչ ֆինանսավորման պայմանագիրը ստորագրվել է 2011թ.-ին, վարկի գումարը կազմել է 19.0 մլն դոլար: Եթե առաջին երկուսի դեպքում, գործընկեր կողմ է հանդիսացել ՋՄԸ-ը, ապա վերջինի դեպքում՝ ՎԶՄԲ-ն:

2007 թ-ին վարկային ծրագրի շրջանակներում ծախսվել է շուրջ 86.8 մլն դրամ (ծրագիրը կատարվել է 100%-ով), որից 15.6 մլն դրամը՝ վարկային միջոցներին, 71.1 մլն դրամը՝ ՀՀ կառավարության համաֆինանսավորման հաշվին¹⁶¹: 2012թ.-ին վարկային երկրորդ ծրագրի շրջանակներում ծախսվել է 819.3 մլն դրամ, որը կատարվել է 75.3%-ով: Ծրագրին կառավարությունը մասնակցություն է ցուցաբերել 205.1 մլն դրամի չափով, իսկ վարկային միջոցները կազմել են 614.2 մլն դրամ: Շեղումը պայմանավորված է այն հանգամանքով, որ «Գյումրի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կառուցման պայմանագրի շրջանակներում 2012 թվականի ընթացքում փաստացի

¹⁶¹ «ՀՀ 2007թ. պետական բյուջեի կատարման վերաբերյալ» հաշվետվություն, էջ 121:

կատարված աշխատանքներին դիմաց կանխավճար էր վճարվել 2010 թվականին¹⁶²:

Առողջապահական համակարգի արդիականացման երկրորդ վարկային ծրագրի լրացուցիչ ֆինանսավորման ծրագրի (տնտեսությունը՝ 2011-2014թթ.) շրջանակներում ծախսվել է շուրջ 2.4 մլրդ դրամ, որը կատարվել է 66%-ով: Ծրագրին կառավարությունը մասնակցություն է ցուցաբերել 321.5 մլն դրամի չափով, իսկ վարկային միջոցները կազմել են 2.0 մլրդ դրամ: 2013թ. ՀՀ կառավարության բյուջետային ուղերձի համաձայն այս ծրագրի շրջանակներում նախատեսվում էր ՀՀ մի շարք մարզերում իրականացնել ամբուլատորիաների վերանորոգման աշխատանքներ, ձեռք բերել բժշկական պարագաներ, կահույք, սարքավորումներ և համապատասխան արբժշկական թափոնների այրման վառարան և այլն: Ընդհանուր առմամբ, ծրագրով նախատեսված աշխատանքներին իրականացման նպատակով 2013թ. համար ծրագրված էր 4,597.2 մլն դրամ¹⁶³:

Յոթերորդը Սոցիալական ապահովության կառավարման ծրագիրն է, որը կոչված է բարելավելու սոցիալական և զբաղվածության ծրագրերի կառավարումը, ինչը կնպաստի Կառավարության՝ երկրում աղքատությունը հաղթահարելու նպատակի իրագործմանը: Ծրագիրը ուղղված է ժամանակակից սոցիալական ապահովության կառավարման համակարգի ստեղծմանը, որը ոչ միայն կապահովի պետական սոցիալական ծրագրերի արդյունավետ կառավարում և վերահսկողություն, այլ նաև հիմք կհանդիսանա աղքատ ընտանիքներին և բնակչության խմբերին բարելավված սոցիալական ծառայություններ մատուցելու համար:

Վերջինս նույնպես իրականացվում է փուլային տարբերակով: Առաջին պայմանագիրը՝ «Սոցիալական ապահովության կառավարման ծրագիր», ստորագրվել է 2004թ.-ին, իսկ վարկի գումարը կազմել է 3.6 մլն SDR:

Երկրորդ պայմանագիրը՝ «Սոցիալական ապահովության կառավարման ծրագրի լրացուցիչ ֆինանսավորում», ստորագրվել է 2010թ.-ին, վարկի գումարը՝ 5 մլն դոլար: Ծրագրի նպատակներն

¹⁶² «ՀՀ 2012թ. պետական բյուջեի կատարման վերաբերյալ» հաշվետվություն, էջ 179:
¹⁶³ ՀՀ Կառավարության 2013թ. բյուջետային ուղերձ, էջ 155:

նւղղակիորեն կապված են մարդկային զարգացման խթանման և սոցիալական ապահովության համակարգերի ու հանրային հատվածի հիմնական գործառնային բարելավման հետ:

2007թ. այս վարկային ծրագրի գծով ծախսերը կազմել են 968.2 մլն դրամ կամ ծրագրված հատկացումների 158.5%-ը¹⁶⁴: 2008թ. օգտագործվել է 430.6 մլն դրամ կամ ծրագրված հատկացումների 53%-ը: Ցածր կատարողականը բացատրվում է 2008 թվականի դեկտեմբերի 16-ին ստորագրված՝ վարկային համաձայնագրի փոփոխության, համաձայն որի՝ ծրագրի իրականացման ժամկետը երկարաձգվել է մինչև 2009 թ. դեկտեմբերի 31-ը¹⁶⁵: Ծրագրի նպատակներն ուղղակիորեն կապված են մարդկային զարգացման խթանման և սոցիալական ապահովության համակարգերի և հանրային հատվածի հիմնական գործառնային բարելավման հետ: 2010թ-ին տրամադրվել է 112.9 մլն դրամ, որը մոտ երեք անգամ գերազանցել է նախատեսվածը: Ծրագրի 2010թ. նախատեսված ծախսն իրականացվել է ի հաշիվ նախորդ տարիներին և սուսված կանխավճարների: Սոցիալական պաշտպանության ոլորտի կառավարման ծրագրի լրացուցիչ ֆինանսավորման վարկային ծրագրի շրջանակներում կատարվել են 29.7 մլն դրամի ծախսեր՝ կազմելով ծրագրվածի 41.9%-ը, ընդ որում, կառավարության համաֆինանսավորման հաշվին ծախսերը կատարվել են 100%-ով (13.4 մլն դրամ), իսկ վարկային միջոցների հաշվին՝ 28.4%-ի չափով (16.3 մլն դրամ)¹⁶⁶:

2011թ.-ին վերոնշյալ ծրագրին տրամադրվել է 14.1 մլն դրամ՝ կազմելով նախատեսվածի 39.3%-ը: Այնուհետև ՀԲ աջակցության իրականացվող սոցիալական պաշտպանության ոլորտի կառավարման ծրագրի լրացուցիչ ֆինանսավորման վարկային ծրագրի շրջանակներում կատարվել են 118.6 մլն դրամի ծախսեր՝ կազմելով ծրագրվածի 10.9%-ը (վարկի միջոցներից՝ 85.2 մլն դրամ, իսկ պետական բյուջեի հաշվին՝ 33.4 մլն դրամ)¹⁶⁷:

2012թ-ին վարկային ծրագրին տրամադրվել է 6.9 մլն դրամ՝ կազմելով նախատեսվածի 75.7%-ը¹⁶⁸: 2012 թվականին ծրագրի

¹⁶⁴ «ՀՀ 2007թ. պետական բյուջեի կատարման վերաբերյալ» հաշվետվություն, էջ 131:

¹⁶⁵ «ՀՀ 2008թ. պետական բյուջեի կատարման վերաբերյալ» հաշվետվություն, էջ 184:

¹⁶⁶ «ՀՀ 2010թ. պետական բյուջեի կատարման վերաբերյալ» հաշվետվություն, էջ 204:

¹⁶⁷ «ՀՀ 2011թ. պետական բյուջեի կատարման վերաբերյալ» հաշվետվություն, էջ 224:

¹⁶⁸ «ՀՀ 2012թ. պետական բյուջեի կատարման վերաբերյալ» հաշվետվություն, էջ 229:

շրջանակներում ընդհանուր առաջացություն է ցուցաբերվել
սոցիալական պաշտպանության ոլորտին՝ աշխատանքի և
գրավածության, կենսապահովության և այլ համակարգերի գծով:
Սոցիալական պաշտպանության ոլորտի կառավարման ծրագրի
լրացուցիչ ֆինանսավորման ծրագրի շրջանակներում կատարվել է ն
518.1 մլն դրամի ծախսեր՝ կազմելով ծրագրվածի 34.7%-ը (վարկի
միջոցներին՝ 444.9 մլն դրամ, իսկ ՀՀ կառավարության
համաֆինանսավորման հաշվին՝ 73.2 մլն դրամ):

2013թ. Համաշխարհային բանկի առաջացությամբ իրականացվող
սոցիալական պաշտպանության ոլորտի կառավարման ծրագրի
լրացուցիչ ֆինանսավորման ծրագրի շրջանակներում կատարվել է ն
1.6 մլրդ դրամի ծախսեր՝ կազմելով ծրագրվածի 96.8%-ը (վարկի
միջոցներին՝ 1.4 մլրդ դրամ, իսկ ՀՀ կառավարության
համաֆինանսավորման հաշվին՝ 250.1 մլն դրամ)¹⁶⁹:

Ութերորդը «Աղքատության կրճատման առաջնությունը»
ծրագիրն է: ՀՀ-ի և Միջազգային գարգացման ընկերակցության միջեւ
2004 թվականին նոյեմբերի 19-ին Երևանում ստորագրված գարգացման
վարկի համաձայնագրի ընդհանուր ֆինանսավորման Հայաստանի
Հանրապետության տարածքում աղքատության վերացման ներդրած՝
կառավարության այլ անավորված գործողությունների ծրագիրը¹⁷⁰:
Աղքատության կրճատման առաջնությունը վարկային ծրագիրն ուղղված է
եղել հարկային ոլորտում բարեփոխումների իրականացմանը,
հատկապես միջոցառումներ են իրականացվել խոշոր հարկ
վճարողներին սպասարկող հարկային տեսչությունների
աշխատանքներին բարելավման և հարկային համակարգում
ինքնագնահատման մեխանիզմների ներդրման հետ, ինչպես նաև
աշխատանքներ, որոնց նպատակն է եղել հարկային եկամուտներին
մեջ ուղղակի հարկատուներին տեսակարար կշիռը ավելացումը¹⁷¹:

Այս ծրագրի շրջանակներում ստորագրվել են հետևյալ
վարկային պայմանագրերը՝

¹⁶⁹ «ՀՀ 2013թ. պետական բյուջեի կատարման վերաբերյալ» հաշվետվությունից 224:

¹⁷⁰ <http://www.concourt.am/armenian/decisions/common/2004/sdv-538.htm>

¹⁷¹ <<Վարկային համակարգում իրականացվում են բարեփոխումներ՝ աղքատության
կրճատման առաջնության երկրորդ վարկային ծրագրի շրջանակներում>>, 31
հունվարի, 2006, <http://armenpress.am/arm/news/428095/harkayin-hamakargum-irakanacvum-en-barepokhumner-axqatutyam.html>

- «Աղքատության կրճատման աջակցման I վարկ», որի պայմանագիրը ստորագրվել է 2004թ.-ին, վարկի գումարը կազմել է 13.7 մլն SDR:

- «Աղքատության կրճատման աջակցման II վարկ», որի պայմանագիրը ստորագրվել է 2006թ.-ին, վարկի գումարը կազմել է 14.1 մլն SDR:

- «Աղքատության կրճատման աջակցման III վարկ», որի պայմանագիրը ստորագրվել է 2007թ.-ին, վարկի գումարը կազմել է 18.7 մլն SDR:

- «Աղքատության կրճատման աջակցման IV վարկ», որի պայմանագիրը ստորագրվել է 2007թ.-ին, վարկի գումարը կազմել է 12 մլն SDR:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող՝ Աղքատության հաղթահարման աջակցության երրորդ վարկի նախապատրաստման դրամաշնորհային ծրագրի շրջանակներում 2007 թվականի բյուջեով նախատեսված 26.8 մլն դրամի փոխարեն ծախսվել է 107.9 մլն դրամ, որը վճարվել է տեղական և օտարերկրյա խորհրդատուների իրականացած խորհրդատվական ծառայությունների դիմաց: Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող՝ Աղքատության հաղթահարման աջակցության չորրորդ վարկի նախապատրաստման համար տրամադրվել է ճապոնական դրամաշնորհ, որը 2007 թվականի բյուջեով նախատեսված 331.3 մլն դրամի փոխարեն կազմել է 213.7 մլն դրամ: Հատկացված գումարը վճարվել է տեղական և օտարերկրյա խորհրդատուների իրականացած խորհրդատվական ծառայությունների դիմաց: Ծրագրի իրականացումն է 4 բաղադրիչներով՝ հարկային և մաքսային վարչարարության ամրապնդում, քաղաքացիական ծառայության բարեփոխումները և պետական ֆինանսական կառավարման համակարգերի խթանում, մրցակցության բարձրացում և կանոնակարգային դաշտի բարելավում, սոցիալական ուսկերթի մեղմացում¹⁷²: 2008թ.-ին «Աղքատության հաղթահարման աջակցության» չորրորդ ծրագրի շրջանակներում հատկացվել է 6.4 մլրդ դրամ¹⁷³:

¹⁷² «ՀՀ 2007թ. պետական բյուջեի կատարման վերաբերյալ» հաշվետվություն, էջ 90:
¹⁷³ «ՀՀ 2008թ. պետական բյուջեի կատարման վերաբերյալ» հաշվետվություն, էջ 193:

Ի ն ն եր ու ղ ը Թ ո չ ն ա գ ր ի պ ի ն հ ա կ ա գ ղ ե լ ու ծ ր ա գ ի ր ն է : Ա յ ն
 u տ ո ր ա գ ր վ ե լ է 2006թ.-ի ն , ի ս կ վ ա ր կ ի գ ու մ ա ր ը կ ա գ մ ե լ է 4.4 մ լ ն SDR:
 Ծ ր ա գ ր ի ն պ ա տ ա կ ն է ա ջ ա կ ց ե լ ը ն տ ա ն ի թ ո չ ու ն ն եր ի շ ր ջ ա ն ու մ ք ա ր ձ ր
 ա խ ս ա ծ ի ն թ ո չ ն ա գ ր ի պ ի վ ա ր ա կ ո վ և կ ե ն դ ա ն ի ն եր ի ա յ լ
 հ ի վ ա ն դ ու թ յ ու ն ն եր ո վ մ ա ր դ կ ա ն ց հ ա մ ա ր ա ա ա ջ ա ց ա ծ վ տ ա ն գ ը
 ն վ ա գ ե ց ն ե լ ու և մ ա ր դ կ ա ն ց մ ի ջ ա վ ա յ ր ու մ գ ր ի պ ի վ ա ր ա կ ի ու
 վ ա ր ա կ ի չ ա յ լ հ ի վ ա ն դ ու թ յ ու ն ն եր ի ք ո ն կ ու մ ն եր ի հ ս կ ո դ ու թ յ ա ն ն
 ու ա ր ձ ա գ ա ն ք մ ա ն ը պ ա տ ր ա ս տ վ ե լ ու ու դ ո ու թ յ ա մ ք : 2007 թ-ի ն ծ ր ա գ ր ի
 շ ր ջ ա ն ա կ ն եր ու մ ծ ա խ ս վ ե լ է շ ու ր ջ 362.8 մ լ ն դ ր ա մ ` ն ա խ ա տ ե ս վ ա ծ 1.1
 մ լ ր դ դ ր ա մ ի փ ո խ ա ր ե ն , ի ր ա կ ա ն ա ց վ ե լ է ն կ ե ն տ ր ո ն ա կ ա ն
 ա ն ա ս ն ա ք ու ժ ա կ ա ն լ ա ք ո ր ա տ ո ր ի ա յ ի շ ե ն ք ի կ ա ո ու ց մ ա ն , Ա ր մ ա վ ի ր ի
 լ ա ք ո ր ա տ ո ր ի ա յ ի հ ի մ ն ա ն ո ր ո գ մ ա ն և մ ա ր գ ա յ ի ն լ ա ք ո ր ա տ ո ր ի ա ն եր ի
 ն ա խ ա գ ծ ա-ն ա խ ա հ ա շ վ ա յ ի ն փ ա ս տ ա թ դ թ եր ի կ ա գ մ մ ա ն ա շ խ ա տ ա ն ք ն եր ը ,
 ձ ե ո ք ե ն ք ե ր վ ե լ տ ր ա ն ս պ ո ր տ ա յ ի ն մ ի ջ ո ց ն եր , գ ր ա ս ե ն յ ա կ ա յ ի ն
 կ ա հ ու յ ք , հ ա մ ա կ ա ր գ չ ա յ ի ն տ ե ի ն ի կ ա , պ ա շ տ ա յ ա ն ի չ հ ա ն դ ե ր ձ ա ն ք և ա յ լ
 ն յ ու թ եր ու ս ա ր ք ա վ ո ր ու մ ն եր , մ ի ջ ո ց ն եր ե ն տ ր ա մ ա դ ր վ ե լ ն ա ն
 ծ ր ա գ ր ի հ ա մ ա կ ա ր գ ո դ ք ա ր տ ու դ ա ր ու թ յ ա ն և ծ ր ա գ ր ի ի ր ա կ ա ն ա ց մ ա ն
 ա շ խ ա տ ա կ ա գ մ ի պ ա հ պ ա ն մ ա ն ն պ ա տ ա կ ո վ ¹⁷⁴: 2008թ-ի ն ծ ա խ ս վ ե լ է ա վ ե լ ի
 ք ա ն 214.2 մ լ ն դ ր ա մ ` ն ա խ ա տ ե ս վ ա ծ 578.1 մ լ ն դ ր ա մ ի փ ո խ ա ր ե ն ,
 ի ր ա կ ա ն ա ց վ ե լ է ն շ ի ն ա ր ա ր ա կ ա ն և կ ա պ ի տ ա լ վ ե ր ա ն ո ր ո գ մ ա ն
 ա շ խ ա տ ա ն ք ն եր , ա յ դ թ վ ու մ ` « Հ ա ն ր ա պ ե տ ա կ ա ն ա ն ա ս ն ա ք ու ժ ա կ ա ն
 հ ա կ ա հ ա մ ա ճ ա ր ա կ ա յ ի ն և ա խ ս ո ր ո շ ի չ կ ե ն տ ր ո ն » Պ Ո Ա Կ-ի շ ե ն ք ի և
 Մ ե դ ր ի ի (Ա գ ա ր ա կ) ս ա հ մ ա ն ա յ ի ն հ ս կ ի չ ա ն ց ա կ ե տ ի կ ա ո ու ց ու մ ,
 ի ր ա կ ա ն ա ց վ ե լ է ն Ա ր մ ա վ ի ր ի մ ա ր գ ա յ ի ն ա ն ա ս ն ա ք ու ժ ա կ ա ն
 լ ա ք ո ր ա տ ո ր ի ա յ ի և « Մ ն ն դ ի ա ն վ տ ա ն գ ու թ յ ա ն և ա ն ա ս ն ա ք ու ժ ա կ ա ն »
 պ ե տ ա կ ա ն տ ե ս չ ու թ յ ա ն կ ե ն տ ր ո ն ի և մ ա ր գ ա յ ի ն կ ա ո ու յ ց ն եր ի
 հ գ ո ր ա ց ու մ ¹⁷⁵: 2008թ. Բ յ ու ջ ե ի կ ա տ ա ր մ ա ն վ ե ր ա ք ե ր յ ա լ
 հ ա շ վ ե տ վ ու թ յ ա ն մ ե ջ , ս ա կ ա յ ն , ն շ վ ու մ է ն ա ն , ո ր ն ու յ ն տ ա ր ու մ
 վ ա ր կ ա յ ի ն ծ ր ա գ ր ո վ պ ե տ ա կ ա ն ք յ ու ջ ե ո վ ն ա խ ա տ ե ս վ ե լ է ր շ ու ր ջ 248.8
 մ լ ն դ ր ա մ ի ծ ա խ ս , ո ր ը կ ա տ ա ր վ ե լ է 60.8%-ն վ ` կ ա գ մ ե լ ո վ 151.2 մ լ ն
 դ ր ա մ : Ծ ր ա գ ր ի ն Կ ա ո ա վ ա ր ու թ յ ու ն ը մ ա ս ն ա կ ց ու թ յ ու ն է
 ց ու ց ա ք ե ր ե լ 2.1 մ լ ն դ ր ա մ ի չ ա լ ի ո վ , ի ս կ վ ա ր կ ա յ ի ն մ ի ջ ո ց ն եր ը

¹⁷⁴ « Հ չ 2007թ. պ ե տ ա կ ա ն ք յ ու ջ ե ի կ ա տ ա ր մ ա ն վ ե ր ա ք ե ր յ ա լ » հ ա շ վ ե տ վ ու թ յ ու ն , է ջ 168:
¹⁷⁵ « Հ չ 2008թ. պ ե տ ա կ ա ն ք յ ու ջ ե ի կ ա տ ա ր մ ա ն վ ե ր ա ք ե ր յ ա լ » հ ա շ վ ե տ վ ու թ յ ու ն , է ջ
 101:

կազմել են 149.1 մլն դրամ: Ծրագրի շրջանակներում 2008 թվականի ընթացքում մի շարք այլ միջոցառումների հետ նախատեսված էին նաև ՀՀ ԱՆ «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման կենտրոն» ՓԲԸ-ի վերականգնման և հատուկ վտանգավոր վարակների լարոնրատրիաների վերանորոգման աշխատանքներն ու թոչնդիր գրիպի կանխարգելման համար հակավիրուսային դեղամիջոցի ձեռքբերումը¹⁷⁶: Թվերի այսպիսի տարբերությունը անհասկանալի է և կասկածի տեղիք է տալիս:

Ծրագրի շրջանակներում 2009թ-ին ծախսվել է ավելի քան 708.9 մլն դրամ՝ որից ավելի քան 478 մլն դրամը՝ վարկային միջոցներից, 230.9 մլն դրամը կառավարություն համաֆինանսավորման հաշվին՝ կազմելով նախատեսվածի 57.9%-ը¹⁷⁷: 2010թ-ին ծախսվել է ավելի քան 350.3 մլն դրամ, որից 305 մլն դրամը՝ վարկային միջոցներից, 45.4 մլն դրամը՝ կառավարություն համաֆինանսավորման հաշվին: Ծրագրի գծով արձանագրվել է բյուջեով նախատեսված ծախսերի 37.7%-ով գերազանցում, ինչը պայմանավորված է նախատեսված աշխատանքների կատարման ճշգրտումներով և ծրագրի ավարտով¹⁷⁸:

ՀԲ-ի կողմից սոցիալական ուղղվածություն ունեցող միջոցառումների իրականացման առումով բացի վարկային ծրագրերից իրականացվում են նաև դրամաշնորհային ծրագրեր:

Հատկանշական է նշել, հատկապես ՀԲ աջակցություն իրականացվող՝ Աղքատության հաղթահարման ռազմավարության հավատարմագրային հիմնադրամի երկրորդ փուլի «Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագիրը», որի մշակման, մոնիթորինգի և գնահատման համակարգի հզորացման համար դրամաշնորհի հաշվին նախատեսվել էին շուրջ 56 մլն դրամ ծախսեր¹⁷⁹: Դրամաշնորհային ծրագիրը բաղկացած էր 2 բաղադրիչներից՝ «Երկրորդ փուլի ԱՀ ՌԾ-ի մշակում և հանրության մասնակցության խթանում» և «ԱՀ ՌԾ-ի մոնիթորինգի և գնահատման

¹⁷⁶ <<ՀՀ 2008թ. պետական բյուջեի կատարման վերաբերյալ >> հաշվետվություն, էջ 148:
¹⁷⁷ <<ՀՀ 2009թ. պետական բյուջեի կատարման վերաբերյալ >> հաշվետվություն, էջ 113:
¹⁷⁸ <<ՀՀ 2010թ. պետական բյուջեի կատարման վերաբերյալ >> հաշվետվություն, էջ 108:
¹⁷⁹ <<ՀՀ 2007թ. պետական բյուջեի կատարման վերաբերյալ >> հաշվետվություն, էջ 90

համակարգի հզորացում»։ Ծախսերը կատարվել են ծրագրի շրջանակում իրականացված մի շարք խորհրդատվական ծառայություններին դիմաց վճարումներ իրականացվելու նպատակով։ Կարևոր աշխատանքներին, որոնք իրականացվել են 2008 թվականին դրամաշնորհի շրջանակներում, ԱՀՌԾ վերանայված փաստաթղթի լրամշակման և ամփոփված փաստաթղթի նախագծի պատրաստման աշխատանքներին աջակցություն իրականացումն էր։ Իրականացվել է նաև ԱՀՌԾ մոնիթորինգի ցուցանիշներին համակարգի վերանայված հայեցակարգի փաստաթղթի մշակման և մոնիթորինգի ու գնահատման համակարգի կատարելագործմանն աջակցություն իրականացման նպատակով հանձնարարականը։ Երբ 2003 թվականի օգոստոսի 8-ին ՀՀ Կառավարությունը իր N994-Ն որոշմամբ հաստատեց ՀՀ Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագիրը և աղքատության հաղթահարումն ընդունվեց որպես երկրի զարգացման ռազմավարական նպատակ։ Ծրագիրը ներառում էր 2003-2015 թթ. ծրագրային ժամանակահատվածը, որն, ըստ էության, ՀՀ անկախության ձեռք բերումից հետո ՀՀ սոցիալ-տնտեսական զարգացման առաջին երկարաժամկետ ռազմավարական ծրագիրն էր։ Ըստ ծրագրի՝ նախատեսվում էր աղքատության մակարդակը 2015 թ. հասցնել 19.7 տոկոսի, իսկ ծայրահեղ աղքատության մակարդակը՝ 4.1 տոկոսի՝ 2001 թ. համապատասխանաբար 50.3 տոկոս և 16 տոկոսի ցուցանիշներին համեմատ¹⁸⁰։

ՀՀ մյուս խոշոր վարկատուն Արժույթի Միջազգային Հիմնադրամն (ԱՄՀ) է։ ՀՀ-ն դարձել է ԱՄՀ անդամ 1992թ-ի ապրիլի 28-ին։ 2014թ. հունիսի 30-ի դրությամբ ՀՀ արտաքին պետական պարտքի ըստ վարկատուների կառուցվածքում վերջինիս մասնաբաժինը կազմել է 15.6%։ ԱՄՀ հետկնքված վարկային պայմանագրերի հիմնական մասը կնքվել են ՀՀ ԿԲ կողմից։ ԱՄՀ ծրագրերն են՝ Համակարգային վերականգնման ծրագիրը (STF), Կայունացման վարկը, Ընդլայնված կառուցվածքային բարեփոխումներին վարկային ծրագիրը (ESAF), Աղքատության կրճատման և տնտեսական աճի վարկային ծրագիրը (ԱԿՏԱ/PRGF)։ 2014թ. Իկիսամյակի ընթացքում ՀՀ ԿԲ-ին տրամադրվել է

¹⁸⁰ <<ՀՀ Աղքատության ռազմավարական ծրագրի ավարտին մնացել է 1,5 տարի>> <http://zham.am/am/news/6211.html>

82.21 մլն ՓՀԻ (SDR) գումարով նոր վարկ՝ «Ընդլայնված ֆինանսավորում (Extended Fund Facility - EFF)» ծրագրի շրջանակներում:

ՀՀ-ում աղքատության դեմ պայքարի առաջին շունչը նկատվեց, երբ 1999թ. ԱՄՀ-ն վերանայեց ընդլայնված կառուցվածքային բարեփոխումների ծրագիրը: Ծրագիրը վերանվանվեց «Աղքատության կրճատման և տնտեսական աճի վարկային ծրագիր» (ԱԿՏ Ա), ինչպես նաև փոխվեցին նպատակները, որոնք համահունչ դարձան «Աղքատության հաղթահարման նազմավարական ծրագիր» կոչվող փաստաթղթի հիմնական դրույթներին: Վերջինս ենթադրում է, որ ԱԿՏ Ա-ով ֆինանսավորվող ծրագրերը պետք է համահունչ լինեն երկրի աղքատության նվազեցման և սոցիալական հիմնախնդիրներին լուծման նազմավարության ներքին վրա՝ ընդունված զարգացման և աջակցող գործընկերների մասնակցությամբ: Ծրագրի տակ նախատեսված էր տրամադրել երկարաժամկետ արտոնյալ վարկեր, որոնք ունենին 10 տարի ժամկետայություն և 0.5% տոկոսայություն, իսկ վարկի առաջին մարումը պետք է տեղի ունենար վարկի տրամադրման ամսաթվից 5.5 տարի հետո: ԱԿՏ Ա-ի հիմնական առավելությունը կայանում է նրանում, որ վերջինս ունի երեք տարի գործողության ժամկետ, որը սկիզբ առավ 2001թ. մայիսի 21-ին, երբ ԱՄՀ գործադիր խորհուրդը հաստատեց ՀՀ կառավարությանը տրամադրել 69 մլն. SDR (տվյալ պահին սահմանված փոխարժեքով մոտ 87 մլն. ԱՄՆ դոլար): 2005 թվականին Հայաստանին տրամադրվեց ևս 23 մլն SDR:

Ապահովելով Աղքատության կրճատման և տնտեսական աճի խթանման ծրագրի (PRGF) ներքո կառավարության ստանձնած պարտավորությունների ժամանակին կատարումը՝ հնարավոր է դարձել 2004թ.-ի մայիսին Աղքատության նվազեցման և տնտեսական աճի վարկային ծրագրի վեցերորդ մասնաբաժնի (10 մլն SDR) ստացումը: 2006թ.-ին շարունակվել է համագործակցությունը այս վարկային ծրագրի շրջանակներում: Նույն թվականին մայիսի 17-ին և նոյեմբերի 22-ին ԱՄՀ-ի Տնօրենների խորհուրդը հաստատեց ԱԿՏ Ա ծրագրի կատարման համապատասխանաբար երկրորդ և երրորդ վերանայումները և ընդունեց որոշում ՀՀ-ին հերթական մասնաբաժնիները հատկացնելու վերաբերյալ՝ յուրաքանչյուրը 4.9

մլն ԱՄՆ դոլար գումարի չափով (3.28 մլն SDR¹⁸¹), իսկ 2007թ.-ին՝ ևս 5.2 մլն դոլար՝ ծրագրի շրջանակներում տրամադրված ընդհանուր գումարը հասցնելով 31.4 մլն-ի¹⁸²:

Հաջորդ վարկային պայմանագիրը, որը սոցիալական ուղղվածություն ունեցող ծրագիր է ենթադրում, դա 2012թ.-ին Ավստրիական Ռայֆագն բանկի կողմից վարկավորված Ալ.Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնի և Արամ Խաչատրյան համերգասրահներին տեխնիկական վերագրման ծրագիրն է: Վերջինիս շրջանակներում նախատեսված է 16 տարի մարման ժամկետով 8մլն եվրոի չափով վարկավորման իրականացում:

Թվարկելով վերոնշյալ ծրագրերը, որոնց իրականացումը ենթադրում է ՀՀ հասարակության սոցիալ-տնտեսական կյանքի էական բարելավում, չենք կարող չանդրադառնալ այն խնդիրներին, որոնք բացահայտվել են ՎՊ-ի կողմից իրականացված ստուգումների արդյունքում և բացասաբար են անդրադարձել այդ ծրագրերի վերջնական նպատակների իրականացման արդյունավետության վրա: Անդրադառնանք դրանցից մի քանիսին.

Հայաստանի սոցիալական ներդրումների հիմնադրամի երրորդ ծրագրի իրականացման ընթացքում չեն պահպանվել շինարարության ոլորտում պետական ստանդարտով սահմանված շինարարական զծագրերի մշակման միասնական կանոնները և տեխնիկական նորմերը, խախտվել են շինարարության ժամկետները, նախազծերը կազմվել են թերիկազմով և բովանդակությամբ¹⁸³:

2009 և 2011թթ-երի ծրագրային ստուգումների ընթացքում Հայաստանի սոցիալական ներդրումների հիմնադրամի երրորդ ծրագրի իրականացման ընթացքում հիմնանորոգման-շինարարական աշխատանքների նախազծային ծավալների, նախահաշիվների կազմման ճշտության և փաստացի կատարած աշխատանքների ծավալների

¹⁸¹ ԱՄՆ-ն ևս 56.1 միլիոն դոլարի վարկ տրամադրեց Հայաստանին, <http://www.azatutyun.am/content/news/24420620.html>

¹⁸² ԱՄՆ-ի մշտական ներկայացուցչի գրասենյակ, մամլո հաղորդագրություն 08/116, Երևան, 2008թ.

¹⁸³ ՎՊ ընթացիկ հաշվետվությունում, Հայաստանի սոցիալական ներդրումների հիմնադրամի երրորդ ծրագրի իրականացման ընթացքի մասին ՎՊ եզրակացությունները և առաջ քաշած հիմնախնդիրները, 2011:

համապատասխանությունն ստուգման արդյունքում արձանագրվել են 19,572.06 հազ. դրամի¹⁸⁴ հավելագրում և 32,932.4 հազ. դրամի¹⁸⁵ չափով խախտում:

ՀԲ աջակցությունը իրականացվող «Բնական պաշարներին կառավարման և չքավորությունն նվազեցման» ծրագրի ստուգման արդյունքներով բացահայտվել են 1,335.0 հազ. դրամի խախտումներ, ինչպես նաև 12,094.8 հազ. դրամի անարդյունավետ ծախսեր¹⁸⁶:

Կրկին ՀԲ աջակցությունը իրականացվող «Կրթությունն որակ և համապատասխանություն» ծրագրի ընթացքի նկատմամբ իրականացրած վերահսկողությունն արդյունքներին համաձայն կարող էր տնտեսվել 81,431.00 հազ. դրամ, իսկ 179.2 հազ ԱՄՆ դոլարի չափով կատարված խորհրդատուների ընտրությունն իրականացվել է վարկային համաձայնագրով նախատեսված խորհրդատուների ընտրության պահանջներին 2 եղումով, բաց է թողնվել 40,000.0 հազ. դրամով համալրելու հնարավորությունը, ոչ ճիշտ պլանավորման հետևանքով շուրջ 416,59 հազ. ԱՄՆ դոլար վարկային միջոցները չեն օգտագործվել մինչև ծրագրի փակումը, ծրագրի կառավարման չորս բաղադրիչների համար գործառնական ծախսերի (93,483.13 ԱՄՆ դոլար) նախահաշվային հիմնավորումը բացակայում է, մոտ 2,650,000.0 ՀՀ դրամի պրոյեկտորների լամպեր չեն տրամադրվել դպրոցներին, և այլ ինդիկատորներ¹⁸⁷:

Համառոտաբանային բանկի աջակցությունը իրականացվող «Առողջապահություն համակարգի արդիականացում» ծրագրի շրջանակներում արձանագրվել է 92,640.8 հազ. ՀՀ դրամի անարդյունավետ ծախս, ընտանեկան բժշկությունը գարգացման թիմերին չի տրամադրվել նախապես նախատեսված 96.8 հազ/ ԱՄՆ դոլարի

¹⁸⁴ ՎՊ ընթացիկ հաշվետվությունն, Հայաստանի սոցիալական ներդրումներին հիմնադրամի երրորդ ծրագրի իրականացման ընթացքի մասին ՎՊ եզրակացությունն ներքև առաջ քաշած հիմնախնդիրները, 2009:

¹⁸⁵ ՎՊ ընթացիկ հաշվետվությունն, Հայաստանի սոցիալական ներդրումներին հիմնադրամի երրորդ ծրագրի իրականացման ընթացքի մասին ՎՊ եզրակացությունն ներքև առաջ քաշած հիմնախնդիրները, 2011:

¹⁸⁶ ՎՊ ընթացիկ հաշվետվությունն, Համառոտաբանային բանկի աջակցությունը իրականացվող «Բնական պաշարներին կառավարման և չքավորությունն նվազեցման» ծրագրի նկատմամբ իրականացված վերահսկողությունն արդյունքներին վերաբերյալ, 2008:

¹⁸⁷ ՎՊ ընթացիկ հաշվետվությունն, Համառոտաբանային բանկի աջակցությունը իրականացվող «Կրթությունն որակ և համապատասխանություն» ծրագրի ընթացքի նկատմամբ իրականացրած վերահսկողությունն արդյունքներին վերաբերյալ, 2008:

դրամաշնորհ, ինչպես նաև մոտ 7,994.6 հազ. դրամի փոխհատուցման ծախսերը հակասել են պայմանագրի կետերին¹⁸⁸: Բացի այդ գրանցվել են շինարարական աշխատանքներ տեխնիկական վերահսկման թերացումներ և ժամկետային բացթողումներ:

«Սոցիալական ապահովության ոլորտի կառավարում» ծրագրերի նկատմամբ իրականացված վերահսկողությունն արդյունքում արձանագրվել է մոտ 74 հազ. ԱՄՆ դոլարի անարդյունավետ ծախս, չի կառուցվել ծրագրով նախատեսված տեղեկատվական հոսքերի կորպորատիվ ցանցը, որի համար նախատեսվել էր մոտ 1.5 մլն ԱՄՆ դոլար, ձախողվել են մի շարք խորհրդատվական նախագծերի արդյունքներ¹⁸⁹:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող «Թռչնագրի պին հակագոյեղում» ծրագրի ընթացքի նկատմամբ իրականացված վերահսկողությունն արդյունքում պարզվել է, որ շարժական դիակիզարանների ձեռքբերման գործընթացի համար նախատեսված 1,060.0 հազ. ԱՄՆ դոլարը չի ծառայել իր նպատակին: Արձանագրվել են մատակարարվող ապրանքների փաստաթղթավորման, մատակարարման ժամկետներ խախտումներ, որի արդյունքում կարող էր տնտեսվել մոտ 3322.1 հազ. դրամ: Արձանագրվել է մոտ 111,831.5 հազ. դրամի անարդյունավետ ծախս, ինչպես նաև այլ թերություններ մրցույթների իրականացման ընթացքում¹⁹⁰:

Բացի ՎՊ-ի կողմից բացահայտված թերացումներին, վարկերի ներգրավման և դրանց հետագա օգտագործման տեսանկյունից կարևորվում են նաև մի շարք այլ խնդիրներ և, մասնավորապես, երբեմն բյուջեով նախատեսված փոխառություններին կամ դրամաշնորհներին գումարները բյուջե մուտքագրվում են նախատեսված իցավելիքից կամ ոչ ժամանակին: Այն դեպքում, երբ բյուջեով նախատեսված ծախսերը, անկախ դրանց փաստացի

¹⁸⁸ ՎՊ ընթացիկ հաշվետվություններ, Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող «Մոնիթինգ ապահովության համակարգի արդիականացում» ծրագրի նկատմամբ իրականացված վերահսկողությունն արդյունքներին վերաբերյալ, 2008:

¹⁸⁹ ՎՊ ընթացիկ հաշվետվություններ, «Սոցիալական պաշտպանության ոլորտի կառավարում» ծրագրերի նկատմամբ իրականացված վերահսկողությունն արդյունքներին վերաբերյալ, 2010:

¹⁹⁰ ՎՊ ընթացիկ հաշվետվություններ, Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող «Թռչնագրի պին հակագոյեղում» ծրագրի ընթացքի նկատմամբ իրականացված վերահսկողությունն արդյունքներին վերաբերյալ, 2008:

ստացումները, ենթակա են կատարման: Հաջորդ հարցը, որը մեր կարծիքով ևս խնդրահարույց է պայմանավորված է այս կամ այն ծրագրի շրջանակներում նախատեսված ծախսերի գերակատարմամբ, որոնք հիմնականում պայմանավորված են լինում տեղական և օտարերկրյա խորհրդատուների իրականացրած խորհրդատվական ծառայությունների դիմաց տրվող, երբեմն չարդարացված քարձրվճարներով:

Այսպիսով, ամփոփելով նշենք, որ արտաքին վարկերի միջոցով բավականին ընդլայնվել է հասարակության սոցիալական հիմնախնդիրները լուծման հնարավորությունները: Մակայն, ոլորտում գոյություն ունեն այսպիսի համակարգային բացթողումներ և թերացումներ, որոնք խոչընդոտում են պարտք վերցված միջոցների արդյունավետության քարձրացմանը և դեռավել ինչ, տնտեսության վրա թողնում են ծայրահեղ բացասական ազդեցություն: Քանի որ վարկային պարտավորությունները, որոնք իրենց դրական ազդեցությունը չեն թողնում տնտեսության վրա, կրկնապատկում են սպառազույց պարտքի մարման բեռը: Այսպես, եթե ամփոփելով լինենք ՎՊ-ի կողմից կատարված ստուգումների արդյունքները, ապա պարզ կդառնա, որ միայն դիտարկված վարկային ծրագրերի ստուգման արդյունքներով բացահայտվել են ավելի քան 395 մլն.դրամի և 2.8մլն դոլարի տարբեր տեսակի խախտումներ և անարդյունավետ ծախսեր: Դիտարկված գրեթե բոլոր ծրագրերի գծով առկա ցածր կատարողականը, աշխատանքների ընթացքում առկա թերացումներն ու նորմայից շեղումները, ինչպես նաև խախտումների վերոնշյալ ծավալները վկայում են վարկային ծրագրերի իրականացման ցածր արդյունավետության մասին:

Այս ամենը վկայությունն է այն բանի, որ ներգրավված փոխառումիջոցների մի մասը բյուջեի տեսանկյունից կարող է դիտարկվել միայն որպես «անպետք պարտավորություն», անարդյունավետ ծախս, իսկ այս ամենի պատճառը վերահսկողություն, վարկային միջոցների ծախսման թափանցիկության և որ ամենակարևորն է պատժելիության բացակայությունն է: ՎՊ-ի կողմից վերջին տարիներին բազմաթիվ բացահայտումներ եղան՝ կապված պետական գնումների համակարգում առկա խախտումներ և

դրանց արդյունքում հսկայական ծավալների հասնող
յուրացումների հետ, ինչի համար, սակայն այդպես էլ ոչ ոք
պատասխանատվության չենթարկվեց: Իսկ դա նշանակում է, որ մեր
հանրապետությանում դեռ երկար ժամանակ ներգրավված վարկերը
չեն ապահովի ակնկալվող արդյունքներ:

ԳԼՈՒԽ 3. ՀՀ ԱՐՏԱՔԻՆ ԱՂՔՑ ՈՒՐՆԵՐԻՑ ՆԵՐԳՐԱՎՎԱԾ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՈՒՂՂՎԱԾՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԻ ԳՆԱՀ ԱՏ ՈՒՄԸ

Հարց 3.1 ՀՀ արտաքին պետական պարտքի և պասսիվների և պետական բյուջեի սոցիալական ծախսերի կախվածությունը գնահատումը

Յուրաքանչյուր պետության առջև դրված են բազմաթիվ գործառնություններ, կապված երկրի սոցիալ-տնտեսական կայուն մակարդակի ձեռքբերման, պաշտպանություն, անվտանգություն և միջառքայլ հարցերի ապահովման հետ: Կարծում ենք, սխալված չենք լինի պնդելով, որ ամենինչի կենտրոնում պետք է ընկած լինի մարդու, քաղաքացու բարեկեցիկ և արժանապատիվ կյանքի ապահովման հիմնախնդիրը: Քաղաքացին հարկեր է վճարում պետությանը՝ փոխարենն ակնկալելով պաշտպանություն: Հետևաբար, այս երկկողմանի քաղաքացի-պետություն հարաբերություններում առաջանում են նաև երկկողմանի իրավունքներ և պարտականություններ: Եվ թե օրենքն ամենայնուցս գործում է իր հարկերը ժամանակին և ըստ կարգի չվճարող քաղաքացուն կատամար, ապա քաղաքացին, իր հերթին, պետք է ակնկալի դիմացի կողմից իր պարտականությունների պատշաճ կատարումը, այն է. սոցիալական անհրաժեշտ պայմանների ստեղծումը իր և իր ընտանիքի արժանավայել կյանքի համար:

Յավոք, ոչ միշտ է, որ իրականությունը համապատասխանում է մեր սպասումներին: Սկսած անկախացման առաջին իսկ տարիներից մեր հանրապետությունը կանգնեց միջառքայլ խնդիրների առջև, այդ թվում նաև ֆինանսական միջոցների սղություն: Նախորդ բաժիններում արդեն նշել ենք ստացված առաջին վարկերի, դրանց պայմանների և հիմնական նպատակների մասին: Պետք է նշենք, որ սովետական միության փլուզումից հետո ԱՊՀ անդամ միջառքայլ երկրներ ևս ՀՀ-ի նման դիմեցին արտաքին փոխառություններին երգրավմանը: Խնդիրը կայանում էր նրանում, որ անկախություն և ստանալով, շատ երկրներ գրկվեցին ոչ միայն էներգակիրների մատակարարումներից և համապատասխան շուկաներից, այլ նաև ժամանակակից տնտեսության կառավարման համար անհրաժեշտ շատ հաստատություններից և իրենց ամենօրյա պետական ծախսերի

Ֆինանսավորման նպատակով ստացված վարկերի արդյունքում խորացնում էին արտաքին կախվածությունը:

Խորհրդային միություն փլուզումից հետո արտաքին վարկերի ներգրավումն անհրաժեշտ էր տնտեսվարման շուկայակազմում համակարգին հնարավորիս անցնցում անցում կատարելու համար: Մակայն վարկառու երկրների կառավարությունները հաճախ չէին շտապում շուկայակազմ վերափոխումների իրականացման հարցում, ինչն էլ հիմք էր ստեղծել ճգնաժամերի առաջացման համար: Սոցիալական ոլորտում դրական ազդեցություն քաղակայություն իր հերթին կապված է կառավարման անարդյունավետության հետ, որի պատճառով սխալ էին օգտագործվում նաև պետական հատկացումները: Միանշանակ պնդել, որ այդ պետական հատկացումների /դոտացիաների/ համար պատճառ հանդիսացած սոցիալական նպատակները արդարացված չեն, սխալ կլինեք, քանի որ վերջիններս շնորհիվ որոշակի մակարդակի վրա փորձ է արվել պահպանել աղքատ տնային տնտեսությունները կենսամակարդակը, սակայն որպես կանոն վերջիններս ոչ ուղիղնալ են օգտագործվել: Արդարացումն այն է, որ նույնիսկ եթե կուտակված պարտքի հիմնական մասը գնացել է պետական անարդյունավետ ոչ ուղիղնալ հատկացումներին, այդ պարտքը ինչն է իր դերն է ունեցել պետական ծառայություններին կենսամակարդակի պահպանման մեջ անցումային ժամանակաշրջանի առաջին ճգնաժամային տարիներին: ԱՄՆ-ն իր վերլուծություններում նշում է, որ եթե սկզբնական տարիներին առավելակի վրա գրավելին կառուցվածքային վերափոխումներով, ապա սոցիալական դրական հետևանքները հավանաբար առավել նշանակալի կլինեին: Անցյալին նայելով կարելի է ասել, որ անցումային ժամանակաշրջանի առաջին երեք տարիներին ընթացքում օտարերկրյա օգնությունն ուղղակի սուբսիդիաների տեսքով կախաներ մեծ ծավալով պարտքի կուտակման կանխամանր՝ միևնույն ժամանակ պահպանելով սպառման մակարդակները¹⁹¹:

Սոցիալական խնդիրները սրացման պարագայում առկա խնդիրներին լուծման համար նպատակահարմար միջոցառում կարող է լինել պարտքի սպասարկման նվազումը, կամ ընդհանուր ծախսերի

¹⁹¹ <<Обслуживание долга:растущая проблема>> социальный мониторинг, 2003, <http://www.unicef-irc.org/publications/pdf/russianmonitor03/Chapter2.pdf>

վրա վերահսկողություն մեծացումը, ինչպես նաև հարկային մուտքերի և բյուջե տային եկամուտներին ավելացումը՝ ինչն իր հերթին կմեծացնի պետության սոցիալական զարգացման հնարավորությունները: Չնայած դժվար է եզրակացություններ անել, որ պարտքի սպասարկման ծախսերը դուրս են մղում սոցիալական նպատակներով կատարվելիք հատկացումներին, այնուհանդերձ, անվիճելի է, որ հիմք կա անհանգստանալու այն դեպքերում, երբ ցածր եկամուտներով երկրներում արտաքին պարտքի մարմանը գնացող միջոցները գերազանցում են հիմնական սոցիալական համախառն ծախսերին: Հայաստանում մտավախություններ էլ ավելի է մեծանում, երբ սոցիալական ինդիքներին հարցը բավականին սուր է դրված, պայմանավորված պարտքի սպասարկման աճին ու ղեկցող աղքատության բարձր մակարդակով, հասարակության սոցիալական շերտավորմամբ, եկամուտներին անհավասարաչափ բաշխմամբ, միաժամանակ նաև արտագաղթի մտահոգիչ ծավալներով: Ինչպես ցույց են տալիս տվյալները, արտագաղթը վերջին 2 տասնամյակի ընթացքում չի դադարել, և ըստ ՄԱԿ-ի և ՀՀ վիճակագրական ծառայության տվյալների՝ Հայաստանի մոտավորապես 3 մլն 802 հազար բնակիչներին 1991-2001 թթ. ընթացքում արտագաղթել էր մոտ 1 մլն 300 հազարը, վերադարձածների թիվը կազմել է 380 հազար, այսինքն՝ միգրացիայի գուտարդյունքը կազմել է 920 հազար մարդ՝ հոգուտ էմիգրանտների, որը ՀՀ քաղաքացի հանդիսացող առկա բնակչության թվաքանակի 18%-ն է: Այդ ժամանակաշրջանում աշխատունակ բնակչության տեսակարար կշիռը նվազել է 7%-ով՝ բնակչության ընդհանուր թվաքանակում կազմելով 51%□ Դրա պատճառն այն է, որ Հայաստանից արտագաղթածների 82%-ը աշխատունակ տարիքում էր¹⁹²: 2001թ-ից հետո արտագաղթի ծավալներն (60 հազարից ավել գուտարդյան) աստիճանաբար գնացել են դեպի նվազման, սակայն կրկին մտահոգիչ ծավալներին են հասել 2010թ-ից սկսած, երբ գուտարդյան հասավ մոտ 46.7 հազարի, իսկ 2011թ-ին և 2012թ-ին համապատասխանաբար 43.8¹⁹³ և 42.8 հազարի¹⁹⁴:

¹⁹² Մինասյան Է.Գ. <<ՀՀ սոցիալական քաղաքականությունը>>(1990-2003 թթ.), էջ 14:
¹⁹³ ՀՀ տարածքային կառավարման նախարարության միգրացիոն պետական ծառայություն, <https://archive.today/l4r7v>
¹⁹⁴ Հայաստանի ժողովրդագրական ժողովածու - 2013, http://www.armstat.am/file/article/demos_13_8.pdf

Ներկայումս ՀՀ-ում սոցիալական հիմնախնդիրներն ընդհանուր առկա սոցիալ տնտեսական իրավիճակի փոփոխության վրա հզոր ազդեցություն ունենալու արտաքին պետական պարտքի մեխանիզմները, որոնց գործարկման ազդեցության ներքո ձևավորվող սոցիալական հարաբերություններն էությունում, և վերջիններս փոխկապվածությունը խորությամբ չի ուսումնասիրվել, ավելին, պետական պարտքը հիմնականում դիտարկվել է գուտ տնտեսական, ավելի հաճախ միայն ֆինանսական երևույթի տեսանկյունից, անտեսելով պարտապան երկրների սոցիալական կյանքի վրա ունեցած ազդեցությունը: Կարծում ենք, որ ներկայումս, ինչպես նաև ապագայում, պետական պարտքն է հանդիսանալու այն գործոնը, որի միջոցով ուղղակի կամ անուղղակի կերպով կկառավարվի սոցիալական հարաբերությունների համակարգը, ինչպես ամբողջ հասարակության և սոցիալական խմբի մակարդակով, այնպես էլ անհատների մակարդակով: Առանց պետական պարտքի խնդրի արդյունավետ ընդհանուր անհնար կլինի որևէ լուրջ քարտեզագծում տնտեսության, քաղաքականության կամ որևէ սոցիալական բնագավառում: Փաստ է, որ պետական պարտքը դեֆորմացում է մարդկանց տնտեսագիտական մտածելակերպը 2 աստիճանով ուղղություններով. պարտքը հնարավորություն չի տալիս իրականացնել արդարացի շուկայական հարաբերություններ, պարտքը վերցնում է մեկ սոցիալական խումբը, սակայն այն վճարում է իր աշխատավարձից մեկ այլ սոցիալական խումբ, վերցնում է մի սերունդը, սակայն վճարում են հաջորդները, ինչից հետևում է, որ պետական արտաքին պարտքի մեխանիզմը հենվում է սոցիալ-հոգեբանական փոխազդեցության տարրերի վրա: Հոգեբանական ազդեցությունը առկա է վարկապարտքային հարաբերություններն արդար փուլերում, ինչը ենթադրում է, որ պետական պարտքը սոսալիտար, հոգեբանական և սոցիալական ազդեցության հզոր գործոն է:

Նման իրավիճակից խուսափելու համար անհրաժեշտ է ընդհանուր և նրա հատ աճող ՀՀ արտաքին պետական պարտքի խնդիրը: Այդ նպատակով անհրաժեշտ է համակարգային մոտեցում ցուցաբերել

պէ տակ ան պարտքի հիմնախնդրի ուսումնասիրմանը, վերջինիս ձևավորման առանձնահատկությունը մեր երկրում, ինչպես նաև սոցիալական հարաբերություններին վրա արտաքին պարտքի կառավարման ազդեցությունը: Արտաքին պետական պարտքի սոցիալական ֆեյնոմենի բազմակողմ ուսումնասիրման արդյունքում էմիլյան հնարավոր մշակել այդ հիմնախնդրի հաղթահարման գործունեի ջոկատումներ:

Արտաքին պետական պարտքի և սոցիալ-տնտեսական տեղաշարժերի միջև առկա օրինակաբանություններին առավել ամբողջական գնահատման համար կարելի է արտաքին պետական պարտքի ամենամյա տոկոսավճարները կամ պարտքի սպասարկմանն ուղղվող ամենամյա գումարները, կամ վերջիններին տրամադրման հավելածի տեմպերը, համեմատել սոցիալական այնպիսի երևույթներին հետինչպիսիք են բնակչության եկամուտները, հասարակության բնեռացվածությունը, գործազրկությունը, արտագաղթը, աշխատավարձը, ինչպես նաև պետական բյուջեի ռոնջ ծախսային հոդվածներին հետ, մասնավորապես կրթությանն ու գիտության, առողջապահության, աշխատավարձերին, նպաստներին գծով համապատասխան տարիներին բյուջե տային ծախսերին հետ: Այն հայտ է, որ վերը նշված ցուցանիշներին առումով չկա վերջնական մոտեցում, թե որն է կոնկրետ առավել ամբողջական ներկայացնում այդ օրինակաբանությունը, սակայն ընդհանուր առմամբ, համակարգային մոտեցումը հնարավորություն կտա կարևոր եզրահանգումներ անել: Ավելին, եթե այդ ցուցանիշներինց մի քանիսի մասով համեմատությունները կատարվեն բնակչության մեկ շնչի հաշվով, ապա սոցիալ տնտեսական այդ երևույթներին և արտաքին պետական պարտքի սպասարկման բեռի միջև առկա օրինակաբանություններին գնահատումն ավելի ամբողջական կդառնա:

Արտաքին պետական պարտքի և սոցիալ տնտեսական երևույթներին միջև օրինակաբանություններին առկա այն ուղյակն հիմքում պետք է ընկած լինի այն հանգամանքի գիտակցումը, որ պարտքային գործիքներին սխալ կիրառությունը շղթայական ռեակցիայի սկզբունքով կարող է սպառնալ պետության ֆինանսական կայունությունը: Արտաքին պարտավորություններին աճի պարագայում մեծանում են

տնտեսավարող սուբյեկտները ինֆլյացիոն սպասումները, աճում է գործազրկության մակարդակը, իսկ ազգային խնայողություններն աստիճանաբար փոխարինվում են արտարժույթայինի: Արտաքին պետական պարտքի բեռը թեթևացնելու ամենախրախուսելի տնտեսական կայուն աճի ապահովումն է: Եթե հիմնվենք այն պնդման վրա, որ տնտեսական աճի հետ համատեղ պետք է ավելացնել սոցիալական և կրթական պետական ծախսերը, որպես աղքատության մակարդակի նվազեցման առավել արդյունավետ միջոց, ապա փոխկապվածության հանգամանքը առաջանում է այն հակասության հետ, որ վերջինս, ինչպես գտնում են նաև վերազգային վարկային կազմակերպությունները, պարտքային բեռի կրճատումից ձևավորված ազատ դրամական միջոցներն ուղղորդելով հանրային ծառայություններին, առողջապահությանը, կրթությանը և պետական ծառայություններին այլ ոլորտներին, զսպում են տնտեսական աճը՝ դժվարացնելով համախառն արտաքին պարտքի սպասարկումը¹⁹⁵:

Աղյուսակ 3.1.1

Արտաքին պարտքի բյուջե տային բեռը 2000-2013թթ. կտրվածքով¹⁹⁶

	2000	2001	2002	2003	2004	2005	2006	2007	2008	2009	2010	2011	2012	2013
ՀՀ ՊԲ պակասունքի ֆինանսավորման արտաքին աղբյուրների /ՀՆԱ, %	2.2	2.7	2.7	2.4	1.8	0.6	1.0	1.8	0.5	11.3	1.8	1.1	1.3	2.9
Արտաքին պարտքի տոկոսավճարներին մասնաբաժինը բյուջեի ծախսերում, %	3.14	4.14	4.38	2.18	1.55	1.30	0.88	0.57	0.46	1.07	1.73	1.90	2.32	1.80
Արտաքին պարտքի րնդհանուր սպասարկման մասնաբաժինը բյուջեի ծախսերում, %	11.6	11.8	14.8	26.1	15.3	6.8	5.1	2.8	2.0	2.8	3.6	3.8	10.1	30.8

¹⁹⁵ Պետրոսյան Ա. <<Արտաքին պետական պարտքի կառավարման հիմնական դիրքերը (ՀՀ օրինակով)>> ատենախոսություն Ը.00.06 <<Համաշխարհային տնտեսագիտություն>> մասնագիտություն տնտեսագիտության թեկնածուի զինվորական աստիճանի հայցման համար, Երևան 2008, էջ 108:

¹⁹⁶ Աղյուսակը կազմվել է ՀՀ ֆինանսների նախարարության տվյալներին հիմանված:

Արտաքին ֆինանսավորման շնորհիվ, և հաճախ արտաքին պարտքի կուտակման հաշվին, պետությունը փորձում է լուծել իր առջև դրված սոցիալ տնտեսական մի շարք խնդիրներ: Բյուջեի պակասուրդի արտաքին ֆինանսավորման մեծությունը միայն պիսիսիցուցանիչ է, որը կարող է արտացոլել պետության սոցիալ-տնտեսական քաղաքականության ինքնուրույնության աստիճանը, քանի որ բացի այն, որ վերջինս տվյալ պետության հարկաբյուջե տային քաղաքականության արդյունավետության և տնտեսական ակտիվության գլխավոր չափորոշիչներին է, նաև արտացոլում է, թե տվյալ պետության հարկաբյուջե տային քաղաքականության մշակման խնդիրներում, ինչ մակարդակի ազդեցություն կարող են ունենալ արտաքին դոնորները: Այս ցուցանիշը, ինչպես երևում է ներկայացված է հատկապես ՀՆԱ-ի հետ համեմատության մեջ, ինչը փարձրացնում է վերջինիս կիրառելիության աստիճանը (տե՛ս, Աղյուսակ 3.1.1): Ինչպես երևում է աղյուսակից 2000-2013թթ. ընկած ժամանակահատվածի համար ՀՀ ՀՆԱ-ի նկատմամբ բյուջեի պակասուրդի ֆինանսավորման արտաքին աղբյուրների ամենաբարձր մասնաբաժինը գրանցվել է 2009թ.-ին:

2013թ. արտաքին աղբյուրներից ներգրավված փոխառումիջոցների հաշվին ՀՀ պետբյուջեի դեֆիցիտը ծրագրավորված 104.4 մլրդ դրամի փոխարեն փաստացի ֆինանսավորվել է 124.64 մլրդ դրամով, որը գերազանցել է 2012թ. ցուցանիշը 35.36 մլրդ դրամով, իսկ ներքին աղբյուրների հաշվին ծրագրավորված 28.6 մլրդ դրամի փոխարեն փաստացի ֆինանսավորվել է ընդամենը 18.81 մլրդ դրամով, որը նախորդ տարվա ցուցանիշի նկատմամբ նվազել է 39%-ով¹⁹⁷: Սա այն դեպքում, երբ ՀՀ կառավարության պարտքի կառավարման 2014-2016թթ. ռազմավարական ծրագրով որպես հիմնական նպատակադրում սահմանվել է. «Երկարաժամկետ հատվածում պարտքի կառավարման նպատակներին պետական բյուջեի դեֆիցիտի ֆինանսավորման աղբյուրներում ներքին փոխառումիջոցների տնտեսաբար կշռի մեծացումը, քանի որ վերջինս նվազեցնում է անվճարունակության հավանականությունը, փոխարժեքի հետ կապված ռիսկերը, հնարավորություն է ընձեռում ներգրավել և արդյունավետ

¹⁹⁷ Հայաստանի Հանրապետության պետական պարտքը, տարեկան հաշվետվություն 2013, էջ 6:

օգտագործել համախառն ազգային խնայողությունները, հիմքեր է ստեղծում ֆինանսական շուկայում նոր գործիքների կիրառման ու շուկայի հետագա զարգացման համար¹⁹⁸»։ Չինչանակում, սաարդյոք, որ ՀՀ կառավարությունը գիտակցված գնում է սխալ ճանապարհով, անտեսելով նաև այն հանգամանքը, որ, արտաքին պարտքի սպասարկման գումարներն ավելորդ բյուջե տային բեռ են հանդիսանում, այդպիսով ոչ միայն նվազեցնելով տվյալ տարվա բյուջեի սոցիալ-տնտեսական հնարավորությունները, այլ նաև մյուս տարիներին համար բյուջեի պակասուրդի մեծացման պատճառ հանդիսանում։ Այս առումով ուշագրավ է ՀՀ բյուջեի ծախսերի մեջ արտաքին պարտքի ընդհանուր սպասարկմանն ուղղված ֆինանսական միջոցների (ինչպես նաև միայն տոկոսավճարներին մարմանն ուղղված միջոցների) մասնաբաժնի ուսումնասիրությունը (տե՛ս, Աղյուսակ 3.1.1), որտեղ հստակ երևում է, որ չնայած 2008թ-ին այդ ցուցանիշը նվազել է 1999թ-ին կատարված մոտ 6 անգամ, 2009թ-ին ցուցանիշը ստիճանաբար գրանցել է աճման միտումն 2012թ-ին 2008թ-ին համեմատաձև է մոտ 5 անգամ։ Այս ցուցանիշները հնարավորություն են տալիս գնահատել արտաքին պետական պարտքի բեռի ազդեցությունը բյուջե տային ծախսերի կայունություն վրա։ Բյուջեի պակասուրդի արտաքին ֆինանսավորման հաշվին ավելացնելով բյուջեի ծախսերը երկարաժամկետ հատվածում կարող են հանգեցնել հակադարձ ազդեցության, երբ պարտքի սպասարկման անընդհատ աճող ծավալների ֆինանսավորումը տեղի կունենա բյուջեի մյուս ծախսերի, այդ թվում նաև սոցիալական ծախսերի հաշվին։

Անընդհատ աճող պարտքի պայմաններում, յուրաքանչյուր հաջորդ ներգրավման մի զգալի մասը՝ ընդ որում տարեցտարի այդ մասնավելի ու ավելի է մեծանում, ուղղվում է ոչ միայն ընթացիկ ծախսերի ֆինանսավորմանը, այլ նաև պարտավորություններին սպասարկմանը։ Հետևաբար, պետությունը ձեռք է բերում ավելի շատ պարտավորություններ, քան ակտիվներ։

Արտաքին պետական պարտքի սպասարկման և սոցիալական խնդիրներին միջև առկա փոխազդեցության գնահատման համար

¹⁹⁸ Տե՛ս, ՀՀ կառավարության պարտքի կառավարման 2014-2016թթ. ռազմավարական ծրագրի հիմնականն պատակադրումները, էջ 6:

առաջարկում ենք առանձին վերլուծել մեկ շնչի հաշվով արտաքին պետական պարտքի սպասարկման և բնակչության սոցիալ-տնտեսական զարգացման մի շարք ցուցանիշներ (բնակչության մեկ շնչին ընկնող եկամուտ կամ աշխատավարձ, մեկ շնչին ընկնող բյուջեի սոցիալական ծախսեր և այլն) հարաբերակցությունը և փոփոխությունները, քանզի դրանք արտացոլում են այն առանձնահատկությունները, որոնք անհրաժեշտ են արտաքին պետական պարտավորությունները հասարակության սոցիալական զարգացումների համատեքստում առանձին վերլուծությունների ժամանակ:

Այս տեսանկյունից հետաքրքիր է աղյուսակ 3.1.2-ում ներկայացված տվյալները ուսումնասիրությունը, որտեղ ինչպես արդեն վերը նշեցինք արտաքին պարտքի սպասարկման և սոցիալական վիճակը բնութագրող ցուցանիշները համադրված են բնակչության մեկ շնչի հաշվով դիտարկման պարագայում:

Աղյուսակ 3.1.2

2001-2013թթ. բնակչության մեկ շնչի հաշվով միջինացված ցուցանիշները¹⁹⁹

Ցուցանիշներ	2001-2013թթ. միջինը
Տնային տնտեսության մեկ շնչի հաշվով միջին ամսական եկամուտ, դրամ	23659.77
Միջին ամսական անվանական աշխատավարձը, դրամ	74805.46
Ամսական կենսաթոշակի միջին չափ, դրամ	16842.77
Բնակչության մեկ շնչի հաշվով մանրածախ առևտուր, դրամ	303535.8
Բնակչության մեկ շնչի հաշվով արտաքին պարտքի ընդհ. սպասարկում, դրամ	20616.4
Բնակչության մեկ շնչին ընկնող պետական բյուջեի ընդհանուր ծախս, դրամ	205862.1
Բնակչության մեկ շնչի հաշվով պետական բյուջեից կատարվող սոցիալական ծախս, դրամ	85611.36

¹⁹⁹ Հաշվարկները կատարվել են հեղինակի կողմից հավելված 3.1.1-ի տվյալներին հիման վրա:

Աղյուսակի տվյալները ցուցաբերում են, որ 2001-2013թթ. ընթացքում բնակչության մեկ շնչի հաշվով արտաքին պարտքի ընդհանուր սպասարկումը կազմել է միջինը 20 616.4 դրամ, որը կազմել է տնային տնտեսության մեկ շնչի հաշվով միջին ամսական եկամտի 87%-ը, միջին ամսական անվանական աշխատավարձի ավելի քան 27%-ը: Նշված ժամանակահատվածում մեկ շնչի հաշվով արտաքին պարտքի ընդհանուր սպասարկման գումարը 22%-ով գերազանցել է նշանակված ամսական կենսաթոշակի միջին չափը և այլն: Երկայացված տվյալները փաստում են, որ բնակչության մեկ շնչին ընկնող արտաքին պարտքի սպասարկումը բավականին ազդեցիկ բեռ է յուրաքանչյուրիս համար, հատկապես եթե այն համեմատում ենք տնային տնտեսության մեկ շնչի հաշվով միջին ամսական եկամտի և ամսական նշանակված կենսաթոշակի հետ: Իսկ այն փաստը, որ բնակչության մեկ շնչի հաշվով արտաքին պարտավորությունները և նաև բնակչության մեկ շնչի հաշվով բյուջեից սոցիալական ոլորտին ուղղված հատկացումների մեջ, հաստատում է այն պնդումը, որ սոցիալական ազդեցության տեսանկյունից այս խնդիրը լուրջ հետազոտման կարիք ունի: Եթե ընդունենք, որ բնակչության սոցիալական վիճակը բնութագրող կարևոր ցուցանիշ է նաև մանրածախ առևտրի մեծությունը, և ակտիվությունը, ապա ակնհայտ է, որ բնակչության մեկ շնչին ընկնող մանրածախ առևտրի ծավալը բնորոշելով բնակչության վճարունակությունը, սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակն արտահայտող ինքնուրույն ցուցանիշ կարող է ընդունվել՝ որպես այլևս կոչված հասարակական բարեկեցության բարոմետր²⁰⁰:

Ցուցանիշների միջև առկա կապի և փոխազդեցության տեսանկյունից բացի բացարձակ մեծություններից անհրաժեշտ է դիտարկել նաև ուսումնասիրված ժամանակահատվածում վերոնշյալ ցուցանիշների դրսևորած վարքագիծը: Դրա համար դիտարկենք հասարակության սոցիալական զարգացումները բնութագրող ցուցանիշների և ՀՀ արտաքին պետական պարտքի սպասարկման

²⁰⁰ Խաչատրյան Ա. «Հայաստանի տնտեսություն. ամսանորյա խնդիրների բեռը» <http://news.am/arm/news/185813.html>

հավելլ աճի տեմպերը (տե՛ս, Հավելլ ված 3.1.2): Հավելլ վածի ցերևում է, որ դիտարկվող ժամանակահատվածում հասարակության սոցիալ-տնտեսական կյանքի բնութագրիչներն աճել են ավելի դանդաղ, քան պարտքի սպասարկման գումարները:

Այսպես, դիտարկված 2002-2013թթ. ժամանակահատվածի համար տնային տնտեսության մեկ շնչի հաշվով միջին ամսական եկամտի միջին տարեկան հավելլ աճի տեմպը կազմել է 12.3%, ծնելիություն դեպքում՝ 2.3%, միջին անվանական աշխատավարձը՝ 16.4%, ամսական կենսաթոշակի միջին չափը՝ 17.8%, մանրածախ առևտուրը՝ 10.2%, գործարկության հավելլ աճը՝ -2.5% և պետական պարտքի սպասարկման հավելլ աճը՝ 46.2% (տե՛ս, Աղյուսակ 3.1.3):

Աղյուսակ 3.1.3

Սոցիալական միջարք ցուցանիշների և արտաքին պետական պարտքի սպասարկման միջին հավելլ աճի տեմպը 2002-2013թթ.²⁰¹.

Ցուցանիշներ	2002-2013, %
Տնային տնտեսության մեկ շնչի հաշվով միջին ամսական եկամուտ	12.3
Գործարկություն	-2.5
Ծնելիություն	2.3
Միջին ամսական անվանական աշխատավարձ	16.4
Միջին ամսական կենսաթոշակ	17.8
Մանրածախ առևտուր	10.2
արտաքին պետական պարտքի սպասարկում	46.2

Հաշվարկվել է նաև պարտքի սպասարկման հավելլ աճի առաձգականության գործակիցները բնակչության սոցիալական զարգացումն արտահայտող վերը նշված ցուցանիշներին կատարվող, ինչը հնարավորություն է կտա բացահայտել, թե օրինակ արտաքին

²⁰¹ Աղյուսակը կազմված է հավելլ ված 3.1.2-ի տվյալների հիման վրա:

պարտքի և պասսարկի ման 1% աճին համապատասխան որքանով են փոփոխվել մնացած ցուցանիշները, կամ ընդհանրապես (տե՛ս, Աղյուսակ 3.1.4):

Աղյուսակ 3.1.4

Արտաքին պարտքի և պասսարկի ման հավելյալ աճի առաձգականության միջինացված գործակիցը

Ցուցանիշներ	առաձգականության գործակիցը
Տնային տնտեսության մեկ շնչի հաշվով միջին ամսական եկամուտ, դրամ	0.3
Գործազրկության, %	-0.1
Ծնելի ինքնություն, մարդ	0.1
Միջին ամսական անվանական աշխատավարձը, դրամ	0.4
Միջին ամսական կենսապահովում, դրամ	0.4
Մանրածախ առևտուր, մլրդ.դրամ	0.2

Կատարված հաշվարկները ցույց են տալիս, որ արտաքին պարտքի և պասսարկի ման 1% աճին համապատասխան դիտարկվող ժամանակահատվածում տնային տնտեսության մեկ շնչի հաշվով միջին ամսական եկամուտն աճել է ընդամենը 0,3%-ով, միջին ամսական աշխատավարձը և կենսապահովումը՝ 0,4%-ով, գործազրկության մակարդակը՝ -0.1%-ով, մանրածախ առևտուրը՝ 0.2%-ով, իսկ ծնելի ինքնություն մակարդակն ընդամենը 0.1%-ով: Այս համատեքստում մանրածախ առևտրի մեծությունը կարող է հանդես գալ որպես հասարակության բարեկեցության բարոմետր: Եվ թե դիտարկելու լինենք ցուցանիշների հավելյալ աճերի տեմպերն ըստ առանձին տարիների, կտեսնենք, որ օրինակաբար ինքնակախությունն ակնհայտ է ևսկսած 2009թ.-ից, երբ արտաքին պարտքի և պասսարկի ման հավելյալ աճի տեմպը էականորեն աճում է, նվազում է բնակչության ունեցիկական բարեկեցության ցուցանիշների հավելյալ աճի տեմպերը (բացառությամբ 2013թ.-ին դիտարկված միջին ամսական աշխատավարձի հավելյալ աճի) և որպես արդյունք դիտարկում ենք նաև մանրածախ առևտրի աճի տեմպի նվազում:

Պատկերն ավելի քան մտահոգիչ է, հատկապես եթե նայում ենք այս բոլոր ցուցանիշներին ամբողջական մեկ սոցիալական խնդիրներին համակարգի ներքո: Ստացվում է, որ ոչ միայն բնակչության եկամուտներն են ավելի դանդաղ աճում, քան արտաքին պարտքի սպասարկումը, այլ նաև վերջինս 10 անգամ գերազանցում է ծնելիության հավելաձի տեմպին: Պարտքի սպասարկման 1% աճն ուղեկցվում է գործազրկության մակարդակի ընդամենը 0.1%-ով կրճատմամբ, ինչը նստմտահոգիչ է:

Ցուցանիշներին հավելաձի վերլուծությունից կարելի է ամփոփել նշել, որ հասարակության վերարտադրության փաստացի մակարդակը բավարարչեանը նդհատ աճող պարտքի սպասարկման խնդիրները հոգալու համար: Եվ չնայած վերջին տարիներին դեռևս հաջողվել է ժամանակի սպասարկել ընթացիկ պարտավորությունները, չի բացառվում այն հնարավոր տարբերակը, որ տնտեսական առաջընթացի նման դանդաղ տեմպերի և սոցիալական խնդիրներին վատթարացման հետ մեկտեղ, կառավարությունը ստիպված կլինի օգտվել նաև, այսպես կոչված, կապակցված վարկերից (վարկային ռեսուրսներ, որոնք սովորաբար ներգրավվում են այլ վարկերը սպասարկելու համար): Նորանոր վարկերը և արտաքին վարկերի սպասարկման չափերը աճելով կրճատում են բյուջեի սոցիալական պոտենցիալը, ինչը վերջին հաշվով մեծացնում է բնակչության դրամական եկամուտների ձևավորման գործում մեր հայրենակիցների կողմից Հայաստան ուղղարկվող դրամական միջոցներին դերը, որպես սոցիալական մեղմացուցիչ: Սոցիալական հատկացումներին նվազումը, ինչպես նաև բնակչության եկամուտների նվազեցումն անխուսափելիորեն բացասական ազդեցություն ունենալով բնակչության խնայողության մակարդակի վրա, բացասաբար կանդադառնան նաև կապիտալի կուտակման և հետևաբար՝ ներդրումների աճի վրա²⁰²:

Սոցիալական ծախսերի աճի դինամիկան գրեթե բոլոր զարգացող երկրներում գերազանցել է տնտեսական աճի միջին ցուցանիշներին,

²⁰² Մարկոսյան Ա. <<ՀՀ տնտեսական անվտանգության բարելավման ուղիները>>, 21-րդ ԴԱԸ, թիվ 4(6), 2004թ, էջ 3:

որի արդյունքում բյուջեի պակասուրդը գնալով էլ ավելի մեծ չափսերի է հասնում: Արդյունքում, զարգացող և աղքատության բարձր մակարդակ ունեցող երկրներում մի կողմից արտաքին ֆինանսական միջոցների պահանջ է առաջանում, իսկ մյուս կողմից խնդիր է առաջանում թեթևացնել վերջիններիս պարտքային բեռը՝ հետագասուցիալ -տնտեսական խնդիրներին խուսափելու համար:

Այսպիսով, այն փաստը, որ արտաքին պարտքի անկայունությունն ուղղակիորեն կապակցված է տնտեսապես բացասական միջարքեր և յթերի հետ, առավել զգայուն է դարձնում այս հիմնախնդիրը զարգացող և սուցիալական զարգացվածության ցածր մակարդակ ունեցող երկրներում, որոնց պարագայում առավել մեծ ուշադրության է արժանանում պարտքի և աղքատության հիմնախնդիրների փոխադրեցությունը: Ընդ որում, չնայած վերջին տարիներին արտաքին փոխառությունների վերակառուցումը հետապնդում է հիմնականում սուցիալական նպատակ, սակայն մեկ շնչի վրա կատարվող սուցիալական ծախսերը հետզհետե թանկանում են (պարունակում են ապագա պարտքի սպասարկման ավելի մեծ տոկոսներ): Եվ հետևաբար, անհրաժեշտ է գնահատել պետքյուջեի վրա պարտքի բեռը և թեյուրաքանչյուր տարի պետական պարտքի սպասարկման ուղղվող միջոցները ինչպես են անդրադառնում բյուջեի ծախսերի, հատկապես, սուցիալական ծախսերի ծավալներին վրա: Այսուայլ հարցերին կանդիդատանք հաջորդ ենթագլխում:

Հարց 3.2 ՀՀ արտաքին պետական պարտքի սուցիալական և ֆինանսական բեռի գնահատումը

Պետական պարտքի և սուցիալական ծախսերի արդյունավետ կառավարման տեսանկյունից կարևորվում է արտաքին պետական պարտքի և սուցիալական ուղղվածության առանձին ծախսերի միջև կապերի հետազոտումը: Այդ հետազոտությունը կարելի է իրականացնել կոռելացիոն վերլուծություն շրջանակներում: Կոռելացիոն վերլուծության համար կօգտագործվեն պետական

պարտքի և սոցիալական միջարք ծախսերի տարեկան ցուցանիշները 1999-2013թթ կտրվածքով:

Գոյություն ունի կոռեկացիոն վերլուծության իրականացման երկու տարբերակ: Առաջին տարբերակը ենթադրում է ընդհանուր կոռեկացիոն գործակիցների հաշվարկ, իսկ երկրորդ տարբերակը՝ մասնակի կոռեկացիոն գործակիցների հաշվարկ: Ի տարբերություն ընդհանուր կոռեկացիայի գործակցի մասնակի թույլ է տալիս տեսնել մեծությունների միջև կապերը՝ մյուսների հաստատումն ապահովում: Նախքան կոռեկացիոն մատրիցը հաշվարկելը՝ ներկայացնենք այն ցուցանիշները, որոնք օգտագործվելու են այդ վերլուծության ժամանակ: Այդ ցուցանիշներն են.

ԱՊՊ –ն ՀՀ արտաքին պետական պարտքը ներկայացնող ցուցանիշն է,

ԿԱՊ–ն կառավարության արտաքին պարտքի ցուցանիշն է,

ԱՊՊՍ–ն արտաքին պետական պարտքի սպասարկումն է,

ԿԱՊՍ–ն կառավարության արտաքին պարտքի սպասարկման ցուցանիշն է,

ՊԲԸ–ն պետական բյուջեի ընդհանուր եկամուտների ցուցանիշն է,

ՊԲԾ–ն պետական բյուջեի ընդհանուր ծախսերի ցուցանիշն է,

ԿԳԾ –ն պետական բյուջեի կրթությանը և գիտությանը հատկացվող ծախսերն են,

ԱԾ–ն պետական բյուջեի առողջապահության ծախսերն են,

ՄԱԾ–ն պետական բյուջեի սոցիալական ապահովության և սոցիալական ապահովագրությանն ուղղվող ծախսերը նկարագրող ցուցանիշն է,

ՍՏՄԿԾ –ն պետական բյուջեի մշակույթին, տեղեկատվությանը, սպորտին և կրոնին ուղղվող ծախսերի ծավալը ցույց տվող ցուցանիշն է,

ՊԲԸՄԾ–ն պետական բյուջեի ընդհանուր սոցիալական ծախսերի ցուցանիշն է:

Մոդուլի 3.2.1

1999-2013թթ. ՀՀ արտաքին պետական պարտքի և բյուջեի սոցիալական ծախսերի տարեկան ցուցանիշները, մլն դոլար²⁰³

²⁰³ Մոդուլի 3.2.1-ը կազմվել է ՀՀ ԱԿԾ և ՀՀ ՖՆ համապատասխան տարիների տվյալների հիման վրա:

	ՊԲԸԵ	ՊԲԸԾ	ԿԳԾ	ԱԾ	ՍԱԾ	ՍՏ ՍԿԾ	ՊԲԸՍԾ	ԱՊՊ	ԿԱՊ	ԱՊՊՍ	ԿԱՊՍ
1999	357	453	41	25	49	7	122	871	668	61	42
2000	319	413	53	18	41	7	119	860	681	48	29
2001	349	440	52	28	47	10	138	906	727	52	41
2002	398	460	51	28	41	11	131	1,026	818	68	48
2003	505	540	60	34	51	24	169	1,098	868	141	113
2004	567	626	89	46	66	16	217	1,183	942	96	60
2005	819	912	133	68	96	23	320	1,099	903	62	26
2006	1,061	1,157	173	95	126	33	427	1,206	1,020	58	26
2007	1,719	1,855	278	137	185	49	648	1,449	1,257	51	26
2008	2,567	2,649	338	163	695	52	1,249	1,577	1,401	54	26
2009	1,899	2,557	296	155	671	45	1,166	2,967	2,466	72	45
2010	2,088	2,554	262	150	653	43	1,108	3,299	2,736	91	63
2011	2,365	2,648	285	170	688	47	1,190	3,568	2,951	102	69
2012	2,338	2,369	251	154	726	48	1,180	3,738	3,144	239	115
2013	2,604	2,502	249	150	723	44	1,166	3,899	3,391	859	666

Օգտագործելով աղյուսակ 3.2.1-ում բերված տվյալները, հաշվարկենք մասնակի կոռելացիայի գործակիցները²⁰⁴ և դրանք ներկայացնենք աղյուսակ 3.2.2-ի միջոցով.

Աղյուսակ 3.2.2
Ցուցանիշների կոռելացիոն կապվածությունը

	ՍՏ ՍԿԾ	ԿԳԾ	ՍԱԾ	ՊԲԸԾ	ՊԲԸՍԾ	ՊԲԸԵ	ԱԾ	ԱՊՊ	ԿԱՊ	ԱՊՊՍ	ԿԱՊՍ
ՍՏ ՍԿԾ	1										
ԿԳԾ	0.97	1									
ՍԱԾ	0.83	0.88	1								
ՊԲԸԾ	0.94	0.97	0.96	1							
ՊԲԸՍԾ	0.55	0.34	0.89	0.98	1						
ՊԲԸԵ	0.95	0.98	0.94	0.99	0.85	1					
ԱԾ	0.91	0.95	0.98	0.99	0.44	0.98	1				

²⁰⁴ Гладиллин А.В., Герасимов А.Н., Громов Е.И..Эконометрика: учебное пособие, КНОРУС, 2006., стр 71.

ԱՊՊ	0.71	0.73	0.88	0.85	0.80	0.79	0.85	1			
ԿԱՊ	0.75	0.77	0.90	0.88	0.78	0.82	0.88	1.00	1		
ԱՊՊՍ	0.13	-0.02	0.19	0.11	0.14	0.08	0.12	0.39	0.37	1	
ԿԱՊՍ	0.11	-0.06	0.12	0.05	0.10	0.04	0.07	0.32	0.30	0.97	1

Ըստ աղյուսակ 3.2.2-ի արտաքին պետական պարտքն է ապես ազդում է պետական բյուջեի ծախսային հոդվածների վրա: Ամենաթույլ ազդեցությունը նկատվում է մշակույթին, տեղեկատվությանը, սպորտին և կրոնին հատկացվող ծախսերի և արտաքին պետական պարտքի միջև: Այնուամենայնիվ այդ կապը դրական գործակցով է՝ 0.71, ինչը նշանակում է, որ պետական պարտքի աճի հետևանքով հնարավոր է ապահովել այս ոլորտի ծախսերի աճ: Ամենամեծ կապվածությունը առկա է սոց. ապահովության և սոց. ապահովագրության ուղղվող ծախսերի և արտաքին պետական պարտքի միջև՝ 0.88 գործակցով, և կառավարության արտաքին պարտքի միջև՝ 0.90 գործակցով: Պետական բյուջեի ընդհանուր սոցիալական ծախսեր և արտաքին պետական պարտք, կառավարության արտաքին պետական պարտք կապերը նույնպես զգալի են՝ համապատասխանաբար 0.80 և 0.78, ինչը ենթադրում է, որ պետության կողմից կատարվող սոցիալական ծախսերի ավելացման վրա հնարավոր դրական ազդեցություն կարող են ունենալ պետական կամ կառավարության արտաքին պարտավորությունների մեծացումները, որից կարելի է ենթադրել, որ արտաքին ֆինանսական ներարկումները դրականորեն են ազդում սոցիալական ոլորտներին ուղղվող բյուջեային հատկացումների վրա: Աղյուսակը թույլ է տալիս նաև ուսումնասիրել, թե ինչպիսի կապվածություններ կան մյուս ծախսերի փոփոխականների միջև: Օրինակ ուժեղ կապվածություն կա կրթության և գիտության ծախսերի ու առողջապահության ծախսերի միջև՝ 0.95, կրթության և գիտության ծախսերի և պետական բյուջեի մշակույթին, տեղեկատվությանը, սպորտին և կրոնին ուղղվող ծախսերի՝ 0.97, ինչպես նաև առողջապահության ծախսերի և սոցիալական ապահովության և սոցիալական ապահովագրության ուղղվող ծախսերի միջև՝ 0.98: Արտաքին պետական պարտքի, կառավարության արտաքին պարտքի սպասարկում և պետական բյուջեի ծախսեր կապը, ինչպես երևում է 3.2.2 աղյուսակից, չափազանց աննշան է, որևէ ենթադրություն անելու համար:

Արտաքի ն պե տակ ան պար տքի ք եռի առավել ամբողջակ ան գ ն ահատման տեսանկյունից ն պատակահարմար է կիրառել արտաքի ն պե տակ ան պար տքի սպասարկման ծախսերի և պե տակ ան բյուջեի ծախսերի հարաբերակցության ցուցանիշը՝ հետևյալ բանաձևի օգնությամբ²⁰⁵.

$$UAF_t = \frac{S_t + U_t}{AFD_t} = \frac{AU_t}{AFD_t} \quad (3.2.1)$$

որտեղ՝

UAF_t -ն արտաքի ն պար տքի ք եռն է տ-րդ տարում, որը կարող է հանդես գալ գործակցով կամ տոկոսային արտահայտությամբ,

AFD_t - տ-րդ տարվա պե տակ ան բյուջեի ծախսերի մեծությունն է,

t -ն ժամանակի ինդեքսն է,

S_t - տոկոսավճարներն են, որոնք իրականացվել են տ-րդ տարում,


U_t - արտաքի ն պար տքի մայր գումարի մարումն է տ-րդ տարում,

AU_t - պար տքի սպասարկման ցուցանիշն է տ-րդ տարում

Արտաքի ն պար տքի ք եռը (UAF) ցուցանիշը ցույց է տալիս, թե պե տակ ան բյուջեի ընդհանուր ծախսերի որքան մասն է տրվում պե տակ ան պար տքի սպասարկմանը: Որքան ցուցանիշը մոտ է մեկին, այնքան ավելի մեծ է բյուջեի պարտքային ք եռը: Եթե ընդունենք, որ բյուջեն կոնկրետ մեծություն է, ապա որքան շատ գումար ուղղվի պար տքի սպասարկմանը, այնքան ավելի քիչ միջոցներ կմնան բյուջե տային ծախսերի ֆինանսավորման համար:

Փաստորեն, մի կողմից արտաքի ն փոխառությունները լրացուցիչ միջոցներ են ենթադրում բյուջե տային ծախսերի ֆինանսավորման համար, իսկ մյուս կողմից, հակառակը, սահմանափակում են բյուջե տային ծախսերին ուղղվող հնարավորությունները: Արդյունքում, չի մնում այլ տարբերակ, եթե ոչ՝ դիմել նոր փոխառությունների:

²⁰⁵ Բանաձևը կազմվել է հեղինակի կողմից՝ հիմքում ունենալով ՌԲ Բյուջե տային օրենսգրքի 14-րդ գլխի 111-րդ հոդվածը:



Գծ ապաստկ եր 3.2.1 Հ Հ Ար տաք ի ն պար տք ի բ ե ո ը 1999-2013թթ²⁰⁶:

Ար տաք ի ն պե տակ ան պար տք ի բ ե ո ի մ ի ջ ի ն ց ու ց ան ի շ ն ու ս ու մ ն աս ի թ վ ած ժ ա մ ան ակ ան ատվ ած ու մ մ ո տ ա վ ո թ ա պ ե ս կ ա գ մ ե լ է 11% (տե՛ս հ ա վ ե լ վ ած 3.2.1): 3.2.1 գ ծ ա պ ա տ կ ե թ ի ց ե թ ն ու մ է, ո թ Ա Պ Բ-ն բ ա վ ակ ան ի ն ծ ան թ է ե ղ ե լ 2003թ.-ի ն՝ 26.1% ն 2013թ.-ի ն՝ 34.3%: Պ ա թ տք ի բ ե ո ի ա մ ե ն ա թ ե թ ն ց ու ց ան ի շ ը՝ 2%, գ թ ան ց վ ե լ է 2008թ.-ի ն, ի ն չ ը ե ն թ ա դ թ ու մ է, ո թ պ ե տակ ան բ յ ու ջ ե ի ծ ախ ս ե թ ի վ թ ա ա թ տաք ի ն պար տք ի ս պ ս ս ա թ կ մ ան բ ե ո ը ե ղ ե լ է ն վ ա գ ա գ ու յ ն ը, ն ա վ ե լ ի ք ան 5 ան գ ա մ դ թ ակ ան շ ե ղ ու մ է ու ն ե ց ե լ մ ի ջ ի ն ց ու ց ան ի շ ի ն կ ա տ մ ա մ բ:

Ար տաք ի ն պե տակ ան պար տք ի բ ե ո ի՝ Ա Պ Բ-ի ն շ ան ակ ու թ յ ան բ ա ց ա ն ա յ տ մ ան ն պ ա տ ա կ ո վ փ ո թ ճ ե ն ք կ ո թ ե լ ա ց ի ո ն վ ե թ լ ու ծ ու թ յ ան մ ի ջ ո ց ո վ դ ի տաք կ ե լ վ ե թ ջ ի ն ի ս կ ա պ ն ա յ ն պ ի ս ի տ ն տե ս ակ ան ց ու ց ան ի շ ն ե թ ի հ ե տ, ի ն չ պ ի ս ի ք ե ն ա դ ք ա տ ու թ յ ան մ ակ ա թ դ ակ ը, գ ո թ ծ ա գ թ կ ու թ յ ու ն ը, բ ն ակ չ ու թ յ ան մ ե կ շ ն չ ի ն բ ա ժ ի ն ը ն կ ն ո ղ Հ Ն Ա-ն, Ջ ի ն ի²⁰⁷ գ ո թ ծ ակ ի ց ը ն ս ո ց ի ա կ ակ ան ծ ախ ս ե թ բ յ ու ջ ե ի ծ ախ ս ե թ հ ա թ ա ք ե թ ակ ց ու թ յ ու ն ը:

Վ ե թ լ ու ծ ու թ յ ան հ ա մ ա թ տ վ յ ա կ ն ե թ ի բ ա գ ա է դ ի տաք կ վ ե լ 1999-2013 թթ. տաք ե կ ան ց ու ց ան ի շ ն ե թ ը (տե՛ս, Հ ա վ ե լ վ ած 3.2.2): Ը ս տ կ ո թ ե լ ա ց ի ո ն վ ե թ լ ու ծ ու թ յ ան ա թ դ յ ու ն ք ն ե թ ի (տե՛ս, Ա ղ յ ու ս ակ 3.2.3) ա դ ք ա տ ու թ յ ան, գ ո թ ծ ա գ թ կ ու թ յ ան, Հ Ն Ա-ի, Ջ ի ն ի գ ո թ ծ ակ ց ի, ս ո ց ի ա կ ակ ան ծ ախ ս ե թ /ը ն դ հ ան ու թ ծ ախ ս ե թ հ ա թ ա ք ե թ ակ ց ու թ յ ան ն

²⁰⁶ Գ ծ ա պ ա տ կ ե թ ը կ ա տ ու ց վ ե լ է 3.2.1 հ ա վ ե լ վ ած ու մ ն ե թ կ ա յ ա ց վ ած տ վ յ ա կ ն ե թ ի հ ի մ ան վ թ ա:

²⁰⁷ Ջ ի ն ի գ ո թ ծ ակ ի ց ը ց ու յ ց է տալ ի ս բ ն ակ չ ու թ յ ան ե կ ա մ ու տ ն ե թ ի բ ն ե ո ա ց վ ած ու թ յ ան ս ս տ ի ճ ան ը:

պէ տակ ան պար տք ի սոցիալ ակ ան բեռի ցուցանիշի միջև համապատասխան արար դիտել են 0.59,-0.37,-0.51, 0.52, -0.59 կախված ությունները:

Աղյուսակ 3.2.3

ԱՊԲ Կոռելացիոն վերլուծության արդյունքները

	ԱՊԲ	Աղքատ.	Գործազրկ.	ՀՆԱ	Ջինի գործ.	Սոց ծախս.
ԱՊԲ	1	0.59	-0.37	-0.51	0.52	-0.59
Աղքատ.	0.59	1	-0.07	-0.77	0.92	-0.67
Գործազրկ.	-0.37	-0.07	1	0.60	-0.29	0.75
ՀՆԱ	-0.51	-0.77	0.60	1	-0.79	0.92
Ջինի գործ.	0.52	0.92	-0.29	-0.79	1	-0.76
Սոց ծախս.	-0.59	-0.67	0.75	0.92	-0.76	1

Մտացված արդյունքներից կարելի է նկատել, որ պէտական պարտքի սոցիալական բեռը արտահայտող ցուցանիշն ամենամեծ բացասական ազդեցությունը կարող է ունենալ սոցիալական ծախսեր/ընդհանուր ծախսեր ցուցանիշի նմեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի վրա: ԱՊԲ-ի հետդրական փոխազդեցություն նկատվել աղքատության և Ջինի ցուցանիշների պարագայում, ինչը ենթադրում է, որ ԱՊԲ ավելացումը մեծացնում է սոցիալական լարվածություն մակարդակը, այսինքն պէտական բյուջեն ծանրաբեռնելով արտաքին պարտավորությունների սպասարկման խնդիրներով, պետությունն առավել նվազ հատկացումներ կարող է կատարել երկրում սոցիալական լարվածություն մեղմման նպատակով: Իհարկե պետք է նկատել նաև, կոռելացման գործակիցները բոլոր դեպքերում արտահայտում են նվազագույն կախվածություն, ինչը, վերջին հաշվով փաստում է, որ սոցիալական նշանակություն տեսանկյունից ԱՊԲ գործակիցը զգալի ազդեցություն չի կարող ունենալ, սակայն խոսել վերջինիս լրիվ բացակայություն մասին նույնպես սխալ է:

Այդ իսկ պատճառով, փորձելով արհեստական սոցիալական բաղադրիչ մտցնել ԱՊԲ ցուցանիշի մեջ, առաջարկում ենք հաշվարկել մեկ այլ՝ ԱՊՄԲ գործակիցը, որի տարբերությունը ԱՊԲ-ից կայանում է նրանում, որ վերջինս ցույց է տալիս թե պէտական բյուջեի սոցիալական ծախսերի (այլ ոչ թե ընդհանուր ծախսերի)


որքան մասն է տրվում պետական պարտքի սպասարկմանը: Հետևաբար որքան այս ցուցանիշն աճի, այնքան կբարձրանա արտաքին պարտքի սոցիալական բեռը, քանզի արդեն կարիք կլինի շատ ավելի մեծ գումարներ ուղղել պարտքի սպասարկմանը՝ կրճատելով տվյալն հաշորդ ժամանակի սոցիալական ուղղվածության ծախսերը:

Արտաքին պետական պարտքի սոցիալական բեռը որոշող ցուցանիշը ներկայացնենք հետևյալ բանաձևի օգնությամբ²⁰⁸.

$$U\mathcal{U}F_t = \frac{S_t + U_t}{\mathcal{U}F\mathcal{U}O_t} = \frac{\mathcal{U}U_t}{\mathcal{U}F\mathcal{U}O_t} \quad (3.2.2)$$

որտեղ՝

- $U\mathcal{U}F_t$ – արտաքին պարտքի սոցիալական բեռն է t -րդ տարում,
- $\mathcal{U}F\mathcal{U}O_t$ – t -րդ տարվա պետական բյուջեի սոցիալական ծախսերի մեծությունն է,
- t – ժամանակի ինդեքսն է,
- S_t – սոկոնսավճարներն են, որոնք իրականացվել են t -րդ տարում,
- U_t – արտաքին պարտքի մայր գումարի մարումն է t -րդ տարում,
- $\mathcal{U}U_t$ – պարտքի սպասարկման ցուցանիշն է t -րդ տարում:




²⁰⁸ Բանաձևը լրամշակված է հեղինակի կողմից՝ հիմք ընդունելով ՌԴ բյուջետային օրենսգրքի 111-րդ հոդվածում բերված ցուցանիշը:

Գծ ապաստկ եր 3.2.2: ՀՀ Ար տաք ի ն պար տք ի ս ո ն ց ի ս կ ա կ ա ն ք ե ո ը 1999-2013թթ²⁰⁹.

Ի ն չ պ ե ս եր ն ու մ է 3.2.2 գ ծ ապաստկ եր ի ց , 1999-2013թթ-ե թ ի ն Ա Պ Մ Բ մ ի ջ ի ն ց ու ց ա ն ի շ ը ը կ ա զ մ ե լ է մ ո տ 31%: Ա յ ս ց ու ց ա ն ի շ ի դ ե պ ե ու մ ն ս մ ի ջ ի ն ի ց ա ո ա վ ե լ ք ա ր ձ ր մ ա կ ա ր դ ա կ է գ ր ա ն ց վ ե լ 1999-2004թթ. ն 2013թ.-ե թ ի ն (2013թ.-ի ն գ ր ա ն ց վ ե լ է ա մ ե ն ա ք ա ր ձ ր ց ու ց ա ն ի շ ը ` 73.7%), Մ ն ա ց ա ծ դ ե պ ե թ ու մ ն ս ք ա ց ա ս ա կ ա ն շ ե դ ու մ ն ա վ ե լ ի փ ո ք ր է ե դ ե լ մ ի ջ ի ն ի ց , կ ա մ ու ն ե ց ե լ է ն վ ա զ մ ա ն մ ի տ ու մ : 2008թ.-ի ն գ ր ա ն ց վ ե լ է ա մ ե ն ա կ ա լ ց ու ց ա ն ի շ ը ` 4.3%, ի ն չ ը ե ն թ ա դ թ ու մ է , ո ր պ ե տ ա կ ա ն ք յ ու ջ ե ի ս ո ն ց ի ս կ ա կ ա ն ծ ա խ ս ե թ ի վ ր ա ա ր տ ա ք ի ն պ ա ր տ ք ի ս պ ա ս ա ր կ մ ա ն ք ե ո ը ա ղ տ ա ր ու մ ե դ ե լ է ն վ ա զ ա գ ու յ ն ը , ն ա վ ե լ ի ք ա ն 7 ա ն գ ա մ դ ր ա կ ա ն շ ե դ ու մ է ու ն ե ց ե լ մ ի ջ ի ն ց ու ց ա ն ի շ ի ն կ ա տ մ ա մ ք :

Ե լ ն ե լ ո վ 3.2.1 ն 3.2.2 գ ծ ապաստկ եր ն եր ի տ լ յ ա լ ն եր ի ց , գ ա լ ի ս ե ն ք ա յ ն ե գ ր ա հ ա ն գ մ ա ն ը , ո ր չ ն ա յ ա ծ ա ր տ ա ք ի ն պ ա ր տ ք ի ս պ ա ս ա ր կ մ ա ն ք ե ո ի ծ ա ն թ ու թ յ ա ն ա ո ու մ ո վ Ա Պ Մ Բ ց ու ց ա ն ի շ ը Ա Պ Բ ց ու ց ա ն ի շ ի ն կ ա տ մ ա մ ք մ ի ջ ի ն ա ց վ ա ծ մ ո տ եր ե ք ա ն գ ա մ մ ե ծ է , ս ա կ ա յ ն գ ա ր գ ա ց մ ա ն մ ի տ ու մ ն եր ը 1999-2013թթ-ե թ ի ն գ ր ե թ ե կ ր կ ն վ ու մ ե ն (տե ` ս , Գ ծ ապաստկ եր 3.2.3):



Գծ ապաստկ եր 3.2.3: ԱՊԲ ն ԱՊՄԲ ց ու ց ա ն ի շ ն եր ի գ ա ր գ ա ց մ ա ն մ ի տ ու մ ն եր ը 1999-2013թթ-ե թ ի ն

²⁰⁹ Գ ծ ապաստկ եր ը կ ա ո ու ց վ ե լ է Հ ա վ ե լ վ ա ծ 3.2.1-ի տ լ յ ա լ ն եր ի հ ի մ ա ն վ ր ա :

Երկրի սոցիալական ոլորտի հիմնախնդիրները և ուժման շրջանակներում կարևորելով ԱՊՄԲ ցուցանիշը, հարկ ենք համարել պարզել նաև, թե ՀՀ տնտեսական կարևորագույն ցուցանիշները մի քանիսը ինչպես են ազդում այդ բեռի վրա: Բացահայտելով այդ կապերը՝ հնարավորություն կստեղծվի կոնկրետ պատասխանել թե ինչ քաղաքականությունն պետք է կիրառել, ինչ չսպիռվ և ինչ ուղղություններ:

Չնայած ԱՊՄԲ-ի մեծությունը վրա կարող են ազդել բազմաթիվ տնտեսական գործոններ, սակայն սույն աշխատանքի շրջանակներում այդ գործոնները առանձնացվել են հետևյալները՝ ՀՀ միջազգային պահուստներ, արտաքին վարկերի միջին տոկոսադրույքի և փոխարժեքի ցուցանիշները: Նման ընտրությունը հիմնականում պայմանավորված է հետևյալ հանգամանքներով՝ նախ միջազգային պահուստներն անմիջականորեն ազդում են փոխարժեքի, երկրի վարկունակության և վարկանիշային մակարդակի վրա, որոնց գնահատման տեսանկյունից իրենց հերթին կարևորում են այնպիսի ցուցանիշներ, ինչպիսիք են միջազգային պահուստներ/ՀՆԱ, միջազգային պահուստներ/պետական բյուջե և այլն: Երկրորդ՝ ՀՀ արտաքին պարտքը սպասարկվում է արտարժույթով, ինչպես նաև այն փաստը, որ մեր երկրում հիմնական սոցիալական խնդիրները և ուժող տրանսֆերտները հաշվարկվում են փոխարժեքով: Արտաքին վարկերի միջին տոկոսադրույքը, որպես գործոն ընդգրկելու խնդիրը, կարծում ենք հիմնավորման կարիք չի գոյություն:

Հետազոտությունը իրականացվել է 1999-2013 թթ տարեկան կտրվածքով ²¹⁰, հիմք ընդունելով ցուցանիշների տարեկան սովորյալները:

Հիմնավորելու համար, որ նշված գործոնները ընտրությունը ճիշտ է արված, կոռելացիոն վերլուծություն միջոցով ուսումնասիրենք այդ գործոնների միջև կապերը: Այն նկարագրելու է փոխարժեքի, միջազգային պահուստների և արտաքին վարկերի միջին տոկոսադրույքի ազդեցությունը արտաքին պարտքի սոցիալական բեռի վրա: Վերոնշյալ ցուցանիշների միջև առկա

²¹⁰ Տե՛ս, Հավելված 3.2.2:

կապերը բացահայտելու համար դիտարկենք կոռելացիոն վերլուծություն արդյունքները (տե՛ս, Աղյուսակ 3.2.4):

Աղյուսակ 3.2.4

Կոռելացիոն վերլուծություն արդյունքները

	ԱՊՄԲ	Փ	ՀՄՊ	ԱՎՍՏ
ԱՊՄԲ	1	0.74	-0.67	0.18
Փ	0.74	1	-0.87	0.67
ՀՄՊ	-0.67	-0.87	1	-0.21
ԱՎՍՏ	0.18	0.67	-0.21	1

որտեղ՝

ԱՊՄԲ-ն արտաքին պարտքի սպասարկման բեռն է,

Փ-ն փոխարժեքը,

ՀՄՊ-ն ՀՀ միջազգային պահուստները,

ԱՎՍՏ-ն արտաքին վարկերի միջին տոկոսադրույքը:

Աղյուսակ 3.2.4-ից կարելի է անել հետևյալ հետևությունները.

1. Արտաքին պետական պարտքի սոցիալական բեռի վրա ազդող գործոնները հիմնականում ճիշտ են ընտրված, քանի որ պետական պարտքի սոցիալական բեռի և ՀՀ միջազգային պահուստների (-0.67), պետական պարտքի սոցիալական բեռի և փոխարժեքի (0.74) միջև առկա է ուժեղ կապվածություն: Բացառություն է կազմում արտաքին վարկերի միջին տոկոսադրույքը (-0.18), որի դեպքում կապվածությունը բավականին թույլ է:
2. Ուժեղ կապ է նկատվում գրեթե բոլոր անկախ փոփոխականների միջև, բացառությամբ արտաքին վարկերի միջին տոկոսադրույքի և ՀՀ միջազգային պահուստների միջև (0.21): Իսկ, օրինակ փոխարժեքի և արտաքին վարկերի միջին տոկոսադրույքի միջև (0.67) է, փոխարժեքի և ՀՀ միջազգային պահուստների միջև (-0.87): Այս կապվածությունները վկայում են մոդելներում հնարավոր մուլտիկոլինարություն (multicollinearity)²¹¹ մասին:

²¹¹ Հասկացություն, որն օգտագործվում է էկոնոմետրիկայի մեջ և ենթադրում է ռեգրեսիոն մոդելի փոփոխականների միջև առկա զօրացի կապվածություն, որն անհնար է դարձնում փոփոխականների միաժամանակյա դիտարկումը մոդելում: Այս մասին ավելի մանրամասն տե՛ս Магнус Я.Р., Катышев П.К., Пересецкий А.А., “Эконометрика” начальный курс: Учеб.,-6-е изд., перераб.и доп., издательство ‘Дело’, Москва 2004, ст. 110-111

Կատարված կոռելացիոն վերլուծության արդյունքում պարզ է դարձել, որ նշված բոլոր փոփոխականները միասնական վերցնելու պարագայում հնարավոր է առաջանա մոլտիկոլինարությունը, հետևաբար ինչպես նախորդ դեպքում, այս դեպքում էլ նսպետք է դիմել անուղղակի ձևով գործունեի դիտարկման փորձին: Այն պատակով նախևառաջ դիտարկվում է հետևյալ էկոնոմետրիկ մոդելը.

$$\ln \Phi_t = \gamma_0 + \gamma_1 \ln UVS_t + \gamma_2 \ln UVS_{t-6} + \varepsilon_t, \quad (3.2.3)$$

Որտեղ՝

$\ln UVS_t, \ln UVS_{t-6}$ –ն համապատասխանաբար t – րդ և $t-6$ – րդ տարում արտաքին վարկերի միջին տոկոսադրույքներն են լոգարիթմված վիճակում

$\gamma_0, \gamma_1, \gamma_2$ –ը էկոնոմետրիկ մոդելի անհայտ պարամետրերն են:

Այս փոփոխական-2 արբերի համար Դնելով Դիքի –Ֆուլերի թեստը²¹², պարզվել է, որ 2 արբերը ոչ ստացիոնար են և վերջիններս ստացիոնարացվել են երկրորդ կարգի տարբերություններով: Հետևաբար 3.2.3-րդ էկոնոմետրիկ մոդելը պետք է գնահատել հետևյալ տեսքով.

$$D(D(\ln \Phi_t)) = \gamma_0 + \gamma_1 D(D(\ln UVS_t)) + \gamma_2 D(D(\ln UVS_{t-6})) + \varepsilon_t, \quad (3.2.4)$$

Որտեղ՝

$D(D(\ln \Phi_t)), D(D(\ln UVS_t)), D(D(\ln UVS_{t-6}))$ –ն համապատասխանաբար նկարագրված փոփոխականներն են երկրորդ կարգի տարբերություններով

Գնահատելով 3.2.4-րդ մոդելը փոքրագույն քառակուսիների եղանակով²¹³ կունենանք հետևյալ արդյունքները:

Աղյուսակ 3.2.5

3.2.4-րդ էկոնոմետրիկ մոդելի գնահատման արդյունքները

Կախյալ փոփոխական: $D(D(\text{LOG}(\Phi)))$ Գնահատման մեթոդ: Փոքրագույն քառակուսիների Ընտրանք (նւղղ.): 2000-2013

²¹² Տե՛ս նույն տեղում, էջ 279-281:

²¹³ Магнус Я.Р., Катышев П.К., Пересецкий А.А., “Эконометрика” начальный курс: Учеб.-6-е изд., перераб.и доп., издательство ‘Дело’, Москва 2004, ст. 69-77

Փոփոխական	Գործ.	Ստ. Միայ	t-վիճ.	Հավ.
D(D(LOG(UՎՄՏ (-6))))	-0.23	0.0424	-5.54	0.0022
D(D(LOG(UՎՄՏ)))	0.11	0.0375	2.86	0.0418
C	0.02	0.0132	1.56	0.2543
R-քանակնություն	0.96	Կախյալ փոփ. միջ.		0.02
Ուղղ. R-քանակնություն	0.94	Կախյալ փոփ. ստ. շեղ.		0.15
Ռեգ.ս.ս	0.04	Ակայ կիտեղ. չափ.		-3.56
Մն.քան.գ.	0.005	Շվարցի		-3.58
Մաքու.ճշմ.	15.47	F-վիճ		49.35
Դարբին-Վաթսան վիճ.	1.56	Հավ (F-վիճ)		0.0000

Աղյուսակ 3.2.5-ից երևում է, որ մոդելը բարձր որակի է և ենթակա է հետագա կիրառության համար:

Կատարելով մի շարք թվաքանակային գործողություններ կատարված հետևյալ գնահատված մոդելը.

$$\ln \tilde{\Phi}_t = 6.48 + 0.11 \ln U\text{ՎՄՏ}_t - 0.23 \ln U\text{ՎՄՏ}_{t-6}, \quad (3.2.5)$$

Որտեղ՝

$\ln \tilde{\Phi}_t$ – ն լոգարիթմված վիճակում փոխարժեքի մեծությունն է t – րդ տարում:

Ստացված մոդելից կարելի է անել հետևյալ եզրահանգումները.

1. t – րդ տարվա փոխարժեքի վրա ազդեցություն ունենն է t – րդ և t – 6 – րդ տարիներին տեղի ունեցած 1% փոփոխությունը:
2. 1% տեղի ունեցած փոփոխություն, այլ հավասար պայմաններում, հանգեցնում է միջինում t – րդ տարվա փոխարժեքի 0.1% աճին, սակայն, t – 6 – րդ տարում տեղի ունեցած 1% աճը հանգեցնում է, այլ հավասար պայմաններում, t – րդ տարվա փոխարժեքի 0.2% անկման:

Այսպիսով օգտագործելով 3.2.5-րդ գնահատված մոդելը և հաշվարկելով բոլոր տարիներին համար փոխարժեքի արժեքը, կարող ենք նկարագրել հետևյալ մոդելը.

$$\ln U\text{ՄՄՖ}_t = \delta_0 + \delta_1 \ln \tilde{\Phi}_t + \delta_2 \ln Z\text{ՄՄ}_t + \varepsilon_t, \quad (3.2.6)$$

Որտեղ՝

$\ln Z\text{ՄՄ}_t$ – ն ՀՀ միջազգային պահուստներ ցուցանիշ – շարքի

լոգարիթմված մեծությունն է t – րդ տարում,

$\ln \tilde{\Phi}_t$ – ն 3.2.5-րդ էկոնոմետրիկ մոդելի գնահատման արդյունքում հաշվարկված փոխարժեքի արժեքն է լոգարիթմված վիճակում t – րդ տարում,

$\delta_0, \delta_1, \delta_2$ – է կոնստանտները որոշելի անհայտ պարամետրերն են:

3.2.6-րդ է կոնստանտները որոշելի փոփոխականները ստացվել են երկրորդ կարգի տարբերություններով և հետևապես անհրաժեշտ է գնահատել 3.2.6-րդ մոդելը գրված հետևյալ տեսքով.

$$D(D(\ln U\eta UF_t)) = \delta_0 + \delta_1 D(D(\ln \Phi_t)) + \delta_2 D(D(\ln ZU\eta_t)) + \varepsilon_t, \quad (3.2.7)$$

Որտեղ՝

$D(D(\ln U\eta UF_t)), D(D(\ln \Phi_t)), D(D(\ln ZU\eta_t))$ – ն համապատասխան

փոփոխականներն են երկրորդ կարգի տարբերություններով:

(3.2.7) է կոնստանտները որոշելի գնահատելով փոքրագույն քառակուսիներին եղանակով կունենանք հետևյալ արդյունքերը.

Աղյուսակ 3.2.6

3.2.7-րդ է կոնստանտները որոշելի գնահատման արդյունքները

Կախյալ փոփոխական : $D(D(\text{LOG}(U\eta UF)))$ Գնահատման մեթոդ : Փոքրագույն քառակուսիներին Ընտրանք (տևող.): 2000-2013				
Փոփոխական	Գործ.	Ստ. Միայ	t-վիճ.	Հավ.
$D(D(\text{LOG}(\Phi)))$	3.42	0.8624	3.96	0.0027
$D(D(\text{LOG}(ZU\eta)))$	0.47	0.1856	2.52	0.0303
C	0.11	0.0913	1.19	0.2592
R-քառակուսի	0.68	Կախյալ փոփ. միջ.		0.11
Ուղղ. R-քառակուսի	0.61	Կախյալ փոփ. ստ. շեղ.		0.53
Ուղղ. ս.ս	0.32	Այլ կիտեղ. չափ.		0.81
Մն. քառ. գ.	1.08	Շվարցի		0.94
Մաք. ճշմ.	-2.29	F-վիճ		10.72
Դարբին-Վաթսուն վիճ.	1.64	Հավ (F-վիճ)		0.0032

3.2.7-րդ մոդելը ևս լավ որակի է և պիտանի է հետագա գործածություն համար: Կատարելով մի շարք թվաքանակային գործողություններ կունենանք հետևյալ գնահատված մոդելը.

$$\ln \widehat{U\eta UF}_t = 3.06 + 3.42 \ln \Phi_t + 0.47 \ln ZU\eta_t, \quad (3.2.8)$$

Որտեղ՝

$\ln \widehat{U\eta UF}_t$ – ն լոգարիթմված վիճակում արտաքին պետական պարտքի սոցիալական բեռի ցուցանիշն է t-րդ տարում:

Ստացված 3.2.8 և 3.2.5-րդ է կոնստանտները որոշելի օգնությամբ կարելի է կատարել հետևյալ եզրահանգումները.

- Փոխարժեքը և ՀՀ միջազգային պահուստներն ազդում են արտաքին պետական պարտքի սոցիալական բեռի վրա:

- t – րդ տարում փոխարժեքի 1% աճը հանգեցնում է, այլ հավասար պայմաններում, սոցիալական բեռի աճին մոտավորապես 3.42%-ով:
- ՀՀ միջազգային պահուստների 1% աճը, այլ հավասար պայմաններում, կարող է հանգեցնել արտաքին պարտքի սոցիալական բեռի աճին մոտավորապես 0.5%-ով:

Արված վերլուծությունները և արդյունքները հնարավորություն են տալիս ԱՊՄԲ ցուցանիշի վրա ունեցած ազդեցություն կարևորություն տեսնելիք գործունեությունն առկա ակարգել հետևյալ կերպ՝ փոխարժեք, ՀՀ միջազգային պահուստներ, արտաքին վարկերի միջին տոկոսադրույք: Փոխարժեքի գործունեի ազդեցությունը քարտեզագրված է արտաքին պարտքի արտարժույթի քարտեզագրման վրա, որի արդյունքում փոխարժեքի 1% աճը կարողանում է հանգեցնել արտաքին պարտքի սոցիալական բեռի ավելի քան 3 անգամ ավել աճին:

ՀՀ միջազգային պահուստների գործունեի ազդեցությունը կարելի է ներկայացնել այն տրամաբանությամբ, որ վերջինիս աճը նպաստելով ազգային արժույթի կայունացմանը, տանում է փոխարժեքի բացասական ազդեցությունը թեթևացման: Արդյունքում միջազգային պահուստների 1% աճը հանգեցնում է արտաքին պարտքի սոցիալական բեռի 0.5% աճին, այսինքն 2 անգամ ավելի նվազ:

Արտաքին վարկերի միջին տոկոսադրույքի ազդեցությունը ԱՊՄԲ ցուցանիշի վրա, ինչպես արդեն նշել ենք, դիտարկվել և մեկնաբանվել է անուղղակիորեն, ինչն առաջին հերթին պայմանավորված էր այն հանգամանքով, որ կոռեկցիան գործակիցը վերջիններիս միջև նվազագույն մակարդակի վրա էր՝ 0.18, և անհնար էր մոդելի միջոցով որևիցե նշանակալից ազդեցություն ստացվել: Մեր կարծիքով, թույլ կապը պայմանավորված է, այն հանգամանքով, որ ներգրավված արտաքին փոխառություն տոկոսադրույքները սպասարկման մեջ ներգրավվում են ոչ անմիջապես, այլ մի քանի տարի հետո (հաշվի է առնվում արտոնյալ ժամկետը): Վերջինս իր հերթին քարտեզացնում է, ևս մեկ կարևոր հարց, թե որքանով են ընթացիկ տարվա ներգրավված միջոցները արդյունավետ ազդում երկրի տնտեսության և բյուջետային մուտքերի վրա: Որքան մեծ

լինի ներգրավված փոխառու միջոցների դրական արդյունքը, այնքան կնվազի տոկոսադրույքի ազդեցության մակարդակը և հակառակը: Մեկ այլ բացատրություն ևս կարող է լինել, այն, որ սոցիալական ոլորտին ուղղվող ծախսերը մեր երկրում նվազագույն շեմի վրա են, որ անկախ արտաքին պարտքի սպասարկման ծավալների փոփոխությունից, այդ շեմի հատումն անթույլատրելի է: Այս վարկածի ներքո ամբողջությամբ տեղավորվում է նաև այն հանգամանքը, որ մեր կողմից իրականացված վերլուծության արդյունքերով արտաքին վարկերի միջին տոկոսադրույքի 1% աճը հանգեցրել է արտաքին պարտքի սոցիալական բեռի ավելացմանը մոտավորապես 0.3%-ով: Սա բացատրվում է նաև այն հանգամանքով, որ մինչև 2009թ. ներգրավված վարկերը հիմնականում եղել են արտոնյալ պայմաններով, ինչը ենթադրում է ցածր տոկոսադրույք: Պատկերն իհարկե մի քանի տարի անց կփոխվի՝ պայմանավորված այն հանգամանքով, որ ՀՀ-ն այսուհետ համարվում է միջին եկամուտներ ունեցող երկիր, ինչն էլ ենթադրում է հիմնականում առևտրային պայմաններով վարկերի ներգրավում:

Եզրակացություններ

Իրականացված ուսումնասիրությունների արդյունքում կատարվել են հետևյալ եզրահանգումները.

1. ՀՀ արտաքին պետական պարտքի կայունությունը բնութագրող հիմնական ցուցանիշները, ընդհանուր առմամբ, բարելավման միտում են դրսևորել 2000-2008թթ. ժամանակահատվածում: Այդ ամբողջ ընթացքում վերջիններս հիմնականում գտնվել են կայունության թույլատրելի սահմաններում: Սկսած 2009թ.-ից պատկերը կտրուկ փոխվեց և ՀՀ արտաքին պետական պարտքի կայունության միջարք ցուցանիշներ (արտաքին պետական պարտքի ԶՆԱ/արտահանում, ԱՊՊ/արտահանում, արտաքին պարտքի սպասարկում/ բյուջեի եկամուտներ) հատեցին նվազ պարտքի բեռ ու եցող երկրների սահմանային տիրույթը, իսկ ԱՊՊ սպասարկում/ արտահանում ցուցանիշը 2013թ.-ին գերազանցեց անգամ միջին պարտքի բեռ ու եցող երկրների համար սահմանված 18-30% շեմը՝ կազմելով 31%:

Ընդ որում պարտքը բնութագրող ցուցանիշների բացասական փոփոխությունները պայմանավորված են եղել ոչ միայն պարտքի ֆիզիկական ծավալների կտրուկ աճով, այլև պարտքի ներգրավման ոչ շահավետ պայմաններով, ինչպես նաև պարտքի կառավարման ոլորտում արձանագրված սխալներով:

2. Ներգրավված փոխառումիջոցների արտոնյալության ստիճանը գնահատելիս հաշվի են առնվում ծրագրի շրջանակներում տրամադրվող ոչ միայն վարկային, այլև դրամաշնորհային միջոցները, ինչը կարծում ենք աղավաղում է իրական պատկերը:

3. ՀՀ արտաբյուջեի շուկայում փոխարժեքների փոփոխության ազդեցությունը ՀՀ կառավարության 2014թ.-ի արտաբյուջային պարտքի վրա կազմել է 157.9 մլրդ. դրամ, որը մոտ 2,5 անգամ գերազանցում է 2014թ.-ին ծրագրված պարտքի գծով տրուստավճարների գումարը և ավելի քան 47%-ով գերազանցում է

2014թ.-ին արտաքին աղբյուրներին ներգրավված վարկերի և փոխառություններին ընդհանուր գումարը:

4. 1999-2013թթ. ժամանակահատվածում կատարված ուսումնասիրությունները վկայում են այն մասին, որ կառավարության սոցիալական նպատակներով ներգրավված արտաքին միջոցներն ակնկալվող դրական ազդեցությունը չեն ունեցել սոցիալական ոլորտին տրամադրված բյուջե տային հատկացումների վրա: Ստացվում է, որ 1999-2013թթ. ընթացքում ՊԲ-ից սոցիալական նպատակներով հատկացված միջոցների միջինը 5%-ն է ստացվել սոցիալական ոլորտին ուղղված ծրագրերի շրջանակներում փոխառության միջոցներից, և եթե հաշվի չառնենք արտաքին դրամաշնորհներ ենթադրող սոցիալական ծրագրերը, ապա կարելի է ասել, որ սոցիալական ոլորտին ուղղված միջոցառումների գերակշիռ մասը ֆինանսավորվում է ՊԲ ներքին աղբյուրներին հաշվին:

5. ՀՀ կառավարության արտաքին պարտավորություններում սոցիալական ոլորտին ուղղված ծրագրերի շրջանակներում ստացած տարեկան փոխառությունները և ՊԲ-ից սոցիալական ոլորտին ուղղված ֆինանսական հատկացումներին տարեկան հավելածի տեմպերի համեմատական վերլուծության արդյունքում բացահայտվել է, որ վերջիններին հավելածի տեմպերը ոչ միայն չեն համընկնում, կամ ցուցաբերում որոշակի փոխկապվածություն, այլ հիմնականում ներկայացնում են անհամատեղելի պատկեր: Օրինակ, 2000թ-ին, չնայած կառավարության արտաքին պարտավորություններում սոցիալական նպատակ ունեցող փոխառությունները աճել են մոտ 17.4%-ով, այնուհանդերձ, ընդհանուր ՊԲ-ի շրջանակներում սոցիալական ոլորտին հատկացված ֆինանսական միջոցները նվազել են: Այս ցուցանիշների միջև 2000-2013թթ. միջինացված առաձգականության ցուցանիշը կազմել է 0.47, ինչը ենթադրում է, որ կառավարության

արտաքին պարտավորություններում սոցիալական ոլորտին ուղղված փոխառությունները 1% աճն ուղեկցվել է բյուջեի սոցիալական ծախսերի 0.47% ավելացմամբ: Առաձգականության նման ցածր գործակիցը վկայում է ՀՀ ՊԲ-ի սոցիալական ծախսերի աճի նվազ հակվածության մասին:

6. Խոսելով արտաքին վարկային ծրագրերի մասին, չենք կարող չխոսել գրեթե բոլոր ծրագրերի գծով ցածր կատարողականի, կատարման ընթացքում առկա թերացումների և բացթողումների մասին: Դիտարկված վարկային ծրագրերի գծով միայն 2009-2011թթ. ստուգման արդյունքներով կատարվել են ավելի քան 395 մլն .դրամի և 2.8 մլն դոլարի տարբեր տեսակի խախտումներ և անարդյունավետ ծախսեր: Պետք է նշել, որ վարկային ծրագրերի ցածր կատարողականը բացասական երևույթ է ոչ միայն ակնկալվող արդյունքների տեսանկյունից, այլև բյուջեի տեսանկյունից հանդիսանում է լրացուցիչ ծախսի աղբյուր, քանի որ միջաբան վարկային ծրագրերի պայմանագրով վարկի չառհանված գումարի մասով սահմանվում է պարտավճար:

7. 2002-2013թթ. արտաքին պետական պարտքի սպասարկման և բնակչության սոցիալական զարգացումները բնութագրող ցուցանիշների վերլուծության արդյունքները վկայում են, որ հասարակության ֆինանսական և մարդկային ներուժի առկա տեմպերով վերարտադրողականությանը բավարար չէ արտաքին պետական պարտքի սպասարկման առաջանցիկ տեմպերի պայմաններում հնարավոր սոցիալական լարվածությունից խուսափելու համար:

8. Արտաքին պետական պարտքի սպասարկման բյուջետային բեռի միջին ցուցանիշը՝ ԱՊԲ-ն ուսումնասիրված 1999-2013թթ ժամանակահատվածում միջինը կազմել է մոտ 11%: 1999-2004թթ.-ների ցուցանիշը դրսևորել է միջինից բարձր մակարդակ, այդ ժամանակահատվածում ամենածանր ցուցանիշը գրանցվել է 2003թ.-ին՝ 26.1%, պայմանավորված ոչ արտոնյալ վարկերի սպասարկման

ծավալներով, ինչպես նաև եվրոյի և ՓՀԻ-ի նկատմամբ դրամի արժեզրկմամբ: 2005-2011թթ.-ներին միջին մեծությամբ շեղումներ չեն արձանագրվել: Ամենամանր ցուցանիշը գրանցվել է 2013թ.-ին՝ 34.3%, ինչն էլ պայմանավորված է եղել ՀՀ կառավարության պարտքի սպասարկման աննախադեպ աճով (2013թ.-ին ՀՀ կառավարության արտաքին պարտքի սպասարկման գումարը գերազանցել է 1999-2013թթ.-ներին համար հաշվարկած միջին մեծությամբ սվեդի քան 7 անգամ՝ կազմելով 666 մլն .դոլար):

9. 1999-2013թթ.-երին պետական բյուջեի սոցիալական ծախսերի վրա արտաքին պարտքի սպասարկման բեռը՝ ԱՊՄԲ միջին ցուցանիշը կազմել է մոտ 31%: Այս ցուցանիշի դեպքում ևս միջինից առավել բարձր մակարդակ է գրանցվել 1999-2004թթ. և 2013թ.-երին: 2013թ.-ին գրանցվել է ամենաբարձր ցուցանիշը՝ 73.7%:

10. Ուսումնասիրության արդյունքներով պարզվել է, որ ՀՀ արտաքին պետական պարտքի սոցիալական բեռի վրա առավել ապե սազդում են փոխարժեքի և ՀՀ միջազգային պահուստներին տատանումները: Փոխարժեքի 1% աճը հանգեցնում է, այլ հավասար պայմաններում, արտաքին պարտքի սոցիալական բեռի աճին մոտավորապես 3.42%-ով: Հետևաբար, եթե հաշվի առնենք, որ 2014թ.-ի փետրվարի նկատմամբ 2015թ.- փետրվարի դրությամբ ԱՄՆ դոլարի փոխարժեքը ՀՀ դրամի նկատմամբ աճել է 17%-ով, ապա արտաքին պարտքի սոցիալական բեռը, այլ հավասար պայմաններին դեպքում, աճել է 58.14%-ով:

11. ՀՀ միջազգային պահուստներին 1% աճը, այլ հավասար պայմաններում, կարող է հանգեցնել արտաքին պարտքի սոցիալական բեռի աճին մոտավորապես 0.5%-ով: Եվ չնայած որ վարկի տոկոսադրույքի փոփոխության ազդեցությունը շատ մեծ չի եղել, այնուամենայնիվ 1% տոկոսադրույքի աճը t – րդ տարում, այլ հավասար պայմաններում, հանգեցնում է միջինում t – րդ տարվա արտաքին պարտքի սոցիալական բեռի ավելացման մոտավորապես 0.3%-

նվ: Եթե նկատի ունենանք, որ ԶՄԸ-ն գործող վարկերի գծով սահմանել է հավելյալ 1.7% տոկոսադրույք, ապա մոտ ապագայում պետք է սպասենք արտաքին պարտքի սոցիալական բեռի էական աճ:

Առաջիկա տարիներին, պայմանավորված պարտքի ծավալի աճով և ընդհանուր պարտքի մեջ առևտրային պայմաններով ներգրավված վարկերի տեսակարար կշռի աճով, զգալիորեն կավելանան պարտքի սպասարկման գումարները, ինչն էլ էապես կանդրադառնա սոցիալական լարվածության վրա: Վերջինիցս խուսափելու համար առաջարկվում է.

✓ «Պետական պարտքի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածով սահմանվում է, որ ՀՀ անունից պետական պարտք կարող են ստանձնել կառավարությունը, պետական մարմինները և պետական հիմնարկները: Օրենքում, սակայն չի հստակեցվում, թե որ պետական մարմիններին և հիմնարկներին մասին է խոսքը: Ելնելով այն հանգամանքից, որ վերջին տարիներին բավականին խստացվել է միջազգային կազմակերպությունների կողմից ՀՀ-ին վարկավորման պայմանները, հետագայում վճարունակության հետ կապված խնդիրներին խուսափելու համար առաջարկում ենք վերանայել ՀՀ-ի կողմից վարկային միջոցների ներգրավման գործընթացը՝ սահմանափակելով վարկերի ներգրավման իրավունք ունեցող սուբյեկտներին շրջանակը: Մասնավորապես, այդ լիազորությունը օժտել բացառապես ֆինանսների նախարարության հատուկ ստորաբաժանումն՝ ֆինանսների նախարարի գլխավորությունով:

✓ Ֆինանսական ներկայիս սուղ պայմաններում էլ ավելի է կարևորվում ներգրավված միջոցների արդյունավետության հարցը, իսկ արդյունավետության բարձրացման միակ ուղին դա կոնկրետ լիազորանձանց համար նյութական և վարչական, իսկ որոշ դեպքերում նաև քրեական պատասխանատվության սահմանումն է: Ներգրավված միջոցների յուրաքանչյուր ծախսված միավորի համար անհրաժեշտ է, որ ծախսող մարմինը տարեկան հաշվետվություն ներկայացնի, որտեղից ավելի քան ակնհայտ տեսանելի լինի ծախսված միջոցների-ձեռք բերված արդյունքները կապը:

✓ Մեր ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ ՀՀ արտարժույթի շուկայում փոխարժեքների փոփոխության ազդեցությունն առանձին տարիների կարող է էականորեն ծանրացնել պարտքի բեռը: Արտաքին պարտքի բեռի վրա արժույթների փոփոխարժեքների փոփոխության ազդեցությունը չեզոքացնելու համար անհրաժեշտ է նոր վարկային պայմանագրեր ստորագրելիս հաշվի առնել արտահանման կառուցվածքը և վարկերը ներգրավել այնպիսի արժույթներով, որոնք հնարավորինս համապատասխանում են արտահանման արժույթային կազմին, անհրաժեշտ է արտոնությունների սահմանել հատկապես փոքր և միջին արտահանող տնտեսություններին համար և որ շատ կարևոր է անհրաժեշտ է ունենալ արտարժույթով արտահայտված միջազգային պահուստների բավարարման արդյակ:

✓ Ինչպես արդեն նշել ենք, ներկայումս ՎՋՄԲ-ի, ՎՋԵԲ-ի, ԵՆԲ-ի և ԱԶԲ-ի կողմից լոկացոդ տոկոսադրույքով վարկերի հետ կապված ռիսկերի մեղմացման նպատակով վարկառուին հնարավորություն է ընձեռնվում կիրառել հեջավորման գործիքներ, մասնավորապես փոխարկել վարկի ամբողջ գումարի կամ դրամի մասի արժույթը մեկ այլ արժույթի հետ, ֆիքսել վարկի օգտագործված և չմարված գումարի նկատմամբ կիրառվող լոկացոդ տոկոսադրույքը, սահմանել տոկոսադրույքի առավելագույն սահմանաչափ, մոդելավորել մայր գումարի մարման ժամանակացույցը: Կարծում ենք, որ մեծ առաջընթաց կլինի օգտվելով այս հնարավորությունից արտարժույթային վարկերի որոշակի մասը փոխարկել ՀՀ դրամով:

✓ Ամերիկյան Bank of America bank-ի կողմից յուրաքանչյուր չորս տարին մեկ աշխարհի շուրջ 80 երկրի համար ֆինանսական և տնտեսական միջառք ցուցանիշների հիման վրա հաշվարկվում է երկրի հիմնական ռիսկը՝ երկրի միագումար ռիսկը, որը համեմատվում է ուղենշային համարվող երկրների 14 բենչմարկային խմբերի՝ ըստ յուրաքանչյուր ցուցանիշի միջին արժեքների հետ: Եվ ահա պարզվում է, որ այս հաշվարկների հիմքում ընկած 10 գործակիցներից առաջին չորսի հաշվարկման հիմքում ընկած է արտաքին պարտքը: Դրանք են՝ արտաքին պարտքի

սպասարկում արտահանում, արտաքին պարտք արտահանում, արտաքին պարտք ՀՆԱ և արտաքին պարտք միջազգային պահուստներ հարաբերակցությունները: Նշենք, որ թվարկված ցուցանիշներին առաջին երեքը հաշվարկվում և արտացոլվում են ՀՀ պետական պարտքի տարեկան հաշվետվություններում, ինչը սակայն չենք կարող ասել արտաքին պարտք միջազգային պահուստներ հարաբերակցության մասին: Վերջինս անմիջականորեն երկրի վճարունակությունը բնութագրող ցուցանիշ է և կարծում ենք, որ արտաքին պարտքի հիմնախնդրի ուսումնասիրման ընթացքում չպետք է անտեսվի և ճիշտ կլիներ պետական պարտքի ամենամյա հաշվետվություններում և պարտքի ռազմավարություն մշակման ժամանակ այս ցուցանիշին և անդրադարձ կատարվեր:

✓ Առաջարկում ենք ՀՀ պետական պարտքի կայունությունն ապահովել ցուցանիշներին կիրառվող համակարգում ավելացնել և սմելը՝ հանձնիս պետական պարտքի (պետական պարտքի սպասարկում/բյուջե տային ծախսեր) և արտաքին պետական պարտքի բյուջե տային բեռի ցուցանիշի (արտաքին պետական պարտքի սպասարկում/բյուջե տային ծախսեր), ինչը կարծում ենք ավելանիս զգայուն ցուցանիշ է բյուջեի տեսանկյունից պարտքային բեռի գնահատման համար:

Օգտագործված գրականությունը

1. «Պետական պարտքի մասին» ՀՀ օրենք, ընդունված է 2008 թվականի մայիսի 26-ին, ՀՕ-78-Ն, [5,42]
2. «Հայաստանի պարտքի կայունության վերլուծություն», ՀՀ Ֆինանսների նախարարություն, Երևան 2011
3. ՀՀ կառավարության պարտքի կառավարման 2013-2015թթ. ռազմավարական ծրագիր, [96]
4. ՀՀ կառավարության պարտքի կառավարման 2014-2016թթ. ռազմավարական ծրագիր, [103, 198]
5. ՀՀ կառավարության պարտքի կառավարման 2015-2017թթ. ռազմավարական ծրագիր, [98]
6. Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2007թ., ԱՎԾ,
7. Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2008թ., ԱՎԾ,
8. Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2009թ., ԱՎԾ,
9. Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2010թ., ԱՎԾ,
10. Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2011թ., ԱՎԾ,
11. Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2012թ., ԱՎԾ,
12. Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2013թ., ԱՎԾ,
13. «Հայաստանի Հանրապետության պետական պարտքը», տարեկան հաշվետվություն 2009, [107]
14. «Հայաստանի Հանրապետության պետական պարտքը», տարեկան հաշվետվություն 2010, [108]

15. «Հայաստանի Հանրապետության պետական պարտքը», տարեկան հաշվետվություն 2011, [104,109,119,144]
16. «Հայաստանի Հանրապետության պետական պարտքը», տարեկան հաշվետվություն 2012, [105,110,115]
17. «Հայաստանի Հանրապետության պետական պարտքը», տարեկան հաշվետվություն 2013, [73, 85, 101,112,197]
18. «Հայաստանի Հանրապետության պետական պարտքը», տարեկան հաշվետվություն 2014, [4, 72, 79, 113]
19. Հայաստանի Հանրապետության 2014-2016թթ. պետական միջնաժամկետ ծախսերի ծրագիր, [116]
20. Հայաստանի Հանրապետության 2015-2017թթ. պետական միջնաժամկետ ծախսերի ծրագիր, [71, 76, 91, 114, 117, 128]
21. «Հայաստանի Հանրապետության 2007թ. պետական բյուջեի կատարման վերաբերյալ» հաշվետվություն, [145, 156, 161, 164, 172, 174, 179]
22. «Հայաստանի Հանրապետության 2008թ. պետական բյուջեի կատարման վերաբերյալ» հաշվետվություն, [146, 157, 159, 165, 173, 175, 176]
23. «Հայաստանի Հանրապետության 2009թ. պետական բյուջեի կատարման վերաբերյալ» հաշվետվություն, [147, 148, 177]
24. «Հայաստանի Հանրապետության 2010թ. պետական բյուջեի կատարման վերաբերյալ» հաշվետվություն, [149, 150, 151, 160, 166, 178]
25. «Հայաստանի Հանրապետության 2011թ. պետական բյուջեի կատարման վերաբերյալ» հաշվետվություն, [152, 167]
26. «Հայաստանի Հանրապետության 2012թ. պետական բյուջեի կատարման վերաբերյալ» հաշվետվություն, [153, 162, 168]
27. «Հայաստանի Հանրապետության 2013թ. պետական բյուջեի կատարման վերաբերյալ» հաշվետվություն, [154, 169]
28. «Հայաստան 2020. Ջարգացման և անվտանգության ռազմավարություն», Ռազմավարության և ազգային հետազոտությունների հայկական կենտրոն.-Եր.: Տիգրան Մեծ, 2003.-720 էջ,

29. «Մարդկային աղքատությունն աղքատամետ քաղաքակրթականությունը Հայաստանում» ՄԱԿ-ի Հայաստանյան գրասենյակ, Երևան 2005, էջ 108, [126]
30. ՎՊ ընթացիկ հաշվետվություն, Հայաստանի սոցիալական երդրումների հիմնադրամի երրորդ ծրագրի իրականացման ընթացքի մասին ՎՊ եզրակացությունները և առաջ քաշած հիմնախնդիրները, 2009, [184]
31. ՎՊ ընթացիկ հաշվետվություն, Հայաստանի սոցիալական երդրումների հիմնադրամի երրորդ ծրագրի իրականացման ընթացքի մասին ՎՊ եզրակացությունները և առաջ քաշած հիմնախնդիրները, 2011, [183,185]
32. ՎՊ ընթացիկ հաշվետվություն, Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող «Կրթության որակ և համապատասխանություն» ծրագրի ընթացքի նկատմամբ իրականացրած վերահսկողություն արդյունքների վերաբերյալ, 2008, [187]
33. ՎՊ ընթացիկ հաշվետվություն, Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող «Բնական պաշարների կառավարման և չքավորությունն վազեցման» ծրագրի նկատմամբ իրականացված վերահսկողություն արդյունքների վերաբերյալ, 2008, [186]
34. ՎՊ ընթացիկ հաշվետվություն, Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող «Առողջապահություն համակարգի արդիականացում» ծրագրի նկատմամբ իրականացված վերահսկողություն արդյունքների վերաբերյալ, 2008, [188]
35. ՎՊ ընթացիկ հաշվետվություն, «Սոցիալական պաշտպանություն ոլորտի կառավարում» ծրագրերի նկատմամբ իրականացված վերահսկողություն արդյունքների վերաբերյալ, 2010, [189]
36. ՎՊ ընթացիկ հաշվետվություն, Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող «Թռչնագրիպին հակազդեչուն» ծրագրի ընթացքի նկատմամբ իրականացված վերահսկողություն արդյունքների վերաբերյալ, 2008, [190]

37. Աթոյան Կ., «Ֆինանսական վտանգոթյան արդի գերակայությունները ՀՀ-ում», ՀՊՏՀ 24-րդ գիտաժողովի (2014, հոկտեմբեր 29-31) նյութեր, Երևան, Տնտեսագետ 2015, էջ 5-14
38. Բաղանյան Լ., Մարգարյան Կ., Սալնազարյան Ա. և ուրիշներ, «Ֆինանսներ, դրամաշրջանառություն և վարկ», Երևան .,- Զանգակ-97, 2007, 664 էջ
39. Իսրայելյան Ս.Հ. <<Պետական Պարտքի բեռը և հարկարյուջե տարիներում կայունություն վրանրա ազդեցություն գնահատման խնդիրը>> տ.գ.թ. գիտական ստիճանի հայցման ատենախոսություն, Երևան 2003, [37, 54, 62, 94, 99]
40. Կարճիկյան Ա., Կարճիկյան Ք. «ՀՀ պետական բյուջեի պակասություն, պետական պարտքի վերլուծություն և կառավարման նոր մոտեցումներ», Հայաստան, Ֆինանսներ և էկոնոմիկա, #5 (131) մայիս 2011, էջ 2-5, [59]
41. Հովեյան Ս. Ս. «Արտաքին պետական պարտքի արդյունավետ կառավարման հիմնախնդիրները (ՀՀ օրինակով)», տ.գ.թ. գիտական ստիճանի հայցման ատենախոսություն, Երևան 2010, [25, 43, 78]
42. Հովհաննիսյան Հ. Կ., Ֆախրադյան Ս.Վ., «Սոցիալ-տնտեսական վիճակագրություն», ուսումնական ձեռնարկ, «Տնտեսագետ», Երևան 2000, 455 էջ
43. Մաթևոսյան Գ. <<Երկրի վճարունակություն վրամիջազգային պահուստներին ազդեցություն հիմնահարցը>>, Հայաստան ֆինանսներ և էկոնոմիկա, #10-11 (45-46) սեպտեմբեր-հոկտեմբեր 2004, էջ 100-104,[66]
44. Մարգարյան Ա., Քյուրումյան Ա. «Պարտքային ճգնաժամեր», Հայաստան ֆինանսներ և էկոնոմիկա, #3 (67) փետրվար 2006, էջ 54-59, [18, 65]
45. Մարգարյան Ա., Քյուրումյան Ա. «Պարտքի կարգավորման միջազգային փորձնու հայաստանյան պրակտիկան», Հայաստան ֆինանսներ և էկոնոմիկա, # 4 (81) ապրիլ 2007, էջ 9-12 [1, 70]
46. Մարգարյան Ա., «Պետական պարտքի կառավարման տնտեսական գարգացման հիմնախնդիրը», «Բանբեր», ՀՊՏՀ 2007թ., N 2, էջ 50-58 [7]

47. Մարկոսյան Ա., Հախվեդյան Դ., Նազարյան Գ., «Հայաստանը միջազգային տնտեսական հարաբերություններին համակարգում», Երևան, 2002թ., 431 էջ, [54]
48. Մինասյան Է.Գ. «ՀՀ Սոցիալական քաղաքականությունը (1990-2003 թթ.), [http://raber.asj-oa.am/3/1/2003-2\(3\).pdf](http://raber.asj-oa.am/3/1/2003-2(3).pdf), [125,192]
49. Պետրոսյան Ա. «Արտաքին պարտքի կայունությունը և դրագնահատման եղանակները» Հայաստան, Ֆինանսներ և Էկոնոմիկա, #7-8 /84-85/ հունիս-օգոստոս, 2007թ., [48]
50. Պետրոսյան Ա. «Արտաքին պետական պարտքի կառավարման հիմնախնդիրները (ՀՀ օրինակով)» ատենախոսություն Ը.00.06 - «Համաշխարհային տնտեսագիտություն» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական ստիճանի հայցման համար, Երևան 2008, [195]
51. Սեդրակյան Կ.Տ. «Արտաքին վարկավորման արդյունավետության գնահատման հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները ՀՀ-ում», տ.գ.թ. գիտական ստիճանի հայցման ատենախոսություն, Երևան 2007, [132]
52. Սողոմյան Ա., Ալեքսանյան Ա. «ՀՀ արտաքին պարտքը 2011թ», ՀՀ ԿԲ, 2012, [95,100]
53. Սչանյան Ա. Վ. «Բյուջետային քաղաքականությունը և սոցիալական հիմնախնդիրները ՀՀ-ում» տ.գ.թ. գիտական ստիճանի հայցման ատենախոսություն, Երևան 2006, [130]
54. Սուվարյան Յու., Ճուղուրյան Ա., «Համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամը և Հայաստանը», Բանբեր ՀՊՏՀ, 2008թ., N 2(14), էջ 28-38
55. Քյոնրումյան Ա. «Պետական պարտքի կառավարումը Հայաստանում: Քաղաքականորեն և դրանց հետևանքները» Ջեկոնյոյցը պատրաստվել է Բաց հասարակության հիմնադրամներ -- Հայաստան կազմակերպության Քաղաքականության կրթաթոշակներն ախաձեռնություն 2 րջանակներում <https://www.youtube.com/watch?v=QeQVcySdH5I>
56. Аганбекян А., “Экономика России на распутье...”, АСТ: Астрель; Владимир: ВКТ, 2010.-379 с.

57. Алехин Б.И. Государственный долг. Пособие для студентов Академии бюджета и казначейства., М., 2007., 302 с. [6,9, 13]
58. Баликоев В.З., “Общая экономическая теория”, 4 изд., перераб. и доп.Новосибирск: ЮКЭА, 1998.- 528с.[131]
59. Вавилов А., Государственный долг: уроки кризиса и принципы управления, 2-ое издание, М. 2003, 400 с.
60. Гальперина В. М.. Теория потребительского поведения и спроса, Т. 1. — СПб.: Экономическая школа . 2000.- 380 с. [12]
61. Гладилин А.В., Герасимов А.Н., Громов Е.И..Эконометрика: учебное пособие, М.: КНОРУС, 2006.- 232 с. [204]
- 62.Данилов Ю.А., Рынки государственного долга: мировые тенденции и российская практика, Москва 2002, 432 с.
- 63.Клейн Томас М. «Управление внешним долгом» (Технический доклад Всемирного банка), Вашингтон 1994г.,230с. [57]
64. Лопатников Л. И. Экономико-математический словарь: Словарь современной экономической науки. — 5-е изд., перераб. и доп. — М.: Дело, 2003. — 520 с. [138]
- 65.Лушина С.И., Слепова В.А., “Финансы” учебник, 2-е издание.-М.:Экономист, 2006.-682с. [2]
66. Магнус Я.Р., Катышев П.К., Пересецкий А.А., “Эконометрика” начальный курс: Учеб,-6-е изд., перераб.и доп., издательство ‘Дело’, Москва 2004, 576 с. [211, 212, 213]
67. Поляк Г. Б., “Финансы и кредит” учебник.-М.: Волтерс Клувер, 2010.-800с.
68. Райзберг Б.А., Лозовский Л.Ш., Стародубцева Е.Б.. Современный экономический словарь. — 2-е изд., испр. М.: ИНФРА-М. 1999, 479 с.[56]
69. Райзберг Б.А., Стародубцева Е.Б, Курс экономики: Учебник. - 5-е изд., перераб. и доп. - М.: ИНФРА-М, 2014. –672с.[124]
70. Сакс Дж., Ларрен Ф. Б, “Макроэкономика: Глобальный подход”, Москва, изд-во Дело, 1996, 848 с.[17]
- 71.Смит А. “ Исследование о природе и причинах богатства народов. – М.: Эксмо. 2009, книга V. http://www.gumer.info/bibliotek_Buks/Econom/smit/05.php , [8]
- 72.Уотшем Т.Дж., Паррамоу К. Количественные методы в финансах: Учебное пособие для вузов: Пер. с англ./Под ред. М.Р. Ефимовой. — М.: Финансы, ЮНИТИ, 1999. – 527 с.

73. Хейфиц Б. А., “Глобальный долговой кризис и риски долговой политики России”.- М. Институт экономики РАН, 2012.-56с. [35]
74. Хейфиц Б. А., Решение долговых проблем: мировой опыт и российская действительность.- М. Академкнига, 2002.-367с. [36]
75. Эндрю Б. Эйбел. Рикардянская теорема эквивалентности, <http://yourforexschool.com/book/241-yekonomicheskaya-teoriya/83-rikardianskaya-teorema-yekvivalentnosti.html> [10,11]
76. Andrews D., Boote A.R., Rizavi S.S., Singh S., Debt Relief for Low-Income Countries. The Enhanced HIPC Initiative. Washington DC, IMF, 1999. [60,61]
77. Managing Public debt: Formulating Strategies and Strengthening Institutional Capacity, Prepared by the Staff of the IMF and World Bank, March 3, 2009, [16]
78. Cecchetti S. G., Mohanty M. S. and Zampolli F. <<The real effects of debt>>, September 2011, <http://www.bis.org/publ/othp16.pdf>
79. World development indicators 2013, The World bank, p. 145, [19]
80. Debt and deleveraging: The global credit bubble and its economic consequences. McKinsey Global Institute. 2010 January <http://www.mckinsey.com/mgi>; *Reinhart C., Rogoff K.* From Financial Crash to Debt Crisis // *American Economic Review*. 2011 August, [24]
81. “External debt sustainability in HIPC completion point countries”, Yan Sun, September 2004, [39]
82. Krueger A.O., “Sovereign Debt Restructuring Mechanism-One Year Later”. International Monetary Fund, Presented at the European Commission, Brussels, Belgium, December 10, 2002. <http://www.imf.org/external/np/speeches/2002/121002.htm>. [40]
83. Debt sustainability in Low-Income Countries-Proposal for an Operational Framework and Policy Implications, IMF and IDA, February 3, 2004, [41]
84. Togo Eriko. Identifying and Managing Cost and Risk on Public Debt Portfolio. Designing Government Debt Management Strategies Workshop. May 28-June 1, 2007. World Bank Paris Conference Center, Paris, France. [46]
85. Assessing Sustainability Policy Development and Review Department, SM/02/166, www.imf.org/external/np/pdr/sus/2002/eng/052802.htm [50]
86. Debt sustainability assessment: The IMF approach and alternatives” Chales Wyplosz, Comendium on Debt Sustainability and Development, UN, New York and Geneva 2009, [51]

87. Debt sustainability in Low-Income Countries-Proposal for an Operational Framework and Policy Implications, IMF and IDA, February 3, 2004
88. The Challenge of Maintaining Long-Term External Debt Sustainability. World Bank, IMF. April 20, 2001. <http://www.imf.org/external/np/hipc/2001/lt/042001.pdf>. [63]
89. Cohen D., "Growth and External Debt: A New Perspective on the African and Latin American Tragedies," Center for Economic Policy Research Discussion Paper No. 1753 (London), 1997. <http://ideas.repec.org/p/cpr/ceprdp/1753.html>. [64]
90. <http://www.imf.org/external/np/seminars/eng/2005/famm/pdf/kraay.pdf>, Kraay, Aart, and Claudio Raddatz. 2005. "Poverty Traps, Aid, and growth". WorldBank, Washington. D.C. [133]
91. <http://www.unicef-irc.org/publications/pdf/russianmonitor03/Chapter2.pdf>, "Обслуживание долга:растущая проблема" социальный мониторинг, 2003 год, [191]
92. *IMF: World Economic Outlook Database, USA, April 2014*
93. *Eurostat: General government gross debt. 2014 Евростат: Государственный долг, 2014*
94. *IMF: World Economic Outlook Database, Japan, April 2014*
95. *IMF: World Economic Outlook Database, Russia, April 2014*
96. <http://www.un.org>, Центр новостей ООН, Зона евро уже в рецессии, что чревато новым глобальным экономическим кризисом, [38]
97. <http://www.imf.org>, ԱՄՆ պաշտոնական կայք, [3, 27, 32, 33, 89]
98. http://www.1in.am/arm/armenia_economy_127887.html
99. http://www.ffpmc.am/projects/active/spap_arm.php,
Սոց. պաշտպանությունը և ներքին կառավարման ծրագրի
պաշտոնական կայք,
100. http://epp.eurostat.ec.europa.eu/cache/ITY_PUBLIC/2-21102014-AP/EN/2-21102014-AP-EN.PDF, Եվրամիությունը վիճակագրական
ծառայությունը պաշտոնական կայք,
101. <http://www.cfep.am/history> «Կրթական ծրագրերի կենտրոն» ՕԻԳ, [151]
102. <http://www.concourt.am/armenian/decisions/common/2004/sdv-538.htm> ՀՀ
սահմանադրական դատարանի որոշում, [170]
103. www.mfe.am, Հայաստանի Հանրապետության ֆինանսների
և ախարարությունը պաշտոնական կայք, [87, 90, 92, 111, 140, 143]

104. <http://www.armstat.am>, ՀՀ Ազգային վիճակագրական ծառայությունն արտատված արտադրանքի արժեքի փոփոխությունները, [194]
105. <https://www.cba.am>, ՀՀ ԿԲ արտատված արտադրանքի արժեքի փոփոխությունները, [44, 93]
106. <http://armenpress.am/arm/news/428095/harkayin-hamakargum-irakanacvum-en-barepokhumner-axqatutyam.html>, «Հարկային համակարգում վերականգնվող արտադրանքի արժեքի փոփոխությունները և դրանց ազդեցությունը երկրորդ կարգի շրջանակներում», [171]
107. <http://zham.am/am/news/6211.html>, «ՀՀ արքայապետության նախագահի արժեքի փոփոխությունները 1,5 տարի», [180]
108. <http://lenta.ru/news/2013/08/09/quadrillion>, «Госдолг Японии превысил квадриллион иен», [34]
109. <http://www.odnako.org/blogs/deficit-gosbyudzheta-rf-v-2013-godu-sostavil-05-vvp/>, «Дефицит госбюджета РФ в 2013 году составил 0,5% ВВП», [23]
110. http://www.banki.ru/wikibank/vneshniy_dolg/, Словарь банковских терминов
111. <http://www.banki.ru/products/currency/jpy/>, Курсы обмена валют, конвертер, [3]
112. <http://www.vestifinance.ru/videos/9223>, «Россия в цифрах, Страны PIIGS», [30]
113. <http://www.azatutyun.am>, Ազատության և նախընտանցական լրատվական կայք, [181]
114. http://free-forex-ua.blogspot.com/2011/09/blog-post_5921.html, «Евро: под бремени долгов», [29]
115. http://www.mckinsey.com/insights/global_capital_markets/financial_globalization, «Financial globalization: Retreat or reset?», [21]
116. <http://www.businessinsider.com/greece-isnt-the-only-debt-crisis-2015-7#ixzz3g12zltZM>, 14 countries are spiraling towards government debt crises, Heather Stewart, The Guardian, [67, 121]
117. http://hdr.undp.org/sites/default/files/reports/266/hdr05_complete.pdf ՄԱԿ-ի զարգացման զրույցների արտատված արտադրանքի արժեքի փոփոխությունները, [122, 123]
118. http://www.oecd-ilibrary.org/economics/country-statistical-profiles-key-tables-from-oecd_20752288, ՏՀԶԿ արտատված արտադրանքի արժեքի փոփոխությունները: [22, 26]
119. <http://www.econlib.org/library/Buchanan/buchCv2c8.html>, A Review of Pre-Keynesian Debt Theory, Public Principles of Public Debt: A Defense and Restatement, [14]
120. <http://www.ereport.ru/articles/macro/macro17.htm>, Государственный бюджет: расходы и доходы государства, [15]

